

ՄԱՂԱՔԻՍ, ԱՐՔԵՊՍ . ՕՐՄԱՆԵԱՆ

ԾԻՍԱԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ



Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ի Թ Ի Ի Ն Հ Ա Յ Ո Ց
Մ Ե Ծ Ի Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Ց

ԱՆԹԻԼԻԱՍ — ԼԻԲԱՆԱՆ

1979

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայրական սիրոյ եւ հոգածութեան զգացումներէն եւ պարտաւորութենէն մղուած՝ վերստին կը հրատա-
րակենք Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենէն լուսամիտ,
հմուտ եւ նախանձախնդիր դէմքերէն Մաղափա
Արքեպս. Օրմանեանի «ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»ը :

Մեր Սուրբ Եկեղեցին թէ՛ իր ժողովուրդին մէջ եւ
թէ՛ քրիստոնէական ընդհանուր աշխարհին մէջ ծանօթ
է որպէս ծիսական-արարողական աւանդութեամբ հա-
րուստ եկեղեցի մը : Անոր մէջ հայ հաւատացեալը կը
գտնէ հաւատքի, աղօթքի, համայնական կեանքի եւ
ազգային նկարագրի անգուգական օճախ մը : Հոգեկան
սնունդի առատահոս եւ անսպառ աղբիւր մըն է ան :
Մեր ազգային մահուր աւանդութեանց պահապանն է
ան : Մեր հաւաքական, համայնական քրիստոնէական
կեանքի վառարանն է ան : Այնտեղ ծնունդ կ'առնէ մեր
քրիստոնէական դիմագիծը հայ Սրբազնասուրբ Միւռո-
նով, որով հայ քրիստոնեայի կնիքը կը դրուի մեր
նակտին : Այնտեղ կու գան մեր մանուկները, երիտա-
սարդները, չափահասներն ու տարեցները ոյժ առնելու
համար իրենց կեանքին մէջ թէ՛ ուրախութեան եւ թէ՛
տխրութեան պարագաներուն : Այնտեղ կու գանք հա-
ղորդուիլ արեամբն Յիսուսի՝ որպէս սիրոյ եւ գոհողու-
թեան գերագանց եւ անգերագանցելի ոյժ : Այնտեղ կը
կապուին իրարու գլուխները հայ երիտասարդներուն եւ
երիտասարդուհիներուն նարօտովը հայկական, որպէս
խորհրդանիշը միութեան՝ ընտանիքի սուրբ օճախին
մէջ : Այնտեղ կու տանք վերջին հրաժեշտը այս աշխար-

հէն ի սպառ բաժնուող մեր սիրելիներուն : Այնտեղ կը տօնախմբենք տնօրինական կեանքի փրկագործական դրուագները մեր Տիրոջ՝ Երկնաւոր Վարդապետին : Այնտեղ կ'ոգեկոչենք ու կը պանծացնենք մեր քրիստոնէական-ազգային միացեալ եւ անբաժանելի պատմութեան մեծ դրուագները : Այնտեղ կը խօսին մեզի մեր սուրբերը : Այնտեղ կը խօսին մեր արուեստները ճայնի ու քարի լեզուով : Վերջապէս, ա'ն է մեր տունը որուն մէջ կ'ապրինք մեր մեծ ընտանիքի մթնոլորտն ու հոգին :

Բայց այս բոլոր բարիքներն ու գեղեցկութիւնները լիովին, նշմարտօրէն կարեւոր վայելելու համար պէտք ունինք ՃԱՆՉՆԱԿՈՒ այդ Եկեղեցին : Յանախ կը հպարտանանք անով : Երբեմն զգացականօրէն կամ աւանդաբար, նոյնիսկ ձեւականօրէն, կը մօտեանանք անոր : Քիչ անգամ ԳԻՏԱԿՑՕՐԷՆ կը հասկնանք զայն եւ ԻՄԱՑՈՒՄՈՎ կ'ապրինք անոր հոգեկան մթնոլորտն ու բովանդակութիւնը :

Մեր Եկեղեցին ժողովուրդի՝ Եկեղեցի է : Հետեւաբար, ժողովուրդը պարտաւոր է հարազատ զգալ ինքզինքն անոր նկատմամբ : Եւ հարազատ զգալու ամենէն իրաւ եւ վաւերական եղանակը՝ նանչնա՛լն է այդ Եկեղեցին իր բոլոր երեսներով, սկզբունքներով եւ արժէքներով : Մասնագիտական, խորացեալ նանաչումը եկեղեցականներուն պարտաւորութիւնն է ամենէն աւելի եւ ամենէն առաջ : Բայց պարզ, տարրական, հիմնական ծանօթութիւններ ունենալը, Եկեղեցւոյ տօներն ու այնտեղ գործածուող սրբազան սպասները կամ այլ առարկաները եւ ասոնց խորհրդանշական իմաստները գիտնալը պարտքն է բոլոր՝ հաւատացեալներուն :

Օրմանեան Սրբազան 1905-ին եւ 1906-ին առաջին անգամ հրատարակելով այս «Միասկան Բառարան»ը նպատակ ունեցած է եկեղեցագիտութիւնը ժողովրդա-

Կանաչներ՝ Պարզ լեզուով, ամփոփ բովանդակությամբ, կարեւորագոյն կէտերու շեշտումով յատկանշուած երկասիրութիւն մըն է այս, որ մասնագիտական բնոյթ չունի: Բնականօրէն, ինչպէս ինք կ'ըսէ իր «Երկու կօսք»ին մէջ, եկեղեցագիտութեան ամբողջական բառարան մը չէ այս: Բայց իր եղածին մէջ՝ եզակի գործ մըն է որպէս ժողովուրդին համար մատչելի եւ անհրաժեշտ ձեռնարկ մը, ուղեցոյց մը:

Վստահաբար այս գործէն պիտի օգտուին մասնաւորապէս մեր քահանայ հայրերը, դպրաց դասերու անդամները, Ազգային Հայկական Վարժարաներու մէջ կրօն դասաւանդող ուսուցիչներն ու ուսուցչուհիները, կիրակնօրեայ Դպրոցներու մէջ ծառայողները, Դպրեւանքներու աշակերտները: Բայց այս շրջանակներէն անդի'ն պէտք է անցնի ու տարածուի սոյն հատորին բարիքը: Անհրաժեշտ է որ Եկեղեցւոյ պարզ հաւատացեալները ունենան զայն իրենց տուններուն մէջ եւ երբեմն-երբեմն կարդան անկէ որոշ մասեր, մանաւանդ տօնական օրերու առթիւ:

«ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»ը 1957-ին տպուած էր Կարողիկոսարանիս տպարանին մէջ: Բայց երկար ատենէ ի վեր սպառած էր: Կարիքը օրէ օր առաւել եւս կը զգացուէր: Ահա այդ կարիքին գոհացում տալու համար անգամ մը եւս զայն կը հրատարակենք, ջերմօրէն յանձնարարելով մեր հաւատացեալներուն որ անոր ընթերցումով ջանան աւելի առողջ, հաստատ տեղեկութիւններ ունենալ իրենց այնքան սիրած Եկեղեցիին մասին եւ առաւել եւս սերտօրէն կապուիլ անոր եւ լեցուիլ անոր հոգեւոր եւ ազգային բարիքներովը:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

24 Սեպտեմբեր, 1979

Անթիլիաս

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Եկեղեցւոյ արարողութեանց պատկանեալ կէտերու ամէն հաւատացեալի ծանօթ էն, բայց վերիվերոյ կերպով միայն. իսկ ասոնց բացատրութիւններն ու նշանակութիւնները միշտ հետաքրքրական նիւթ մը կազմած էն ամէնուն համար: Տէրունական տօներու պարագաները, տօնուած սուրբերու կեանքն ու գործերը, արարողութեանց ձեւերն ու մեկնութիւնները, երգեցողութեանց ու ընթերցուածներու կանոնները, սպասներու եւ գարդերու վերաբերեալ տեղեկութիւնները, սոմարական գիտելիքները եւն. մեծահատոր գիրք մը կազմելու բաւական նիւթ կրնային մատակարարել, եթէ լիակատար Ծիսական Բատարան մը ուզէինք կազմել: Հետեւաբար հարկ անհրաժեշտ է թէ՛ զանազան մասերու բաժնել ամբողջութիւնը եւ թէ յօդուածներն ալ ամփոփ կերպով գրել, որպէս զի սոյն նիւթին վերապահուած տեղւոյն չափը յարգուած ըլլայ:

Այս անգամ նկատի առնուած էն միայն տէրունի տօները եւ ասոնց հետ վերաբերութիւն ունեցող կէտերն ու նիւթերը, այբուրենական կարգի վրայ շարուած՝ փնտռելու եւ գտնելու դիւրութեան համար:

[ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ.]

[1905 թ.]

Ծ Ի Ս Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.— Հայ Եկեղեցւոյ հինգ գըլ-
խաւոր տօներէն մին, որ կը կոչուի նաեւ Պայծառա-
կերպութիւն՝ Քրիստոսի պայծառ ու լուսաւոր երեւա-
լէն եւ Վարդավառ՝ հին հեթանոսական տօնին անու-
նէն: Տօնուած տնօրինութիւնն է Քրիստոսի փառաւոր
ու լուսաւոր կերպարանքով երեւնալը իր առաքեալնե-
րէն երեքին՝ Պետրոսի եւ Յովհաննէսի եւ Յակոբոսի
ներկայութեան Գալիլիոյ սուրբ լերան վրայ, որ ըստ
հաստատուն աւանդութեան թաքօր կոչուած լեռն կե-
ղած է: Տնօրինութիւնը կը պատմեն Մատթէոս, Մար-
կոս ու Դուկաս աւետարանիչները, թէեւ լերան անունը
չեն տար: Տօնը կը կատարուի Չատկի ԺԴ. Կիրակին,
այսինքն Չատկէն 98 օր ետքը, հետեւաբար 30 օ-
րուան շարժականութիւն կրնայ ունենալ Յունիս 28-էն
Օգոստոս 1: Տօնախմբութիւնը երեք օր է. Կիրակի՝
բուն տօնը, Բչ. դարձեալ հրամայեալ տօն ու մեռելոց
յիշատակ, եւ Գչ. լուր տէրունի մը: Յոյնք ու լատինք
Այլակերպութեան տօնը կը կատարեն հաստատապէս
Օգոստոս 6-ին: Այս տօնը սկսած է հաւանականաբար
Թարգմանչաց դարէն, եւ առաջին օրուան շարականը
քերթողահայր Մովսէս Խորենացւոյն կը վերագրուի,
իսկ մեծ աղօթքն ալ՝ Եղիշէի: Բ. ու Գ. տուները Շնոր-
հալւոյն ժամանակ՝ աւելցած են որ նոյն օրերուն շա-
րականն ալ գրած է:

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ.— Մեծ Պահոց Գ. Կիրակին
այդ անունը կը կրէ, որովհետեւ նոյն օրուան Աւետա-
րանին կը կարդացուի Դուկասու ԺԵ. գլուխը, ուր կը
գտնուին հարիւր ոչխարին ու տասը դրամին եւ անա-

ուակ որդւոյն առակաները . բայց զլիսաւորն այս վերջինն է : Կիրակին ասկէ առած է իր անունը : Շնորհալին զրած է նոյն օրուան շարականները այդ առականերուն խորհուրդով : Անառակի Կիրակին միշտ Չատկէն հինգ շարաթ կամ 35 օր առաջ է , որով 35 օրուան շարժականութիւն կրնայ ունենալ Փետրուար 15-էն մինչեւ Մարտ 21 :

ԱՆՈՒԱՆԱԿՈԶՈՒԹԻՒՆ . — Քրիստոսի անունին , այսինքն Յիսուս անունը զրուելուն յիշատակութիւնն է : Յիսուս կը թարգմանուի Փրկիչ , ինչպէս հրեշտակէն զնել հրամայուած էր Մարիամու Աւետման ատեն (Ղուկ . Ա . 31) , եւ ինչպէս իրօք ալ զրուեցաւ ծնելուն Ը . օրը թլփատութեան արարողութեան առթիւ (Ղուկ . Բ . 21) , հրէական օրէնքին համեմատ : Անուանակոչութիւնն իբր առանձին տօն նշանակուած չէ Տօնացոյցին մէջ , այլ նոր օրացոյցները սովորութիւն ըրին այսպէս նշանակել Մենդեան Ը . օրը , Յունուար 13-ին , փոփոխելով Տօնացոյցին նշանակած թլփատութեան տօնը : Յիսուս անունը գործածուած է սովորաբար Աւետարանին մէջ , բայց այժմ աւելի գործածական է Քրիստոս անունը որ է Մեսիա = Օծեալ : Աւետարանին մէջ Քրիստոսի տրուած է նաեւ իմամանուէլ անունը (Մատթ . Ա . 23) , հետեւելով Եսայեայ մարգարէութեան (Եսայ . Է . 14) :

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ . — Այդ անունը կը տրուի Չատկի Գ . Կիրակին , որ է Չատկէն 15 օր ետքը , եւ Չատկին հետ 35 օրուան շարժականութիւն ունենալով՝ կրնայ հանդիպիլ Ապրիլ 5-էն մինչեւ Մայիս 9 : Աշխարհամատուռն բառը կը գործածուի իբր աշխարհածողով բաղմութեան յատկացեալ եկեղեցի , կամ լաւ եւս բոլոր աշխարհի պատկանող եկեղեցի , եւ

այս անունը տրուած է Սիոնի Վերնատան՝ ուր Քրիստոս լերջին զատկահան ընթրիքը կատարեց եւ Հաղորդութեան խորհուրդը հաստատեց (Մարկ. ԺԴ. 15), ուր սովորութիւն ըրին հաւաքուիլ առաքեալները Քրիստոսի Համբարձումէն ետքը (Գործ. Ա. 13), ուր եւ նոր հաւատացեալներուն հետ հաղորդութիւն ու աղօթք կը կատարէին առանձին (Գործ. Բ. 42): Ասիկա հաւանականաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողովուէին նոր հաւատացեալները (Գործ. ԺԲ. 12): Հայոց Եկեղեցւոյն յատուկ է Եկեղեցւոյ անուամբ տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրան տօնը՝ այսինքն Վերնատունին քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներուն նախատիպն եղաւ եւ եկեղեցւոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը կանաչ կիրակի ալ կը կոչուի:

ԱՌԱՋԱԻՈՐԱՑ ԿԻՐԱԿԻ կը կոչուի Մեծ Պահքի Բուն Բարեկենդանէն երեք եւ Չատկէն տասը շաբաթ առաջ հանդիպած կիրակին, որ կը հաշուուի միշտ Չատկին հետ համեմատելով եւ անոր հետ 35 օրուան շարժականութիւն կ'ունենայ՝ Յունուար 11-էն մինչեւ Փետր. 15: Այս կիրակիին յաջորդող եօթնեակին հինգ օրերը Առաջաւորաց Պահք կը կոչուին եւ սաստիկ պահք կը պահուի ծոմով մէկտեղ, եւ նոյն իսկ պատարադի մատուցումը կը դադրի Մեծ Պահոց նման: Պահքին Ե. օրը, այսինքն Ուրբաթ օրը կը յիշատակուի Յովնանու քարոզութիւնն ու Նինուէի ապաշխարութիւնը, ոչ թէ իբր Ս. Յովնան մարդարէի տօն, այլ պարզապէս իբր մեծ ապաշխարութեան մը օրինակ: Ծնորհալին կը մեկնէ Առաջաւորք անունը իբր առաջին պահք, որովհետեւ Ս. Լուսաւորչէն հրամայուած առաջին պահքին յիշատակութիւնն է: Լուսաւորիչը Վիրապէն ելլելէն ետքը

Երբ սկսաւ աւետարանել, նախ հինգօրեայ շարունակ
 ու անսուաղ պահքով պատրաստեց հայ ժողովուրդը
 բժշկութիւն ու լուսաւորութիւն ընդունելու՝ Նինուէ-
 ացւոց ապաշխարութեան նմանողութեամբ: Այս առա-
 ջին պահքին տարեկան յիշատակութիւնն է որ հաս-
 տատուն մնացած է մեր եկեղեցւոյ մէջ, եւ որուն նման
 բան մը ուրիշ եկեղեցիներու մէջ չի գտնուիր: Այդ պա-
 հոց Շք. օրը Ս. Սարգսի յիշատակը կը տօնուի, հաս-
 տատասլէս եւ ժողովուրդն ալ շատ անգամ Ս. Սարգսի
 պահք կ'անուանէ այդ պահքը, եւ յոյները՝ որ ոչ
 միայն այս շաբթուան պահքը չունին, այլ եւ սովորա-
 կան պահոց լուծումն ալ ունին, ժամանակին նախա-
 տած են հայերը՝ ըսելով թէ Սարգիս կախարդի մը ի-
 շուն կամ շունին մահուան համար հաստատած են այս
 պահքը: Սակայն ոչ թէ Սարգիս կախարդի, այլ եւ ոչ
 Ս. Սարգիս դօրավարին համար է այս պահքը, եւ տօնին
 հանդիպումէն առած է մեր ժողովրդական անունը: Ա-
 սաջաւորաց անունը հնար էր մեկնել նաեւ իբր Մեծ
 Պահքէն առաջ եկող պահք մը, կամ Չատկական պահ-
 քերուն առաջին մասը, բայց ամէն պարագայի մէջ
 Լուսաւորիչէ հաստատուած առաջին պահքի իմաստն ու
 նշանակութիւնն աւելի ընդունելի են:

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ կը կոչուի Քրիստոսի
 առաջին ու սկզբնական տնօրինութեանց համախմբուած
 յիշատակութիւնը: Քրիստոնեայք Ա. դարու մէջ հրէից
 հետ Չատիկը միայն կը տօնէին, անոր կցելով Քրիստո-
 սի Յարութեան յիշատակը բոլոր վերջին տնօրինու-
 թեանց հետ: Բ. դարուն մէջն է որ Քրիստոսի բոլոր
 սկզբնական տնօրինութիւնները սկսան տօնուիլ Յայտ-
 նութեան կամ Աստուածայայնութեան անուան ներքեւ,
 եւ որուն հետ ամփոփուեցան ամէն տնօրինութիւնք՝
 որով Քրիստոս աշխարհի յայտնուեցաւ իբրեւ Փրկիչ

ու իբրեւ Աստուած, ինչպէս են Գաբրիէլի աւետումը,
 Եղիսարեթի այցելութիւնը, Բեթղեհէմի ծնունդը,
 Հրեշտակներու փառաբանութիւնը, Ութօրեայ թլիա-
 տութիւնը, Մողերուն երկրպագութիւնը, Քառասնօր-
 եայ ընծայումը, Եղիպտոս փախուստը, Յորդանան
 մկրտուիլը, Երկնային նշանները, Յովհաննու վկայու-
 թիւնները, մինչեւ իսկ Հրաշագործութեանց սկիզբը:
 Այդ մեծ տօնին օրը որոշուեցաւ Յունուար 6-ին, ո՛չ
 այնչափ ժամանակագրութեան հաշուով, որչափ հե-
 թանոսակուն տօնի փոխանակութեամբ: Տօնն ունեցաւ
 իր ութօրէքն իբր մեծ տօն եւ ճրագալոյցի օրն ալ իբր
 նախապատրաստական օր եւ Աստուածայայտնութեան
 տօնը հաստատուեցաւ ինը օր, Յունուար 5—13: Աս-
 տուածայայտնութեան մեծ տօնին դլխաւոր խորհուրդը
 Քրիստոսի ծնունդը ըլլալով՝ Յունուար 6-ը սկսաւ
 նկատուիլ եւ կոչուիլ իբր Մննդեան տօն: Առաջին դա-
 բերուն մէջ տնօրինութիւններէ ոմանք դլխաւոր տօնէն
 բաժնուելով՝ առանձին յիշատակ կամ տօն ունեցան, եւ
 նախ Քառասնօրեայ դալուստը Յունուար 6-էն հա-
 շուելով՝ դրուեցաւ Փետրուար 14-ին, եւ յետոյ հրեշ-
 տակին Աւետումը՝ որ ինն ամիս ետեւ երթալով
 դրուեցաւ Ապրիլ 7-ին, 275 օրերու արգանդային կե-
 նաց միջոցը ճշդելով: Այդ երկու բաժանումները մեր
 եկեղեցւոյ կողմէն ալ ընդունուեցան: Իսկ Ե. դարուն
 երբ արդէն Հայ Եկեղեցւոյ կարգադրութիւնները լիա-
 սպէս կազմուած էին Թարգմանչաց ձեռօք, յոյնք
 Մնունդն ալ դատեցին եւ դայն Դեկտեմբեր 25-ին դրին,
 Յունուար 6-ին դնելով Յայտնութիւնն ու Մկրտութիւ-
 նը: Բայց այս նոր բաժանումը մեր մէջ ընդունելու-
 թիւն չգտաւ՝ հակառակ յոյներուն եւ լատիններուն
 ջանքերուն դայն Հայոց սլարտաւորիչ ընելու, որուն
 միայն վերջին ժամանակները յարեցան հայ հռոմէա-
 կանները: Մեր Եկեղեցւոյ մէջ դրեթէ ամբողջ տօնա-

ցոյցը եօթնեկական դրութեամբ կազմուած ըլլալով՝ միայն այս Աստուածայայտնութեան տօնն է որ արեւ-դակնային ամսաթուի վրայ հաստատուած է : Սակայն եթէ եկեղեցական արարողութեանց ու կարգադրու-թեանց պարագաներն ուշի ուշով զննուին, դժուար պիտի չըլլար ցուցնել թէ ժամանակ մը այդ տօնն ալ եօթնեկական դրութեամբ կատարուած է, այսինքն Շնունդը հաստատուն կերպով Կիրակի օր մը, եւ Ը. աւուր տօնն ալ Կիրակի, շաբաթապահոց բարեկեն-դանն ալ Կիրակի, ինչպէս ուրիշ տաղաւարի տօները : Այդ կէտին զննութիւնը մեր նպատակէն դուրս է :

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ. — Մեծ պահոց Կիրակիներէն իւրաքանչիւրը խորհրդաւոր անուն մը կը կրէ՝ օրուան աւետարաններէն առնուած : Բ. Կիրակին գոր-ծածական եղած անուն մը չունի, սակայն տեղ-տեղ կը դտնենք Արտաքսման անունով կոչուած, որ եւ կը հաստատուի Շնորհալուոյն դրած շարականին խմաստէն : Արդէն պիտենք թէ Բուն Բարեկենդանին, այսինքն Մեծ Պահոց Ա. Կիրակին, կը յիշատակուի նախամարդոց Դրախտի կեանքը, ըստ այսմ Բ. Կիրակին ալ Դրախտէ արտաքսուիլը կը յիշատակուի : Մեծ Պահոց Բ. Կի-րակին ալ Չատկին հետ 35 օրուան շարժականութիւնն ունի, Փետրուար 8-էն մինչեւ Մարտ 14 :

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ. — Ծաղկազարդէն մինչեւ Չատիկ եղող եօթնեակը կոչուի Աւագ Շաբաթ, եւ շաբթուան իւրաքանչիւր օրերն ալ նոյն աւագ անունը կը կրեն՝ Աւադ Բչ., Աւադ Գչ., Աւադ Դչ., Աւադ Եչ., Աւադ Ուր. եւ Աւադ Շբ. : Այդ աւագ անունն իրաւամբ տրուած է այդ եօթնեակին, յորում կը յիշատակուին Քրիստոսի վերջին օրերուն տնօրինութիւնները : Միա-շաբաթ = Կիրակի օրը Քրիստոս հանդիսով մտած էր Ե-

րուսաաղէմ : Բշ. Թղենին անիծելուն ու տաճարը մաք-
 րելուն օրն է : Եկեղեցին կը յիշէ եւս Զեբեդեայ որդւոց
 խնդիրը եւ Արարչութիւնը ու Մարդկութեան սկիզբը :
 Գշ. հրէից հարցումներուն եւ Քրիստոսի բացատրու-
 թեանց եւ փարիսեցւոց յանդիմանութեան օրն է : Նոյն
 օրը տեղի ունեցած է տաճարին մէջ եկած երկնային
 ձայնը, տաճարին կործանման գուշակութիւնը, այր-
 ւոյն գովեստը, Քրիստոսի վերջնապէս տաճարէն հե-
 ոանալը : Եկեղեցին կը յիշատակէ Տասն Կուսանաց ա-
 ոակը եւ Վերջին Դատաստանի բացատրութիւնը, նա-
 եւ Զրհեղեղը եւ մարդոց կրկին սկզբնաւորութիւնը :
 Դշ. կը յիշատակուի Յուդայի մատնութիւնը : Եշ. Վեր-
 ջին Ընթրիքը, Ոտնալուան եւ Հաղորդութեան խոր-
 հուրդին հաստատութիւնը : Ուր. Քրիստոսի ձերբա-
 կալութիւնը, դատապարտուիլը, Խաչելութիւնը, մահն
 ու Թաղումը : Եբ. դարձեալ Թաղումը եւ երեկոյին
 Քրիստոսի Յարութիւնը : Աւագ Շաբթուան լրումն է
 Զատիկը, զոր կարելի էր կոչել Աւագ Կիրակի, եթէ
 այդպէս սովորութիւն եղած ըլլար : Աւագ Բշ. Զատիկին
 հետ 35 օրուան շարժականութիւն ունի, Մարտ 16-էն
 Ապրիլ 19, իսկ Աւագ Շաբթուան միւս օրերը նոյն հա-
 մեմատութեամբ կը յաջորդեն :

ԱԻԱԳ ՏՕՆ կը կոչուին սրբոց չորս յատուկ տօները
 որ Աստուածայայտնութեան պահքէն առաջ կը կա-
 տարուին հետզհետէ, եւ կը նկատուին իբր վկայք
 Ծննդեան Քրիստոսի : Այս չորս տօներն են 1. Դաւիթ
 մարդարէ եւ Յակոբ Տեառնեղբայր, 2. Ստեփանոս
 Նախավկայ, 3. Պետրոս եւ Պօղոս Առաքեալներ, 4.
 Որդիք Որոտման՝ Յակոբոս Գլխադիր եւ Յովհաննէս
 Աւետարանիչ առաքեալներ : Այս տօները հին ատեն
 թերեւս Երկուշաբթիէ Շաբաթ ամբողջ եօթնեակի մը
 պատշաճը կը կաղմէին : Բայց այժմ Աստուածայայտ-

նութեան հաստատուն ամսաթուով կատարուելուն համար՝ անոնք ալ եօթնեակի մը հաստատուն ձեւը չունին, միայն թէ Դեկտեմբեր 23-էն 29 եօթը օրերուն ծայրերէն անդին չեն անցնիր: Աւագ տօներուն յատկանիշն եղած են Նախատօնակը եւ «Այսօր դաւք» երգը, որոնք վերջին կարգադրութեամբ Առաջին Լուսաւորչաց երկուն Գրիգոր Լուսաւորչին երեք տօներուն ալ կատարուելուն՝ կերպով մը այս տօներն ալ Աւագ տօներու պատուոյն բարձրացած կը համարուին:

ԱԻԵՏՄԱՆ=ԱԻԵՏԵԱՑ ՏՕՆ.— Գաբրիէլ հրեշտակապետին Տիրամօր Մարիամու աւետիս բերելուն յիշատակն է: Հրեշտակապետը լուր բերաւ թէ Որդին Աստուծոյ իրմէ պիտի մարմնանայ Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ եւ իր կուսութեան պահպանութեամբ: Հետեւապէս այդ օրը Քրիստոսի մարդեղութեան եւ ըստ մարմնոյ յղութեան տօնն է: Երբ Աստուածայայտնութեան տօնը բնաւ բաժանում չէր կրած, տօնին ճրագաւորցի օրը յատկապէս Աւետման նուիրուած էր, ինչպէս որ աւուր ընթերցուածներն ու շարականներն ալ կը ցուցնեն: Աստուածայայտնութեան տօնին չորրորդ օրուան շարականն ալ յատկապէս աւետման յիշատակութիւնը կը պարունակէ, եւ այս կը ցուցնէ թէ Դշ. օրուան համար յօրինուած է այդ շարականը, քանի որ ամբողջ տարուան Դշ. օրերը Տիրամօր Աւետման եւ Քրիստոսի Մարդեղութեան նուիրուած են. որովհետեւ աւանդութեամբ պահուած է թէ Աւետումը Դշ. օր մը տեղի ունեցած է. «Ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն, ետ զաւետիան կուսական»: Աւետման տօնը ըստ մեզ այժմ հաստատուն կերպով կը կատարուի Ապրիլ 7-ին, ինչ օր որ հանդիպի, նոյն իսկ եթէ Մեծ Պահքի մէջ հանդիպի՝ եկեղեցւոյ սուգի ու ապաշխարութեան ձեւերն իսկ կ'ընդհատուին: Սակայն եթէ հին տօնացոյ-

ցերուն նայինք, այնպէս կ'երեւայ թէ Աւետման տօնը Մեծ Պահքի մէջ հանդիպած ատեն, մինչեւ Զատիկի Դ. օրուան կը յետաձգուէր: Յոյնք ու լատինք Մնունդը Դեկտ. 25-ին դրած ըլլալով՝ Աւետումը Մարտ 25-ին կը կատարեն, եւ Յղութենէն Մնունդ 276 օրուան միջոց մը կը դնեն, մինչ մերը Ապրիլ 7-էն Յունուար 6, միայն 275 օր կ'ունենայ:

ԲԱԿԱԽՈՐԱՆ անունը կը տրուի Մեծ Պահոց առաջին օրուան, այսինքն Բուն Բարեկենդանի յաջորդող Երկուշաբթիին: Շատեր այդ անունն ուղեցին մեկնել իբր փակեալ խորան, սակայն խորանը Շաբաթ իրիկուրնէ կը փակուի եւ Կիրակին փակեալ խորանով Պատարագ կը մատուցուի, եւ Խորանի Փակման անունը Բշ.ին չի յարմարիր: Ուստի աւելի հաւանական կը կարծենք թէ Պահոց սկիզբը բակլայ խորովելու եւ դայն բաշխելու սովորութենէն առնուած է այս անունը: Մինչեւ հիմա ալ վանքերու մէջ նախընթաց Կիրակի իրիկունը վերջին ուտեաց ընթրիքէն ետքը հանդիսով բակլայ կը պարպեն մեծ կաթսայի մը մէջ, եւ Բակլա-խորանը կ'ընեն:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ կը կոչուի շաբաթապահքերը յառաջող վերջին ուտիք օրը: «Բարեկենդան» բառը «բարի» ու «կենդանութիւն» բառերէն կազմուած կը թուի եւ քիչ մը աւելի կերակուրներու ուրախութիւն ընելէն առնուած է. իբր զի ներեալ էր պահ մը ուտիքը ճոխացնել: Տօնացոյցին պահքը չսկսած նշանակած պարզ բարեկենդաններն են. 1. Առաջաւորաց բարեկենդան, 2. Եղիական պահոց բարեկենդան, 3. Լուսաւորչի բարեկենդան, 4. Վարդավառի բարեկենդան, 5. Աստուածածնի բարեկենդան, 6. Խաչի բարեկենդան, 7. Վա-

րազայ = Ս . Գէորգի բարեկենդան , 8 . Յիսնակաց բարեկենդան , 9 . Ս . Յակոբայ բարեկենդան , 10 . Աստուածայայտնութեան = Ծննդեան բարեկենդան : Ամէնքը Կիրակի են , բացի վերջինէն որ կը հանդիպի հաստատապէս Դեկտեմբեր 29-ին , այլ եթէ այդ օրը Դչ . կամ Ուր . հանդիպի , Բարեկենդանը Դեկտ . 28-ին կը կատարուի եւ Դեկտ . 29-ին պահք կը պահուի :

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՊԱՆ . — Բարեկենդաններուն գլխաւորը եւ իսկապէս բարեկենդան կը նկատուի՝ Մեծ Պահքը յառաջող վերջին ուտիքի Կիրակին , որուն կը յաջորդէ Մեծ Պահքը , այն է եօթը շաբաթ = 48 օր անընդհատ պահք : Հարկաւ այդ օրուան կերակուրներու ուրախութիւնն ուրիշ բարեկենդաններէն մեծ ըլլալուն , այդ բարեկենդանը կոչուեցաւ Բուն Բարեկենդան : Այդ Կիրակի օրը Չատիկէն եօթը շաբաթ յառաջ է , եւ Չատիկն հետ 35 օրուան շարժականութիւն ունի , Փետր . 1-էն Մարտ 7 : Այժմ սովորութիւն է , եւ սովորութիւնն ալ նոր չէ , որ ոչ թէ միայն Բուն Բարեկենդանին Կիրակին , այլ եւ բովանդակ անոր նախընթաց եօթնեակն ամբողջովին բարեկենդան կը նկատուի , եւ բարեկենդանի շաբաթ կը կոչուի : Այդ եօթնեակը ամբողջ կերակուրներու եւ դուարճութեանց ուրախութեամբ կ'անցնի : Եկեղեցին ալ նոյն եօթնեակին աւելի նշանաւոր տօներ դրած է : Նոյն իսկ վանքերն ալ կ'երեւայ թէ բարեկենդանի շաբթուն իրենց խստակեցութիւնը կը թուլցնէին , եւ ասկէ ծաղում առած է նոյն օրերուն յատկացուած Արեղաթող անունը : Մեծ Պահքի ապաշխարութեան եկեղեցական երգերը եւ վարագոյրին փակումը շաբաթ իրիկուն կատարուելէն ետքը , Կիրակի օրը եկեղեցական տխրութեան հետ կերակուրներու ուրախութեան նուիրուիլը , ըստ մեր վարդապետաց «Չփափկութիւն դրախտին եւ զբարեկենդանու-

թիւն օրինակէ» . զի խոն Բարեկենդանի Կիրակիին խորհուրդը նախահայրերուն դրախտային երջանիկ կենսաց յիշատակութիւնը կը պարունակէ :

ԳԱԼՈՒՍՏ անուան ներքեւ եկեղեցւոյ մէջ կը յիշատակենք գլխաւորապէս Հոգւոյն Սրբոյ դալուստը որ Հոգեգալուստ ալ կը կոչուի եւ այդ անուան ներքեւ պիտի բացատրուի : Սակայն Քրիստոսի զանազան տնօրինութիւններն ալ Գալուստ անունով կը տօնուին , եւ քանի մը տարբեր տօներ ունինք որոնք Գալուստ անունով կը յիշատակուին :

ԳԱԼՈՒՍՏ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ Ի ՏԱՃԱՐՆ . — Հրէական օրէնքը կը հրամայէր որ ամէն մայր տղաբերքէն քառասուն օր ետքը տաճար ներկայանար եւ օրինական զոհը մատուցուէր ու սրբուէր , նորածինն ալ միասին տաճար բերելով օրհնել տար քահանային : Միւս կողմէ ուրիշ օրէնք մը կը հրամայէր որ անդրանիկները ընծայուէին ի ծառայութիւն տաճարին : Իսկ երբ Ղեւեայ ցեղն ամբողջովին տաճարի ծառայութեան նուիրուեցաւ , ծնողք պարտաւոր մնացին իրենց անդրանիկներուն համար փրկանք մը տալ ի նպաստ Ղեւտացւոց եւ անդրանիկն ազատել : Այդ երկու օրէնքի կատարումն էր որ ըրաւ եւ Մարիամ Աստուածածին Քրիստոսի Ծննդեան Քառասունքը լրանալուն : Ուրիշ եկեղեցիներ Տիրամօր անունէն առնելով՝ այդ տօնը Ներկայացում կամ Սրբութիւն Ս . Կուսին կը կոչեն , իսկ մենք Քրիստոսէն առնելով՝ կ'ըսենք Քառասնօրեայ Գալուստ ի Տաճարն : Տօնը կը կատարուի հաստատուն կերպով Փետրուար 14-ին , որ է քառասներորդ օր Յունուար 6-էն հաշուելով , իսկ յոյնք եւ լատինք Դեկտ . 25-էն հաշուելով՝ Փետրուար 2-ին կը կատարեն : Տօնը կը կատարուի անխափան եթէ Առաջաւորաց

կամ Մեծ Պահոց մէջ ալ հանդիսլի եւ այն օրը ապաշխարութեան ու սգոյ ձեւակերպութիւնները կ'ընդհատուին : Այդ տօնը կը կոչուի սովորաբար Տեառնընդառաջ եւ ժողովրդեան ձայնաշրջմամբ Տէրնասա :

ԳԱԼՈՒՍՏ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ, այսինքն **ԾԱՂԿԱԶԱՐԴԻ** օրուան տօնը, սրով կը յիշատակուի Քրիստոսի հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մտնելը, իր մահուան նախընթաց վերջին միաշարաթի օրը : Քրիստոս իր կենաց վերջին հինգ ամիսները Գալիլիայէն հեռու անցուցած էր Հրէաստանի ու Պիրէայի կողմերը : Գալիլիացիք որ այնչափ Քրիստոսի բարութիւնները վայելած էին, կարօտցած էին իր տեսոյն : Զատկի առթիւ բազմութիւն մը ուխտի եկած էր Երուսաղէմ . երբ լսեցին թէ Քրիստոս Շարաթ օր Բեթանիա գեղն անցուցած է, եւ միաշարաթին Երուսաղէմ պիտի այցելէ, այս առթիւ յաղթական ու փառաւոր ընդունելութիւն մը պատրաստեցին իրեն, եւ ոստերով ու երգերով դիմաւորեցին զինքը Զիթենեաց լերան կողմէն : Քրիստոս նոր պարագայ մը աւելցուց հանդէսին՝ Բեթփագէ գիւղէն մատակ էջ մը գտնելով եւ վրան հեծնելով՝ որուն յաւանակն ալ մէկտեղ էր : Այդ գալստեան խորհուրդը կը յիշատակուի Զատկին նախընթաց կիրակին՝ որ Զատկին հետ 35 օրուան շարժականութիւն ունի, Մարտ 15-էն մինչեւ Ապրիլ 18 :

ԳԱԼՈՒՍՏ Ի ԶԱՐԶԱՐԱՆՍ .— Ծաղկազարդէն մինչեւ Աւագ Ուրբաթ միջանկեալ չորս օրեր Աւագ Շարաթ յօդուածին ներքեւ գրուածին համաձայն կը յիշատակուին Քրիստոսի գործողութիւնները իր վերջին օրերուն մէջ, որոնք յատուկ տնօրինութեան անուն մը չունին . բայց որովհետեւ տէրունի տօն կը կազմեն, իբր տնօրինական խորհուրդ կը նկատուի Քրիստոսի

կամաւոր յանձնառութիւնը իր փրկագործ չարչարանքին հանդէպ : Մաղթանքներուն եւ աղօթքներուն մէջ կը գործածուի «Գալուստ ի չարչարանս» բացատրութիւնը :

ԳԱԼՈՒՍՏ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ.— Յինանց միջոցին կիրակամտի երեկոներուն՝ փոխանակ ուրիշ օրերուն մէջ յիշատակուած Քրիստոսի Յարութեան՝ Գալստեան մեռելի եւ Սուրբ Աստուած ու Համբարձի կը զրուցուի իբր Գալստեան տօն : Այդ յատուկ արարողութիւնը կապ ունի Քրիստոսի Յարութեան եւ մեր փրկութեան մէջ զտնուած յարաբերութեան հետ, եւ եկեղեցին այս կերպով կ'ուղէ իմացնել թէ մեր փրկութեան համար զալով՝ կատարեց զայն իր մահով եւ լրացուց իր յարութեամբ : Ուստի Յինանց կիրակամուտներուն տեղի ունեցած Գալստեան յիշատակը կը նշանակէ պարզապէս Քրիստոսի Գալուստն ի փրկութիւն մեր :

ԳԱԼՈՒՍՏ Ի ՓՈՒՆՈՒՄՆ.— Աստուածածնի տօները տէրունի տօն ըլլալով՝ պէտք է կատարուէին ի դէմս Քրիստոսի, ուստի ծիսական սովորութիւնն է որ բոլոր Աստուածածնի տօներուն Քրիստոսի տէրութիւնը կը յիշատակուի եւ այդ բացատրութեամբ կը զրուցուին աղօթքներն ու մաղթանքները : Միայն Վերափոխման տօնին եկեղեցին ի նկատի կ'առնէ այն պարադան որ Քրիստոս ինքն իջաւ իր մօր մահուան եւ ի միասին փոխադրեց զայն երկինք : Այդ հիմամբ Վերափոխման տօնին մաղթանքներն ու աղօթքները եւ Սուրբ Աստուածն ալ Քրիստոսի Գալստեան բացատրութեամբ կը զրուցուին՝ յիշատակելով Քրիստոսի Գալուստն ի փոխումն մօրն եւ կուսի :

ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ.— Մեծ Պահոց Կիրակիներէն իւրաքանչիւրին անուն մը յատկացուած է, ինչպէս

յիշուեցաւ. վեցերորդ Կիրակին ալ Գալստեան կը կոչուի եւ աւուր շարականն ալ Քրիստոսի աշխարհ դալուն խորհուրդը կը բացատրէ, օրուան աւետարանին վերջին համարն ալ (Մատթ. ԻԳ. 39) Քրիստոսի Գալստեան կ'ակնարկէ: Որովհետեւ այդ կիրակին անմիջապէս կը յառաջէ Աւագ Շաբթուն՝ ուր Փրկագործութեան խորհուրդին տնօրինութիւնները կը յիշատակուին, այդ Կիրակին դրուած Գալստեան անունը Քրիստոսի մարդկային փրկութեան համար աշխարհ դալը կը յայտնէ: Չատկէն 15 օր առաջ է միշտ, եւ 35 օրուան շարժականութեամբ Մարտ 8-էն մինչեւ Ապրիլ 11 կրնայ հանդիպիլ:

ԳԻՒՏ ԽԱԶը Խաչափայտին դտնուելուն յիշատակութիւնն է: Օրէնք էր որ մահապարտներու եւ մանաւանդ խաչեալներու մարմինն ալ, տանջարանն ալ իրենց տեղը կը մնային: Քրիստոսի մարմինը Պիղատոսի հրամանաւ թաղում ունեցաւ, բայց Խաչը մնաց Գողգոթայի վրայ միւս խաչերուն հետ եւ հոն թաղուած մնաց, երբ քրիստոնէութեան նախատինք ընելու համար Գողգոթան իբր աւելորդաց աղբիւս դործածուեցաւ: Այսպէս շարունակեց երեք հարիւր տարի: Կոստանդիանոսի դարձէն ետքը, իր մայրը Հեղինէ Երուսաղէմ այցելեց՝ Ս. Տեղերը պատուելու եւ Քրիստոսի խաչն ալ դտնելու նպատակաւ: Յուդա անունով բանդէտ հրեայ մը Գողգոթային տեղը ճշդելու օղնեց, եւ պեղումներ սկսան եւ 20 թիղ խորութեան ներքեւ երեք խաչեր քովէքով դտնուեցան, բայց անհնար եղաւ Քրիստոսի Խաչը միւս երկու աւագակներու խաչերէն դատել: Նոյն ժամուն մեռած պատանիի մը դիակը հետզհետէ խաչերուն վրայ դրին հրաշքի սպասելով, եւ երբորդին վրայ պատանիին յարութիւն առնելովը՝ Քրիստոսի բուն Խաչը ճանչցուեցաւ: Յուդա հրեան ալ

քրիստոնէութիւնն ընդունեցաւ, որ յետոյ Կիւրեղ Լուիսկոպոսը եղաւ եւ իր մօր Աննայի հետ նահատակուեցաւ: Սաչափայտը Հեղինէի ձեռքով Երուսաղէմի մեծ տաճարին մէջ զետեղուեցաւ եւ չորս հարիւր տարի շարունակ հոն մնաց: Սաչին դիւտը տեղի ունեցաւ 327-ին: Մենք Գիւտ Սաչը կը տօնենք Սաչի Է. Կիրակին, որ 7 օրերու շարժականութեամբ Հոկտեմբեր 23-էն 29 կրնայ հանդիպիլ:

ԳԻՒՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. — Աստուածածնի դործածած զգեստներէն կամ առարկաներէն լան մը պահուած ըլլալուն յիշատակութիւնը չկայ հիներուն մէջ, բայց հետագայ դարերուն մէջ այդպիսի աւանդական յիշատակներ տակաւ մէջտեղ ելած են եւ անոնց յայտնութիւնները տօներ ալ կադմած: Ե. դարուն սկիզբը Արկադիոս կայսեր օրով (395—408) Երուսաղէմի մէջ Աստուածածնի պատկանած Գօտի մը երեւան եկաւ եւ հանդիսաւոր կերպով Կ. Պոլիս բերուեցաւ եւ հոն Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ պատուով պահուեցաւ եւ բարեպաշտական առարկայ եղաւ: Յոյները սկսան Օգոստոս 31-ին Աստուածածնի Գօտոյն դիմնուելուն տօնը կատարել: Մեր մէջ անծանօթ էր այդպիսի յիշատակ մը: ԺԸ. դարու տօնացոյց դրողներէն ոմանք յիշատակեցին դայն, «Եթէ կամիս տօնել՝ տօնեա» յաւելուածով, մինչեւ որ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը 1774-ին հրատարակած բարեփոխեալ տօնացոյցին մէջ հաստատուն կերպով դրաւ դայն Աստուածածնի Գ. Կիրակին, որ 7 օրերու շարժականութեամբ Օգոստոս 26-էն Սեպտեմբեր 1 կրնայ հանդիպիլ: Սակայն կատարուածը պարզ Աստուածածնի տօն մըն է առանց ուրիշ մասնաւոր պարագայի:

ԳԻՒՏ ՏՓՈՅ Ս . ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ .— Գօտւոյն գիւտին նման անկէ քիչ ետքը Տփոյ գիւտը մէջտեղ ելած է : Գալբիոս ու Կանդիդոս անուանով իշխանագուն յոյն եղբայրներ Երուսաղէմ ուխտի երթալով՝ դանազան կողմեր պտըտած ատեննին կը լսեն թէ Գալիլիոյ անուանը անյայտ մէկ գիւղին մէջ հրեայ պառաւի մը տան մէջ հրաշքներ կը գործուին , եւ հետաքրքրուելով կը տեսնեն թէ հոն փոքրիկ սնտուկ մը կայ որուն մէջ պահուած է Աստուածածնի գլխադիրը՝ այսինքն գլխուն լաչակը : Իրենք ալ ուխտի կ'երթան , սնտուկին չափով ուրիշ սնտուկ մը եւ վրան դնելու ծանր ծածկոց մը կը պատրաստեն , եւ ծածկոցը դնելու պատրուակաւ գլխադիրին սնտուկը կը վերցնեն եւ շիտակ Կ . Պոլիս կը բերեն եւ Լեւոն կայսեր օրով (457—474) մեծ թափօրով ու պատուով կը դետեղեն Ս . Աստուածածին եկեղեցւոյն մէջ , եւ Յուլիս 2-ին յատուկ տօն ալ կը հաստատուի յունաց մէջ : Այդ տօնն ալ մեզի անծանօթ եղած է , մինչեւ որ Սիմէոն Կաթողիկոս 1774-ին հրատարակած տօնացոյցին մէջ գրած է զայն Հոգեգալստեան Ե . Կիրակին , որ Յօ օրերու շարժականութեամբ Յունիս 14-էն մինչեւ Յուլիս 18 կրնայ հանդիպիլ :

ԴԱՏԱԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ .— Այսպէս կը կոչուի Մեծ Պահքի Ե . Կիրակին , որովհետեւ այն օրուան պատարագին կը կարդացուի Ղուկ . ԺԸ . գլխին այն մասը որ կը պարունակէ Դատաւորին եւ Մաքսաւորին առակաները , որոնք եւ կը յիշատակուին շարականներու մէջ . ասկէ է իր անունը : Այդ Կիրակին ալ Չատկին հետ Յօ օրերու շարժականութիւն ունի եւ Մարտ 1-էն մինչեւ Ապրիլ 4 կրնայ հանդիպիլ :

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՕՆ.— Յանուն Եկեղեցւոյ տօն կա-
 տարել Հայոց յատուկ արարողութիւն մըն է : Եկեղե-
 ցին աստուածային հաստատութիւն մըն է եւ Քրիս-
 տոսի փրկագործութեան արդիւնք : Եկեղեցիով ճըշ-
 մարտութիւններ կ'աւանդուին մեզ, խորհուրդներ կը
 մատակարարուին, շնորհքներ կը բաշխուին եւ մեզ-
 քերու թողութիւն կը տրուի : Եկեղեցին է մեզի հա-
 մար Քրիստոնէական մարմնոյ ամբողջութիւնը, անոր
 պիտոյն Քրիստոսի հետ միացման նշանը եւ հաւատա-
 ցեալներուն եղբայրութեան կապը : Եկեղեցին ամէն
 տեսակ այլարանութեամբ կը ներկայացուի մեզի իբր
 քաղաք, տաճար, աղբիւր, վէմ, սեղան, խորան,
 երկինք, Աստուծոյ աթոռ, հարսն Քրիստոսի, մայր
 հաւատացելոց եւն. , որով Եկեղեցին կ'ըլլայ գերբնա-
 կան հաստատութիւն մը՝ բոլոր փրկագործ տնօրինու-
 թեանց արդիւնք, եւ այդ նկատողութեանց ներքեւ
 արժան էր որ տօնելի բան մը դառնար : Նիւթական
 առմամբ տաճարներու նուիրագործութիւնն ալ եկե-
 ղեցւոյ տօնախմբութիւն եղած է, եւ ատոնց մէջ ալ
 եկեղեցւոյ գերբնական նշանակութիւնը նկատի առ-
 նուած է, եւ եկեղեցիներու օծման տարեդարձներն ալ
 եկեղեցւոյ տօներ եղած են : Մեր տօնացոյցին մէջ
 մուտ դուած տօներէն իբր եկեղեցւոյ տօն կը նկա-
 տուին 1. Նոր Կիրակին, 2. Աշխարհամատրան Կիրա-
 կին, 3. Էջմիածնի տօնը, 4. Տապանակի տօնը, 5.
 Շողակաթը, 6. Խաչի Նաւակատիքը, որոնց իւրա-
 քանչիւրին վրայ այդ անուններուն ներքեւ կը խօ-
 սուի : Ասոնցմէ զատ տօն եկեղեցւոյ կը նշանակուին
 Խաչի շաբթուան Գշ. , Դշ. ու Եշ. օրերը : Այդ երեք
 օրերը ընդհանուր առմամբ եկեղեցւոյ տօն նկատուելի
 զատ, մասնաւոր կապ ալ ունին Երուսաղէմի մէջ
 Հեղինէ դշխոյի կողմէ շինուած չորս մեծ տաճարնե-
 րուն հետ, — Ս. Յարութիւն (Գողգոթա), Ս. Ծնունդ

(Բեթղեհէմ), Ս. Համբարձում (Չիթենեայ լեռ) եւ Ս. Աստուածածին (Գեթսեմանի) : Արդ, Սաղմբերացի նախնիքաց աւուր նաւակատիքը Ս. Յարութեան տաճարին նաւակատիքին յիշատակն է, նոյնպէս շարթուան մէջի երեք եկեղեցւոյ տօները միւս երեք տաճարներուն նաւակատիքներուն յիշատակներն են : Այդ վերջին երեք եկեղեցւոյ տօները Սաղի շարթուան մէջ կը կատարուին եօթն օրերու շարժակա նութեամբ, Սեպտեմբեր 13, 14 ու 15-էն մինչեւ 19, 20 ու 21 : Ասոնցմէ զատ մասնաւոր ու յատուկ կերպով եկեղեցւոյ տօն կը կատարուի ամէն նոր օծուած եկեղեցւոյ մէջ, եւ նոյնպէս սովորութիւնն է եկեղեցւոյ տօնի կարգ կատարել ամէն տարի եկեղեցւոյ նաւակատիքին կամ օծման տարեդարձին :

ԵՂԻԱԿԱՆ ՊԱՀՔ. — Հայ եկեղեցւոյ արարողութեամբ կատարուած շարժապահճերէն ոմանք մեծ տօներու պատրաստութիւնն են, սակայն չորսը առանց տօնական հանդիսաւորութեանց, պարզապէս եղանակաց պահճեր են, այսինքն շարժ մը պահճ՝ չորս եղանակներէն իւրաքանչիւրին : Ասոնցմէ մէկն է Եղիական պահճ կոչուածը որ բնաւ յարաբերութիւն չունի Եղիա մարդարէին հետ, այլ պահոց յաջորդ կիրակին Եղիա մարդարէի վերացման յիշատակը կատարուելուն՝ նախնիքաց պահճը աւանդական կերպով Եղիական կոչուեցաւ, իրօք Ամարան պահճն է, եւ այսպէս ալ կոչուած է երբեմն հին գիրքերու մէջ : Եղանակներու պահճերը հինդ օր կը տեւեն, Բշ. — Ուր․, իսկ Ծբ․ օրը նաւակատիք չունի, սրովհետեւ յաջորդ տօնի հետ կապ չունի, եւ կատարեալ ուտիք է : Ամարան պահճը դրուած է Հոգեդալստեան յաջորդ օրը, Յինանց յիսուն օրուան ուտիքին վերջանալէն անմիջապէս ետքը, եւ ոչ ամիսներու հաշուով,

որպէս զի Յինանց ուտիքին ամբողջութեան հետ
 չխառնուի: Այս եօթնեակն ի հնումն պարզապէս պա-
 հոց կարգ ալ ունէր եկեղեցւոյ մէջ, այլ Շնորհալին
 Հոգեգալստեան տօնը եօթնեակի վերածելով ու յա-
 տուկ շարականներով զարդարելով հանդերձ՝ պահքը
 տեղէն չխախտեց, եւ այժմ Եղիական սրահքը կը կա-
 տարուի Հոգեգալստեան տէրունի տօներուն հետ միա-
 սին: Բարեկենդանը նոյն իսկ Հեղեգալստեան օրն է:
 Եղիական = Ամարան պահքի հինդ օրերը Չատկին հետ
 կապուած ըլլալով՝ 35 օրուան շարժականութիւն ու-
 նին եւ առաջին օրը, այսինքն ԲՂ. Մայիս 11-էն մին-
 չեւ Յունիս 14 կրնայ փոփոխուիլ:

ԵՐԵՒՄԱՆ ԽԱԶ. — Կիւրեղ Երուսաղէմի հայրա-
 պետին պաշտօնի անցած տարին տեղի ունեցաւ Խաչին
 Երեւումը Երուսաղէմի մէջ: 351 տարուոյ Հեղեգա-
 լլստեան առտուն ժամը 3-ին ահաւոր մեծութեամբ
 լուսաւոր իսաչ մը երեւցաւ երկինքի վրայ, մէկ
 ծայրը Գողգոթայի եւ միւս ծայրը Չիթենեաց լեռան
 վրայ, եւ շատ ժամեր տեւելով՝ Երուսաղէմի բոլոր
 բնակիչներէն տեսնուեցաւ, որ զղջմամբ ու բարե-
 պաշտութեամբ սկսան եկեղեցիներ վազել: Սոյն ե-
 րեւման պատմութիւնը դրուեցաւ նոյն իսկ Կիւրեղէն
 որ զայն զրկեց Կ. Պոլիս Կոստանդ կայսեր, եւ որ
 այժմ մեր եկեղեցւոյ մէջ կը կատարուի իւր ընթեր-
 ցուած: Կիւրեղի բացատրութեան համեմատ այդ երե-
 ւումը ուղղափառ դաւանութեան պաշտպանութիւնն
 էր Արիանոսներուն մոլորութեան դէմ՝ որ Կոստանդ
 կայսեր պաշտպանութիւնը կը վայելէր: Կիւրեղ կը
 ջանայ անոյշ ու պատուաբեր խօսքերով Կոստանդի
 մտադրութիւնը դրաւել: Յոյնք այդ երեւման տօնը
 կը կատարեն Մայիս 7-ին, թէեւ 351 տարուոյ Հեղե-
 գալուստը Մայիս 19-ին հանդիպեր է, իսկ մենք կը

կատարենք զայն Յինանց Ե. Կիրակին, Չատիկէն 28
օր ետքը, որով այս տօնն ալ 35 օրերու շարժակա-
նութիւնն կ'ունենայ, եւ Ապրիլ 19-էն մինչեւ Մայիս
23 կրնայ հանդիպիլ:

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ կը կոչուի Համբարձման
յաջորդող Կիրակին որ յատուկ տօն մը չունի, այլ
ըստ կարգի աւուրց՝ Յինանց 43-րդ ու Համբարձման
4-րդ օրն է: Երկրորդ Ծաղկազարդ անունն սուած է
սլարզապէս օրուան աւետարաններէն: Հայ Եկեղեցին
Նոր Կիրակիէն սկսեալ՝ չորս աւետարանները կը կար-
դայ ամէն օր կարգաւ. եւ այդ կարգին շարունակու-
թեամբ չորս աւետարաններէն Քրիստոսի Երուսաղէմ
Գալստեան կտորները Յինանց է. Կիրակիին ինկած
են՝ որով Ծաղկազարդի յիշատակութեան կրկնութիւնը
տեղի կ'ունենայ: Տոհմային յիշատակ մըն ալ աւել-
ցած է նոյն օրուան վրայ. իբր զի աւանդութեամբ
հասած է մեղի թէ հրեշտակ մը ամէն օր կ'այցելէր
Լուսաւորչին Խորվիրապին մէջ, այլ Համբարձման
Դ. օրը եկած չըլլալով՝ Լուսաւորչին բացատրած է
թէ Քրիստոսի Համբարձումը տօնելու համար՝ հրեշ-
տակներու դասերէն իւրաքանչիւրն օր մը հանդէս կը
կատարէ, եւ ինքը Դ. դասէն ըլլալով՝ Դ. օրը չէր
ուզած իր դասին հանդէսներէն բացակայիլ: Վկայա-
սէր այդ յիշատակը խառնած է օրուան շարահանին:
Երկրորդ Ծաղկազարդի օրն ալ 35 օրերու շարժականու-
թեամբ Մայիս 3-էն մինչեւ Յունիս 6 կրնայ հանդի-
պիլ:

ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ.— Այս խորհուրդը մեր մէջ յա-
տուկ տօն չունի. թէեւ հայ հռոմէականներ մուծած
եւ դրած են զայն Հողեգալստեան Ը. օրը լատինե-
րու հետեւողութեամբ. բայց «Երրորդութիւն անբաժա-

նելի» շարականը եւ Հոգւոյն Սրբոյ գալստեամբ բա-
ցատրուած Երրորդութեան խորհուրդը պատճառ եղած
են որ Հոգեգալստեան տօնին կից նկատուի Երրոր-
դութեան տօնն ալ, եւ Երրորդութեան անուան նույն-
րեալ եկեղեցիներ Հոգեգալստեան օրը նկատեն սեպհա-
կան տօնախմբութեան օր :

ԵՕԹՆ ՇԱԲԱԹՆԵՐ .— Հայ Եկեղեցւոյ կանոննե-
րուն համեմատ հարսնիք կը կատարուի այն շա-
բաթներուն մէջ որ տէրունի ու պահք չեն, եւ ասոնք
ալ ստէպ հանդիպելով՝ հարսնիք ընելու միջոցներ
միշտ ընդհատ են եւ կարծ միջոցով, եւ տարւոյն մէջ
միայն Վարագայ խաչէն մինչեւ Յիսնակաց բարե-
կենդան անգամ մը եօթը շարունակեալ շաբաթներու
կը հանդիպինք յորս հնար է հարսնիք ընել : Այդ
բացառիկ տեւողութիւնը նշանաւոր ըրած է այդ մի-
ջոցը եւ խաչի եօթը շաբաթները յատուկ նշանակութիւն
ստացած են՝ իբրեւ հարսնիքներու եւ ուրախութեանց
միջոց մը, որ հունձքէն ու այգեկութքէն վերջը վա-
լով՝ գաւառներու մէջ յարմարութիւնը կը շատցնէ :
Եօթն շաբաթները երբեմն ութը կ'ըլլան, երբոր
Խաչվերացի տօնը Սեպտեմբերի 11-ին ու 12-ին կը կա-
տարուի :

ԶԱՏԻԿ կը կոչուի մեր մէջ հրէական Պասեֆի տօ-
նը. եւ որովհետեւ հրէարէն բառին բուն թարգմանու-
թիւնը չէ, անհաւանական չ'ըլլար կարծել թէ Զատիկ
յորջորջումը բնիկ ու սեպհական հայ ծաղում ունի եւ
եղանակներու զատուելէն կամ դիշերահաւասարով
տարւոյն երկու մասերուն իրարմէ զատուելէն առ-
նուած անուն մը եւ հեթանոսական ժամանակներէն
մնացած տօն մըն է, որ միջոցներուն համեմատու-
թեամբ հրէական Պասեֆին համահաւասար նկատուած

է, այնպէս որ նոյնիսկ Ս. Գրոց Պատե՛ք բառը «Զատիկ» բառով թարգմանուած է: Հրէական Պատեքը քրիստոնէութեան մէջ Քրիստոսի Յարութեան տօնին վերածելով՝ այդ վառաւոր տօնն ալ «Զատիկ Յարուքեան» կոչուած է մեր մէջ: Քրիստոսի Յարութեան վրայ այդ անուան ներքեւ կը խօսուի:

ԷԶՄԻԱԾՆԻ ՏՕՆ.— Ս. Լուսաւորիչը Խոր Վիրապէն ելլելէն ու Քրիստոսի հաւատքը Հայոց մէջ քարոզել սկսելէն ետքը տեսաւ այն նշանաւոր տեսիլքը, ուր Միաժինն երկինքէն իջնելով՝ ձեռքը բռնած ոսկի մուրճով բաղխեց այն տեղը՝ ուր էր Սանդարամետի պետնափոր մեհեանը եւ այժմ կը դանուի Էջմիածնի տաճարը. եւ այս հրաշալի կերպով նշանակեց Հայ Եկեղեցւոյ երկնային հաստատութիւնը: Այդ տեսիլքին օրը ճշդելով եւ թուականները զննելով կը պատենք թէ տեղի ունեցան 302 Յունուար 25-ին. իսկ Վիրապէն ելքը տեղի ունեցած էր 301 աշնան: Միաժնի իջումն ու Հայ Եկեղեցւոյ հաստատութիւնը թէ՛ ընդհանրապէս Քրիստոսի Եկեղեցւոյ եւ թէ ի մասնաւորի Հայ Եկեղեցւոյ տօնն է, եւ իբր եկեղեցւոյ տօն կը կատարուի Հոգեգալուստէն ետքը եկող Բ. Կիրակին, Զատիկի Ժ. Կիրակին, կամ Զատիկէն 64 օր ետքը: Միշտ 35 օրերու շարժականութեամբ՝ Մայիս 24-էն մինչեւ Յունիս 27 կրնայ հանդիպիլ: Այդ տօնին անունը դրուած է «Տօն Եկեղեցւոյ հաստատեալ ի Ս. Լուսաւորչէ» կամ աւելի համառօտ կերպով «Տօն Կաթողիկէ Էջմիածնի»:

ԸՆԹՐԻՒՔ ՏԵԱՌՆ.— Աւարդ Եջ. օր կը կատարուի Քրիստոսի վերջին ընթրիքին յիշատակութիւնը, ուր Հաղորդութեան խորհուրդն ալ հաստատուեցաւ: Աւարդ Եջ. ի պատկանող դանազան յիշատակները դա-

նազան ժամանակներու բաժնուած են եւ ըստ այսմ
ընթրիքին յիշատակութիւնը կը պատասխանէ պա-
տարագին՝ որ յատուկ արարողութիւններով կը կա-
տարուի նոյն օր, եւ ուր նշանաւոր տեղը կը բռնէ
Վերաբերման ու Սրբասացութեան հանդիսաւորութիւ-
նը :

ԸՆԾԱՅՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.— Աստուածածնի
առաջին կեանքը Աւետարաններու մէջ յիշուած չէ,
բայց աւանդութեամբ զիտենք թէ Մարիամ իր Յո-
վակիմ ու Աննա ծնողքին ամուսնեան զաւակն եղած
եւ ուխտով ստացուած է. եւ այս ուխտին համեմատ
Յովակիմ ու Աննա իրենց միամօր զաւակ Մարիամը
երեք տարեկան եղած ատեն տաճարին ընծայած են,
որպէս զի հոն նուիրուած այրիներու եւ կոյսերու
հսկողութեան ներքեւ աստուածպաշտութեան մէջ
զարգանայ եւ տաճարին ծառայէ: Այս ընծայման
կամ նուիրման տօնը կը կատարենք հաստատապէս
Նոյեմբեր 21-ին՝ ո՛ր օր ալ հանդիպի, հետեւելով
Յոյն ու Լատին եկեղեցիներու սովորութեան՝ իբր զի
այդ տօնը մեր հին տօնացոյցներու մէջ չ'երեւիր
բնաւ, եւ հազիւ երեք դարէ ի վեր մուտ դտած է մեր
մէջ, նախ կամաւոր եղած, եւ յետոյ պարտաւորիչ
դարձած:

ԹԱՂՈՒՄՆ ՏԵԱՌՆ.— Քրիստոսի թաղման տօնը
կը կատարուի յատկապէս Աւագ Շաբաթ օրը, բայց
թաղման գլխաւոր կարգը Աւագ Ուրբաթ իրիկունն
է, Աւետարանին ցոյց տուած ժամերուն համեմատ:
Մեր տօնացոյցին մէջ միայն հանդիսաւոր նախատօ-
նակ մը կայ նշանակուած, շարականէն զատ զիրք
ու Աւետարան ու Սուրբ Աստուած ալ աւելցնելով:
Իսկ այժմ սովորութիւն եղած է յոյներու նմանու-

Թեամբ թափօր ալ դառնալ, եւ թաղման գերեզման մըն ալ պտըտցնել աւելի կամ նուազ զարդարանքներով պատրաստուած՝ որ հին արարողութեան պահանջէն դուրս է: Ինչպէս Աւագ Ուրբաթ իրիկուն թաղման կարգ կը կատարուի, այնպէս ալ Աւագ Շաբաթ երեկոյ Յարութեան կարգ կը կատարուի ճրագալոյցով, պատարագով ու նախատօնակով: Աւագ շաբաթ օրը 35 օրերու շարժականութեամբ Մարտ 21-էն մինչեւ Ապրիլ 24 կրնայ հանդիպիլ:

ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ. — Քրիստոս ուզեց որ իր վրայ ճշդիւ կատարուին ամէն օրինական պահանջները, եւ ըստ այնմ թլփատուեցաւ ալ ութօրեայ եղած ատեն (Ղուկ. Բ. 21): Տօնացոյցը Աստուածայայտնութեան Ը. օրը թլփատութեան տօնը կը յիշէ, սակայն շարականներու եւ երգերու մէջ բնաւ այդ յիշատակութիւնը չկայ: Օրացոյցները կարծես խուսափիլ ուզելով թլփատութեան յիշատակութենէն, ամէնն ալ միաձայնութեամբ «Տօն Անուանակոչութեան» կը գրեն: Տօնին օրն է Յունուար 13 հաստատապէս, ո՛ր օր ալ հանդիպի, եւ միանգամայն հրամայեալ տօն է:

ԼՈՒՐ ՕՐ. — Կիրակին տէրունական տօն է. իսկ շաբթուան մնացած օրերը կը կոչուին լուր օր, բայց այսպէս կոչուելուն բուն բացատրութիւնը պիտի չկրնանք ստուգաբանօրէն ճշդել: Եթէ շաբթուան օրերէն մէկը կիրակիի նման տէրունական դառնայ, լուր օր ըլլալէ կը դադրի, բայց եթէ տէրունի տօն մը շաբթուան մէջ հանդիպելով՝ տօնական հանգամանք չունենայ, այն լուր օր ըլլալէ չի դադրիր եւ կը կոչուի տէրունի ի լուրն: Ժողովրդական առմամբ լուր

օրը գործի օր է, գործէ դադրելու հրաման չկայ կամ հրամայեալ տօն չէ:

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ .— Ամէն պտղաբերութեան երախայրիքը օրհնութեամբ Աստուծոյ նուիրել եթէ ոչ օրէնք գոնէ բարի սովորութիւն մըն է. սակայն ամէն պտուղներուն օրհնութիւնը զատ-զատ կատարել երկար աշխատանք կրնար ըլլալ: Խաղողն իբր պտուղներու ազնուագոյնը, իբր ուրախացուցիչ դինւոյ հիւթը, եւ իբր հաղորդութեան խորհրդանշանը, ամէնուն տեղ կ'օրհնուի եկեղեցւոյ մէջ հանդիսապէս ու ծիսական կարգադրութեամբ: Խաղող-օրհնէքի օրն Աստուածածնի տօնն է, ոչ այնչափ տօնին հետ ներքին կապակցութեամբ, որքան եղանակին յարմարութեան ու խաղողներուն հասունացուն ժամանակին պատճառաւ: Հարաւային գաւառներ ուր կանխահաս է պտղաբերութիւնը՝ Վարդաւառին եւ աւելի կանուխ ալ խաղող օրհնելու սովորութիւնն ընդունուած է:

ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ .— Քրիստոսի խաչելութեան տօնը կը կատարուի Աւագ Ուրբաթ օրը, բայց որովհետեւ Աւագ Շաբթուն վերջին օրերուն շատ մը տնօրինական յիշատակներ միանգամայն կը կատարուին, անոնք օրուան զանազան մասերուն վրայ կը բաշխուին, եւ ըստ այսմ խաչելութեան կարգը կը կատարուի յատկապէս Աւագ Ուրբաթ ցերեկին:

ԽԱԶԻ ՏՕՆ .— Խաչին պատիւը ու նոյնիսկ պաշտօնը՝ ընդհանուր է ամէն եկեղեցիներու մէջ. աղօթքներ կուղղուին խաչին, կը բարձրացուի խաչին զօրութիւնը, խաչին կը վերագրուին այնպիսի ձիրքեր ու արդիւնքներ՝ որ անձերու սեպհական են եւ ոչ ի-

րերու, մինչեւ իսկ խաչը կը նկատուի իբր միջնորդ
ու իբր դործիչ: Ընդհանրապէս խաչ ըսելով՝ կ'իմա-
նանք նոյն իսկ Քրիստոսի խաչելութեան ծառայած
քառաթեւը՝ որ խաչափայտ ու կենաց փայտ եւս կը
կոչուի, բայց բուն խաչին վերաբերեալ ամէն պա-
րադաները կը վերադրենք ամէն արուեստակերտ
խաչի ալ՝ որ օծեալ ըլլայ, հոգ չէ թէ ի՛նչ նիւթէ ըլլայ:
Անշուշտ հնար չէ մտածել որ անշունչ նիւթը ըլլայ
արդեանց տէրն ու պատճառը, այլ ամէն ինչ՝ պա-
տիւ ու պաշտօն, գովեստ ու արդիւնք կը բարձրա-
նան առ Սաչեալն եւ առ Փրկիչն եւ խաչն իբր դործիք
փրկութեան կ'անձնաւորէ իր մէջ նոյն խաչեալ
Փրկչին անձնաւորութիւնը: Այդ սկզբամբ խաչի տօ-
ներ ալ հաստատուած են եկեղեցւոյ մէջ, յորս խաչը
կը փառաւորուի: Այս տօները կապակցութիւն ունին
ուեւէ պատմական պարադայի մը հետ, եւ երբ խա-
չելութեան յիշատակով կը փառաւորուի խաչը, խա-
չեալ Փրկիչն է որ կը պաշտուի: Մեր եկեղեցւոյ մէջ
կատարուած խաչի տօներն են 1. Սաչվերաց, 2. Գիւտ
խաչ, 3. Նրեւման խաչ, 4. Վարազայ խաչ, որոնց
վրայ այդ անուններուն ներքեւ կը խօսուի: Ասոնց-
մէ դատ խաչի տօն կը կատարուի նաեւ խաչի եօթ-
նեակին՝ Բշ., Ուր., Շք. օրերը, որոնք իրենց յատուկ
յիշատակութիւնը չունին, այլ Սաչվերացի տօնին ու
յիշատակին շարունակութիւնն են, եւ միեւնոյն դի-
տումով հաստատուած: Սաչին վերացումը կամ փա-
ռաւորութիւնը եօթնեակ մը տօնախմբելու համար՝
յաջորդ օրերէն երեքը խաչին, երեքն ալ եկեղեցւոյ
նուիրուած են:

ԽԱՉՎԵՐԱՑ ԿԱՄ ՎԵՐԱՑՄԱՆ ԽԱՉ ամենէն հինն է
խաչի տօներուն, եւ իր պատմական սկզբնաւո-
րութիւնն ալ մինչեւ Քրիստոնէութեան սկիզբը կը

բարձրանայ, որովհետեւ խաչը վերացնելու եւ փա-
 առաւորելու առաջին պործողութիւնը կը վերագրուի
 Տեառնեղբայր Յակոբ առաքեալին, որ Երուսաղէմի
 առաջին եպիսկոպոսն եղած է եւ որ խաչը բարձրա-
 ցընելով ի սես ժողովրդեան «Սաչի քո, Քրիստոս,
 երկիր պաղանեմք» օրհնութիւնն ու աղօթքն ըսած է :
 Դժուար է հաստատել թէ Յակոբ Տեառնեղբայր բուն
 իսկ Քրիստոսի խաչը բարձրացուցած ըլլայ, ենթադրե-
 լով որ առաքեալք յաջող միջոցով մը կրցան Քրիս-
 տոսի խաչէն մաս մը ձեռք բերել, բայց անհաւանա-
 կան չէ նմանութեամբ շինուած քառաթեւով մը այդ ա-
 րարողութիւնը կատարուած է : Սաչի փառաւորութեան
 երկրորդ պարագայ մըն ալ խաչին պիւտն է, երբ
 Հեղինէ դշխոյ զայն պանելէն ետքը մեծահանդէս փա-
 ռաւորութեամբ զետեղեց Ս. Յարութեան տաճարին
 մէջ : Սաչվերացի տօնին նախընթաց օրը նաւակա-
 տիքի յիշատակ կատարելը, եւ այդ յիշատակը Ս.
 Յարութեան տաճարին նաւակատիքի տարեդարձն ըլ-
 լալը, Սաչի պիւտն ու Սաչվերացը ներքին կերպով
 մը իրարու կը միացնեն : Երրորդ պարագան ուր
 խաչը յատուկ փառաւորութիւն ստացաւ՝ Սաչի գե-
 րեդարձն է : Երուսաղէմ Պարսից կողմէն առնուեցաւ
 610-ին, եւ ուրիշ բաներու հետ Սաչափայտն ալ տա-
 րուեցաւ իբր պերի կամ իբր աւար, բայց 627-ին
 Հերակլ կայսրը Պարսից յաղթելով՝ Սաչափայտն ետ
 պարձուց եւ 628-ին զայն փառաւոր հանդէսով Ս.
 Յարութեան տաճարին մէջ զետեղեց, եւ այս պարա-
 գայէն ետքը յոյները սկսան Սաչի Վերացման տօն
 կատարել Սեպտեմբեր 14-ին : Մեր եկեղեցին, որ մեծ
 տօները Կիրակիի կը փոխադրէ, Սաչվերացի տօնն
 ալ կը կատարէ Սեպտեմբեր 14-էն ետք կամ յառաջ
 հանդիպող մերձաւորապէս Կիրակիին, որ է Սեպ-
 տեմբեր 11-էն 17 օրերուն մէջ հանդիպող Կիրակիին :

Տօնական յիշատակը երեք եղելութեանց հետ ալ կապ
ունի, բայց գլխաւոր կը նկատուի Տեառնեղբայր Յա-
կոբ առաքեալէն մնացած աւանդութիւնը :

ԾԱՂԿԱԶԱՐԴ.— Այս անունով կը կոչենք մենք
Քրիստոսի Ներուսաղէմ գալստեան տօնը, որ Զատիէն
չարաթ մը առաջ կը կատարուի, եւ սակայն ո՛չ աւե-
տարանական պատմութեան եւ ոչ աւանդական յիշա-
տակութեան եւ ոչ օրուան արարողութեանց մէջ ծա-
ղիկի խօսք կայ : Ուրիշ ազդերու մէջ ալ այդ իմաս-
տով բան մը չկայ. հետեւաբար Ծաղկազարդ անունը
գում հայ ըլլալով հանդերձ, տօնական կամ քրիստո-
նէական ծագում ալ չունի, իրաւացի կը դտնենք հե-
տեւցնել թէ Ծաղկազարդը հին ու հեթանոսական տօն
մըն է հայոց մէջ, նման Վարդավառ անուան, որ
ժամանակներու եւ պարագաներու նմանութեամբ
Գալուստ յերուսաղէմ տօնին հետ խառնուեցաւ, եւ
մէկուն անունը միւսին տրուեցաւ :

ԾԱՌԶԱՐԴԱՐ անուն մըն ալ կայ որ ժողովուրդին
բերնին մէջ կը տրուի Ծաղկազարդին : Եթէ այդ ա-
նունն ալ հին ժամանակաց տօնի մը անունը չէ Ծաղ-
կազարդէն անկախ, կրնայ քրիստոնէական ծագում
ունեցած ըլլալ, որովհետեւ Քրիստոսի յերուսաղէմ
գալստեան առթիւ ծառերու ճիւղերով հանդէս կազ-
մուեցաւ, եւ մինչեւ հիմա ճիթենույ, եւ ուր ճիթենի
չկայ՝ ուռենիի ոստեր կը բաշխուին ամէնուն եկե-
ղեցւոյ մէջ Ծաղկազարդի առտուն :

ԾՆՈՒՆԻ ՏԵԱՌՆ.— Աստուածայայտնութեան տօ-
նին մէջ յիշատակուած գլխաւոր խորհուրդը Քրիս-
տոսի ծնունդն ըլլալով՝ մեր մէջ ալ ընդհանրացած
սովորութիւն է Աստուածայայտնութեան տօնը եւ

ճրադաւոյցը, ութօրէքը, պահքն ու բարեկենդանը
Ծնունդի անունով կոչել: Նորէն բացատրուելիք կէտ
մը չկայ:

ԾՆՈՒՆԴ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.— Տիրամօր ծնունդը
Աւետարանին մէջ գրուած չէ, բայց հաստատուն ա-
ւանդութեամբ գիտենք թէ անոր ծնողքն էին Յո-
վակիմ կամ Եղիակիմ Դաւթի ցեղէն, եւ Աննա՝ դուս-
տրը Յակոբայ Ղեւեայ ցեղէն, եւ թէ Աննա ամուլ էր
եւ ուխտով ու աղօթքով ունեցաւ իր միամօր զաւա-
կը Մարիամ: Ծննդեան տեղն ալ յայտնի չէ. բայց
հաւանարար Բեթղեհէմէն կամ Նազարէթէն տար-
բեր տեղ մը չէր: Իսկ ժամանակն ալ Քրիստոսի
ծնունդէն 17 կամ 18 տարի առաջ, զի սովարարար
16 կամ 17 տարեկան եղած կը կարծուի Մարիամ
Աւետման ատեն: Տօնը կը կատարուի հաստատուն կեր-
պով Սեպտ. 8-ին, ո՛ր օր ալ որ հանդիպի, բայց
Հայ Եկեղեցոյ մէջ ԺԳ. դարուն միայն սկսած է
հաստատուն կերպով տօնուիլ Աստուածածնի ծննդեան
յիշատակը, եւ հին տօնացոյցներու մէջ Պաչի բարե-
կենդանի կիրակիին ալ միացած կը գտնուի:

ԾՈՄ.— Եկեղեցոյ նախնական սովորութեան մէջ
պահիք կոչուածը կերակուր չուտելն էր, հետեւաբար
կ'իմացուէր ինչ որ այժմ մենք կ'իմանանք ծով բա-
ռով: Իսկ երբ բոլորովին անօթի մնալ չկրցողներու
ներուեցաւ թեթեւ եւ չկշտացնող բանջարեղէն ուտել՝
առանց պահեցողութիւնը աւրուած սեպելու, պահիք
բառին իմաստը սեպհականուեցաւ մսեղէն ու կենդա-
նական կերակուրներէ զգուշանալով՝ բուսեղէններով
շատանալուն, եւ ծով բառը դործածուեցաւ առանց
ուտելու պահեցողութեան: Եկեղեցոյ մէջ պահքէն
զատ ծով ալ կը պահուի Առաջաւորաց հինգ օրերուն

եւ Մեծ Պահֆի իւրաքանչիւր եօթնեակին առաջին
հինգ օրերուն, շաբաթ ու կիրակի օրերէն զատ, իսկ
մնացեալ բոլոր պահֆերը ծով չունին: Ծով պահելու
օրերը պատարագ մատուցանելն ալ կը խափանուի:

ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ.— Այդ անունը կը տրուի Զատիկի
Գ. կիրակիին որ Աշխարհամատրան տօն է, բայց
բնաւ եկեղեցական ծագում կամ նշանակութիւն չունի,
այլ հաւանաբար ժողովրդական հանդէսէ մը առնուած
է, իբր դաւարից տօն եւ կանաչներով զարդարուելու
պարագայ, թէեւ պատմական յիշատակներ կը պակսին
այս մասին:

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ.— Այսպէս կը կոչուի Յինանյ
Դ. կիրակին, որ Զատիէն 22 օր ետքը կու գայ եւ
Զատիին պէս 35 օր շարժականութիւն ունի: Այս ան-
ունը բնաւ եկեղեցական ծագում կամ նշանակու-
թիւն չունի, այլ Կանաչ կիրակի անունին նման
զարնանային եղանակէն առնուած ժողովրդական յոր-
ջորջում մըն է, որովհետեւ դաշտերը կանաչնալէն
ետքը նախ եւ առաջ կարմիր կակաչներով կը զարդա-
րուին:

ԿԻՐԱԿԻ շաբթուան առաջին օրն է, հին միա-
շաբաթին, որ Քրիստոսի Յարութեան նուիրուելով՝
կիրակի կամ Տէրունի անունը ստացաւ, եւ ամբողջ
քրիստոնէութեան համար հրամայեալ հանգստեան եւ
աստուածային պաշտաման նուիրուած օրն եղաւ:
Հայ Եկեղեցին ի սկզբանէ անտի նախադասեց որեւէ
մեծ յիշատակ կամ տօն՝ կիրակի օր կատարել, եւ
շաբթուան մէջ ուրիշ հրամայեալ հանգստեան օր
չունենալ: Միայն վերջին դարերուն մէջ հետզհետէ
շաբթուան լուր օրերուն մէջ ալ հրամայեալ հանգըս-

տեան օրեր սկսան աւելնալ. ասոնք ա՛յնչափ Կիրակիի
 դադափարին հետ միացած են որ ժողովուրդը մինչեւ
 հիմա այդ օրերուն համար Կիրակի բռնել բացա-
 տրութիւնը կը գործածէ: Կիրակիէ դուրս հրամայեալ
 հանդատեան օրեր այժմեան սովորութեան մէջ հե-
 տեւեալներն են. 1. Ծննդեան առաջին օրը, Ը. օրը
 ու Տեառնընդառաջը, 2. Հինգ տաղաւարներուն,
 Ծննդեան, Յարութեան, Այլակերպութեան, Վերափոխ-
 ման ու Սաչվերացի Բ. օրերը, 3. Աւագ Եջ., Յա-
 րութեան Գ. օրը եւ Համբարձման տօնը, 4. Աստուա-
 ծածնի Աւետման, Ծննդեան, Ընծայման ու Յղութեան
 տօները, 5. Լուսաւորչի Գիւտ նշխարաց եւ Առաջին
 Լուսաւորչաց տօները, ընդամէնը 17 օր: Իսկ տեղ-
 տեղ իբր հրամայեալ տօն կը պահուին եւս Լուսա-
 ւորչայ Մուտն ի Վիրապը եւ Ելն ի Վիրապէն, Թա-
 դէոսի ու Սանդխտոյ, Սահակայ ու Մեսրոպայ եւ
 Վարդանանց տօները:

ԿՐԿՆԱԶԱՏԻԿ ժողովրդական անուն մըն է որ եր-
 բեմն կը տրուի Զատիկի Ը. օրուան կամ Նոր Կիրա-
 կիին, սակայն բնաւ եկեղեցական նշանակութիւն
 չունի:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ.— Քրիստոսի Տեառն մերոյ
 մարմնոյ ու արեան խորհրդոյն ի պատիւ յատուկ տօն
 մը ունին լատինները, որուն ծաւումը նոր է: Իսկ
 հին եկեղեցին այդ խորհրդական տօնախմբութիւնը կը
 կատարէ Աւագ Հինգշաբթի օր, որ Հաղորդութեան
 խորհրդոյ հաստատութեան յիշատակն է: Մեր մէջ
 այդ յիշատակութիւնը աւելի յատուկ նշանակու-
 թիւն մը ստացած է, որովհետեւ Աւագ Հինգշաբթին
 հրամայեալ տօն կը պահուի, մինչ ուրիշ եկեղեցիներ
 այդ սովորութիւնը չունին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՆ.— Քրիստոս իր յարութենէն ետք քառասուն օր երկրիս վրայ մնաց (Գործ. Ա. 3), յետոյ իր յարուցեալ ու փառաւորեալ մարմնով երկինք համբարձաւ: Այդ խորհրդական տօնը կը կատարուի Չատկի քառասներորդ օրը, Հինդշարթի, որ 35 օրերու շարժականութեամբ Ապրիլ 30-էն մինչեւ Յունիս 3 կրնայ հանդիպիլ: Համբարձման տօնը կ'երեւայ թէ հին ժամանակ մեծ նշանակութիւն չունէր շաբթուան մէջ իյնալուն, վասնզի նախատանակ իսկ չունի, բայց միջին դարերուն մէջ գլխաւոր տէրունիներու ձեւը ստացած է: Համբարձումէն Հոգեգալուստ տաքը օրերը՝ առանց յատկապէս Համբարձման տօն ըլլալու, Յարութեան շարականներուն ու սաղմոսներուն հետ՝ Համբարձման նուիրեալ շարականներ ու սաղմոսներ ալ ունին:

ՀԱՐՍԱՆԻՔ.— Օրացոյցները սովորութիւն ունին նշանակել այն օրերը ուր կրնայ հարսնիք ըլլալ, եւ այն ալ կիրակի օրուան առջեւ կը գրեն, մինչ բուն կիրակի օրը հարսնիք չ'ըլլար: Օրացոյցներուն նպատակն է իմացնել թէ այն շաբթուան մէջ հարսնիք կրնայ ըլլալ: Ընդհանուր կանոն է որ այն օրերը որ պահք պիտի պահուի, եւ այն օրերը որ տէրունի տօն կայ, ըլլա՛յ հրամայեալ տօն, ըլլայ տէրունի ի լուրն, հարսնիք ընել ներելի չէ, որով կը մնան այն օրերը որ սրբոց տօն է եւ պահք ալ չկայ: Սովորաբար հարսնիքները Բշ. օր կ'ըլլան, բայց Գշ. ու Եշ. օրերն ալ կրնայ ըլլալ, ինչպէս նաեւ շաբաթ օրերը մինչեւ կիրակամուտի ժամերգութիւնը: Օրերը եկեղեցական օրէնքով երեկոյէ երեկոյ կը համրուին, եւ ինչպէս Շաբաթ իրիկուրնէ ետք կիրակամուտ է, այսպէս ալ կիրակի երեկոյէն ետքը Երկուշաբթի կը նկատուի:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ, որ է «Գալուստ Հողւոյն Սրբոյ յա-
 աքեալսն» : Քրիստոս վերջին ընթրիքին ատեն խոստա-
 ցաւ առաքեալներուն զրկել Ս. Հողին (Յովհ. ԺԶ. 71),
 եւ Համբարձման օրն ալ հրամայեց Երուսաղէմի մէջ
 սպասել մինչեւ Ս. Հողին ընդունին (Ղուկ. ԻԳ. 49),
 ինչ որ կատարուեցաւ Չատկին յիսուն օրերուն լրանա-
 լէն ետքը (Գործ. Բ. 4), յանկարծ հնչիւնի մը, հրեղէն
 լեզուներու եւ ա՛յլ լեզուներով խօսելու նշաններով :
 Ս. Գիրքը «ի կատարել աւուրցն Պենտեկոստէից» կ'ըսէ
 (Գործ. Բ. 1), եւ Քրիստոսի մահուան տարին Չատկի-
 կը Ուր. օր տեղի ունեցած ըլլալով, Պենտեկոստէն =
 Յիսունքը պէտք էր Ուր. օր լրանար, բայց աւանդու-
 թիւնը Կիրակի օր եղած կ'ընդունի այդ գալուստը եւ
 մենք ալ այժմ Յարութեան օրէն յիսուն օր հաշուելով՝
 Կիրակի օր կը կատարենք Պենտեկոստէն : Այդ տօնն ալ
 Չատկին հետ 35 օրուան շարժականութիւն ունի եւ
 Մայիս 10-էն Յունիս 13 կրնայ հանդիսիլ : Հին դա-
 րերու մէջ մէկ օր միայն կը տօնուէր Հողեղալուստը եւ
 կը լրանային Ղազարու յարութենէն սկսեալ 58 օրերու
 տէրունական տնօրինութեան շարայարեալ յիշատակ-
 ները : Հողեղալստեան յաջորդ օրէն կը սկսէր Եղիական
 պահքը : Ծնորհալին կարգադրեց ամբողջ շաբաթը ի
 պատիւ Հողւոյն Սրբոյ տօն կատարել եւ յատուկ շա-
 րականներով ու ընթերցուածներով զարդարեց, եւ ե-
 կեղեցւոյ մէջ կատարուած կարգը փոխեց, այլ կերա-
 կուրներու պահքը չվերցուց :

ՀՐԱՄԱՅԵԱԼ ՏՕՆ կը կոչուին այն օրերը յորս
 հրամայուած է հանգիստ ընել ու եկեղեցի երթալ, աշ-
 խատութենէ դադրիլ եւ հողեւորութեամբ անցընել :
 Այդպէս են բոլոր տարւոյն 52 Կիրակի օրերը (որ 53
 կ'ըլլայ եթէ տարին Կիրակիով սկսի) : Կիրակիէն

սուրս հանգիստ ընելու հրամայեալ օրերն ալ «կիրա-
կի» կոչուելուն, այն տեղ ցուցակը դրուած է :

ՁԻԹԵՆԻ. — Եկեղեցւոյ մէջ ձիթենւոյ ոստեր կը
վործածուին Ծաղկազարդի առտուն եւ կը բաշխուին
թէ՛ պաշտօնեաներուն եւ դպիրներուն եւ թէ ժողովուր-
դին «Փառք ի բարձունս»ի ատեն, եւ իւրաքանչիւրին
սատը կը մնայ իրեն նուիրական յիշատակ մը : Այդ
սովորութիւնը հին է եւ Օձնեցին ալ կը յիշէ : Ձիթենիի
ոստերը յատուկ օրհնութիւն չունին : Ուր ձիթենի
չի հասնիր՝ ուռենիի ճիւղեր կը փոխանակուին, մինչեւ
իսկ ցուրտ երկիրներ տերեւազուրկ ճիւղեր կը վոր-
ծածուին : Արմաւենւոյ ճիւղերով հիւսկէն ու զարդա-
րուն ոստերու կիրառութիւնը Արեւմուտքի մէջ ընդ-
հանրացած է, բայց մեր մէջ սովորական չէ, թէեւ
աւետարանն ու շարականը ձիթենւոյ հետ արմաւենին
ալ կը յիշեն :

ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՒՆ. — Քրիստոսի նշանաւոր
հրաշքին յիշատակութիւնն է, որ կը կատարուի իբր
տէրունի տօն եւ իբր փրկագործ տէրունականներուն
չարքին նախագուռը : Ծաղկազարդը յառաջող Շաբաթ
օրը Ա. Ղազարու տօն չէ, եւ այդ առանձին կը կատա-
րուի Խաչի Զ. Երկուշաբթին : Ղազարու Յարութիւնը
Ծաղկազարդի նախընթաց օրը տեղի ունեցած չէ, ո-
րովհետեւ այդ հրաշքէն ետքը Քրիստոս պահ մը Եփ-
րայիմ քաշուեցաւ (Յովհ. ԺԱ. 54), եւ նորէն Չատ-
կի առթիւ Բեթանիա եկաւ, եւ Երուսաղէմ մտնելուն
նախընթաց Շաբաթ օրը Ղազարու տան մէջ պատուասի-
րական ընթրիքի մը ներկայ վտնուեցաւ (Յովհ. ԺԲ.
29), եւ այդ ընթրիքին օրուան հետ միացուցած է ե-
կեղեցին նոյնիսկ Ղազարու յարութեան ալ յիշատա-
կը : Տօնը Չատիկին հետ 35 օրերու շարժականութիւն

ունի եւ Մարտ 14-էն մինչեւ Ապրիլ 17 կրնայ հանդիպիլ :

ՃՐԱԳԱԼՈՅՅ .— Մեծ տօներուն նախատօնակի կրեկոները սովորութիւն էր ճրագ լուցանել եկեղեցւոյ մէջ . այդ սովորութիւնը նոյնիսկ ամէն կիրակամատին ալ տեղի կ'ունենար , եւ ԼԱՅԱ Զուարթ երգը «Օրհնութիւն ճրագաց» կոչուած է : Բայց հիմա ճրագալոյց անունը կը դործածուի միայն Մենդեան ու Զատիկի նախընթաց երեկոներուն արարողութեան՝ ամէնուն ձեռքը մոմեր տալով . եւ նոյնիսկ երկու տօներուն նախընթաց ամբողջ օրը ճրագալոյց կը կոչուի իբրեւ օր պատրաստութեան մեծ տօնին :

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ .— Երկու իմաստով կ'առնուի այս յիշատակը , մէկը Յուդայի կողմէն կատարուած գաղտնի սակարկութեան իմաստով , որ տեղի ունեցաւ Աւագ Դշ . օր , եւ նոյն օրուան տօնական յիշատակն ալ կը կաղմէ , բայց իբրեւ տօն չի յիշուիր : Իսկ երկրորդը կ'առնուի իբր Քրիստոսի ձերբակալման եւ իր թշնամիներուն ձեռքն իյնալուն գործողութիւն՝ որ տեղի ունեցաւ Աւագ Հինգշաբթիէ Աւագ Ուրբաթ գիշերը : Աւելի այդ երկրորդ իմաստով կ'իմանայ եկեղեցին Մատնութեան յիշատակը , եւ Աւագ Ուրբաթի գիշերային եւ առաւօտեան մաղթանքներն ալ Մատնութեան յիշատակով կը զրուցուին :

ՄԵԾ ՊԱՀՔ .— Եկեղեցւոյ օրինադրած պահքերուն ամենէն երկարը Մեծ Պահք անունն առած է : Բուն Բարեկենդանի յաջորդ Բշ . Էն սկսեալ մինչեւ Աւագ Շբ . օր կը տեւէ 48 օր շարունակ , կամ եօթը եօթնեակներու միջոց : Այդ պահքին 40 օրերը՝ այսինքն Բուն Բարեկենդանի յաջորդ Բշ . Էն մինչեւ Ղաղարու Յարութեան

նախընթաց Ուր. օրը, Բուն Քառասնորդական Մեծ
 Պահքը կը կազմեն, եւ այժմեան իմացուած կերակուր-
 ներու պահքէն զատ ծոմ ալ պիտի պահուի՝ Շաբաթ ու
 կիրակի օրերէն զատ: Շաբաթ օրեր սրբոց տօն կը
 կատարուի, բայց պահքը չի լուծուիր, իսկ միւս հինգ
 օրեր եկեղեցական սլաշտամանց մէջ ալ պահոց կարգ
 կը կատարուի: Մեծ Պահքին Բ. շաբաթը պզտիկ տար-
 բերութիւն մը ունի միւս շաբաթներէն ընթերցուածնե-
 րուն երկարութեամբ, որովհետեւ այս երկրորդ շա-
 բաթը Մեծ Պահքէն զատ՝ չորս եղանակներու պահքե-
 րէն վարնանամուտի շաբաթապահքը կը կազմէ, եւ իբր
 կրկին պահք կը նկատուի: Իսկ Աւագ Շաբաթը Մեծ
 Պահքին յարակից մաս մըն է եւ Յարութեան շաբա-
 թապահքը կը կազմէ. Ղազարու Յարութեան ու Ծաղ-
 կազարդի օրերուն պահքն ալ հարկաւ Յարութեան օրով
 պահքը լուծելու յարմարութենէն առաջ եկած է, որով
 Քառասնորդական պահքն ու Յարութեան շաբաթա-
 պահքն իրարու կը կցուին եւ ամբողջ պահք մը կը կազ-
 մեն ի պատիւ Քրիստոսի տնօրինութեանց: Երբ Մեծ
 Պահոց մէջ պատահաբար հանդիպին Տեառնընդառաջի
 ու Աւետման տօները, եկեղեցական արարողութեանց
 համար Մեծ Պահոց բոլոր պահանջքները կը դադրին,
 վարապոյր ալ կը բացուի եւ բաց պատարագ կը մա-
 տուցուի, բայց կերակրոյ պահքը չի լուծուիր: Իսկ
 Լուսաւորչի Մուտն ի վիրապին բաց պատարագը Սի-
 մէոն Կաթողիկոսի կարգադրութեամբ սկսած է, յա-
 ոաջապոյն միւս շաբաթներուն պէս վոց պատարագ կը
 մատուցուէր: Մեծ Պահոց յատկանիշներն են վարա-
 պոյրին փակ մնալը — որով բոլոր ժողովուրդը իբր
 ապաշխարող կը նկատուի, վոց պատարագը — որով
 ժամաւորները հին ժամանակի արտաքին դաւթի մէջ ա-
 պաշխարողներուն կը հաւասարին եւ Արեւագալի, Ճա-
 շու եւ Սաղաղականի յատուկ երգերը — որոնք կեր-

պով մը պատարագի հանդիսութեան տեղը բռնած կ'ըլ-
լան :

ՄԵՌԵԼՈՅ ՕՐ .— Հայ Եկեղեցւոյ մէջ ննջեցեալներուն համար յատուկ յիշատակութիւն ու աղօթք կ'ըլ-
լան հինդ տաղաւարներուն Բ. օրերը, որոնք հրամայ-
եալ հանգստեան տօն ալ եղած են՝ հաւատացեալներուն
դիւրութիւն ընծայելու համար իրենց մեռեալներուն
այցելելու եւ անոնց համար աղօթելու : Մեռելոցի օր
կը նկատուի Բուն Բարեկենդանի նախընթաց վերջի
ուտիք Հինգշաբթին, որովհետեւ Մեծ Պահքի մէջ
ննջեցեալներուն համար աղօթքներ կը դադրին եւ վեր-
ջին անգամ աւելի հանդիսաւոր կերպով ննջեցեալնե-
րուն համար աղօթել տալ պատշաճ էր : Տարւոյն մէջ
ամէն պահոց Ուրբաթներն ալ ննջեցեալներուն յիշա-
տակ կ'ըլլայ «Հանգստեան հարց» ըսելով, իսկ այն ամէն
օր որ պատարագ պիտի մատուցուի՝ գիշերա-
պաշտման կարգը հանգստեան շարականով, աւետա-
րանով ու երգով կը կատարուի, ի բաց առեալ կրկին
տէրունիներն՝ յորս տէրունիներէն միոյն կարգը գի-
շերապաշտման տեղ կը քաղուի ի դիւրութիւն :

ՄԻՋԻՆՔ .— Այս անունը կը տրուի Մեծ Պահքի
կէսին՝ որ տօնական նշանակութիւն մը չունի : Մեզի
համար Միջինք է Դ. Չորեքշաբթին կամ Մեծ Պահոց
24-րդ օրը, իսկ լատինաց համար յաջորդ Հինգշաբ-
թին : Միջինքէն սկսեալ՝ Սաղաղականի մէջ կ'երգուին
ստեղի շարականները ըստ աւուր պատշաճի :

ՄԻՋՈՅ .— Եկեղեցական կարգադրութեանց մէջ
երկու մեծ տօներուն միջեւ գտնուած շաբաթները Մի-
ջոց կը կոչուին, որոնց Կիրակիները նոյն տօներէն
սկսեալ կը համրուին թիւերու կարգով : Միջոցներ

կազմող տօներն են . Աստուածայայտնութիւն , Մեծ Պահք , Զատիկ , Հողեղալուստ , Վարդաւառ , Աստուածածին , Սաչ եւ Յիսնակ , եւ այդ միջոցներուն վրայ բաժնուած են բոլոր տարւոյն կիրակիները : Մեծ Պահքը ունի 7 կիրակի , Զատիկը 8 , Հողեղալուստը 7 , Աստուածածինը 4 կամ 5 , Սաչը 9 կամ 10 , Յիսնակը 7 կամ 8 , իսկ Աստուածայայտնութեան ու Վարդաւառի միջոցները բոլորովին անատոյդ են , երկուքը մէկտեղ 10 կամ 11 կիրակի ունին , եւ որչափ մէկէն կը սլակսի , միւսին վրայ կ'աւելնայ : Այդ հաշւոյն բացատրութիւնը տոմարական ըլլալով՝ մեր նպատակէն դուրս է :

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ . — Քրիստոսի մկրտութիւնը Աստուածայայտնութեան տօնին զլիսաւոր յիշատակներէն մէկն է , եւ միշտ զոյդ կ'ընթանայ Քրիստոսի Ծննդեան յիշատակին հետ բոլոր ութ օրերուն մէջ : Յատուկ կերպով Քրիստոսի մկրտութիւնը կը յիշատակուի Աստուածայայտնութեան օրը ջրօրհնէքի արարողութեամբ , եւ Ը . օրուան շարականներն ու աւետարանն ալ բոլորովին Մկրտութեան նուիրուած են , այնպէս որ Ը . օրը կրնայ իբր յատուկ Մկրտութեան տօն ըմբռնուիլ :

ՄՈՒՐՈՑ ՕՐ . — Լատին Եկեղեցւոյ սեպհական անուն մըն է որ կը տրուի Բուն Բարեկենդանի յաջորդող Չորեքշաբթիին , որ իրենց համար պահոց սկիզբն է , եւ Ծաղկազարդէն պահուած ճիթենին այրելով՝ մոխիր կը կազմեն , կ'օրհնեն եւ հաւատացեալներուն զլիսուն կը քսեն : Մեր մէջ ո՛չ այդ սովորութիւնը կայ եւ ո՛չ այդ անունը :

ՅԱԿՈՒԱՅ (Ս .) ՊԱՀՔ . — Այդ անունը կը տրուի Յիսնակաց Գ . Եօթնեակին հանդիպող շաբաթապահքին

ու անոր բարեկենդանին : Ս . Յակոբայ պատուոյն հաս-
տատուած չէ , այլ չորս եղանակներուն պահքերէն
ձմեռնամուտի շաբաթապահքն է , եւ միայն նոյն եօթ-
նեակին Շաբաթ օր Ս . Յակոբ Մծբնայ Հայրապետի տօն
ըլլալուն՝ պատահաբար այդ անունն առած է :

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ . — Միեւնոյն Աստուա-
ծայայտնութեան տօնն ու տօնական անունն է , աւելի
համառօտ բառով բացատրուած , հետեւաբար նոր բան
մը չկայ աւելցնելիք : Ըստ ոմանց Յայտնութիւն ա-
նունով կ'իմացուի մողերուն կողմէ նորածին Քրիստոս-
սի ընծայուած երկրպագութիւնը , սակայն այս յատուկ
իմաստը չի կրնար հաստատուիլ եկեղեցական կարգա-
դրութիւններէ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ . — Քրիստոսի յարութիւնը
Քրիստոնէական Եկեղեցւոյ մեծ խորհուրդն ու ամենէն
փառաւոր տօնն է : Ասոր յիշատակը կապուած է Հրէից
Պատեքին հետ որ մեր հայացի Զատիկ անունով ճանչ-
ցուած է : Քրիստոսի Յարութեան բուն տօնը , այսինքն
Զատիկը 35 օրերու շարժականութիւն ունի եւ Մարտ
22-էն մինչեւ Ապրիլ 25 կրնայ հանդիպիլ , եւ իրեն հետ
կը շարժին Զատիկէն դէպ ի վեր մինչեւ Առաջաւոր
տասը , եւ Զատիկէն դէպ ի վար մինչեւ Վարդավառ 11
շաբաթները , ընդամէնը 24 շաբաթներու շարժական
միջոց մը : Քրիստոսի Յարութեան տօնը կը սկսի
Զատիկի նախընթաց Ճրագալոյցի երեկոյէն եւ կը տեւէ
49 օր շարունակ , որուն վերջին 50-րդ օրը Հոգեգա-
լուտ է : Տարուան մէջ ալ բոլոր 52 կիրակիները Յա-
րութեան տօն են , եւ երբ ուրիշ տէրունի տօն ալ հան-
դիպի , Յարութիւնը չի ջնջուիր , այլ միւս տէրունիին
հետ կը խառնուի : Մեծ Պահոց եօթը կիրակիներուն
մէջ ալ Յարութեան յիշատակը չի ջնջուիր , ինչպէս

յայտնի է շարականներէն ու երգերէն, բայց Սիմէոն
կաթողիկոսի կարգադրութեան զօրութեամբ Յարու-
թեան պատշաճները նուազած են, եւ մաղթանքները ի
պատիւ Տէրութեան Տեառն, եւ Իւղաբերիցն ի յիշա-
տակ Թաղման Տեառն վերածուած են: Ասով հանդերձ
Յարութեան պատշաճները ի սպառ չեն վերցուած:

ՅԻՆՈՒՆՔ = ՅԻՍՈՒՆՔ. — Այս անունը կը տրուի
Զատիէն մինչեւ Հոգեգալուստ 50 օրերուն միջոցին՝
որ ամբողջովին տէրունի տօներ են ի պատիւ Յարու-
թեան եւ վերջին տասը օրերը նաեւ ի պատիւ Համ-
բարձման, իսկ վերջին յիսներորդ օրն ալ Հոգւոյն
Սրբոյ գալստեան նուիրուած է: Այդ յիսուն օրերը ամ-
բողջովին ուտիք էին, որովհետեւ Հայ Եկեղեցին չէ
ուզած Մեծ Պահքէ դուրս տէրունի օր մը պահք պահել:
Միայն Շնորհալիէն սկսեալ՝ Համբարձումէն ետքը ե-
կող երկու ուրբաթները եւ մէկ չորեքշաբթին պահքի
օր եղան կերակուրի կողմէ՝ եկեղեցւոյ մէջ տէրունի
տօնը անփոփոխ մնալով:

ՅԻՇԱՏԱԿ բացատրութիւնը հին ու եկեղեցական
առմամբ կը նշանակէ ինչ որ այժմեան սովորութեամբ
Տարեդարձ կ'անուանենք: Եկեղեցին պատշաճ դատեց
թէ՛ Քրիստոսի տնօրէնութեանց, եւ թէ սուրբ ու մեծ
անձնաւորութեանց տարեդարձները կատարել. եւ ա-
սոնք հանդիսաւորապէս կատարուելուն՝ տօն անունն
ալ ստացան: Բայց աւելի ճիշդ կիրառութեամբ «տօն»
անունը կու տանք տէրունի յիշատակներուն, իսկ սըր-
բոց տօներուն՝ «յիշատակ» բացատրութիւնը, որովհե-
տեւ մեր եկեղեցւոյ վարդապետութեան համեմատ
իսկապէս եւ բառին սեղմեալ իմաստով այդ անունը չի
գործածուիր սուրբ անձնաւորութեանց, եւ միշտ «ո-
րոց այսօր է յիշատակ» բացատրութիւնը կը գործա-
ծուի անոնց համար:

ՅԻՍՆԱԿը յիսուեն օրերու միջոց մըն է՝ որ կը յա-
 աջէ Աստուածայայտնութեան տօնը, եւ որ երբեմն
 Մեծ Պահքի պէս ամբողջովին պահք էր, բայց հիմա
 սովորական Դշ.էն եւ Ուր.էն զատ երեք շաբաթապահ-
 քերու վերածուած է. առաջին շաբաթը «Յիսնակաց
 պահք» անուենով, երկրորդ շաբաթը, որ Ձմեռնամուտի
 պահքն է՝ Ս. Յակոբայ պահք կոչուած, եւ վերջին շա-
 բաթը Ծննդեան պահք կոչուած: Յունուար 6-էն ետեւ
 համբելով յիսուեն օրեր Նոյեմբեր 18-ին կը յանդին, եւ
 անոր մերձակայ Կիրակին ալ կ'ըլլայ Յիսնակաց Բա-
 րեկենդան, որ 7 օրերու շարժականութեամբ Նոյեմ-
 բեր 15-էն մինչեւ 21 կրնայ հանդիպիլ:

ՅՂՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. — Վերջին դարե-
 րուն մէջ միայն տօնելի եղած է եկեղեցւոյ մէջ Աս-
 տուածածնի յղութեան յիշատակը Դեկտեմբեր 9-ին՝
 ուրիշ արեւելեան եկեղեցիներու նման, մինչ լատինք
 Աստուածածնի յղութիւնը կը տօնեն Դեկտեմբեր 8-ին:
 Այս տօնը կը կատարուի ո՛ր օր ալ հանդիպի: Հռով-
 մէական եկեղեցին 1854-ին իբր հաւատոյ վարդապե-
 տութիւն հռչակեց թէ Աստուածածնի յղութիւնը անա-
 լատ եղած է, բոլորովին ազատ ազամային սկզբնա-
 կան մեղքէն, սակայն մեր եկեղեցին եւ ուրիշ եկեղե-
 ցիներ ալ վերջին ժամանակներու մէջ դտնուած կամ
 կազմուած հաւատքներ չեն ընդունիր, եւ ինչ որ Քրիս-
 տոսի Աստուծոյ սեպհականն է, չեն կրնար վերադրել
 որեւէ մարդկային արարածի:

ՅՈՎՆԱՆՈՒ ՅԻՇԱՏԱԿը, որ կը կատարուի Առաջա-
 ւորաց Պահոց Ուր. օրը՝ Ս. Յովնան մարդարէին տօ-
 նը չէ, որ կը կատարուի միւս փոքր կոչուած մարդա-
 րէներուն հետ Վարդավառի Գ. Երեքշաբթին, այլ
 պարզապէս Յովնանու Նինուէ երթալուն ու նինուէա-

ցւոց ապաշխարելուն յիշատակն է, իբր օրինակ նշանաւոր ապաշխարութեան մը, զոր մեր Լուսաւորիչը նորահաւատ հայոց առջեւը դրաւ, երբ Վիրապէն ելլելէն ետքը առաջին պահքն ու ապաշխարութիւնն աւանդեց անոնց, եւ որուն տարեդարձն է Առաջաւորաց շաբաթապահքը, եւ նոյն պահքին Ուրբաթ օրն ալ Յովնանու նինուէացւոց յղուելուն յիշատակութիւնը:

ՆԱԻԱԿԱՏԻՔ անունն իր ուղղակի ու բառական իմաստով կը նշանակէ «նոր շինել, նոր կերտել»: Ընդհանուր սովորութիւն եղած է որ նոր կերտուած ու նոր աւարտած շէնքի մը բացումը հանդիսաւորապէս կատարուի, եւ այս առմամբ նորաշէն տաճարի, տան, առարկայի եւլն. բացման ու նուիրագործութեան հանդէսը կոչուեցաւ նաւակատիք: Ըստ այսմ ամէն նորաշէն եկեղեցւոյ նաւակատիք կը կատարուի, եւ նոյն նաւակատիքին տարեդարձի հանդէսն ալ նաւակատիք կը կոչուի: Մեր եկեղեցին նաւակատիքները յարմարագոյն կերպով սկսաւ կատարել կամ յիշատակել մեծահանդէս տօներու նախընթաց օրերը, շաբաթապահքին վերջը, եւ այդ առթիւ ալ պահոց խստութիւնը մասամբ մեղմացնել առանց բոլորովին պահքը ջնջելու, այսինքն մսեղէնի արդելքը ամուր պահելով՝ ձկնեղէնի ու կաթնեղէնի կիրառութիւնը ներել պատարագի մատուցումէն ետքը: Այդ պարագայէն առնելով՝ մեղմացեալ պահքի կերակուրն ալ նաւակատիք կոչուեցաւ: Այժմ այդ տարբեր իմաստներէն իւրաքանչիւրով ալ կը դործածենք նաւակատիք բառը: Կ'ըսենք այսինչ նոր աւարտած եկեղեցւոյ նաւակատիքը պիտի կատարուի, այսինքն է առաջին նուիրագործութիւնը, կամ թէ այս ինչ օր այս ինչ եկեղեցւոյ նաւակատիքն է, այսինքն նուիրագործութեան տարեդարձը, կամ թէ այս ինչ օրը նաւակատիք է, այսինքն ձկնեղէն ու կաթ-

նեղէն կերակուր կրնայ գործածուիլ: Նաւակատիքն
 իբր առանձին տօն նշանակուած է Սաչվերացի տօնին
 նախընթաց Շաբաթ օրը, եւ է Երուսաղէմի Ս. Յարութեան
 մեծ տաճարին Հեղինէ դշխոյին ձեռքով շինուե-
 լէն ետք նուիրագործուելուն եւ օծուելուն տարեդար-
 ճը, որ բոլոր քրիստոնէութեան համար կարեւոր յի-
 շատակ մըն է, եւ կ'արժէր ալ որ հաստատուն տօն ու-
 նենար: Նաւակատիք բառը կը նշանակուի նաեւ հինգ
 տաղաւարներուն նախընթաց օրերուն, բայց կերակրե-
 ղէններու տեսակէտով, որովհետեւ ներելի է Վարդա-
 վառի, Աստուածածնի ու Սաչի նախընթաց Շաբաթ օ-
 րերուն առաւօտեան պատարագէն ետքը, իսկ Ծննդեան
 ու Չատկի ճրագալոյցներուն երեկոյեան պատարա-
 գէն ետք՝ կաթնեղէն ու ձկնեղէն կերակուրներ գործա-
 ծել:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ կը կոչուի Չատկին անմիջապէս յա-
 ջորդող Կիրակին, որովհետեւ Միաշաբաթի օրը Քրիս-
 տոսի յարութեամբ նուիրագործուեցաւ եւ Կիրակի =
 տէրունի օր եղաւ, եւ հետեւաբար առաջին անգամ ա-
 նոր յաջորդող Միաշաբաթը կ'ըլլայ նոր Կիրակի մը:
 Նոր Կիրակին Չատկին ութերորդը ու Չատկի նման օր
 մը ըլլալով՝ Կրկնագատիկ ալ կոչուեցաւ: Անոր յիշա-
 տակը Քրիստոսի Յարութեան տօնէն զատ հեթանոսաց
 կոչման եւ Քրիստոսի եկեղեցւոյն ընդարձակման եւ
 տարածման ալ յիշատակը կը պարունակէ, եւ այս տե-
 սակէտով եկեղեցւոյ տօներուն շարքին ալ կ'անցնի:

ՇԱԲԱԹԱՊԱՀՔ. — Մեր եկեղեցւոյ յատուկ սովո-
 րութիւնն է շաբաթ մը ամբողջ պահք պահել: Լատինք
 օրական պահքեր ունին, յոյները մէկէ աւելի մեծ
 պահքեր ունին, իսկ մեր մէջ Ներսէս Բ. Բաղրեւան-
 դացի կաթողիկոսին կարգադրութեամբ, Մեծ Պահ-

քէն դուրս եղող պահքերը շարաթներու վերածուեցան
 եւ տասներկու շարաթներ սահմանուեցան տասներկու
 ամիսներու համեմատ : Տասներկու շարաթապահքերէն
 հինգը սահմանուեցան սա՛ հինգ տաղաւարներու կամ
 մեծ տէրունի տօներուն ի պատիւ .— Ծննդեան պահք,
 Յարութեան պահք որ է Աւագ Ծաբաթ, Վարդավառի
 պահք, Աստուածածնի պահք եւ Խաչի պահք : Չորսն
 ալ եղանակներու պահք են, որոնք են դարնանամուտի՝
 այսինքն Մեծ Պահոց Բ. շարաթը, ամառնամուտի՝ Ե-
 ղիական պահքը, աշնանամուտի՝ Վարադայ Խաչի
 պահքը, ձմեռնամուտի՝ Ս. Յակոբայ պահքը : Մնացած
 երեքէն մին է Առաջաւորաց պահքը Լուսաւորչէն հաս-
 տատուած, միւսն է Յիսնակաց պահքը՝ Ծննդեան
 Մեծ Պահքին առաջին շարաթը, եւ երրորդն է Լուսա-
 ւորչի պահքը՝ մեր եկեղեցւոյն ի պատիւ սրբոց հաս-
 տատած միակ պահքը : Ինչպէս կը տեսնուի, 12 շա-
 րաթապահքերէն երկուքը Մեծ Պահքին հետ խառնուե-
 լուն՝ Մեծ Պահքէն դուրս 10 շարաթներ կը մնան : Այս
 շարաթապահքերը հինգ օրով միայն կը բռնուին՝ Բշ. է
 մինչեւ Ուր. : Վարդավառի, Աստուածածնի եւ Խաչի
 տօներուն Շբ. օրը նաւակատիք է առաւօտեան պա-
 տարագէն ետքը, Չատկի նախընթաց Ծաբաթ օրը նա-
 ւակատիք է երեկոյեան պատարագէն ետքը, Առաջա-
 ւորաց, Եղիական, Լուսաւորչի, Վարագայ Խաչի,
 Յիսնակաց եւ Ս. Յակոբայ պահքերուն Ծաբաթ օրերը
 ուտիք են . Մեծ Պահոց Բ. շարթուան Ծաբաթ օրն ալ
 պահք է բոլոր Մեծ Պահքին հետ : Ծննդեան պահքը
 միայն անկանոն է, որովհետեւ բարեկենդանը կիրակի
 չէ, այլ Դեկտեմբեր 30-էն մինչեւ Յունուար 4 վեց օր
 պահք է, եթէ մէջը Ծաբաթ կամ Կիրակի ալ իյնայ,
 իսկ Ճրագալոյցի երեկոյեան պատարագէն ետքը նա-
 ւակատիք է ինչ օր ալ ըլլայ :

ՇՈՂԱԿԱԹ .— Ս . Լուսաւորչի տեսիլքէն առնուած է անուանը , ինչպէս եւ էջմիածին անուանը , եւ կը նշանակէ թէ «Շող լուսոյ կաթեց» երկինքէն : Երկու տօներն ալ Լուսաւորչի տեսիլքին հետ կապուած են , միայն թէ էջմիածնի տօնը ուղղակի տեսիլքին տօնն է , իսկ Շողակաթի տօնը նոյն տեսիլքին համեմատ շինուած էջմիածնի Մայր տաճարին նաւակատիքին տօնն է : Մայր տաճարն ալ Աստուածածնի անուանին նուիրուած ըլլալով՝ Վերափոխման մեծ տօնին նախընթաց շաբաթ օրը Շողակաթի տօն կը կատարուի , այսինքն Մայր տաճարին նաւակատիքին տարեդարձը , եւ պատմական յիշատակներու հաշուով ալ 303 տարւոյ Աստուածածնի տօնին նուիրագործուած եւ օծուած է նոյն տաճարը : Շողակաթի տօնին իմաստը համաձայն է եկեղեցւոյ տօներու եւ նաւակատիքի տօներուն մասին տրուած բացատրութեանց :

ՈՏՆԱԼ ՈՒԱՅ .— Քրիստոս իր վերջին ընթրիքին միջոցին իբր ողջոյն հրաժեշտի եւ իբր օրինակ խոնարհութեան եւ իբր նշանակ Ս . Հաղորդութեան խորհրդոյն պահանջած սրբութեան ու մաքրութեան՝ իր սեղանակից առաքեալներուն ոտքերը լուաց : Այս գործողութեան յիշատակութիւնը կը կատարուի եկեղեցւոյ մէջ ոչ թէ լոկ զայն յիշելով ու օրհնելով , ինչպէս ուրիշ տնօրինական դործեր , այլ եւ իրօք ոտքերը լուայով : Այս արարողութիւնը սահմանուած է Աւագ Եջերեկոյին : Ըստ հին արարողութեան ոչ թէ թուով ու չափով ոտքեր պիտի լուացուին , այլ եկեղեցւոյ մեծը քահանաներուն ոտքերը լուանալէն ետքը , անոնք ալ իրենց կարգին պիտի նստին լուալու եւ բոլոր ներկայ ժողովուրդին ոտքերը պիտի լուացուին : Ոմանք Ոտնալուան թէեւ իբր խորհուրդ կը յիշեն , բայց բուն եկեղեցւոյ խորհուրդ չէ , այլ խորհրդական կոչուած

արարողութեանց կարգէն է որոնք շնորհաց մասնակցութիւն կը դործեն, եւ ըստ այնմ Ոտնալուային լուացուողներն ալ նոյն բարեպաշտական զգացումն ունին: Շատ տեղեր նոյն զգացման հետեւանքով, եւ նկատելով որ ոտուրները մերկացնել եւ լուալ տալ նիւթական դժուարութիւն ունի, միայն ձեռուրներն լուալ կուտան շնորհաց մասնակցութիւն ունենալու դիտաւորութեամբ: Լուացման արարողութեան ատեն սովորութիւն է միայն աջ ոտքը լուալ, թէեւ Քրիստոս առաքելոց երկու ոտքերն ալ լուացած ըլլայ: Լուացումէն ետքը պարզ կարագ իւղով փոքրիկ օժում մըն ալ կ'աւելցուի՝ որ թէեւ վերջին ընթրիքի պատմութեան մէջ յիշուած չէ, բայց Աւետարանին մէջ քանի մը անգամ ոտքի լուացում կը պատմուի, ազնիւ իւղով օծելն ալ կը յիշուի, եւ այդ հիմամբ ջրով լուացման իւղով օժումն ալ կ'աւելցնենք:

ՈՒՏԻՔ կը կոչուին այն օրերը, որոնց համար պահեցողութեան հրաման չկայ եւ հնար է ուտել ինչ որ ոք ուզէ եւ երբ որ ուզէ: Մեր եկեղեցւոյ հնադոյն սովորութիւնները ղննելով՝ կը տեսնենք որ միշտ նախատակ ունեցած է տէրունի տօները ուտիք օրուան բերել, եւ այս պատճառաւ երբեմն տօնը Կիրակիի փոխուած է, եւ երբեմն տէրունի տօնին պատճառաւ պահքը խափանուած է: Այսպէս Յարութեան յիսուն օրերուն եւ Ծննդեան ութը օրերուն պահքը խափանուած է: Իսկ ինչ որ այժմ կը գտնենք պահքի հետ տէրունի տօն՝ միջին դարէն այս կողմ հաստատուած են, ինչպէս Հոգեգալստեան «Եօթնօրէքը», Վերափոխման «Իննօրէքը», Խաչի «Եօթնօրէքը» եւ հաստատուն օրով կատարուող Աստուածածնի տօները: Սրբոց յիշատակներէն ալ կայ փոքր մաս մը որ պահք օրերու մէջ կը կատարուի, բայց ընդհանրապէս սրբոց տօներն ալ ուտի-

քին կը հանդիպին, իսկ ուտիք չեղող օրեր կերակուրի պահոց հետ եկեղեցւոյ մէջ ալ կարգ կը կատարուի :

ԶԱՐԶԱՐԱՆՔ ՏԵԱՌՆ իբրեւ յատուկ տնօրինական դործողութիւն կը յիշատակուի Աւագ Ուրբաթ օր Մասնութեան ու Խաչելութեան հետ : Քրիստոսի մատնութիւնը՝ իսկապէս իր թշնամիներուն ձեռք իյնալը, եւ Խաչելութիւնն ալ փրկագործ տնօրինութեանց վերջին մասը կը նշանակեն, որով Չարչարանք անունին ներքեւ կ'իմացուին այն ամէն նախատինքներն ու չարչարանքները, որ Քրիստոսի վրայ դործուեցաւ Գեթսեմանիէն մինչեւ Գողգոթա, եւ յատկապէս Աննայի ու Հերովդէսի ու Պիղատոսի դատարաններուն մէջ :

ՊԱՀՔ բառին ճիշդ իմաստն է զգուշանալ, ինքզինքը բանէ մը զրկել, ժուժկալել. եւ առաջին ժամանակներու եւ Հին Կտակարանի ու Աւետարանի մէջ պահքը կը նշանակէր պարզապէս կերակուրէ զգուշանալ, չուտել, ծոմ լռնել : Պօղոս առաքեալին թոյլտուութիւնը, որ բոլորովին անսուաղ կենալ չկրցող տկարը կարենայ քիչ մը բանջար ուտել (Հռոմ. ԺԴ. 2), որ է կատարեալ սնունդ չստուող կերակուր մը, սկսաւ կամայակամայ ընդարձակուիլ եւ թեթեւ կերակուրներով սնանիլը սկսաւ պահք կոչուիլ, եւ պահքն եղաւ կերակուրներու տեսակին վրայ հիմնուած ժուժկալութիւն մը : Առաջ միայն բանջարեղէնները ներուեցան, յետոյ ընդեղէնք, վերջապէս բուսականներէ քամուած հիւթը, ինչպէս ձէթ, դինի եւն. : Մեր եկեղեցին այժմ պահքին սահման դրած է բուսական արտադրութիւնները, միակ ու բացառիկ յաւելուած ընդունելով մեղրը՝ որ կենդանական կիթ մըն է : Ուրիշ եկեղեցիներու մէջ սկսած են ներուիլ կիթեղէնք, կաթնեղէնք ու ձրկնեղէնք՝ որ մեր մէջ նաւակատիք կոչուած կէս պահք

օրերը միայն կը ներուին, մինչեւ իսկ Լատին Եկեղեցւոյ մէջ միսէ զգուշանալով՝ այլ ճարպը դործածելով՝ պահք կը պահուի: Այս կերակուրներու պահքն է, եւ ամէն եկեղեցիք ալ ունին զայն: Մեր մէջ եկեղեցւոյ պահք մըն ալ կայ, որ է տէրունական ու սրբոց տօներէ զգուշանալ եւ արարողութեանց կամ ժամերգութեանց մէջ միայն ապաշխարութեան կարգ կատարել: Ընդհանուր առմամբ իւրաքանչիւր եօթնեակին Չորեքշաբթին եւ ուրբաթը, բոլոր Մեծ Պահքը ու շատ շաբաթապահքերը կերակուրներու պահքին հետ եկեղեցւոյ պահք ալ ունին, սակայն վերջին կարգադրութեանց համեմատ կան օրեր՝ ուր կերակուրներու պահքին օրէնքը պահուելով հանդերձ՝ տէրունական կամ սրբոց տօներ կը կատարուին եկեղեցւոյ մէջ: Այս մասին մանրամասն բացատրութեան չմտնելու համար՝ համառօտ ցուցակ մը բաւական կը համարինք: Արդ, Աստուածայայտնութենէն սկսեալ՝ տարւոյ մը շրջանին մէջ ունինք.

	Կերակրոյ Եկեղեցւոյ	
	պահք	պահք
Ծնունդէն ետքը երեք շաբաթներ	6	6
Առաջաւորաց շաբաթապահքը	5	5
Առաջաւորաց յաջորդող երկու շաբաթները	4	4
Մեծ Պահքին մէջ	48	30
Համբարձումէն ետքը	3	—
Եղիական պահք	5	—
Եղիականի յաջորդող երկու շաբաթներ	4	4
Լուսաւորչի շաբաթապահք	5	2
Լուսաւորչի յաջորդող երկու շաբաթներ	4	4
Վարդավառի շաբաթապահք	5	5

Վարդավառի միջոցին		
երեք շաբաթներ	6	6
Աստուածանի շաբաթապահք	5	5
Աստուածածնի միջոցին		
երեք շաբաթներ	6	4
Խաչի շաբաթապահքը	5	5
Խաչի յաջորդող շաբաթը	2	—
Վարդայ շաբաթապահքը	5	2
Եօթն շաբաթներ	14	14
Յիսնակաց շաբաթապահքը	5	5
Յիսնակաց յաջորդող		
երկու շաբաթներ	4	4
Ս. Յակոբայ շաբաթապահք	5	2
Ս. Յակոբայ յաջորդող		
երեք շաբաթներ	6	6
Ծննդեան շաբաթապահք	6	4

Ըստ այսմ իւրաքանչիւր տարի ունինք կերակուրի պահք 158 օր, իսկ եկեղեցւոյ պահք 117 օր, որ կրնան մէկ-երկու պակաս ըլլալ՝ տօներու շարժականութեան հետեւանքով: Միջոցները միջին հաշուով առած ենք, փոփոխութիւնները զիրար կը լրացնեն:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.— Նոյն է Այլակերպութեան տօնին ու անունին հետ: Աւետարանը միայն Այլակերպութիւն բառը կը գործածէ, բայց Պայծառակերպութիւն բառն ընդհանրացած է իբր աւելի յատուկ եւ աւելի փառաւոր բացատրութիւն:

ՊԵՆՏԵԿՈՍՏԷ.— Զատիին յիսներորդ օրը յունական բառով բացատրուած՝ որ հրէից համար տօն էր Աինէական օրինաց տուչութեան. իսկ քրիստոնէից համար եղաւ Հոգւոյն Սրբոյ Գալստեան տօնը՝ որով կ'ըլլայ Հոգեգալստեան տօնին մէկ յորջորջումը:

ՋՐՕՐՀՆԷՔ Թէպէտ տօն մը չէ, այլ պարզ արարողութիւն մը, սակայն իբր տօն կը նկատուի, որովհետեւ Քրիստոսի Մկրտութեան յիշատակութիւնն ու օրինակն է: Կը կատարուի Ծննդեան առտուն պատարագէն ետք: Տեղ-տեղ սովորութիւն կայ Ջրօրհնէքը պետի կամ լիճի կամ ծովու վրայ կատարել՝ որ աւելի տարածուած սովորութիւն մըն է Յունաց մէջ: Մեր կողմերը Եկեղեցւոյ մէջ կը կատարենք ջուրի օրհնութիւնը:

ՍՐԲՈՅ ՏՕՆ.— Մեր եկեղեցին ամիսներու հաստատուն օրերով սրբոց յիշատակ չի կատարեր, այլ եօթնեկական դրութեամբ՝ որ է շաբաթներու յաջորդութիւնը: Շաբթուան մէջ ալ միայն Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Շաբաթ օրերը կրնան սրբոց յիշատակներ կատարուիլ՝ եթէ ուրիշ արգելք չըլլայ. առաջին երեք օրերը կրնան տէրունի տօնի եւ եկեղեցական պահքի փոխուիլ, իսկ Շաբաթ օրը միայն տէրունի տօնի: Սրբոց տօներն ընդհանրապէս ուտիքի օրերն են. միայն երեք շաբաթապահքեր կան՝ այսինքն Լուսաւորչի, Վարդայ Խաչի ու Ս. Յակոբայ, որոնց մէջ պահոց տօն կը կատարուի կերակուրներու պահքով մէկտեղ, նոյնը կը հանդիպի նաեւ Մեծ Պահքին ու Ծննդեան պահքին Շաբաթ օրերը: Տարւոյն մէջ կատարուելիք սրբոց տօներուն քաղուածը հետեւեալն է. միջոցները միշտ միջին հաշուով նկատել պարտաւորուած ենք:

Ծնունդէն ետքը	ուտիքին	12	պահքով	—
Առաջաւորաց միջոցին	»	9	»	—
Մեծ Պահքին	»	—	»	5
Հոգեգալստեան	»	17	»	3
Վարդավառի	»	10	»	—
Աստուածածնի	»	11	»	—

Սաչի միջոցին	ուտիքին	29	պահքով	3
Յիսնակաց »	»	25	»	3
Ծննդեան պահքին	»	—	»	1

Ըստ այսմ տարւոյն մէջ ունինք սրբոց տօներ ուտիքի օրով 113 եւ պահքով 15 օր, որ է ընդամէնը 128 օր, կամ տօներու եւ օրերու շարժականութեամբ մէկերկու օր պակաս: Տօնուած սուրբերը առնուած են Հին Ռւխտէն եւ քրիստոնէական առաջին հին դարերէն, իսկ այս դարերէն ետքը միայն Հայ Եկեղեցւոյ սեպհական սակաւաթիւ սուրբեր աւելցած են: Այս մասին մանրամասնութիւնք ուրիշ անդամ:

ՎԱՐԱԳԱՅ ԽԱԶ. — Սաչի հրաշալի երեւումներէն Յունաց Եկեղեցին ունի Երուսաղէմի երեւումը 351-ին, իսկ Հայոց Եկեղեցին Վարազայ երեւումը 653-ին: Մենք ալ կը կատարենք Երեւման Սաչին տօնը, եւ բացատրեցինք. իսկ Վարազայ երեւումը տեղի ունեցաւ Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսի օրով, որ այդ երեւման տօնն ալ հաստատեց: Ս. Հռիփսիմէ իրեն հետ ունեցած է բուն Սաչափայտէն մաս մը՝ զոր ի վերջոյ պահած է Վարազէն վեր դռնուող Գալիլիա կոչուած ժայռին մէջ, եւ այդ Սաչափայտի մասը լուսաւոր սաճարի տեսիլքով յայտնուած է Թողիկ ճգնաւորին, եւ տեղէն ելլելով՝ եկած հանգչած է Վարազայ վանքին Եկեղեցին, ու առաջ Թողիկ ու Յովէլ ճգնաւորները եւ յետոյ բոլոր շրջակայ գիւղերէն եւ Վան քաղաքէն եկող ուխտաւորները տեսած ու պաշտած են: Սաչափայտին գիւտը 327-ին տեղի ունեցաւ, իսկ Ս. Հռիփսիմէի մարտիրոսութիւնը 301-ին կատարուած ըլլալով՝ Սաչի գիւտէն առաջ Սաչափայտի մասունքին գոյութիւնը կրնայ մեկնուիլ կրկին աւանդութիւններով: Որովհետեւ թէ՛ Տեառնեղբայր Յակոբոս առաքեալին համար

կ'ըսուի թէ կրցած է մաս մը ձեռք ձգել Վերացման ատեն, եւ թէ՛ Պատրոնիկէ դշխոյի համար կը պատմուի թէ Կղսղիոս կայսեր օրով (41—54) Սաչափայտի մասնաւոր դիւտ մը ընել յաջողած է: Վարազայ վանքին մէջ հանդէտը Սաչափայտը աւելի սովորական կերպով կոչուած է Ս. Նշան, եւ Ս. Նշանի մասունքը մինչեւ 1021 մնացած է Վարազ, եւ նոյն տարին փոխադրուած է Սերաստիա, 1026-ին դարձեալ Վարազ բերուած է, 1651-ին Սոչաք տարուած. իսկ 1655-ին Վանայ Ս. Տիրամայր Մայր Եկեղեցին դրուած՝ որ այնուհետեւ կոչուեցաւ Ս. Նշան: Հոն ցարդ կը մնայ Վարազայ Ս. Սաչը: Տօնը կը կատարուի Վերացման Սաչէն 15 օր ետքը, այսինքն Սեպտեմբեր 25-էն մինչեւ Հոկտեմբեր 1 հանդիպող Կիրակին:

ՎԱՐԱԳԱՅ ՊԱՀՔ. — Վարազայ Սաչին նախընթաց եօթնեակը շաբաթապահք է, եւ Վարազայ Սաչէն կ'առնէ անունը, սակայն տօնին հետ աղերս չունի: Չորս եղանակներու պահքերէն աշնանամուտի շաբաթապահքն է՝ որ սրբոց տօներով ալ կը պահուի, եւ շաբաթ օրն ալ ուտիք է պարզապէս, եւ նաւակատիք ալ չկայ: Այդ շաբաթ օրը հաստատուն կերպով Ս. Գէորգի տօնն ըլլալուն՝ աշնանամուտի պահքը Ս. Գէորգայ Պահք ալ կը կոչուի:

ՎԱՐԴԱՎԱՌ. — Հին հեթանոսական ժամանակէն մնացած մեծ տօնի մը անունն է՝ որ վարդերով զարդարուելուն օրն էր, եւ վառ բառն ալ փայլունի եւ վարդարունի իմաստով գործածուած է: Թէ վարդավառը Ամանորի տօնին հետ նոյն կամ թէ տարբեր տօն մըն է՝ այստեղ քննութեան չենք առներ, միայն դիտել կու տանք թէ շատ հին հեթանոսական տօներ նպատակնին ու յիշատակնին փոխելով՝ անուննին պահեցին

Հայոց քրիստոնէութեան մէջ, ինչպէս Չատկի ու Ծաղկազարդի անուններու համար ըսինք: Այդ կերպով հին վարդաւառի տօնն ալ Քրիստոսի Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան տօնին փոխուեցաւ: Հին վարդաւառի յիշատակներն են վարդով զարդարուիլ, աղաւնի թոցնել եւ ջուր սրսկել, որ հիմա ալ Այլակերպութեան տօնին առթիւ կը գործադրուին:

ՎԵՐԱՑՄԱՆ ԽԱՉ ալ կը կոչուի Խաչվերացի տօնը, որ այդ անունին տակ բացատրուեցաւ:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ .— Ա. Աստուածածնի մեռնելուն ու երկինք փոխադրուելուն յիշատակն է՝ որ կը տօնուի պարզ Աստուածածին, կամ Փոխումն կամ Ննջումն անուններու ներքեւ ալ: Որովհետեւ եկեղեցին կ'ընդունի թէ Քրիստոս ինքնին եկաւ իր մայրը փոխադրելու, տէրունի տօնին յիշատակութիւնը կը կատարուի Գալուստ ի փոխումն մօրն բացատրութեամբ, եւ այդ անունին ներքեւ բաւական տեղեկութիւններ տրուեցան արդէն: Վերափոխումը Հայ Եկեղեցոյ տաղաւար կոչուած հինգ մեծ տօներէն մէկն է, կը կատարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12-էն մինչեւ 18 հանդիպող Կիրակին. ունի շաբաթապահք, նաւակատիք ու մեռելոց: Աւելի հին դարերու մէջ երեք օր միայն կը կատարուէր, սակայն Շնորհալոյն կարգադրութեամբ հիմա ինն օր կը կատարուի, Կիրակիէն մինչեւ միւս Երկուշաբթի:

ՎԻՃԱԿ .— Այդ անունը կը տրուի Համբարձման տօնին, որովհետեւ Քրիստոսի համբարձումէն ետքը առաքեալներն ու աշակերտները ժողով ըրին՝ Յուդայի տեղ մէկն անցընելու տասներկուքներուն թիւը լեցնելու համար, եւ վերջնական կերպով մէկու մը վրայ

չկրնալով որոշում տալ, երկու ընտրելիներ զատեցին, Յովսէփ Յուստոսն ու Մատաթիան, եւ այս երկուքին լլրայ վիճակ նետեցին եւ վիճակը Մատաթիայի ելաւ. (Գործ. Ա. 26) : Որովհետեւ այդ ժողովը ճիշդ Համբարձման օրը չգումարուեցաւ, այլ Համբարձումէն Հուլեալուստ անցնող տասը օրերէն մէկուն մէջ, սովորութիւն է Համբարձման դիմացի Եջ., այսինքն Ը. օրը բուն վիճակին օրը կարծել, սակայն աւելի սովորաբար Համբարձման օրը իբր Վիճակի օր ընդունուած է, եւ նոյն օր ժողովրդական վիճակ հանելու հանդէսներ ալ կը սարքուին, եւ ստանաւոր վիճակներու բաւական ընդարձակ հաւաքածոներ ալ կազմուած են :

ՏԱՂԱԻԱՐ . — Այդպէս կը կոչուին հինգ մեծ տէրունի տօները որոնք շաբաթապահք, նաւակատիք, մեռելոց եւ քանի մը օր շարունակութիւն ունին : Այս հինգ տօներն են Աստուածայայտնութիւն 8 օր, Յարութիւն 50 օր, Այլակերպութիւն 3 օր, Վերափոխում 9 օր եւ Խաչվերաց 7 օր : Ասոնցմէ իւրաքանչիւրն ալ տարւոյն մէջ որոշ միջոցի մը սկզբնաւորութիւնն են : Վճռական կերպով յայտնի չէ թէ ի՞նչ առնչութիւն կայ տաղաւար կոչման եւ այս մեծ տօնախմբութեանց մէջ : Ոմանք կը կարծեն թէ ինչպէս Հին Ուխտին մէջ մեծահանդէս տօնախմբութիւն մըն էր Տաղաւարահարքը կամ Տաղաւար կոչուած տօնը, նոյն են քրիստոնէից համար այդ տէրունի տօները : Թերեւս հաւանական է կարծել թէ իրօք տաղաւարներու հաստատմամբ տօնաւաճառի նման հանդէսներ կը կազմակերպուէին այս մեծ տէրունիներուն, եւ անկէ մնացած ըլլայ տաղաւար յորջորջումը :

ՏԱՊԱՆԱԿ . — Վարդավառի նախընթաց նաւակատիքի օրը կը կատարուի տօն մը՝ որ «Յիշատակ է Տա-

պանակի հնոյ եւ տօն նորոյս սուրբ Եկեղեցոյ» : Տապանակը այն սրբութեան տեղն էր որ Հին Ուխտի մէջ տատուածային ներկայութեան նշանակ էր , եւ կը պարունակէր տառնաբանեայ օրինաց տախտակները , մանանայով լի սափորը եւ Ահարոնի ծաղկեալ դաւազանը : Տապանակը կը պահուէր Խորանին կամ Տաճարին Սրբութիւն Սրբոց կոչուած ներքին բաժնին մէջ՝ ուր միայն քահանայապետը կրնար մտնել տարին մէկ անգամ : Վերջին անգամ Սողոմոն դրաւ զայն նորաշէն տաճարին մէջ , ուրկէ անյայտ եղաւ Երուսաղէմի կործանման առթիւ Նաբուգոդոնոսորի ժամանակ : Գերութենէն ետքը շինուած տաճարը տապանակ չունեցաւ : Տապանակի տօնը կը նշանակէ Հին Ուխտին հաստատութիւնը , որ նախընթացը եւ օրինակը եղաւ Նոր Ուխտին՝ որ է Քրիստոսի եկեղեցին , եւ ըստ այսմ տօնին ալ նշանակութիւնը ուրիշ բան չէ , բայց եթէ պարզապէս եկեղեցոյ տօներէն մէկը՝ որուն վրայ առանձին խօսած ենք :

ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ .— Քրիստոս Աւետարանին մէջ (Մատթ . ԻԵ . 1—13) տառն կուսանաց առակը խօսեցաւ իր Երուսաղէմ մտնելէն երկու օր ետքը , այսինքն է Աւագ Երեքշաբթի օր : Նոյն երեկոյին կը կարդացուին Աւետարանին նոյն օրուան պատկանող մասերը (Մատթ . ԻԴ . ու ԻԵ .) , որոնց մէջ նշանակութեան արժանի ըլլալով տառն կուսանաց առակը՝ Աւագ ԳՂ . անոնցմէ կ'ստանէ իր յիշատակին անունը : Սոյն Աւետարանին ընթերցման ատեն տասը փոքրիկ այլջիկներու կամ տղեկներու ձեռքը մոմ տալով՝ Աւետարանին դիմաց կանգնեցնելը նորամուտ ու տեսարանական սովորութիւններուն կարգէն է , եւ ոչ ծիսական պահանջք ո՛ր :

ՏԵԱՌԸՆԴԱՌԱՋ . — Այդ անունը կը տրուի Քրիստոսի քառասնորեայ ի տաճար ընծայուելուն յիշատակին, որ է Գաղուստ քառասնորեայ ի տաճարն, եւ այդ անուան ներքեւ արդէն բացատրուած : Տեառնընդառաջ անունը իբր «եւանել ընդ առաջ Տեառն» թէեւ կրնայ ուղղակի այդ քրիստոսական տնօրինութենէն ծաղած ըլլալ, բայց ըստ մեզ հաւանական է թէ սա ալ հին հեթանոսական տօներէն մնացած անուն մըն է, Տիր աստուծոյն ի պատիւ տօնի մը անունը՝ որ Տեառն Քրիստոսի տօնին փոխուած է : Այդ կարծիքն աւելի հաստատութիւն կը գտնէ ժողովուրդին բերնին մէջ դործածուած Տէրնտա անունով՝ զոր հնար չէ պարզ աղաւաղում մը նկատել :

ՏԵՐՈՒՆԻ ՏՕՆ . — Այդ ընդհանուր կոչումը կը տրուի ո՛չ միայն Քրիստոսի փրկագործ տնօրինութեանց յիշատակներուն, այլ այն տօներուն ալ որ Տիրամօր ու Խաչի ու Եկեղեցւոյ պատուոյն կը կատարուին . իբր զի այդ ամէն տօները կը կատարուին ի պատիւ եւ յանուն Տեառն : Տէրունի տօներուն մէջ առաջին կարգը կը բռնեն տարւոյն բոլոր Կիրակիները, որոնք հրամայեալ տօն են եւ Յարութեան յիշատակ, երբեմն ուրիշ տէրունական տնօրինութեան մը յիշատակ մըն ալ միասին ունենալով : Երկրորդ՝ կու գան հինգ տաղաւարներու տօներուն օրերը : Երրորդ՝ հաստատուն օրով կատարուած ինչ-ինչ տօներ : Ասոնց ամէնուն քաղուածը հետեւեալն է . —

Ճրագ . եւ ութօրէք Ծննդ . 8 օր պահքով		Նաւկտ . 1
Ծնունդի Կիրակիներ	6 » »	— » —
Մեծ պահքի Կիրակիներ		
եւ Աւագ Շարաթ	— » »	13 » 1
Տեառնընդ . եւ Աւետում		
(երբեմն պահքով)	2 » »	— » —

Զատիկ եւ Յինուէք	46	օր պահօքով	3	Նաւկտ .	—
Հոգեգալստեան շարաթ	2	»	»	5	»
Հոգեդալ . Կիրակիներ	6	»	»	—	»
Վարդավառ ու Տապ .	3	»	»	—	»
Վարդավառի Կիր . ներ	3	»	»	—	»
Վերափ . ու Շողակաթ	7	»	»	2	»
Վերափոխման Կիր . ներ	3	»	»	—	»
Խաչօքերաց ու Նաւակ .	5	»	»	2	»
Խաչի Կիրակիներ	8	»	»	—	»
Յիսնակի Կիրակիներ	7	»	»	1	»
Ծնունդ , Ընծ . , Յղութ .					
(երբեմն պահօքով)	3	»	»	—	»

Ունինք ուրեմն տէրունի օրեր ուտիքով 109, պահօքով 26 ու նաւակատիքով 5. ընդամէնը 140 օր տէրունի տօն իւրաքանչիւր տարի : Թէ՛ սրբոց , թէ՛ պահոց եւ թէ՛ տէրունիներուն հաշիւը միջին հաշուով աւինք , եւ պահօք օրերով կատարուած սուրբերը կամ տէրունիները կրկին անգամ հաշուած եղանք . ուստի պէտք չէ շփոթել եթէ՛ պահոց եւ սրբոց ու տէրունիներու երեք ցուցակները դումարելով՝ 365 օրէ աւելի ըլլան , որովհետեւ մէջէ՛ մէջ պահօքեր եւ տօներ երկու անգամ նշանակուած են :

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ անունը կը տրուի Մեծ Պահոց Դ . Կիրակիին՝ որուն պատարագին կը կարդացուի Ղուկ . ԺԶ . դլուխը , ուր պատմուած է Տնտեսին առակը : Օրուան շարականներուն մէջ ալ Տնտեսի եւ անոր յարակից Մեծատան ու Ղազարոսի առակներուն իմաստները կը սլարունակուին : Տնտեսի Կիրակին Զատիկի հետ 35 օրուան շարժականութիւն ունի , եւ Փետր . 22-էն մինչեւ Մարտ 28 կրնայ հանդիպիլ :

ՏՕՆ.— Ընդհանուր անունն է որ կը տրուի թէ՛ տէրունական եւ թէ՛ սրբոց յիշատակներուն կամ տարեկաններուն, եւ կը նշանակէ հանդիսաւորապէս կատարուած յիշատակ մը: Կենցաղական կամ քաղաքական շրջանակի մէջ կատարուած հանդիսաւոր յիշատակներուն ալ տօն անունը կը տրուի: Տէրունի տօներուն եւ սրբոց տօներուն վրայ զատ-զատ խօսած ենք, ինչպէս նաեւ հրամայեալ տօներուն վրայ, որոնք տօներու զանազան տեսակները կը կազմեն:

ՓԱԿԵԱԿ ԽՈՐԱՆ.— Ոմանք այդ անունով ուզեցին ուղղել Բակլախորան կոչումը՝ որ կը տրուի Մեծ Պահոց առաջին օրուան, եւ զոր արդէն բացատրած ենք եւ նախադասելի համարած:

ՔԱՌԱՍՆՈՐԴՔ.— Մեծ Պահքին կը տրուի Քառասնորդք անունն ալ, որովհետեւ քառասուն օր կը տեւէ, ի յիշատակ Քրիստոսի քառասնօրեայ պահեցողութեան: Մեծ Պահոց Կիրակիներն ու օրերը քառասնորդական Կիրակիներ եւ օրեր ալ կը կոչուին: Ղաղարու յարութենէն սկսելով՝ Աւագ Շաբթուան օրերը Քառասնորդքէն դուրս են:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ե Ր Կ ՈՒ Խ Խ Օ Ս Ք

Ծիսական Բառարանիս առաջին մասը (որ 1905 տարւոյ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԻն մէջ հրատարակուեցաւ), համակիր ընդունելութեան ու քաջալերական գնահատութեան հանդիպած ըլլալով՝ օգտակար կը դատենիք մաս մը եւս այս տարի հրատարակել ի վայելումն եկեղեցասէր անձերու :

Այս մասին մէջ մեզի նպատակ որոշած ենք բացատրել եկեղեցւոյ կիրառութեան մէջ գտնուած բոլոր իրեղէնները կամ նիւթական առարկաները — շէնք, սպաս, գգեստ, գարդ, գործիք, կարասի, եւ ուրիշ ասոնց նմաններ — միշտ այբուբենական կարգով :

Հարկ կը համարենք աւելցնել թէ մեր նպատակը ըլլալով բացատրել լոկ իրեղէն առարկաները, չենք ուզեր մտնել արարողական տեղեկութեանց թէ ե՞րբ, եւ ի՞նչպէս եւ ի՞նչ պայմաններով պէտք է կանոնաւորել անոնց կիրառութիւնը, այլ պարզապէս նկարագրել իրեղէններու կազմութիւնը, քիչ մըն ալ պատմական հմտութիւններ աւելցնելով : Մեր նպատակը սահմանափակելու միակ պատճառն է գործը տարապայման չերկարել եւ մեզի շնորհուած էջերուն չափին մէջ ամփոփուիլ :

[ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ .]

1906 թ .

Մ Ի Ս Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ԱՌՈՌ. — Եկեղեցւոյ մէջ ամէն նստելու կարա-
սիներուն աթոռ չ'ըսուիր, այլ միայն այն նստարանին
որ եկեղեցւոյ իշխանաւորին յատուկ է. այս սլատճա-
սաւ սովորական խօսքի մէջ աթոռ կ'անուանենք նոյն
ինքն իշխանութիւնը, զոր օրինակ կաթողիկոսական Ա-
թոռ, Կ. Պոլսոյ Աթոռ անուններով կ'իմանանք կա-
թողիկոսութիւն ու Պատրիարքութիւն: Իշխանական
աթոռն ի հնումն աւելի պարզ ձեւ ունէր, բարձր նըս-
տարան մըն էր որ երկու կողմերը թեւերը դնելու տե-
ղեր ունէր, եւ ետեւ չունէր, եւ պարզ բազկաթոռ էր:
Յետոյ սկսան գործածուիլ աթոռներ որ թեւերէ զաւա-
տեւենին ալ բարձրացած կռթնելու տեղ ունէին եւ ե-
ղան թիկնաթոռ: Աթոռները փայտեայ էին ամբողջ,
բայց յետոյ նստելու տեղն ու ետեւի կռթնելու տեղը
սկսան կակուղ բուրդով ու կերպասներով գոցուիլ
հանդատութեան համար:

Աթոռը եկեղեցւոյ մէջ երկու տեսակ է, հաստա-
տուն եւ շարժական: Հաստատուն աթոռը վիճակաւո-
րին յատուկ՝ Մայր Եկեղեցիներու մէջ կանգուն կը
մնայ տեւական կերպով, եւ սեպհական իրաւամբ կը
պատկանի վիճակաւորին, եւ վիճակաւորէն զատ ուրիշ
բարձրաստիճան եկեղեցականներ անոր վրայ չեն կըր-
նար նստիլ: Հաստատուն աթոռները աջակողմեան դա-
սուն գլուխն են, եւ վիճակաւորին աստիճանին մեծու-
թեան համեմատ մէկ կամ երկու կամ երեք աստիճա-
նով պատուանդան կրնան ունենալ, ինչպէս նաեւ աթո-
ռին վերեւը սիւներու վրայ բարձրացած կաթողիկէ ալ

կրնայ դրուել, որ այժմ մեր կողմերը լոկ մեծ աթոռ-
ներու մէջ կը տեսնուին թէեւ օրէնքը եւ ուրիշ տեղե-
րու սովորութիւնը կը ներեն զայն ամէն վիճակաւորի :
Աթոռներու աւելի կամ պակաս զարդարուն ըլլալը մի-
միայն տաճարին շքեղութենէն ու ծախքին դիւրութե-
նէն կախում ունի : Իսկ շարժական աթոռներ եկեղեցւոյ
մէջ կը գործածուին ըստ պատահմանց եւ ըստ պիտո-
յից, բեմին վրայ քարոզի համար, եկեղեցւոյ մէջը ատ-
կանի համար, եւ բեմին առջեւ ձեռնադրութեան հա-
մար : Հիւր եպիսկոպոսներ ալ կը վայելեն շարժական
աթոռի իրաւունքը բեմին վրայ եւ ատեանին մէջ, եւ
գաւառներու մէջ նաեւ ձախակողմեան դասը : Վիճա-
կաւոր վարդապետներ ալ վիճակաւորի իրաւունքով՝ ի-
րենց վիճակին մէջ միայն՝ թէ՛ հաստատուն եւ թէ՛
շարժական աթոռներ ունին : Իսկ ծայրագոյն վարդա-
պետներու ի հնումն ունեցած աթոռի իրաւունքն այժմ
ընդհանուր ու հաստատուն կերպով դադրած ու խա-
փանուած է, ի հարկէ ծայրագոյն վարդապետութեան
չատցած ու նշանակութիւնը կորսնցուցած ըլլալուն հա-
մար :

ԱԿՆ ԽԱՉԻ. — Խաչին կեդրոն տեղն է ուր երկու
գիծեր իրար կը կտրեն, կամ ուր չորս թեւերը կը
միանան : Մեր խաչերուն մէջ սովորաբար այն տեղը
արժէքաւոր քար մը կամ անարժէք նմանութիւն մը
ադուցուած կը դանուի, երբեմն ալ մասունք մը գե-
տեղուած կ'ըլլայ :

Խաչերն օժելու արարողութեան մէջ օժուելու հինգ
տեղերուն առաջինն է Ակն Խաչին : Գուցէ դրուած ակ-
նէն ծաղի «Ակն» անունը, այլ օտար չէ մեկնել զայն
իրբ բիւման կամ ծագման սկիզբ, որովհետեւ կեդրոնէն
կ'ելլեն չորս թեւերը :

ԱՂԱԽՆԻ կամ ԱՂԱԽՆԱԶԵԻ ՏՈՒՓ .— Միւռոնը եկեղեցւոյ մէջ Հոգւոյն Սրբոյ շնորհաց նշանակն է, եւ Ս. Հոգին Քրիստոսի Մկրտութեան ատեն աղաւնիի կերպարանքով յայտնուած ըլլալուն՝ սորովութիւն եղաւ որ միւռոնը հանդիսաւոր արարողութեանց ատեն աղաւնածեւ շինուած անօթներու մէջ դրուի: Միւռոնի աղաւնիները թեւատարած աղաւնիի ձեւը կը կրեն, որուն փորը միւռոն դնելու տեղն է, եւ կը լեցուի թիւկունքին վրայ յարմարցուած ծակէ մը եւ կը թափուի բերնէն՝ որուն ներքին կտուցը շարժական է, ծռած ատեն կը բացուի եւ շտկուած ատեն կը փակուի: Աղաւնին ալ հաստատուած է բունի մը վրայ եւ անկէ կը բռնուի, եւ անոր ներքեւը լայն պատուանդան մըն ալ պիտի ունենայ, տեղ մը դնելու եւ հանգչեցնելու համար: Աղաւնածեւ տուփերը համակ արծաթէ պիտի ըլլան, գոնէ միւռոն ընդունող մասը: Արհեստական զարդեր եւ ճաշակի սուարկաներ տարբեր կրնան ըլլալ, շինել տուողին կարողութեան ու ոսկերչին ճարտարութեան համեմատ:

ԱՍՊԻՈՆ .— Արեւմտեան եկեղեցիներու ամպլիոնները երկու տեսակ են. մէկը եկեղեցւոյ պատէն ու բարձրէն դուրս ելած պատշգամ մը, եւ միւսը եկեղեցւոյ մէջտեղը գետնէն բարձրացած կամ սիւնի մը կռթնած տեղ: Երկուքն ալ հաւասարապէս կը ծառայեն քարոզ տալու, եւ քարոզիչն ամպլիոնի մէջ կը կենայ, որ վերիվերոյ քառակուսի մետրի չափ տարածութիւն ունի եւ չորս կողմը մինչեւ մէջքը վանդակով կամ շրջապատով պոցուած է, եւ քարոզիչը ձեռքն անոր վրայ դնելով՝ կը խօսի:

Յունական եկեղեցին ալ ունի ամպլիոն մը՝ պատի կամ սիւնի կռթնած ձեւով, եւ կը ծառայէ թէ՛ քարոզի եւ թէ՛ ընթերցուածներու: Սակայն հայ եկեղե-

ցիներու մէջ քարոզը բեմին վրայէն կը խօսուի եւ քարոզիչը բոլոր ամէնուն տեսանելի է, ոտքի վրայ կամ աթոռի վրայ նստած ու գազաւանը ձեռքը. իսկ ընթերցուածները կը կարդացուին դասին մէջէն, հետեւաբար ամպլիոնը մեր եկեղեցիներու համար աւելորդ էր, եւ չկայ ալ: Սակայն կը տեսնուին քանի մը եկեղեցիներ որոնց մէջ ամպլիոններ չինուած են եկեղեցւոյ կողմնակի պատին վրայ, ինչպէս չինուած են Պոլսոյ ու Կարնոյ մայր եկեղեցիներու մէջ, բայց իբրեւ աւելորդ ինչ անգործածական դարձած են: Կ'երեւայ որ ժամանակ մը փափաք ծագեր է այդ օտար ձեւը մուծանելու, բայց ընդունելութիւն չէ գտած: Հին ժամանակներէ մնացած քանի մը եկեղեցիներու մէջ կը տեսնուի ամպլիոնի նման բան մը, այս ալ բեմին կամ դասուն կողմերը, բայց ո՛չ իբրեւ քարոզչի ամպլիոն, այլ լոկ իբրեւ իշխանաւոր անձի վերնատուն:

ԱՄՊՀՈՎԱՆԻ. — Բարձրաստիճան վիճակաւորներու յատուկ պատուոյ նշանակ է. անոնց դըռնիսին վրայէն տարածուած հովանոց մը, բաւական ընդարձակ եւ քառանկիւն կերպասէ պատրաստուած եւ չորս կողմերը ծոպերով շրջապատուած, զոր հորիզոնական դիրքի վրայ չորս կամ վեց ձողերով բարձրացուցած կը տանին չորս կամ վեց պատուաւոր անձեր կամ եկեղեցական սպասաւորներ՝ վիճակաւորին թափօրով քալած ատեն: Արեւելեան Հայոց վիճակներու մէջ ամպհովանի կիրառութիւնը սովորական է ամէն վիճակաւոր եպիսկոպոսի, իսկ մեր վիճակներուն մէջ քիչ տեղ կ'երեւայ այժմ անոր կիրառութիւնը վիճակաւորներու համար: Իզմիրի մէջ մնացած սովորութիւնը հաւանաբար ծագում առած է նոյն վիճակին մինչեւ վերջին ժամանակները էջմիածնի նուիրակներու պահուած տէրունի վիճակ ըլլալէն: Կ. Պոլսոյ մէջ պատրիարքներ

կը գործածեն եղեր զայն մինչեւ մօտ ժամանակներ :
Կիլիկիոյ ու Աղթամարայ կաթողիկոսներ ու Երուսա-
ղէմի պատրիարքներ կը պահեն ջարդ ամպհովանիի
կիրառութիւնը :

ԱՇՏԱՆԱԿ.— Փայտէ կամ մետաղէ որեւէ մեծու-
թեամբ կամ ձեւով կարասի մը՝ որուն վրայ մոմեղէն
կը դրուի՝ հաստատուն ու շիտակ կենալու եւ վառուե-
լու համար : Աշտանակներ հասարակ տուներու կահա-
ւորութեան մէջ ալ կը գտնուին ու ամէնուն ծանօթ են ,
եւ աւելի բացատրութեան պէտք չի մնար : Աշտանակ-
ները տեսակ-տեսակ են իրենց մեծութեան համեմատ ,
եւ ձեւի ու նիւթի եւ արհեստի տարբերութեան վրայ
խօսիլ աւելորդ է բոլորովին : Աշտանակները դիւաւո-
րաբար կը գործածուին սեղանի վրայ , ուր սովո-
րաբար պիտի գտնուին տասներկու մեծկակ աշտանակ-
ներ իրենց յարմար մոմեղէնով , բայց զարդարանքի
տենչը հետզհետէ շատցուց աշտանակներու թիւը , եւ
այժմ մեծ տօներու օրերը սեղանին վրայ կը խճողեն
մեծ ու սղտիկ , դեղեցիկ ու տղեղ , յարմար ու անյար-
մար հարիւրէ աւելի աշտանակներով . երբեմն անտաշ
փայտի կոճղեր իսկ աշտանակի տեղ ծառայեցնելով՝ որ
բնաւ դովելի չէ , զի եկեղեցական արարողութիւնները
կը խանգարեն : Աշտանակ մը վառուած մոմեղէններով
ջահրնկալի ձեռնադրութեան ատեն եպիսկոպոսէն կը
տրուի նուիրեալին ձեռքը , իշխանութիւն տալով՝ կա-
տարելու եկեղեցոյ լուսավառութիւնը :

ԱՇՏԱՆԱԿ ԲԱԶՄԱՍՏԵՂՆԵԱՆ.— Կիրառութեան
ընդունուած են մէկ բունի վրայ 2, 3, 4 կամ աւելի
թեւեր ունեցող աշտանակներ՝ նոյնչափ մոմեղէններու
համար , որ բնաւ անպատեհութիւն չունին , եւ հին տա-
ճարին եօթնաջահեան աշտանակին նմանութիւնը կըր-
նան նկատուիլ :

ԱՇՏԱՆԱԿ ԲԵՄԻ. — Շատ եկեղեցիներ սովորու-
թիւն ունին բեմին երկու ծայրերն եւ յառաջակողմը,
մէջ-մէկ մեծամեծ աշտանակներ դնել մեծամեծ մոմե-
րով: Այդ աշտանակները խորհուրդ մը չունին եւ ծի-
սական պահանջ չեն, եւ կրնան դործածուիլ իբրեւ
պարզ պարզ մը:

ԱՇՏԱՆԱԿ ԳՐԱԿԱԼԻ. — Սովորութիւն է եկեղեցի-
ներու մէջ երկու հատ բարձր ու պատուանդանով աշ-
տանակներ ունենալ, ուր մոմակիր կամ կերոնաբարձ
ողաք չգտնուած ատեն՝ ատեանի գրակալին քովերը
կը դրուին աւետարան կարդացուած ատեն, կամ թէ
բեմին առջեւ կը դրուին արարողութեանց ժամանակ:

ԱՋԱԿՈՂՄ. — Եկեղեցւոյ աջն ու ձախը մեծ դու-
ռէն մտնողին աջովն ու ձախովը չեն որոշուիր, այլ
սեղանն իբր երեսը ժողովուրդին դարձած անձ մը
կ'ըմբռնուի, եւ անոր աջն ու ձախը կը նայուի, որով
մեծ դռնէն մտնողին աջին ու ձախին հակառակը ե-
ղած կ'ըլլայ: Ուրիշ բացատրութեամբ, որովհետեւ ե-
կեղեցիները միշտ դէպի արեւելք կը շինուին, հետե-
ւորար հիւսիսակողմը կ'ըլլայ Աջակողմեան ու հա-
րաւակողմը՝ Ձախակողմեան: Այդ պատճառաւ վիճա-
կաւորին հաստատուն աթոռն ու տեղը հիւսիսային դա-
սուն գլուխն է:

ԱՍՏԻՃԱՆ. — Եկեղեցւոյ զանազան կողմերը՝
դուռներու առջեւ եւ վերնատուն բարձրանալու համար
աստիճաններ կը գտնուին, երբեմն ալ՝ եկեղեցին ցած
ըլլալուն դուրսէն ներս իջնելու կը ծառայեն. ասոնք
չինուածքին պահանջն են եւ յատուկ բացատրութեան
չեն կարօտիր: Այստեղ դիւսաւորաբար կը յիշենք բեմի
աստիճանները որ կը գտնուին բեմին երկու ծայրերը,

Եւ բեմին բարձրութեան համեմատ 3-էն մինչեւ 6 կամ 7 ոտք կ'ըլլան սովորաբար : Այդ աստիճանները երբեմն դուրս կը մնան դասին մէջ, երբեմն բեմին մէջ կը մտնեն, դարձեալ երբեմն արեւմուտքէ արեւելք ուղղութիւն ունին, եւ երբեմն ալ կողմնակի հարաւէ հիւսիս եւ հիւսիսէ հարաւ ուղղութեամբ կը բարձրանան, կամ թէ պտոյտով մը երկու ուղղութիւններէ միանգամայն կը կազմուին : Պատարազի սրարողութեան սկիզբն ու վերջը, աջակողմեան աստիճանը ելլելու եւ ձախակողմեանը իջնելու կը ծառայէ, իսկ թափօրի աւթիւ աջ կողմն իջնելու եւ ձախ կողմն ելլելու . բայց ընդհանրապէս իւրաքանչիւր եկեղեցւոյ դիրքերու եւ ձեւին պահանջները կը յարդուին :

ԱՏԵԱՆ .— Եկեղեցական կիրառութեամբ ատեան բառով կ'իմանանք պարզապէս մէջտեղը եւ ըստ այսմ երբ կ'ըսենք Ատեան եկեղեցւոյ, Ատեան դասուն, Ատեան բեմի կ'իմանանք եկեղեցւոյ մէջտեղը, դասին մէջտեղը, բեմին մէջտեղը : Նոյնպէս երբ կ'ըսենք Ատենի ժամագիրք, կամ Ատենի աւետարան, կ'իմանանք բեմին մէջտեղը դրուած ժամագիրքը, կամ դասին մէջտեղը կարդալու պորձածուած աւետարանը : Ինչպէս կը տեսնուի՝ այդ իմաստը տարբեր է ատեան բառի միւս իմաստէն, որով կ'իմացուի դատարան, կամ դատաստան կամ ժողով, թէեւ լծորդութիւն մը կրնայ հաստատուիլ ժողով բառին հետ, որովհետեւ «ելանել յատեան» բացատրութիւնն ալ սօնացոյցին մէջ կը նշանակէ՝ թէ երկու դասերու անձերը իրարու քով կը ժողովուին եկեղեցւոյ մէջտեղը :

ԱՐՁԱՆ .— Ընդհանուր իմաստով կը նշանակէ անկուած ու հաստատուն քար մը, եւ այդպիսի քարե-

րու վրայ յիշատակութիւն գրելն ալ ըսուեցաւ արձա-
նագրել. եւ յետոյ ամէն հաստատուն յիշատակարան-
ներ թէեւ պարզ թուղթի վրայ գրուած՝ կոչուեցան
արձանագրութիւն: Բայց այստեղ արձան բառը կ'առ-
նենք աւելի սեղմ իմաստով, իբր առնապատկեր կամ
անդրի, այսինքն քարէ, կաւէ, գածէ, փայտէ կամ մե-
տաղէ շինուած, քանդակուած կամ ձուլուած պատկեր՝
կենդանական կերպարան մը ներկայացնող, ինչ որ ալ
ըլլայ ներկայացուցած անձը կամ կենդանին: Այդ
պատկերները սովորաբար կուելով ու կոփելով կը
շինուէին ուստի եւ կոչուեցան կուռք, եւ այդպիսի
կուռքերու աստուածային պատիւներ ընծայուել սկսե-
լէն ետք կուռք բառը շաստուած բառի համանշանակ
իմաստ ստացաւ: Աստուած հրէական ժողովուրդը
կուռապաշտութենէ զդուշացնելու համար տասնաբանեա-
լին երկրորդ պատուիրանով հրամայեց. «Մի՛ արաս-
ցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան» (Ելք.
Ի. 4): Այդ արդեւքը հրէական աւանդութենէ հին
քրիստոնէութեան ալ անցաւ, եւ ցարդ բոլոր Արեւել-
եան Եկեղեցիներ ինչպէս եւ մեր Հայ Ուղղափառ Ե-
կեղեցին, իրենց տաճարներուն մէջ արձաններ չեն ըն-
դունիր. մինչ Արեւմտեան Եկեղեցին այդ խղճմտու-
թիւնը շատոնց թողած է, եւ իր եկեղեցիները՝ դեղա-
կերտ, նոյնիսկ հրապուրիչ արձաններով լեցուն են. եւ
իրենք զիրենք կը ջատագովեն, ըսելով թէ պատուիրա-
նը «Մի՛ արասցես»ով չի վերջանար, այլ ամբողջու-
թիւնն է. «Մի՛ արասցես դու քեզ կուռս... մի՛ երկիր
պագանիցես նոցա, եւ մի՛ սլաշտեսցես զնոսա» (Ելք.
Ի. 4—5). այսինքն ո՛չ թէ շինելը բացարձակապէս ար-
դիւրուած է, այլ շինածը պաշտել: Ի՛նչ որ ալ ըլլայ
պատուիրանին մեկնութիւնը, Արեւելեան Եկեղեցիներ
19 դարերէ ի վեր սլինդ պահած են արդեւքը, եւ մենք
ալ կը պահենք տակաւին մեր եկեղեցւոյ մէջ: Սակայն

արձանի արգելքը սլահած ատեննիս զայն չենք տարածեր ամէն տեսակ պատկերի կամ կերպարանաց նմանութեան : Եկեղեցւոյ մէջ ունինք նկարեալ պատկերներ , ունինք քանդակներ , թէ՛ հարթաքանդակ եւ թէ բարձրաքանդակ , ունինք ձուլածոյ նմանութիւններ , կը պորժածենք եւս խաչերու վրայ ամբողջ Քրիստոսի մարմնոյն նմանութեամբ պատկերներ , որոնց վրայ իւրաքանչիւր անունին ներքեւ պիտի խօսինք :

ԱՐՏԱԽՈՒՐԱԿ.— Եպիսկոպոսական սրածայր խոյրին ետեւէն կախուած երկու երկար ծայրերն են , որոնք իրենց ծագման մէջ խոյրը պլխուեն վրայ ամուր պահելու ծառայող կապեր էին , բայց հետզհետէ զարդարանքի փոխուեցան : Այժմ իբրեւ կէս մետր երկար եւ իբրեւ 6 կամ 7 հարիւրամետր լայն՝ եւ վարի կողմն աւելի լայնցած՝ երկու կտոր զարդեր են , խոյրին նմանութեամբ շինուած կամ ասեղնապորժուած : Լատին Եկեղեցին որ վակաս չունի , արտախուրակները խոյրին կապուած կը դնէ եւ կը պորժածէ , բայց մեր մէջ վակասի պոյութիւնը դժուարութեան հանդիպեցուցած է արտախուրակի կիրառութիւնը . վակասին վրայէն թողուլ տգեղ է , ուստի խորհուեցաւ վակասին մէջէն անցընել՝ վակասին կտաւը ծակելով , եւ երբեմն ալ երիզով մը արտախուրակները խոյրէն քիչ մը հեռացնելով , եւ այսպէս կ'ընեն ցարդ հռոմէական հայերը : Իսկ մենք այժմ եւ սովորաբար արտախուրակները խոյրէն բոլորովին զատելով՝ վակասին ետեւէն կը կախենք , որ թէեւ դիւրին է , բայց զարդին բնականը չէ : Երբեմն եպիսկոպոսներ պատարագի կիսուն խոյրը հանած ատեննին արտախուրակները կը սիրեն թողուլ , ժամարարին եպիսկոպոսութիւնը ցուցնելու համար , որ բոլորովին հակառակ է ծիսական ուղղու-

Թեան, որովհետեւ արտախուրակներն առանց խոյրի
գոյութիւն չեն կրնար ունենալ:

ԱԻԱԶԱՆ.— Որ է մկրտութեան ծառայող եւ խո-
րունկցած տաշտածեւ քար մը, որուն մէջ ջուր կը լե-
ցուի եւ երախան անոր մէջ կը մտցուի՝ մկրտութեան
խորհուրդը կատարելու համար: Աւազանները եկեղե-
ցիներու մէջ հաստատուն պիտի ըլլան, աջակողմեան
պահարանին հիւսիսային պատին առջեւ ամրացուած,
մինչեւ մարդուն մէջքը հասնելու բարձրութեամբ, եւ
ապահովութեան համար յատուկ դարանի նման գոյ
դիրքի մէջ առնուած ու փակուած: Աւազանը յատուկ
օժման արարողութիւն ունի եկեղեցւոյ ընդհանուր օժ-
ման մէջ, եւ հինգ տեղէն կ'օժուի. ներքին կողմէն չորս
անկիւններն ու մէջտեղը: Աւազանին նկատմամբ պէտք
է դիտել՝ որ բաւական ընդարձակ եւ բաւական խո-
րունկ ըլլայ, եւ այնչափ ջուր կարենայ պարունակել,
որ երախային ջուրին մէջ մտած ատեն՝ ամբողջ մար-
մինը կարենայ ծածկել, եւ ոչ թէ լոկ թիկունքն ու քա-
մակը թրջել: Հետեւաբար ծիսական կատարելութիւն
չունին այն աւազանները որոնց երկայնութիւնը կարճ
է ու խորութիւնը քիչ: Աւազաններու հաստատուն ըլ-
լալուն՝ մկրտութիւնները հարկաւ եկեղեցւոյ մէջ կա-
տարելը եկեղեցական օրէնք է: Սակայն կրնան հան-
դիպիլ բացառիկ պարագաներ՝ ուր երախային գլտ-
նուած տեղը հայ եկեղեցի չգտնուի, կամ թէ անհրա-
ժեշտ պատճառաւ եկեղեցի երթալը անհնար ըլլայ.
այսպիսի առիթներու համար ներուած է շարժական ա-
ւազանի կիրառութիւնը: Կան տեղեր ուր յատուկ եւ
օժեալ շարժական աւազան պատրաստ կը գտնուի, քա-
րէ կամ թիթեղէ կամ ամուր փայտէ. բայց հոն ուր չի
գտնուիր, հարկ է որեւէ մաքուր ու մեծկակ աման մը
ճարել, լաւ սրբել եւ օրհնել եւ անոր մէջ մկրտութիւն

կատարել : Այս հարկը տեղի կ'ունենայ եւս երբ չափա-
հաս անձի մկրտութեան առիթ կը պատահի , եւ եկե-
ղեցւոյ աւագանը անբաւական կը դառնայ անոր մար-
մինին : Մեծ մարդ մը սլարունակելու բաւող տակառէն
աւելի սովորական ամաններ ձեռքի տակ չեն դտնուիր ,
ուստի չափահասներու մկրտութեանը՝ «տակառ մըս-
յընել» բացատրութիւնը կը դործածուի ժողովուրդին
մէջ :

Ա.Ի.ԱՆԴԱՏՈՒՆ .— Եկեղեցիներ սովորաբար երկու
պահարաններ ունին , մէկը եկեղեցւոյ աջակողմը , որ
եւ Մկրտատուն կը կոչուի , եւ միւսը ձախակողմը , որ
է Սարկաւագատունը , եւ այս ձախակողմի պահարանն
է որ Աւանդատուն ալ կը կոչուի , որովհետեւ հոն կը
պահուին եկեղեցւոյ սպասներն ու զարդերը որոնք են
աւանդք , սյսինքն եկեղեցւոյ յանձնուած իրեր : Սպաս-
ներէն ու զարդերէն թանկագիններն ու ընտրելագոյն-
ները յաճախ կը դատուին , եւ եկեղեցւոյ ետեւը ամուր
ու ամրափակ յատուկ պահարանի մէջ կը պահուին՝
որ կը կոչուի Գանձատուն : Այս տարբերութիւնը յա-
ռաջ բերինք ճշդութեան համար , ապա թէ ոչ սովորա-
կան դործածութեան մէջ աւանդատուն բաւը կը գոր-
ծածուի իբր պահարան անունին համանշանակ եւ երեք
պահարաններու ալ աւանդատուն անունը կը տրուի :

Ա.Ի.ԵԼ .— Սովորական ու ծանօթ գործիք մաքրու-
թեան , որուն յիշատակութիւնն իսկ աւելորդ կը դառ-
նար , եթէ ծիսական կիրառութիւն մը չունենար : Ե-
կեղեցական պաշտօնէութեան նուիրեալներու վրայ
եօթն աստիճաններէ առաջ , օրհնութեան կարգ մը կը
կատարուի որ կը կոչուի «Սկիզբն աստիճանաց» եւ
օրհնուածները կը կոչուին սաղմոսերդ եւ աւելածու :
Այդ օրհնութեան մէջ եպիսկոպոսը նուիրեալին ձեռ-

քը կու տայ փոքր աւել մը՝ ըսելով. «Ա՛ռ քեզ հրաման լինել աւելածու» եւլն. : Այդ նպատակաւ գլխաւոր եկեղեցիներու մէջ կոկիկ ու պզտիկ աւել մը կը գտնուի իբր նիւթ ձեռնադրութեան :

ԱԻԵՏԱՐԱՆ.— Մենք պարզապէս նկատի պիտի առնենք Աւետարանն իբրեւ նիւթ, այսինքն Աւետարանը պարունակող գիրքը կամ հատորը : Եկեղեցւոյ մէջ գործածուած Աւետարանի տեսակներն են. —

ԱՏԵՆԻ ԱԻԵՏԱՐԱՆ.— Չորս Աւետարանները իրենց բնական կարգով եւ ամբողջութեամբ պարունակող, բայց բաժնուած Յինանց մէջ կարդացուած հատուածներու համեմատ, եւ վերիվերոյ չափով իբր 25 հարիւրամետր երկայն եւ 15 հարիւրամետր լայն հատոր մը : Այս աւետարանը պզտիկ դրակալով մը կը կենայ միշտ բեմին ատեանը, ատենի ժամագիրքին մօտ, եւ նոր եկեղեցի մտնող պաշտօնեաներ զայն կը համբուրեն, ժամերգութեան աւետարանները անոր մէջէն կը կարդացուին, «Կեցո»ին անիկա կը բարձրացուի, եւ ժողովուրդին այն համբուրելու կը ներկայացուի :

ՃԱՇՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ.— Պատարագին մէջ կարդացուելիք աւետարաններու հատուածներ պարունակող, տօնացոյցի կարգով շարուած հետզհետէ. օրուան եւ տօնին յիշատակութիւնն ալ վրան նշանակուած է : Չափով վերիվերոյ ատեանի աւետարանի նման : Այդ աւետարանը սեղանին վրայ կը մնայ, տէրունի օրեր երկու մոմեղէնով սեղանին մէջտեղ կը դրուի, երբեմն ներքեւը զարդարուն դաստառակ մըն ալ կ'աւելցուի : Պատարագի մէջ աւետարանի վերաբերման եւ աւետարան կարդալու, ինչպէս նաեւ «Այսօր դասիք»ի արարողութեան ալ կը գործածուի :

ԻՒՂԱՅԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆ.— Աւելի մեծադիր քան առաջինները, իբր 45 հարիւրամետր երկար եւ 25 լայն, եւ կը պարունակէ միայն չորս աւետարաններէն Իւզաբերից համար կարդացուած հատուածները, աւելի խոշոր եւ աւելի զարդարուն գիրերով: Կը գործածուի միմիայն կիրականօրեայ Իւզաբերիցի ընթերցման:

ՍԵՂԱՆԻ ԱԻԵՏԱՐԱՆ.— Հանդիսաւոր օրեր սեղանին զարդարանքին համար բազմաթիւ աւետարաններ կը շարուին մոմեղէններու հետ, եւ ասոնք գլխաւորապէս նախայիշատակեալ երեք տեսակներէն դանձատան մէջ պտնուած աւետարաններն են. բայց կան եւ կարգ մը աւետարաններ ո՛ր վերոյիշեալ կիրառութենէն դուրս կը պահուին լոկ զարդի համար, եւ ասոնք են ընդհանուր կերպով Սեղանի Աւետարան կոչուածները:

ԾՈՅԻ ԱԻԵՏԱՐԱՆ.— Այսպէս կը կոչուին իրենց վոքըր գիրքին համար՝ մինչեւ իսկ լոկ իբր 12 հարիւրամետր երկար ու 6 լայն աւետարաններ կան ո՛ր դիւրատար ըլլալով՝ հիւանդի երթալու կամ դերեղման օրհնելու համար միասին կը տարուին: Կը պարունակեն չորս Աւետարաններն ամբողջութեամբ, բայց մանրկէկ տառերով եւ առանց հատուածներու բաժանմանց:

Այս ամէն Աւետարաններն եկեղեցւոյ մէջ գործածուելու համար պէտք է արծաթապատ ըլլան, այսինքն կա՛մ ամբողջ երկու կողքերն արծաթով դոցուած ըլլան, եւ կամ իւրաքանչիւր կողքին վրայ արհեստակերտ արծաթեայ զարդ մը ունենան: Սեղանի աւետարանները որովհետեւ միայն երեւնալու համար կը շարուին, միայն մէկ կողմէն արծաթապատ ըլլալ կը բաւէ. բայց միւս տեսակներուն երկու երեսներն ալ արծաթապատ կամ արծաթազարդ պիտի ըլլան, եւ մէկ կողքը անզարդ աւետարանները իբրեւ ճաշու կամ ա-

տենի աւետարան գործածելը ծիսական պահանջքի հա-
կառակ է : Արծաթեայ զարդերը միշտ տէրունական
տնօրինութեան պատկերները կը կրեն հարթաքանդակ
ձեւով, եւ սովորաբար Յարութեան, Սաչի, Ծննդեան,
Աւետման պատկերներ են դրուածները . բայց ասոնցմէ
տարբեր տնօրինութիւններ ու արհեստական դադափա-
րով կազմուած պատկերներ ալ կը գտնուին ու կրնան
ըլլալ, միայն թէ հոգեւորական ըլլան ու խստիւ պահ-
պանողական : Ատենի աւետարաններուն կողքերէն
մին Յարութեան պատկեր ըլլալու է, կիրակամուտնե-
րու եւ կիրակիներու յարմարելու համար, իսկ Իւղա-
բերից աւետարանները հարկաւ մէկ կողմը Սաչի եւ
միւս կողմը Յարութեան պատկեր պիտի ունենան :
Պէտք է ուշադրութիւն ընել որ դէմքերու ու պատկերի
կազմութիւններ կանոնաւոր ու ճաշակաւոր ըլլան : Թէ-
եւ հինէն մնացած Աւետարաններուն մէջ կան նուազ
արուեստաւոր ու երբեմն անյարմար իսկ պատկերներ,
բայց անոնց արժէքը հնութիւնն է, իսկ նորերու վրայ
զգուշութիւնը միշտ կարեւոր է :

ԲԱԶԿՈՒՐԱՐ . — Լատին Եկեղեցւոյ յատուկ զգես-
տի մաս մըն է, որ կիսասարկաւազ ձեռնադրելու ատեն
կը տրուի, եւ որ կը գործածուի բարձրագոյն աստի-
ճաններու մէջ ալ : Ուրարի ձեւ ունի, բայց պզտիկ է,
եւ իբր 80 հարիւրամետր երկայն ու 10 լայն, ծայրերը
աւելի լայնցած, ձախ դաստակի վրայ երկու կողմ կը
կախուի եւ ներքեւէն երիզով կը կապուի : Հայ Եկե-
ղեցւոյ մէջ քահանայական կարգի աստիճանները չորս
էին առաջ՝ Յունական Եկեղեցւոյ նման, իսկ յետոյ
ԺԲ . դարու վերջերը կամ ԺԳ . դարու սկիզբները եօթն
աստիճանի վերածուեցան լատինաց նման, եւ այդ բա-
ժանումը ցարդ կը պահուի ձեռնադրութեան ատեն :
Սակայն հնաւանդ արարողութեան ձեւը մնաց անփո-

փոխ եւ կիսասարկաւաղութիւնը այժմ ոչ յատուկ պաշ-
 տօն եւ ոչ յատուկ զգեստ ունի հայ ծէսին մէջ, հե-
 տեւարար բազկուրարն ալ երբեք գործածուած չէ :
 Քանի մը եկեղեցիներու մէջ կը գտնուի լատին ձեւով
 բազկուրար մը, որ կիսասարկաւագի ձեռնադրութեան
 ատեն կը տրուի եւ յետոյ ետ կ'առնուի . բայց սովո-
 րարար ան ալ չի գտնուիր եկեղեցիներու մէջ, այլ
 ձեռնադրութեան ատեն սարկաւագի ուրարը ձախ թելը
 կը փաթթեն, ծայրերն ի կախ . եւ որովհետեւ անմի-
 չսպէս ետքը կամ առ առաւելն յաջորդ առտու սարկա-
 վաղութեան ձեռնադրութիւն կը տրուի, ուրարը թելէն
 կը հանեն եւ ուսը կը ձգեն, եւ բազկուրարի երեւոյթն
 ալ կը վերջանայ :

ԲԱԶՄՈՅ . — Սոյն բառին ընդհանուր նշանակու-
 թեամբ կ'իմացուի որ եւ իցէ կարասի մը որուն վրայ
 կրնայ մէկը բազմիւ կամ նստիլ : Աթոռ մը, նստարան
 մը բազմոցներ են ընդհանուր կերպով : Աթոռի վրայ
 խօսուեցաւ վերը, նստարանի վրայ պիտի խօսինք իր
 կարգին : Եկեղեցւոյ մէջ բազմելու կը ծառայեն նաեւ
 պզտիկ բարձեր (միստէր), որ եկեղեցիներու յատակը
 եւ վերնատուններու մէջ կը դրուէին երբեմն առատու-
 թեամբ, յատուկ տէր ունէին եւ փոխարէն վճարումով
 սեպհականութեան իրաւունք ալ կը ստանային . բայց
 այժմ ցանցառ մնացած են : Անոնց երկարները կը գոր-
 ծածուին ցարդ դասուն մէջ քահանաներու եւ դպիր-
 ներու համար, որ կը կոչուին կոդիմֆ՝ իբր անկողնակ :
 Բայց տօնացոյցի մէջ բազմոց անունը կը գործածուի
 նշանակելու համար սեղանի վրայ դէպի ետեւ բարձրա-
 ցած մասը, որ այժմ քանի մը սանդղածեւ աստիճաններ
 ալ ունի, եւ որուն վրայ կը շարուին աշտանակներ ու
 եկեղեցական սպասներ, անօթներ ու աւետարաններ,
 իբր զարդ եւ իբր բարեպաշտութեան առարկայ : Ասոնք

առհասարակ սրբութիւնք կը կոչուին, ինչպէս իր կար-
գին պիտի բացատրենք:

ԲԱԶՊԱՆ. — Քահանայական զգեստին մէկ մասն է
զոր կը կրէ քահանան երկու թեւերուն վրայ, դաստա-
կէն մինչեւ արմուկը, բոլորովին զսպուած՝ որ կեր-
պով մը շապիկին թեւերը հանգրիճելու կը ծառայէ:
Բազպանները շինուած են ամբողջ զգեստին կերպասէն
կամ թէ յատուկ ասեղնադործուած են, եւ վրանին ու-
նին մէյ-մէկ խաչ: Երկու տարբեր ձեւով բազպաններ
կան, մէկը կլորակ կարուած, որուն մէջ քահանան
ձեռքը կը խօթէ եւ ետեւի կողմէն քաշելով մինչեւ ար-
մուկը կը հասցնէ. այս ձեւը սովորական է հայ հոռ-
մէականներու մօտ: Իսկ մեր մէջ սովորաբար բաց է
բազպանը եւ թեւին վրայ դրուելէն ետք երկու կողմե-
րը թեւին ներքեւէն իրարու կը մօտեցուն ասպիկ
չուանով եւ կը կապուին արմուկին մօտ: Բազպանին
տուչութեան յիշատակութիւն չկայ ձեռնադրութեան
ատեն, շապիկը կը տրուի դպրութեան ատեն, ուրարը
սարկաւազութեան, եւ դօտի, շուրջառ ու սաղաւարտ՝
քահանայութեան ատեն, բազպանը կը մնայ դուրս,
միայն թէ կրնայ համեմատուիլ կիսասարկաւազութեան
բազկուրարին: Այդ կէտը լուսաբանելու համար յստակ
եւ որոշ պրուած մը չունինք: Ոմանք կարծեցին թէ
բազպանը յատուկ զգեստ չէ, այլ շապիկին թեւերուն
զարդարուն ծայրերը կը կազմէ, ինչպէս շատ մը պաշ-
տօնական զգեստներուն թեւերը զարդարուն մասեր ու-
նին: Բայց միւս կողմէ հաստատուն աւանդութեամբ
զատ զգեստ է, եւ ձեռնադրութեան Մաշտոցը քահա-
նայական զգեստները պատրաստելու հրահանգին մէջ
բազպանն ալ կը յիշէ, թէ եւ եպիսկոպոսը զայն պաշ-
տօնապէս չի տար նոր ձեռնադրուողին, որով արդէն
տրուած կ'ենթադրուի: Ժամարար քահանային զգես-

տաւորուելուն առթիւ բազմապէս յատուկ աղօթք ունի եւ
 Լամբրոսնացին ու Օձնեցին ալ բազմապէս աղօթքը կը յիշեն,
 որով բազմապէս զատ զդեստ ըլլալը կը ցուցնեն :
 Բայց աղօթքը հին յիշատակութեանց մէջ մէկ հատ է
 միայն, իսկ վերջին ժամակներու մէջ կրկնուած է աջ
 ու ահեակ թեւերուն վրայ : Այդ տեղեկութիւնները
 լրացնելու համար ի դէպ է խորհրդածել թէ արդարեւ
 սարկաւազութենէ առաջ տրուած զդեստ մըն է, թէ
 լատին բազկուրարին ու կիսասարկաւազութեան ճանչ-
 ցուելէն առաջ կար, եւ յետոյ բազկուրարին հետ
 շփոթուեցաւ եւ թէ նորամուտ բազկուրարն ընդունելու-
 թիւն չդտաւ եւ բազմապէս հին դոյութիւնը պահեց : Այդ
 տեսութեամբ Եղուարդ արքեպիսկոպոս Հիւրմիւզեան
 Հոռմի 1863-ին կատարած հայածէս ձեռնադրութեան
 առթիւ՝ կիսասարկաւազութեան ասէն բազմապէսները
 հաղուեցուց նուիրեալներուն, եւ սարկաւազութեան
 սերարը թեւին վաթթելու սովորութիւնը ծիծաղելի
 նկատեց եւ խափանեց :

ԲԱԺԱԿ.— Այս անունը կը դործածուի սկիհ ան-
 ունին տեղ անխորաբար, եւ կը նշանակէ մեծ ամա-
 նէն բաժնելով լեցուած փոքր աման մը, անով որեւէ
 ըմպելի, եւ առաւելապէս դինի խմելու համար : Բա-
 ժակ անունը այժմ անխտիր արտաքին կիրառութեամբ
 ալ կը դործածուի, մինչ սկիհ անունը յատկացեալ է
 հաղորդութեան խորհուրդին դործածուած բաժակին :
 Միւս կողմէ սկիհ անունը լոկ նիւթական անօթը նշա-
 նակելու կը ծառայէ, իսկ բաժակ անունով կ'իմանանք
 անոր մէջի սլարունակութիւնն ալ, եւ նոյնիսկ Ս. Հա-
 ղորդութիւնը խորհրդական սրբադործութենէ ետքը :

ԲԱԺԱԿԱՄԱՆ = ԲԱԺԿԱՄԱՆ = ԺԱՄԱՆՈՑ ալ կը
 կոչուի Պատարագի խորհրդոյն մատուցած գինւոյն ա-

մանը որ յատուկ ձեւով ու վայելուչ շիշ մըն է, ապակեայ խցանով դոցուած: Արծաթէ շիշ ալ դործածել օրէն է, բայց վայել չէ դեղի կամ ուրիշ ըմպելիի գործածուող սովորական շիշեր՝ եւ մինչեւ իսկ սեւ շիշեր՝ իբր բաժակաման գործածել պատարագի գինին սեղան մատուցանելու համար: Ջահընկալի ձեռնադրութեան ատեն եպիսկոպոսը դատարկ բաժակաման կու տայ նուիրեալին ձեռքը՝ իշխանութիւն տալով դայն լեցնել եւ պատարագի համար պատրաստ բռնել:

ԲԱԿ.— Եկեղեցիներու շինուածքները թէեւ տարբեր ոճով, բայց հիմնապէս նմանութիւն ունին իրարու հետ հական կէտերու մէջ: Տաճարը շինուած է որոշեալ գետնին մէջտեղը, եւ տաճարին շուրջը բաց միջոց մը կը գտնուի, սակից ետքը կ'ըլլան ժամատուն, եւ ուրիշ մասեր, եւ ստէպ նաեւ վարժարանը, որ կը փակուին շրջապատի պարսպով: Բակը տաճարին եւ այդ շէնքերուն մէջ գտնուած բաց միջոցն է, որ աւելի ընդարձակ կ'ըլլայ արտաքին դռնէն ներս՝ տաճարին մեծ դրան առջեւ, եւ բակ անունով աւելի այս առաջուան մասը կ'իմացուի, մինչ միւս մասերը բացատրելու համար կողմնակի բակը, ետեւի բակը՝ բացատրութիւնները կը դործածենք:

ԲԱՆԱԿԻ.— Եկեղեցւոյ մէջ գտնուող դարաններ հարկաւ իրենց կղպանքն ու բանալին կ'ունենան, նոյնպէս բանալիներ կ'ունենան ամէն մուտքի դռները, եւ այս յայտնի բան մըն է: Յատկապէս եկեղեցւոյ բանալի ըսելով՝ կ'իմանանք տաճարին մեծ դրան բանալին, որ յատուկ նշանակութիւն կ'ունենայ դռնապանին ձեռնադրութեան ատեն՝ իբրեւ աստիճանին գործի եպիսկոպոսէն նուիրեալին ձեռքը տրուելէն, եւ սարկաւազի առաջնորդութեամբ դուռը բանալու եւ դոցելու գործողութիւնը կատարելէն:

ԲԱՆԿԱԿ. — Եկեղեցւոյ արտաքին դուռնէն ներս մտած ատեն, տաճարին մեծ դուռը շփացած, անցքին մէկ կողմը կամ երկու կողմերը՝ վրան դոց ու առջեւը բաց տեղեր կ'ըլլան ուր մոմ կը ծախուի բարեպաշտներու, եւ եկեղեցւոյ համար պնակներ կը գտնուին հաւատացեալներու նուէրն ընդունելու, ուր տեղէն ըստ պիտոյից տեղեկութիւններ ալ կը հարցուին ու կը տրուին, եւ եկեղեցւոյ անյարմար չեղող իրեր ալ, զոր օրինակ օրացոյց կամ հոգեւոր հրատարակութիւններ կրնան վաճառուիլ: Այդ տեղերուն ժողովրդական սովորութեամբ բանկալ անուներ կը տրուի: Բանկալներ մէկէ աւելի ալ կրնան ըլլալ, ճորք եկեղեցին աւելի սուտքեր ունի, եւ ի հարկին երբեմն շարժական բանկալներ ալ կը գրուին տաճարի դուռներուն դուրսը: Կան եկեղեցիներ որ դիրքին անյարմարութեան համար բանկալի գործողութիւնները տաճարի մեծ դուռէն ներս գաւթին մէջ կը կատարուին, որ յանձնարարելի չէ երբեք:

ԲԱՐՁ անուներ կ'առնենք իբր համանշանակ ռամկական միջնակար անուներն՝ որ շատ գործածական էր ի նախնումն, երբ եկեղեցւոյ մէջ նստարաններ չկային, եւ հաւատացեալք դետինը ծնրադրած կամ ծալապատիկ կը նստէին: Բարձերը տէրունի ալ էին, եւ եկեղեցւոյ բան մը վճարելով՝ եկեղեցւոյ մէջ որոշ տեղ մը, նստելու սեպհական բարձ ունենալու իրաւունքը կար, եւ նոյն իրաւունքը ժողովրդականութեամբ սերունդին ալ կ'անցնէր: Այժմ այս տեսակ բարձեր շատ քիչ մնացած են եկեղեցիներու մէջ, եւ ան ալ քանի մը տարէց տիկնանց կողմէն պահուած: Բարձի ուրիշ մէկ կիրառութիւնն ալ սեղանին վրայ էր, խորհրդատետրի ներքեւ դրուած, զայն բարձր կեցնելու համար: Այս բարձիկն ալ սովորութեամբ սկսաւ խափանուիլ, եւ

փոքրիկ դրակալներ ընդհանրացան խորհրդատեարը
կեցնելու համար :

ԲԵՄ. — Գետնէն բարձր եղած մասնաւոր տեղեր
կը կոչուին բեմ, եւ դատարաններ, ժողովատեղիներ,
հանդիսավայրեր, թատրոններ, եւլն. կ'ուենենան իրենց
բեմը: Մեր եկեղեցիներու մէջ, սեղանն ալ տաճարին
արեւելակողմը բարձրացած բեմին վրայ կը կանգնուի:
Յոյն եկեղեցիներ բեմ չունին, իսկ լատին եկեղեցիներու
ընդմէջ բեմն ալ մերինէն տարբեր է, որովհետեւ միայն
սեղանին առջեւ բարձրացած մէկ մաս է: Մեր եկեղե-
ցիներու մէջ տաճարին արեւելեան մասը ամբողջ տա-
ճարին լայնութեամբ դրեթէ կանգուն մը եւ երբեմն ա-
ւելի ալ կը բարձրանայ գետնէն, եւ այդ բեմին վրայ
կը գտնուին խորանն ու սեղանը, անոր վրայ կը կա-
տարուի պատարագի մատուցումը, ու ժողովուրդը
տաճարին ամէն կողմէն հեշտ կերպով կը տեսնէ արա-
րողութիւնը: Մեր բեմերը շիտակ կանգնուած են,
միայն երկու ծայրերն աստիճաններ կան վեր ելլելու,
ինչպէս աստիճան բառին ներքեւ ըսինք: Հայ հռոմէա-
կանք այդ մասին փոփոխութիւն մտցուցին իրենց եկե-
ղեցիներուն մէջ, եւ բեմին առջեւը ծայրէ ծայր աստի-
ճաններ շինեցին ուղիղ դէպի սեղանը բարձրանալու
համար՝ առանց կողմնակի պտոյտն ընելու: Հարկաւ
հին ձեւերու պահպանութիւնը դուրսի ու նախադասելի
պէտք է համարուի:

ԲՇԽՈՒՆ. — Եկեղեցւոյ մէջ զանազան կիրառու-
թեան յատկացեալ ասեղնագործ, զարդարուն ու ընտիր
բեհեղէ կամ մետաքսէ դաստառակներ անխտիր կեր-
պով բշխուն կը կոչուին: Անոնք որեւէ նուիրական
սպաս, իսաչ կամ աւետարան եւլն. բռնելու կը ծառա-
յեն եւ բռնիչ ալ կոչուին: Բշխուն անունն աւելի յատ-

կացեալ կերպով կը գործածուի այն երկայնկեկ դաս-
տառակին որ երկու տղոց ձեռքով ժողովուրդին առջեւ
կը բռնուի հաղորդութեան մօտեցած ատեննին, իբր
ապահովութիւն որ եթէ քահանային ձեռքէն հաղոր-
դութենէն մաս մը սահի, անոր մէջ կենայ եւ առնուի
ու գետին շիյնայ: Այդ յատուկ կիրառութիւնն առնե-
լով՝ հնար էր քշխուն անունը բաշխօն կարծել, հաղոր-
դութիւն բաշխուելէ առնուած, բայց ստուգաբանական
խնդիրն անով զբաղողներուն կը թողունք:

ԲՈԺՈԺ.— Պղտիկ զանգակիկ մըն է, բայց սովոր-
աբար զանգակի ձեւէն կը տարբերի, որովհետեւ վա-
րի շրթունքներն իրարու մօտեցած են, միայն երկու
ծակեր թողլով, եւ հնչեցնելու համար մէջը պղտիկ
երկաթ կտոր մը կայ բոլորովին թաղուած եւ ամբող-
ջին ցնցումով կ'ելլէ ձայնը: Բոժոժի մեծութիւնը
մեծիակ կազինի մը չափ է սովորաբար, բայց աւելի
մեծեր ու աւելի մանրեր ալ կրնան դործածուիլ: Հին
օրէնքի մէջ մեծ քահանայապետին զգեստն ունէր իր
զանգակիկները, բայց մեր եկեղեցոյ մէջ ոչ մէկ
զգեստի վրայ բոժոժ չի դրուիր, այլ կը դործածուի
այն բուրվառի շղթաներուն վրայ ու քշոցին շուրջը:
Բոժոժներուն թիւը թէ՛ իւրաքանչիւր բուրվառի եւ թէ՛
իւրաքանչիւր քշոցին շուրջը ընդհանուր սովորու-
թեամբ 12 պիտի ըլլայ, եւ ըստ Տաթեւացոյն զանգա-
կիկները առաքեալներուն նշանակ են՝ որոնց քարոզու-
թեան ձայնը հնչեց ընդ ամենայն երկիր:

ԲՈՒՆ—ԽԱԶԻ.— Այսպէս կը կոչուի չորս թեւերէն
այն՝ որ ուղղահայեաց դժին ստորին մասը կը կազմէ
եւ առանձինն կ'օծուի խաչ օծելու արարողութեան
մէջ: Բուն—խաչին կրնայ կոչուիլ նաեւ այն մասը՝ որ
խաչին վարի թեւին ներքեւը կցուած է ձեռաց խաչե-

րուն մէջ եւ բռնելու կը ծառայէ, եւ որ խաչէն դուրս խաչին կոթը կը նկատուի: Օծումն այդ մասին վրայ չ'ըլլար:

ԲՈՒՐՎԱՌ. — Բուրման վառարան, անուշահոտութեանց համար դործածուող կրակի փոքր աման: Այս բուրման կրակարանները երբ տեղ մը հաստատուն կը դրուին՝ սովորաբար խնկանոց կը կոչուին, եւ կը տարբերին րուն բուրվառէն՝ որ շարժման մէջ կը դործածուի: Կրակարանը ներքեւը պատուանդան մը ունի զոր Տաթեւացին կառոյց կը կոչէ, իսկ վրայի կողմէն կախուած է երեք շղթաներով՝ որ վերէն ազոյցի մը վրայ կը միանան ուրիշ կը բռնուի: Կրակարանն ունի վրան կափոյց մը՝ որ շղթայով մը ազոյցին կը հասնի, ոչ հաստատուն կապուած անոր, այլ շարժական կերպով բացուելու եւ դոցուելու յարմար: Կրակարանին մէջ քիչ մը կրակ եւ վրան խուռնկ կը դրուի եւ բուրվառակրին բուրվառին տուած շարժումներով կ'այրի ու կը բուրէ: Բուրվառ ընող բուն պաշտօնեան սարկաւաղն է, որուն ետխիտպոսը հանդիսապէս կու տայ բուրվառը ձեռնադրութեան ատեն ու խնկարկել կու տայ. սակայն արարողութեան մէջ հանդիսադիրն ալ, ժամարարն ալ, կարդավարն ալ բուրվառով խնկարկութիւններ կ'ընեն, դլխաւորապէս թափօրներու առթիւ:

ԲՈՒՐՎԱՌԱՆՈՑ. — Հին եկեղեցիներու մէջ կը տեսնուէր ձախակողմի պահարանի դրան մօտ, պատին մէջ դործուած խորշ մը, ուր սովորութիւն էր դնել բուրվառը, բայց այժմ այդ խորշը խափանուած է մաքրութեան ու վայելչութեան համար. եւ բուրվառը պահարանին մէջ կը պահուի ու կը պատրաստուի:

ԲՌՆԻՉ. — Եկեղեցոյ մէջ դործածուած զանազան պատառակներն այդ անունը կը կրեն, երբ սպաս մը

բռնելու սահմանուած են կամ կը ծառայեն, այսպէս են աւետարանի բռնիչ որով աւետարանը կը բռնուի, խաչի բռնիչ՝ ձեռաց խաչը բռնելու: Սկիհի բռնիչ՝ որով հաղորդութիւն տրուած ատեն սարկաւազը սկիհը կը բռնէ՝ որպէս զի ժամարարը ապահովութեամբ կարենայ հաղորդութիւն բաշխել, եւ գաւազանի բռնիչ՝ որով գաւազանները կը զարդարուին վերի կողմէն: Հայ հռոմէականք միշտ գաւազանը բռնիչով կը զարդարեն վերի կողմէն, մեր մէջ գաւազանը կը զարդարեն միայն վարդապետական տուչութեան ու եպիսկոպոսական ձեռնադրութեան ատեն: Միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսն է որ միշտ զարդարեալ գաւազան կը դործածէ:

ԳԱՆՁԱՆԱԿ.— Փայտէ կամ մետաղէ շինուած սղախիկ արկղիկ մը կամ տապանակ մը ամէն կողմէ վրակուած, եւ միայն վերի կողմէն ծակ մ'ունի ուրկէ ներս կը թողուի ստակը: Կափարիչը բանալիներով գոցուած է, եւ երբեմն ալ կնիքով ամրացած: Այդ զլուչութեանց նպատակն է ապահովութիւն, որպէս զի դրամ հաւաքողը կամ հաւաքման հսկողը չկարենայ հաւաքուած ստակին վրայ ձեռք դնել: Գանձանակները դանազան կիրառութիւն ունին եկեղեցւոյ մէջ: Ամենէն դործածականն ու զրուցուածը քահանայից դանձանակն է զոր քահանայք եկեղեցւոյ մէջ կը շրջեցնեն, մէկ ձեռուրնին ալ բարովառ առած, եւ որուն արդիւնքը հաւասարապէս կը բաշխուի նոյն եկեղեցւոյ ծխատէր ու բաժնեկից քահանաներու վրայ, անոր համար Հաւասար Բահանայից ալ կը կոչուի այն դանձանակը: Գանձանակներ ալ կը դրուին հաստատուն կերպով բեմին վրայ եւ ուխտի առարկայ եղող պատկերներու առջեւ, եւ անոնց արդիւնքը Թաղ. Խորհրդոյ ձեռքով կը դործածուի եկեղեցւոյ ընդհանուր պէտքերուն: Շատ

տեղ եկեղեցիներու բանկալն ալ դանձանակ մը կը
դրուի՝ մոմապինն անոր մէջ դնելու համար, երբ բան-
կալը նստող պաշտօնէին վրայ բացարձակ վստահու-
թիւն կը սլակսի, մանաւանդ լուր օրերուն մէջ: Վեր-
ջապէս եկեղեցիներու դուռները հաստատուն դանձա-
նակներ ալ կան հաստատուած՝ որ որոշ նպատակի
սահմանուած են, ինչպէս են Ս. Էջմիածնի համար, Ս.
Երուսաղէմի համար, Ս. Փրկչի Հիւանդանոցի համար
դանձանակներ՝ որ բոլոր մեր եկեղեցիներու մէջ կը
տեսնուին. տեղ-տեղ թաղին վարժարանին կամ եկե-
ղեցւոյն նորոգութեան կամ ուրիշ բարեգործական
նպատակի համար սահմանուած եւ որոշ վերտառու-
թեամբ դանձանակներ ալ կը դրուին: Գանձանակներուն
վրայ՝ մանաւանդ ուխտի սրատկերներու առջեւ դրուած
դանձանակներուն վրայ՝ լուսարար կամ ժամկոչ պաշ-
տօնեաներու կողմէն կերպ-կերպ խարդախ գողութիւն-
ներ տեսնուած ըլլալուն, հարկ եղած է յատուկ դուռ-
շուքիւններ գործածել դանձանակներու շինութեան
մէջ՝ յատակներու ամրութիւնն ապահովելով, բերնէն
վար կոր խողովակներ ազուցանելով եւլն: Չյիշեցինք
մասնախումբի անդամներու կամ յատուկ պաշտօնեանե-
րու ձեռքով փողոցներու եւ շուկայի մէջ շրջապայու-
թեան դրուած Հիւանդանոցի եւ թաղերու դանձանակ-
ները, որ եկեղեցւոյ սպասներու եւ կահերու կարգէն
չեն:

ԳԱՆՁԱՏՈՒՆ.— Եկեղեցւոյ կողմնակի պահարան-
ներէն տարբեր երրորդ պահարան մըն է, յաճախ եկե-
ղեցւոյն ետեւի կողմը քարուկիր կամարով ամրացած
ու երկաթ դռներով ու վանդակներով ու փեղկերով
պաշտպանուած, թէ՛ գողի եւ թէ՛ հրդեհի վտանգէն ա-
զատ պահելու համար եկեղեցւոյ թանկագին սպասնե-
րը: Այդպիսի դանձատուն մը ունենալ անհրաժեշտ է

ամէն եկեղեցիներու համար, եւ ընդհանրապէս ալ շինուած են, ի բաց առեալ մանր ու կիսաւեր եկեղեցիները: Հնապէս եկեղեցիներու մէջ վանձատուներ շինուած էին նաեւ պատերու թանձրութեան մէջ, սիւներու եւ կամարներու հաստ կողմերը, եւ դուռներն ալ վաղտնի, որպէս զի ամէն մարդ չգիտնայ, բայց այսպիսի վանձատուներ ա'լ գործածութեան մէջ չկան:

ԳԱՆՁԱՐԱՆ.— Կրնայ ալ առնուիլ գանձատուն իմաստով, բայց այս չէ մեր բացատրելիքը: Գանձարանը պիտի մըն է որ կը պարունակէ զանազան տօներու համար յատուկ գանձեր: Իսկ գանձ կը կոչուին մեծ քարոզներ՝ որ հանդիսաւորապէս կ'երգուին առտուներն ու երեկոները մեսեղիներէն ետքը եւ «Գոհանամք զքէն» եւ «Լո'ւր ձայնից» աղօթքներէն առաջ: Գանձ անունը պատահաբար գործածուած է, որովհետեւ այդ ձեւով մեծ քարոզներուն առաջինները Ս. Գրիգոր Նաբեկացին պրած է, եւ իր անուան տառերով տուներու սկզբնազիրերը կազմել ուզելով՝ միշտ Գ տառով ու «վանձ» բառով սկսած է երեք քարոզները, եւ անկէ առնելով ամէն նման ձեւով քարոզներ «գանձ» կոչուած են: Գանձարան պիտիքեր աւելի ձեռագիր կը գտնուին. վերջին ատեններ զանձեր երգելու սովորութիւնը նուազած ըլլալուն չեն տպագրուած:

ԳԱԻԱՁԱՆ.— Որեւէ ձեռք բռնուելիք փայտի իմաստով կը գործածուի ընտանեկան խօսակցութեան մէջ, բայց եկեղեցւոյ մէջ պաշտօնի ու աստիճանի յայտարար նշանակ է, եւ ձեռնադրութեանց ատեն օրհնութեամբ եւ աղօթքով կը տրուի: Գաւազաններու նիւթը կրնայ ըլլալ փայտ կամ մետաղ կամ ոսկր, կան եւս բիւրեղէ կամ սպակիէ գաւազաններ, բայց յոյժ ցանցառ: Գաւազանները ամբողջապէս միեւնոյն նիւթէ շին-

նելու հարկ չկայ. ընդհանրապէս դաւազանին գլուխը
ու գաւազանին կոթը տարբեր նիւթէ կը շինուին. յա-
ճախ կոթերն ալ միակտուր չեն, այլ երեք կտորի կը
բաժնուին ազուցիկ պտուտակներով, եւ ազոյցներն ալ
տարբեր նիւթէ, այսինքն մետաղէ կամ ոսկրէ կ'ըլլան
փայտէ կոթերու վրայ: Գաւազաններու թանձրութիւնը
հաստկեկ փայտի չափ է, դլանաձեւ կլորակ եւ կամ
կլորի մօտ բազմանկիւն, յաճախ շիտակ ու լերկ, երբեմն
ալ ուղիղ կամ կոր ալօսաձեւերով դարդարուած: Բարձ-
րութիւնը ընդհանրապէս մարդաչափ կամ բնական հա-
սակէն քիչ մը աւելի. հնագոյնները միշտ նուազ բարձր
են: Լատինք եւ անոնց նմանողութեամբ հայ հռոմէա-
կաններ աւելի բարձր գաւազաններ կը դործածեն որ
մեր եկեղեցիներուն մէջ սովորական չեն: Գաւազաննե-
րու ծայրերն ալ սրածայր կը վերջանան եւ ընդհանրա-
պէս մետաղէ կտոր մը կ'ըլլայ ամուր մնալու համար:
Գաւազաններն այժմ մեր եկեղեցւոյն մէջ երկու տեսակ
են, — վարդապետական եւ եպիսկոպոսական կամ հով-
ուական. տարբերութիւնը գաւազանին գլխոուն դար-
դին վրայ է: Վարդապետական կոչուած գաւազանն օ-
ձագլուխ է, երկու օձեր՝ գլուխնին բարձր, երեսնին
դէմ դէմի եւ մարմիննին իրարու պատատած ստորին
մասին մէջ, իսկ վերի մասերը բացուած ու պառկած,
անգլուխ խաչի ձեւ մը առնելով, — իսկ այն տեղն ուր
երեք թեւեր կը միանան պզտիկ գունտ մը կայ, եւ վրան
մանր խաչ մը: Վարդապետական գաւազանի ձեւ մըն ալ
կայ չորս օձերէ կազմուած, երկուքը մէկ կողմ եւ եր-
կուքը միւս կողմ իրարու փաթթուած, իսկ ստորին մա-
սին մէջ չորսն իրարու պատատուած: Չորեքգլխեան գա-
ւազանը արարողական նշանակութեամբ երկգլխեանէն
տարբերութիւն չունի, սոսկ աւելի դարդարուն բան մը
կազմելու դիտմամբ արհեստաւորներէն հնարուած է,
եւ այն ալ յետին ժամանակներու մէջ: Բայց եթէ ու-

զուէր տարբերութիւն մը դրուել է մասնաւոր վարդապետութեան դաւազանը ծայրագոյն վարդապետութեան դաւազանէն տարբերել, բոլորովին աւելորդ բան մը եղած չէր ըլլար: Օձագլուխ դաւազանը յունաց մէջ եւսիսկոպոսաց յատուկ է, եւ այսպէս ալ եղած էր մեր մէջ մեր նախնի դարերուն: Այլ երբ լատինաց հետ յարաբերութիւնք սկսան եւ 1184-ին Լուկիոս Գ. Լուկացի Հռոմի հայրապետէն մեր Գրիգոր Դ. Տղայ կաթողիկոսին ամբողջ քահանայապետական զգեստ մը ընծայ զրկուեցաւ, ու կիրառութեան ընդունուեցաւ, հին յունաձեւ հովուական խոյրն ու դաւազանը վարդապետներու մնացին, եւ նոր լատինաձեւ հովուական խոյրն ու դաւազանը եպիսկոպոսներու սեպհական դարձան: Այդ հովուական դաւազանը, որ այժմ եպիսկոպոսներու յատուկ է, կոր դլուխ ունի իր մէջ կրկին անգամ դառնալով: Ներկայացուցած առարկան աւելի տերեւազարդ ու ծաղկազարդ ոստի մը կը նմանի, թէ եւ բոլորովին արուեստական կազմութիւն ունի: Լատինացը միշտ տերեւով ու ծաղիկով է, բայց մեր մէջ կան նաեւ օձագլուխ դէպի ներս կորացած եւ կրկին անգամ դարձած: Կ. Պոլսոյ Մայր Եկեղեցւոյն մէջ յատուկ դաւազան մը կայ որ չորսէ աւելի օձի գլուխներ ունի շուրջը շարուած եւ մէջտեղի գունդն աւելի մեծ ու աւելի որոշ կերպով դրուած է: Այդ դաւազանն իր էութեան մէջ միեւնոյն վարդապետական օձագլուխ դաւազանն է. շինուելուն թուականը որոշ չէ, այլ հաւանական է որ յատկապէս շինել տրուած է եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունեցող պատրիարքներու համար (ինչպէս Գրիգոր Կ. Պոլսեցի 1764-ին եւ այլք), ուրիշներէն տարբեր դաւազան ունեցած ըլլալու համար: Հայ հոռմէականք կաթողիկոսական դաւազան անունով կաթողիկոսներու յատուկ դաւազան մը կը դործածեն, որ է մեծկակ գունդ մը՝ վրան խաչ եւ շուրջը ուրիշ զարդեր

փոխանակ օձերու : Այդ դաւադանը լատինական հետե-
ւողութիւն մը չէ, որովհետեւ լատինք նման բան մը
չունին . հետեւաբար հայ եկեղեցական աւանդութիւն
մը ի դէպ է ըսել, եւ աւելի ճշդիւ Կիլիկիոյ աթոռին
սեպհական աւանդութիւն մը՝ որուն միաբաններէն ե-
ղած են 1740-ին Լիբանանու մէջ հայ հռոմէական կա-
թողիկոսութիւն մը կազմող եկեղեցականները, թէեւ
այժմ մեր Կիլիկիոյ Աթոռն ալ այդ ձեւով դաւադանի
սովորութիւն չունի : Գաւազաններուն կարգին պէտք է
յիշել նաեւ սովորաբար առա կոչուած դաւադանը, որ
պարզ երկար դաւադան մըն է ուղիղ, ու զարդարուն
գլխով՝ զոր կը գործածէ միայն պատրիարքը մայրա-
քաղաքին մէջ եւ առաջնորդներն իրենց վիճակներուն
մէջ՝ հանդիսաւոր ու պաշտօնական առիթներու միայն
եւ իբր նշանակ իրենց իշխանութեան, այլ ոչ երբեք
գործողութեան ատեն : Այդ դաւադանը մեծահանդէս ա-
ռիթներով եկեղեցականի մը ձեռքով պատրիարքին կամ
առաջնորդին առջեւէն կը տարուի, տանող եկեղեցա-
կանն ալ ձիաւոր՝ եթէ պատրիարքը կամ առաջնորդն ալ
ձիով կամ կառքով կ'երթայ : Այդ առային նման, բայց
կարճ ու պարզ դաւադան մըն ալ կը կրեն իրենց ձեռքը
պատրիարքները Կ . Պոլիս եւ առաջնորդներն իրենց վի-
ճակին մէջ, սովորաբար շրջագայած ատեննին : Գաւա-
զաններու վրայ տեղեկութիւնը լրացնելու համար՝ ա-
ւելցնենք թէ անոնց յօրինուածքը ճաշակի ու արուեստի
յանձնուած է բոլորովին, այնպէս որ դժուար իսկ է ի-
րարու նման դաւազաններ գտնել : Դաստառակով զար-
դարելու սովորութիւնն ալ, ինչպէս որ բունիչի վրայ
խօսած ատեննիս ըսինք, այժմ միայն ձեռնադրութեանց
ատեն կը գործածուի, եւ բացառաբար Ամենայն Հայոց
Կաթողիկոսին յատուկ է :

ԳԱԻԻԹ .— Մեր եկեղեցիներն այդ ընդհանուր ա-
նունին ներքեւ երկու տարբեր մասեր կը պարունակեն ,

որ կը կոչուին գաւիթ եւ տաճար: Գաւիթը արտաքին մաս մըն է՝ տաճարէն բաժնուած պատով ու դուռով, որուն մէջ կը կենային ապաշխարողները որ արժանաւոր չէին մասնակցելու հաղորդութեան: Մինչեւ պատարապին մէկ կէտը, երբ խրատական ու աղօթական մասեր կը կատարուէին, բոլորն ի միտսին կրնային եկեղեցւոյն տաճարին մէջ մնալ, բայց երբ խորհուրդի կատարումը պիտի սկսէր, սարկաւազը կ'ազդարարէր որ երախաներն ու ապաշխարողները տաճարէն ելլեն եւ գաւիթին մէջ աղօթեն: Մինչեւ հիմա ալ սարկաւազը կ'երգէ. «Եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս՝ առ դրունս ելէք եւ աղօթեցէք» . սակայն խօսքերը դործնական իմաստ մը չունին այլեւս: Նոյնիսկ գաւիթն ալ իր ձեւը կորսնցուցած է. փոխանակ պատի ու դրան, այժմ եկեղեցիներուն ետեւի կողմը բարձր ու մատնածեւ վանդակով զատուած մաս մը կայ՝ որ ըստ ամենայնի եկեղեցւոյն մաս կը կազմէ, եւ ետեւի մնացողներուն դիւրութեան համար քիչ մըն ալ բարձր յատակ ունի: Այդ մասը ոչ եւս անարժաններուն, այլ ընդհանուր ժողովուրդին, եւ աւելի հանդիստ ընել ուղղներուն յատուկ եղած է: Հին գաւիթի օրինակ մը կը տեսնուի ցայսօր Մայր Եկեղեցւոյ աջակողմեան Ս. Պաշ եկեղեցւոյն մէջ. միջին եկեղեցին ալ այնպէս շինուած է եղեր, բայց ան ալ յետոյ փոխուեր է: Գաւիթներն ի հնումն աւելի ընդարձակ են եղեր, բայց նշանակութիւննին կորսնցնելէ ետք աւելի պզտիկցեր են: Հին ատեններ ժամերգութիւններն ալ սովորականէ նուազ հանդիսաւոր եղած ատեն, գաւիթին մէջ կը կատարուին եղեր, որուն յիշատակութիւնը կը մնայ տօնացոյցին մէջ, որ երբեմն ժամերգութեան մէկ մասէն ետքը եկեղեցի մտնելու ազդարարութիւնը կը դրէ, ինչպէս Աւագ Եջ. ցերեկը ապաշխարելոց կարգին վերջերը «Եւ մտեալ յեկեղեցին», նոյն երեկոյին «Ժողովեսցին ի գաւիթ եկե-

վեցւոյն», եւ Աւագ Ուր. ցերեկին «ժողովեացին ի
դուռն եկեղեցւոյն» եւլն. : Թէեւ այժմեան տօնացոյց-
ներն ալ հին ազդարարութեանց շատերը զանց ըրած են,
աննշանակ դարձած ըլլալուն համար :

ԳԻՆԻ.— Ս. Պատարագին ու Ս. Հաղորդութեան
բաժակին նիւթը, որ պիտի ըլլայ խաղողէ քամուած
անապակ գինի, զգուշութեամբ պատրաստուած : Հին
սովորութեան համեմատ եկեղեցւոյ այգիներէն կամ
բարեպաշտներու նուէրներէն հաւաքուած խաղողները
նոյնինքն եկեղեցական պաշտօնեաներու ձեռքով ու
աղօթական երգեցողութեամբ՝ եկեղեցւոյ յարակից մա-
սերուն մէջ կը կոխուէին ու կը պահուէին ի պէտս խոր-
հրդոյն, եւ ջահընկալին պաշտօնն էր այդ գինին պա-
հել եւ անկէ բաժակամանը լեցնել եւ պատարագին
պատրաստ բռնել : Այժմեան սովորութիւնը որ է ամէն
գինեվաճառէ պատարագի գինի գնել, շատ ու շատ դի-
տողութեանց տեղի կու տայ, անյարմար ու անծանօթ
նիւթեր գործածելով Ս. Խորհրդոյն : Գարթալցի մեր
բարեպաշտ այգեգործներուն քանիցս յորդոր կարդա-
ցինք, իրենց ձեռքով մայրաքաղաքիս եկեղեցիներուն
համար անապակ գինի պատրաստել, եւ կը յուսանք թէ
պիտի կարգադրուի : Գինին մեր եկեղեցւոյն մէջ բոլո-
րովին անապակ կը հանուի սեղան՝ առանց ջուր խառ-
նելու, թէեւ այդ մասին Յոյն ու Լատին եկեղեցիներ
ստէպ դիտողութիւններ ըրած են, բայց ի զուր : Զի
Քրիստոսի բաժակն ալ անխառն էր, եւ Քրիստոսի կու-
ղէն ելած արիւնն ու ջուրն ալ ըստ Ս. Հարց խորհրդա-
կան նշանակ է, ոչ թէ մէկ խորհուրդին կրկին նիւթե-
րուն, այլ Հաղորդութեան ու Մկրտութեան կրկին խոր-
հուրդներուն : Գինին ծիսական կարգադրութեամբ կը
գործածուի եւս լուալու այն ամէն իրերը որ օծման կը
պատրաստուին, ինչպէս խաչ, պատկեր, սեղան, աւա-
ղան եւլն. , եւ այդ առիթներուն ջուրէն զատ գինիով

լուալուեն նշանակութիւնը միայն մաքրութեան աստի-
ճանը կրնայ ցուցնել :

ԳԻՐԻՔ .— Ծիտական կիրառութեան մէջ դտնուած
գիրքերը շատ են , եւ իւրաքանչիւր անունին ներքեւ խօ-
սած ենք ու պիտի խօսինք անոնց վրայ՝ իրենց տեսակ-
ներն ալ թուելով : Ըստ այսմ տե՛ս Աւետարան , Գան-
ձարան , Ժամագիրք , Խորհրդատետր , Ճաշոց , Մաշտոց ,
Շարական , Տաղարան , Տօնացոյց : Գիրքերու վրայ ընդ-
հանուր կերպով ըսուելիքը սա՛ է որ եկեղեցւոյ մէջ
գործածելի գիրքեր պէտք է նախապէս օրհնուին , որուն
համար յատուկ կարդ ալ կայ Մաշտոցին մէջ : Գիրքեր
պէտք է զգուշութեամբ պահուին , վայելուչ վիճակի մէջ
ըլլան , պատուտած ու բզկտած գիրքեր գործածութենէ
վերցուին : Չեոնադրութեան Մաշտոցին մէջ ընթեր-
ցողին ձեռքը տրուած «Գիրք առաքելական եւ մարդա-
րէական» ըսուածը Ճաշոց գիրքը պէտք է իմանալ :

ԳՄԻԷԹ .— Եկեղեցիներն իրենց կեդրոնական մա-
սին մէջ չորս սիւներու վրայ բարձրացած մաս մը ու-
նին , որ բոլոր շէնքին վրայ կը տիրէ , եւ իբր թէ վրա-
նաձեւ մաս մը ըլլար եկեղեցւոյն տանիքին վրայ
դրուած : Գմբէթները ներսի կողմէ գոգաւոր են եւ յա-
տակին վրայ կենալով գլուխը վեր բարձրացնողը կը
տեսնէ անոր մէջի խորութիւնը : Գմբէթը լուսամուտներ
ալ կ'ունենայ որ եկեղեցւոյ ներսը կը լուսաւորեն , վրան
ալ ամփոփուող մաս մը՝ զոր ճարտարապետները լապ-
տեր կը կոչեն , ասիկա հետզհետէ սրածայր կը վերջա-
նայ եւ ամէնուն վրայ համեմատաբար մեծ խաչ մը կը
կանգնուի : Մեր հնաւանդ եկեղեցիներուն գմբէթները
վեղարաձեւ են ու անկիւնաւոր , եւ յատուկ անուամբ
կաթօղիկէ կը կոչուին . յունականները կիսաբոլոր են
ու ցած , լատինականներն ալ բոլորչի են՝ բայց դէպ ի
բարձրութիւնը ցցուած : Վերջին ժամանակներու եկե-

դեցիններն առանց զմբէթի են, եւ բոլոր տանիքը յերկուս թեքեալ ձեւով միակտուր ծածկոյթ մը կը կաղմէ: Գմբէթաւոր եկեղեցիներ աւելի փառաւոր արտաքին տեսք ունին, բայց ներսէն զմբէթին խորութիւնն անախորժ արձագանգներ կաղմելու, եւ գլխաւորապէս քարոզչին ձայնը ցրուելու անտեղութիւնն ունի:

ԳՈՒՆՈՅ. — Սեղաններուն առաջակողմը զարդարելու ծառայող ընտիր կերպասէ շինուած կամ ասեղնագործուած սպաս մըն է, որ սեղանին շրթունքէն վար կը կախուի եւ անոր բոլոր առջեւը կը ծածկէ: Կան նաեւ ընտիր գոգնոցներ որ արծաթեայ զարդերով ու քանդակներով շինուած են: Գոգնոցին կիրառութիւնը կամաւոր է ու երբ սեղանին ճակատը քանդակներով ու սկեզօծ զարդերով յօրինուած է, գոգնոցի կիրառութիւնն անտեղի իսկ կը դառնայ անոնց գեղեցկութիւնը ծածկելով. ուրիշ բան է եթէ հասարակ գոգնոց մը լուր օրեր դրուի, բնական զարդերու պահպանութեան համար եւ տօնական առիթներուն վերցուի:

ԳՈՐԳ. — Երբ եկեղեցի եկողներ կօշիկնին դուռնէն դուրս հանելով՝ լոկ գուլպաներով եկեղեցի կը մտնէին, եկեղեցւոյն ամբողջ յատակը գորգերով ու ընտիր կապերտներով կը ծածկուէր. այժմ կօշիկ հանելու սովորութեան հետ գորգ փռելու սովորութիւնն ալ դադրեցաւ: Առ առաւելն եկեղեցւոյն ատեանը ուր հանդիսաւոր արարողութիւնք կը կատարուին, գորգեր կը փռուին երբեմն: Փսիաթները կամ խսիրներն ալ դիմացկուն չըլլալուն խափանուեցան, եւ այժմ տեսակ մը քոֆո կոչուած դիմացկուն փսիաթ մը աւելի տարածուիլ սկսած է: Բայց գորգ կամ կապերտ կը գործածուի դասուն մէջ ու բեմին վրայ՝ աւելի կամ նուազ մեծ եւ աւելի կամ նուազ սղնիւ կտորներ փռելով, եւ դասն ու բեմն ալ ծածկելով, մանաւանդ ձմեռնային ցուրտ եղա-

նակներուն՝ պաշտօնեաներուն ոտքին խնայելով: Այդ
ընդհանուր կիրառութենէն դուրս մանր գորգեր՝ աւելի
կամ նուազ ազնիւ՝ ոչ միայն ձեռագործ, այլ եւ երբեմն
ասեղնագործ ու սակեթել բանուած, կը գործածուին
բարձրաստիճան եկեղեցականաց ու հանդիսադիր եկե-
ղեցականներու ոտքին ներքեւ՝ կա՛մ դասուն կամ ատ-
եանին մէջ անոնց կեցած տեղերը, կամ դասուն ատեանն
աղօթքի ու աւետարանի ելած պահուն, կամ բեմին
վրայ քարոզ խօսած ատեն, եւ կամ սեղանին առջեւ ժա-
մարարութեան առթիւ: Այդ մանր գորգերուն ռամկա-
կան բառով խալիչա ալ կ'ըսեն:

ԳՈՐՓՈՒՐԱՅ բառը լատիներէն գորփորալիս =
corporalis, կը նշանակէ «մարմնական», այլ աւելի մեր-
ձաւորութեամբ թարգմանուած է մարմնակալ: Քառա-
կուսի ձերմակ կտաւ դոր լատինածէս ժամարարը սե-
ղանին վրայ կը փռէ իր առջեւ եւ ոչ միայն սկիհն անոր
վրայ կը դնէ, այլ եւ սրբագործեալ նշխարն առանց
մաղղմայի ուղղակի այդ կտաւին վրայ կը հանգչեցնէ:
Ասկէ նոյն կտաւին աւելի պատիւ մը՝ ուղղակի խորհր-
դական մարմնոյն հետ շիմանը համար, եւ սրբազնա-
գործեալ նշխարին փշուրները նոյն կտաւին կպուած
կրնալ ըլլալուն կասկածով: Այդ առաւել պատուոյն եւ
առաւելագոյն զգուշաւորութեանը համար, եպիսկո-
պոսը կիսասարկաւագի ձեռնադրութեան մէջ կը խրատէ
նուիրելոյն. «Յամանն յորում զգորփուրայն լուանաս,
մի՛ այլ ինչ մերձեացի»: Մեր գործածած ձեռնադրու-
թեանց մաշտոցն ալ լատինականին հետեւողութեամբ
պահած է այդ բացատրութիւնը, թէ եւ մեր ծէսին մէջ
սրբագործեալ նշխարը մաղղմային վրայ կը դնենք եւ
երբեք կտաւի վրայ չենք հանգչեցներ, եւ կիսասարկա-
ւագին տրուած հրահանգը բնաւ կիրառութիւն ու գոր-
ծածութիւն չունի: Գորփուրայ լատինահնչիւն բառն

ալ կիրառութեան մէջ չէ, եւ մարմնակալ անունով կ'իմանանք որեւէ զարդարուն կտաւէ, ընտիր կերպասէ, կամ ասեղնագործեալ մաքուր սպաս մը չափաւոր մեծութեամբ, որ պատարազի ատեն սկիհին ներքեւ կը փռուի ի պատիւ եւ ի յարգանս սրբութեան:

ԳՏԱԿ.— Փոքրիկ գլխանոց սեւ ասուիէ կամ թաւիչէ որ կրնայ գործածուիլ եկեղեցւոյ մէջ պաշտօնէից կողմէ՝ գլուխը ցուրտէ պահպանելու համար: Քրիստոնէութեան յատուկ կանոններէն մէկն է առաքեալին տուած բացարձակ հրամանը. «Առն մարդոյ չէ պարստածակել զգլուխ», որովհետեւ «ամենայն այր յորժամ յալօթս կայցէ, եւ զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր», եւ զի «առն ամենայնի գլուխ Քրիստոս է» (Ա. Կորնթ., ԺԱ. 7, 4, 3): Ուրիշ կրօններու մէջ սովորութիւն է ծածկեալ գլխով աղօթել, բայց քրիստոնէութեան համար հակառակն օրինադրուեցաւ: Այսու ամենայնիւ յայտնի է թէ երկրին կենցաղական եւ պաշտօնական սովորութիւնն է գլուխը ծածկել, թէ սակէ ամէնքն ալ գլուխը ծածկուած պահելու վարժուեցան, թէ եկեղեցիներու մէջ ընդհանրապէս ցուրտ ու խոնաւութիւն կը տիրէ, թէ հաւատացեալք առանց առողջութիւննին վտանգելու պիտի չկարենան երկար ատեն բացադուխ մնալ եկեղեցւոյ մէջ: Կասկածը հարկի ու հարկը սովորութեան փոխուելով՝ սկսաւ ամէն մարդ իր Փէսք գլուխը՝ եկեղեցի մտնել ու կենալ, եւ մինչեւ իսկ քահանաներ փակեղնին հանելով առանց ծոպի Փէս մը սովորութիւն ըրին գործածել աշխարհականաց նմանողութեամբ, ինչ որ հարկաւ սովորութիւն ունէին ընել փակեղները չկարգադրուած եւ փուշիով կամ դասառաւակով Փէս կրած ատեննին եկեղեցւոյ մէջ փուշին հանել եւ Փէսը միայն դնել: Կենցաղական նորոգեալ սովորութիւններ գլխարաց ըլլալուն առողջարար ըլլալը

համազեցին, եւ նորահաս մանկտին զլուսը բաց մեծնալով՝ ժողովուրդն ալ հետզհետէ եկեղեցւոյ մէջ գլխաբաց կենալու վարժուիլ սկսաւ: Որպէս զի քահանաներն եւ անոնց հետ տիրացուներն ալ ամէն եղանակին ու երկար ժամեր եկեղեցւոյ մէջ գլխաբաց կենալու դժուարութիւն չկրեն, ներուած է այժմ որ բոլորովին սեւ գտակներ կարենան գործածել, վայելուչ ու եկեղեցականի յարմար ոճով, առանց ասեղնագործ զարդերու եւ առանց մեծկակ ըլլալու, եւ միշտ պարզութեան ու պարկեշտութեան համաձայն պայմաններով:

ԳՐԱԿԱԿ. — Գիրքը վեր ու բաց բռնելու ծառայող գործիք: Գրակալները հասարակ փայտէ շինուած են ընդհանրապէս, բացուող-գոցուող ձեւով իրարու ադուցուած չորս բարձր ոտքեր, որ վերի կողմէն կաշիով միացած են եւ այդ կաշիին վրայ կը հանգչեցուի գիրքը: Այս տեսակին կողմնակի բացուողը դասու ատեանին կը պործածուի եւ վրան աւետարան կամ ճաշոց կը կարդացուի, իսկ ետեւէ առաջ բացուողը դասերը կը դրուի ու շարականի կը ծառայէ: Այս վերջինին տեղ կը գործածուի նաեւ ուրիշ ձեւ մը. սիւն մը բաժնուած ոտքերով որ իբր պատուանդան կը ծառայեն, գետինը կը դրուի եւ վրայի կողմերը դէպի ետեւ թեքեալ տեղ մը ունի որուն վրայ շարականը կը դրուի: Կրնայ երկու ետեւէ ետեւ թեքեալ երեսներ ունենալ եւ անոր վրայ երկրորդ շարական մը կամ ժամագիրք մը դնել, եւ վրայի մասը սիւնին վրայ պտըտցնելով՝ դարձնել, եւ ըստ յարմարութեան գործածել: Փոքրիկ գրակալներ կը դրուին եւս բեմին առջեւ վերիվերոյ այդ վերջին ձեւին նման, բայց ասոնց սիւնը մէկ երեսով ուղղակի բեմին վրայ դրուած, որոնցմէ մէկուն այսինքն կեդրոնը գտնուողին վրայ Ատենի ժամագիրքը եւ ձախակողմը դրուածին վրայ Ատենի Աւետարանը կը դրուի: Վերջապէս փոք-

ւիկ զրակալ մըն ալ կը գործածուի սեղանին վրայ խոր-
հըրդատեալը ուղղաբերձ եւ ընթեռնելի ձեւի մէջ պա-
հելու համար : Բեմի ու սեղանի զրակալները շուշիայով
կը ծածկուին, եթէ դեղակերտ փայտէ շինուած չեն :
Ատեանի զրակալին ալ շապիկ կը հագցուի ի դարդ եւ
յատկապէս ձերմակ շապիկ մը, երբ բեմի վրայ Իւղա-
բերից Աւետարան կարդալու կը դրուի : Գրակալներուն
մէջ տեսած ենք նաեւ արուեստակերտներ, օրինակ,
վիրքը դնելու համար թեւատարած արծուի մը սիւնի
վրայ թառած, երեսը դէպի ժողովուրդ ու թիկնամէջը
վիրքը ընդունելու սահմանուած, բայց այսպիսի ար-
հեստակերտ զրակալներ շատ քիչ են :

ԳՕՏԻ .— Ի հնուց անտի գօտին իշխանութեան նշա-
նակ է, իշխանաւոր չեղողը գօտի չի կրնար կապել,
իշխանաւորին գօտին հանել իշխանութենէ զրկել է : Այդ
սկզբունքով եկեղեցւոյ ստորին պաշտօնեայք, սարկա-
ւազն ալ մէջը, գօտելոյժ են եւ գօտի չունին, եւ գօտի
կապելու իշխանութիւնը կը սկսի քահանայէն, որուն
օրհնութեամբ ու աղօթքով կու տայ դայն ձեռնադրով
եպիսկոպոսը : Գօտին կամար է, եւ կամարաձեւ լայն
ժապաւէն մը՝ գոնէ 5 հարիւրամետր լայնութեամբ՝
զարդարուն երեսով եւ ներքին ամուր նիւթով ետեւի
կողմէն կ'առնուի եւ զոյգ ճարմանդով առջեւէն իրարու
կ'ադուցուի : Ճարմանդներն իրարու ազուցուած պա-
հելով՝ կամարին ծայրերը երիզապինդ կապելը դիւրու-
թեան համար հնարուած ձեւ մըն է : Ասկէ ալ առաջ ե-
կած է փոխանակ զոյգ ճարմանդի միակտուր զարդ մը
դնել գօտւոյն մէջտեղ եւ նորէն կամարը երիզապինդ
կապել : Այս տարբեր ձեւերուն մէջէն յանձնարարելի է
միշտ հնադոյն ձեւը, որ է կամարը ետեւէն առնել եւ
ճարմանդը առջեւէն ազուցանել : Գօտին այժմ փորուրա-
րին վրայէն կը կտպենք եւ ձեռնադրութեան մէջ գօտին
տրուած ատեն՝ արդէն ուրարը տրուած է, եւ բնակա-

նաբար դօտին կապուած ատեն ուրարը ներքեւը կը մնայ : Սակայն Լամբրոնային եւ ուրիշ հին հեղինակներ ալ դօտին ուրարէն առաջ կը դնեն զգեստաւորութեան կարգին, ու զգեստաւորութեան «Խորհուրդ խորին» շարականին մէջ ալ գօտուոյն վերաբերեալ «Տան քում» տունը՝ ուրարին վերաբերող «Իւամամբ թագ» տունէն առաջ է . զգեստներու կարգին մէջ ալ դօտին որ պատմութեանը կամ շապիկը պնդելու համար է, ուրարէն առաջ պիտի ըլլայ որ վրայէն իջնող զարդ մըն է միայն : Բայց ինչ որ ալ ըլլայ այդ խորհրդածութեան արժէքը, այժմ դօտին փորուրարին վրայէն կը կապուի, թերեւս բոլոր զգեստները, պատմութեանն ու փորուրարը հաւանարապէս գուսպ բռնելու, եւ կամ գօտուոյն ճարմանդին զարդը՝ որ զգեստին նշանաւոր մասերէն մէկն է՝ աւելի համարձակ ցուցնելու համար : Թող որ բնաւ յիշատակ մը չունինք որ ցուցնէ թէ դօտին առաջ ուրարին ներքեւ էր եւ յետոյ վրան սկսաւ կապուիլ :

ԴԱՍ .— Բառը իր ընդհանուր առմամբ կը նշանակէ խումբ, շարք, տեսակ : Եկեղեցական նիւթական առմամբ կը նշանակէ եկեղեցական պաշտօնեաներու երկու խումբի բաժնուիլը, եւ երկուքին երկու կողմ կենալէն, անոնց կեցած տեղերն ալ կոչուեցան դաս, եւ անուննին եկեղեցւոյ բնական կողմերէն առնելով՝ կոչուեցան Աջակողմեան դաս եւ Չախակողմեան դաս : Այժմ այդ երկու դասերն ալ եկեղեցւոյն բովանդակ լայնքին վրայ երկնցող ցած վանդակապատով մը կը բաժնուին եկեղեցւոյն մնացեալ մասէն, եւ պաշտօնեաներուն յատկացեալ մասը կ'անջատուի ժողովրդեան յատկացեալ մասէն : Թէ հին եկեղեցիներու մէջ ալ ի սկզբանէ այդ բաժանումը կար, բացարձակ կերպով չենք կրնար հաստատել . անհաւանական չէ այն կարծիքը թէ տաճարին մէջ ամէնքը համախումբ կը կենային, որովհետեւ ամբողջ ժողովուրդը միաբերան երգեցողութիւնը կը

կատարէր, եւ երգեցիկ դպրաց ու երգեցիկ տղոց յա-
տուկ պաշտօն չկար: Բնական է որ կարողագոյններն
առջեւ կ'անցնէին եւ ուրիշներուն կ'առաջնորդէին եւ
կանոնաւորութեան կը հսկէին: Եկեղեցիներու օրի-
նակներ կան որ դասը ամբողջ եկեղեցւոյն լայնութեան
բաժնուած չէ, այլ երկու կողմերը դատ-զատ քառակու-
սի վանդակապատեր կան, որոնց մէջ պիտի կենան
պաշտօնեաներն ու երգեցողութեան առաջնորդները՝
բազմութենէն շնորհուելու համար: Բայց այս զննութեան
խորունկը մտնել չենք ուզեր. այժմ դաս ըսելով կ'իմա-
նանք տաճարին առաջակողմը բեմին առջեւ ցած վան-
դակապատով բաժնուած մասը, որուն մէջտեղը, այ-
սինքն դասուն ատեանը՝ սովորաբար կողմերուն ուղ-
ղութենէն աւելի դուրս կ'ելլէ, երկու դասերուն դպիր-
ներուն մէջտեղ համախմբուելուն աւելի դիւրութիւն
տուած ըլլալու համար: Աջակողմեան դասուն դլուխը,
եթէ եկեղեցին աթոռանիստ է, վիճակաւորին հաստա-
տուն աթոռը կը գտնուի եւ ուրիշ նստարան չի դըտ-
նուիր: Վանդակապատին առջեւ դետինը փռուած բար-
ձերուն վրայ եկեղեցականներու տեղն է, երկու ան-
կիւնները դպիրներուն յատկացեալ են, մէջտեղը սլա-
րասլ պիտի մնայ արարողութեանց պահանջքին համար,
եւ ժողովուրդը պէտք չէ մտնէ, որպէս զի կարգ ու սարք
չխանգարուի: Միւս կողմէն ալ պարասլ տեղ չթողլու
համար՝ գովելի սովորութիւն եղած է դպրոցական ա-
շակերտներն ու աշակերտուհիները ընդունիլ դասուն
մէջ, որ թէ՛ կանոնով եկեղեցի դալու եւ շնորհքով եկե-
ղեցին կենալու կը վարժուին, եւ թէ՛ դիւրին կրնան մաս-
նակցիլ երգեցողութեան:

ԴԱՍՏԱՌԱԿ.— Փոքր դաստառ = անձեռոց, որ է
ձեռք առնելով՝ գործածելի կտաւ կամ պաստառ մը:
Բառական առմամբ ձեռք սրբելու ղենջակ կրնար իմա-

ցուիլ, բայց իրօք կ'իմացուին ամէն քառակուսի կամ քառակիւն պատասառներ, եղբերը կարուած կամ գործուած, ծայրերը կամ անկիւնները ասեղնադործուած ու վարդարուած: Տեսակները տարբեր-տարբեր են: Կան քառանկիւն երկարներ՝ ծայրերը վարդարուն ձեռքը սրբելու սահմանուած. կան մեծ քառակուսիներ թէ՛ կեղերքը եւ թէ՛ անկիւնները բանուած զոր կը դործածեն իբր ծրար կամ ծածկոյթ. կան միջակ չափով քառակուսիներ՝ նոյնպէս վարդարուն՝ սպաս մը բռնելու յարմար. կան աւելի մանրներ որեւէ մէկ բանի դործածելու համար: Ասոնք ամէնքն ալ միեւնոյն անունին ներքեւ կ'իմացուին: Բարեպաշտուհիներէ՛ մանաւանդ նոր ձեռագործի վարժուող օրիորդներէ՛ եկեղեցւոյն կը նուիրուին եւ ըստ պատահմանց կը դործածուին: Օրհնութիւն չունին, բայց պէտք չէ անդամ մը եկեղեցւոյն նուիրեալ եւ սուրբ կիրառութեան յատկացեալ իրերը անխտիր իբր հասարակ վարդ ամէն բանի դործածել:

ԴՈՒՌԻ. — Դրան ինչ ըլլալը բացատրելու պէտք չունինք: Եկեղեցիները սովորաբար հինգ դուռ կ'ունենան. նախ աւագ դուռը՝ եկեղեցւոյ արեւմտեան կողմը, երկրորդ հիւսիսային, երրորդ հարաւային՝ եկեղեցւոյն հիւսիսային ու հարաւային կողմերուն վրայ եւ դէպ յարեւմուտս գաւիթին բաժանման մօտ, իսկ չորրորդ ու հինգերորդ դուռները պահարաններէն դուրս ելլելու համար, դիրքին պատշաճութեան համեմատ, կամ դէպ յարեւմուտս երկուքն ալ, կամ թէ փոխադարձաբար դէպի հարաւակողմն ու հիւսիսակողմը: Վերջին դուռները յատկապէս պաշտօնեաներու ծառայելու համար են, որպէս զի արարողութեան ատեն երթեւեկներ ու տարուբերներ ժողովուրդը չխանդարեն: Միւս երեք դուռներուն մէկը կամ միւսը երբեմն եկեղեցւոյ դիրքին կամ փոքրկութեան պատճառաւ զանց կ'ըլլան: Կան

նոյն իսկ եկեղեցիներ որ արեւմտեան աւագ դուռը չունին, եւ եկեղեցւոյ մէջէն դաւիթ մտնելու կը պարտաւորուին: Ասոնցմէ աւագ դուռն եկեղեցւոյ նաւակատեաց ատեն յատուկ օժուամ եւ օրհնութիւն ունի: Կանանց վերնատունը որ դաւթին վրայ կ'ըլլայ, ան ալ իրեն յատուկ դուռներ ունի եկեղեցւոյ բակին մէջ, կամ մէկ կողմէն կամ երկու կողմերէն ալ: Դուռներուն կարգը պէտք է յիշենք եւս դաւիթէն տաճար մտնելու վարդապետեւ դուռը, որ եկեղեցւոյ արարողութենէն դուրս գոց կը պահուի, որպէսզի աւագ դռնէն մտնելով՝ հաւատացեալք կարենան երկրպագութիւն եւ աղօթք ընելու ելլել, առանց տաճարը մտնելու: Դասուն վանդակապատն ալ երեք դուռ կ'ունենայ, մէկը մէջտեղէն՝ ուր տեղէն կը բանին դպիրները, պաշտօնեաները, օտարները եւ աւանդատուն երթալ ուղողները՝ առանց դասուն մէջ կատարուող արարողութիւնը խանդարելու: Աւանդատուները մէյ-մէկ դուռ ունին դասուն մէջէն եւ շատ անգամ մէյ-մէկ ալ ներքին դուռներ կ'ունենան սեղանին ետեւը ելլելու համար: Վերջապէս հին ձեւով՝ խաչկալները սեղանին երկու կողմերը բացուող դուռներ կ'ունենան, ինչպէս պիտի բացատրենք իր կարգին խաչկալի վրայ խօսելու առթիւ:

ԵԿԵՂԵՑԻ.— Պարզապէս իր նիւթական նշանակութեամբ կ'առնուի այստեղ, եւ է հասարակաց աղօթքի ու աստուածային պաշտմանց եւ սուրբ խորհուրդներ կատարելու համար սահմանուած նուիրագործեալ տեղ մը: Նիւթական առամբ ամենէն ընդարձակ իմաստով կը հասկցուին այն ամէն շինութիւններն ու տեղերը որ եկեղեցւոյ արտաքին պարիսպին մէջ կը գտնուին — Ժամատուն, Խորհրդարան, Քահանայից սենեակ, Բանկալ, Վարժարան, Սպասաւորներու սենեակ, Բակ, երբեմն եւ պարտէզ, եւ Նուիրական շինուածն իր ամէն

յարակիցներով : Երբեմն «Եկեղեցւոյ մէջ» ըսելով մի-
այն լակը կ'իմանանք, երբ որ բաց տեղ կատարուելիք
զործողութեան վրայ կը խօսուի : Աւելի ամփոփ իմաս-
տով կը հասկցուի նուիրական շինուածն իր ամբողջու-
թեան մէջ, այսինքն է դաւիթով, պահարաններով եւ
ուրիշ մէջի մասերով : Իսկ բոլորովին սեղմեալ իմաս-
տով՝ այն մասը միայն, որ դաւիթէն կը տարածուի
մինչեւ բեմին առջեւ, եւ երբ դասն ալ զատ նկատել
ուղուի, կ'իմացուի այն մասը միայն՝ որ կը տարա-
ծուի դաւիթին բաժանման եւ դասին վանդակասլատին
մէջտեղ, այսինքն այն մասը որ ժողովուրդին յատկա-
ցուած է : Այստեղ Եկեղեցւոյ բովանդակ ու մանրա-
մասն նկարագիրը ընել պէտք չունինք, որովհետեւ շի-
նութեան իւրաքանչիւր մասին վրայ իր անունին ներ-
քեւ կը խօսուի, քանի մը հատը արդէն ըսինք, այ-
սինքն Ատեան, Սեղան, Աւանդատուն, Բեմ, Գաւիթ,
Դաս, Եւն . , եւ ուրիշներու վրայ պիտի խօսինք, այ-
սինքն Խորան, Հիւմ, Սեղան, Սիւն, Եւն . : Եկեղեցւոյ
վրայ ընդհանուր պիտեւիքներու առաջինն է, որ այն
նուիրական ու սուրբ տեղ մըն է եւ որ ուրիշ կիրառու-
թեան պէտք չէ երբեք յատկացուի : Միւս կողմանէ ժո-
ղովուրդին նուիրական ժամադրավայրն ըլլալուն՝ մեր
մէջ տարադէպ չէ նկատուած որ պաշտօնական զործո-
ղութեանց կարենայ յատկացուիլ, ինչպէս են ժողով-
ներու դումարումներ, դպրոցական նմանօրինակ հան-
դէսներ, եւ նոյնիսկ ուրիշ տեղ չգտնուած ատեն դըս-
րոցի համար ալ զործածել կը ներուի : Այդ պարագա-
ներու մէջ պէտք է սեղանը վարադոյրով ծածկել, եւ ե-
թէ դիւրութիւն կայ մինչեւ իսկ բեմն ու դասը կերպով
մը անջատել, որպէս զի մնացեալ մասը ազատ կերպով
զործածուի : Ասով հանդերձ պէտք չէ ձեռքէ թողուլ
այն զգուշաւորութիւնները զորս տեղւոյն սրբութիւնը
կը պահանջէ : Եկեղեցւոյ մը էական պայմաններէն

Կլիսաւորն է օծեալ ըլլալ հիմերէն սկսեալ, նոյնիսկ
 տեղը ճշդելն ու հիմեր բանալը աղօթքով եւ օրհնու-
 թեամբ կատարել: Հիմերուն մէջ 16 օծեալ քարեր կը
 դրուին ըստ թուոյ 12 առաքելոց ու 4 աւետարանչաց,
 բայց առաքեալներէն երկուքը՝ Յովհաննէս ու Մատ-
 թէոս միանգամայն աւետարանիչ ըլլալուն, Պօղոս ա-
 ռաքեալի ու Գրիգոր Լուսաւորչի անուններով կը լրա-
 նայ 16 թիւը, եւ որ ԺԳ. ու ԺԴ. առաքեալներ կը կո-
 չուին: Տասն ու վեց սիւներէն հինգը հարաւային ու
 հինգը հիւսիսային կողմին վրայ կը համրուին, երկու-
 քը արեւմտեան դրան քովերը, եւ չորսը բուն խորա-
 նին չորս անկիւնները: Եկեղեցին միայն մէկ խորան եւ
 մէկ սեղան պիտի ունենայ ըստ բուն ծիսական կանոն-
 ներու, բայց միջին դարերու մէջ խորաններ ու սեղան-
 ներ շատցնելու սովորութիւնը մտաւ, պատարագի մա-
 տուցումները բազմացնելու համար, որովհետեւ արեւ-
 ւելեան եկեղեցիներու հաստատուն կանոնին համեմատ,
 մէկ սեղանի վրայ օրը մէկ պատարագէ աւելի չի մա-
 տուցուիր, եւ մէկ տաճարին մէջ մէկ սեղանէ աւելի
 պիտի չըլլայ: Յիշատակարաններու մէջ քառասուն
 խորան եկեղեցիներ իսկ յիշուած կան, որ ուրիշ բան
 չեն, բայց եթէ եկեղեցւոյ զանազան կողմերը մանր
 սենեակներ, մինչեւ իսկ երբեմն մէջը մէկ կամ երկու
 հոգի կենալու իսկ անբաւական, որոնց մէջ օծեալ սե-
 ղաններ կային պատարագի համար: Այժմ այդ աստի-
 ճան խճողուած սեղաններ չեն երեւիր, եւ միայն ա-
 ւանդատուներու մէջ օծեալ սեղաններ եւ նոյնիսկ ա-
 ւանդատուներէ զատ փոքրիկ մատուռներ շատ եկեղե-
 ցիներու մէջ կը տեսնուին: Եկեղեցւոյ հիմնարկութեան
 եւ օծման արարողութիւններն ընդարձակ կերպով կը
 տեսնուին Մայր Մաշտոցներու մէջ, եւ անոնց քա-
 դուածը զանց կ'ընենք շատ չերկարելու համար:

ԵՄԻՓՈՐՈՆ.— Եպիսկոպոսական զարդ, տեսակ մը մեծ ու պատատեալ ուրար, աւելի ուղիղ հնչմամբ ումփորոն, որ է ուսանոց, բոլոր զդեստներուն վրայէն ուսերուն վրայ դրուած խաչաձեւ ի նշան խաչի: Իբր 25 հարիւրամետր լայն եւ 2 մետր երկայն երկու կտոր ուրարի նման զարդեր՝ զարդարուն ոճով ծոպերով ու երիզներով շինուած, որ իրարու կցուած մեծցած են իրարու հակառակ երեսով: Մէկ մասը գլուխին կողմէն երկու ուսերուն վրայէն առնելով՝ առջեւէն ճարմանդով կը պնդուի, երկու մասերն ալ առջեւէն կախուելով զգեստաւորեալ եպիսկոպոսին: Չախ կողմի մասը կը մնայ կուրծքէն անցնելով՝ ճախ ուսը կը բարձրանայ եւ անկէ թիկունքը կ'իջնէ, եւ հոն պնդուելէն ետք, մնացորդը ետեւէն կախ կ'իյնայ. եւ որպէս զի ինկած մասերը ուղիղ ու շնորհքով կենան յատուկ կոճակներով կամ ազոյցներով ծալովի անկիւններ կը տրուին: Բոլորն ի միասին այս ձեւը կ'առնէ՝ որ երկու ուսերէն անցնող եւ կուրծքն ու թիկունքը պատող շրջանակի մը առջեւէն ու ետեւէն մէյ-մէկ մասեր կախուած կը մնան զրեթէ մինչեւ դետին: Եմփորոնը բացարձակ ու բացառիկ զգեստ է ձեռնադրեալ եպիսկոպոսին ու ձեռնադրութեան ատեն կը տրուի: Յունաց ոմփորոնն ու Լատինաց պալիումն ալ եմփորոններ են, բայց մերինը անոնց բազաւտութեամբ աւելի մեծ ու աւելի շքեղ է: Վերջի ատեններ եպիսկոպոսներ ու լուսարարներ զիւրութեան համար զանազան մասերու բաժնուած ու երեւցած ձեւին յարմարցուած, եւ մինչեւ իսկ ամբողջ այդ ձեւով իրարու կարուած ու կազմուած եմփորոններ կազմեցին, որ նորամուտ է եւ քաջալերուելու չէ: Լամբրոնացին քահանաներու առանց եմփորոնի ըլլալ յիշած տեղը, եպիսկոպոսներու զանազան դասակարգերու եմփորոնը կը տարբերէ, եպիսկոպոսներու «եմփորոն կրկին միայն», մետրապոլիտներու «եմփորոն»

րոն երեքկին», եպիսկոպոսապետներու եւ կաթողիկոսներու «եմիփորոն չորեքկին», եւ վերջապէս հայրապետներու կամ պատրիարքներու «եմիփորոն հինգեկին հինգ խաչիւ զարդարեալ»: Մեզի համար պարզ չեն եմիփորոնի տարբերութեան կրկնութիւնները, եւ երբեք նշան մը չկայ որ այնչափ անգամներ պատատելու իմաստ ունենայ: Հայրապետներու եմիփորոնին տրուած յաւելուածական մեկնութիւնը, որ Լամբրոնացւոյն գրութեան կարգին առաջին անգամ յիշուած է, հաւանական կը ցուցնէ կրկնութիւնը խաչերուն թիւին վրայ իմանալ, այնպէս որ խաչերուն շատութեամբ եպիսկոպոսական դասակարգը յայտնուի: Ինչ որ ալ ըլլայ ճիշդը, հիմա այդպիսի տարբերութիւն մը գործածական չէ, եւ միեւնոյն ձեւով եմիփորոններ կը գործածեն ամէն եպիսկոպոսական աստիճան ունեցողներ, ամենէն կրտսեր եպիսկոպոսէն մինչեւ Ամենայն Հայոց Հայրապետը: Նոյնիսկ հինէն մնացած եմիփորոններուն վրայ՝ ո՛չ ձեւի եւ ոչ խաչերու թիւի տարբերութիւն չեն տեսնուիր, եւ հինգ խաչեր սովորական են կուրծքին եւ երկու ուսերուն եւ երկու կախուած մասերուն վրայ:

ԵՐՓԱՐԱՆ. — Եկեղեցական արարողութեանց մէջ գործածական երգերու հաւաքածոն պարունակող հատոր մը: Հաստատուն կարգաւորութեամբ կազմուած մատեան մը չէ, այլ ի դիւրութիւն դպրաց պատրաստուած դիրք մը, եւ այս պատճառաւ պարունակութեան տարբերութիւններ եւ աւելի կամ նուազ ընդարձակ երգարաններ կը գտնուին գրուած կամ տպուած:

ԵՐՓԵՀՈՆ. — Անունին ճիշդ նշանակութեամբ նուագարանի բազմափող գործիք մը, որ ի հետմն բերնով կը փչուէր, յետոյ ջուրով բանողներ շինուե-

յան . իսկ այժմ եղած է մատներով բախուող ու փողե-
րէն ձայն հանող դործիք մը , որ դանն ալ կոչուած է ,
լատիներէն օրկանում = organum , Փրանսերէն orgue
լատէն առնելով : Մեր եկեղեցիներու մէջ այդ երգեհո-
նը մտած չէ , միայն ընտանեկան շրջանակներու մէջ
վործածուող մանր երգեհոնը = harmonium , կարի
ցանցառ կերպով եկեղեցիներու մէջ լսուեցաւ , եւ սե-
զանին ետեւը դրուելով երգեցողութիւնը կանոնաւո-
րելու դործածուեցաւ , բայց չչարունակեց : Մեր մէջ
սովորութիւն եղած երգեհոնը մեծ ու բոլորակ ծնծղայ
մըն է , որ մէջտեղէն կաշիէ օղակով մը կախուած կը
բռնուի եւ թաթով կը բախուի , եւ բախման չափերով
երգեցողութեան կանոնաւորութեան կ'օգնէ : Երգեհոնի
ուժդին բախումներով պատարագի նշանաւոր կէտերը
— «Առէք կերէք»ը , «Ի սուրբ ի սուրբ»ը ազդարարած են
երբեմն , բայց այս ալ ընդհանրացած սովորութիւն չէ :

ԶԱՆԳԱԿ .— Ծանօթ ձայնական դործիք զանազան
մեծութիւններով , ամենէն մանրներէն՝ որ ձեռքի վրայ
կը դործածուին՝ մինչեւ մեծամեծները որ անշարժ կը
մնան : Պղնձէ ձուլուած , բերանը բացուած ու գլուխը
վուպաւոր դոցուած , վերի կողմը բռնելու կամ կախուե-
լու տեղ մը ունի , եւ մէջէն կախուած լեզուակ մը գու-
պաւոր սղնձին մէջ շարժուելով թնդացող ու զօրաւոր
ձայն կը հանէ : Զանգակներուն ամենէն մեծերը , որոնց
շարժուելը դժուար է , լեզուակը երերցնելով կը հնչե-
ցուին , երբեմն լեզուակի տեղ թաթ մըն ալ կը դործա-
ծուի բախելով հնչեցնելու համար : Թէ զանգակը եկե-
ղեցւոյ մէջ ե՞րբ մտած է , դժուար է որոշել , որովհե-
տեւ զանգակին գլխաւոր պաշտօնն է հաւատացեալնե-
րը եկեղեցի հրաւիրել , եւ այդ հրաւէրը հնաւանդ սո-
վորութեամբ ժամկոչներու երգեցողութեամբ կը կա-
տարուէր , յետոյ մտան փայտէ տախտակներ կամ մե-

տաղէ ձողի վրայ հանուած ձայները, եւ ասոնց յա-
ջորդեցին այժմեան զանգակները: Մշոյ Ս. կարապետ
վանքին տրուած Զանլը անուանը հարկաւ անոր հին ա-
տեններու մէջ ալ զանգակ ունեցած ըլլալը կը յայտ-
նէ, երբ ուրիշ եկեղեցիներ դեռ չունէին: Այժմ մայրա-
քաղաքիս ու գլխաւոր քաղաքներու մէջ զանգակը ընդ-
հանրացած է, գիւղերէն շատերուն մէջ ալ կը գտնուի:
Զանգակները յատուկ օժման ու օրհնութեան արարո-
ղութիւն ունին Մաշտոցին մէջ:

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ.— Որպէս զի զանգակը իր ձայ-
նը ընդարձակ կերպով լսելի ընէ, պէտք է բարձր եւ
բաց տեղէ մը զարնուի, այս նպատակաւ զանգակները
կը կախուին եկեղեցւոյ տանիքէն վեր բարձրացող շի-
նութեան մը վրայ: Այս շինութիւնը զանգակատուն կը
կոչուի: Ամենէն համեստ ձեւն է եկեղեցւոյն մայր
պատերէն մէկ մասին վրայ, ճակատը կամ կողմերը՝
եկեղեցւոյ աւելի բաց կողմին վրայ փոքր ու բաց կա-
մար մը կը շինուի եւ մէջէն զանգակը կը կախուի: Այդ
համեստ ձեւէն սկսեալ՝ հեղհետէ մեծնալով մինչեւ
բարձր աշտարակի ձեւով եւ վերի կողմէն կաթողի-
կէով վերջացող զանգակատուններ կան, որ շատ անգամ
եկեղեցւոյ արեւմտեան մեծ դրան դուրսը կառուցուած
են, եւ եկեղեցւոյն տանիքէն շատ վեր կը բարձրանան:
Կան եկեղեցիներ որ մէջտեղը գմբէթ կաթողիկէ չունին
եւ զանգակատունը կաթողիկէի տեղն ալ կը բռնէ: Ս.
կարապետի ու Ս. Էջմիածնի եւ ուրիշ քանի մը մեծ ե-
կեղեցիներու զանգակատուններուն կէսին՝ օժեալ սե-
ղան ալ կանդնուած է, ուր Համբարձման կամ Հոգե-
գալստեան օրը պատարագ ալ կը մատուցուի, ժամա-
բարն ու սարկաւազը զանգակատան մէջ եւ դպիրք ու
ժողովուրդք եկեղեցւոյ բակին մէջ: Զանգակներու կի-
րառութիւնը, ինչպէս ըսինք, բուն ժողովուրդը եկեղե-

ցի հրաւիրելու համար է, հետեւաբար ատենէն կէս կամ մէկ ժամ առաջ ազդարար մը կը զարնուի, ժամերգութեան սկսելուն նորէն կը կրկնուի, «Լցաք»ի, «Փառք ի բարձունս»ի եւ «Պորհուրդ խորին»ի նորէն զանգակ կը զարնուի սկիզբէն չեկողներուն համար: Չանդակները կը զարնուին նաեւ ննջեցեալ բերուելուն եւ առաջնորդ կամ բարձրատիճան եկեղեցականներ հասնելուն: Գաւառներու մէջ հրդեհներուն ալ զանգակ կը զարնուի, եւ այս պարագաներով կ'ընդարձակուի զանգակին օգտակարութիւնը:

ՁԳԵՍՏ .— Ինչ որ արարողութեան պահանջմամբ հաղնելու կը ծառայէ եկեղեցւոյ մէջ՝ այդ անունին ներքեւ կը մտնէ, եւ իւրաքանչիւր անունին ներքեւ բացատրութիւններ կը տրուին: Դպրի զգեստը շապիկն է: Մեր մէջ կիսասարկաւազի յատուկ շապիկ չկայ, բազկուրար մը կը յիշուի որ չի դործածուիր, բազալանն անոր տեղը կը բռնէ, ինչպէս իր տեղը ըսինք: Սարկաւազին զգեստն է ուրար, քահանայինը՝ դօտի, շուրջառու սաղաւարտ, եպիսկոպոսինը՝ եմփորոն ու խոյր, կաթողիկոսինը՝ կոնքեռ: Ամէն զգեստներ վրայէ վրայ կ'աւելցուին, այնպէս որ կաթողիկոսական զգեստին շապիկը դպրութեան շապիկն է: Միայն ուրարը սարկաւազէն քահանային ձեւը կը փոխէ, նոյնպէս քահանայէն եպիսկոպոսին խոյրին ձեւը կը փոխուի: Չզգեստներ Մաշտոցի մէջ օրհնութեան կանոն ունին, ինչպէս զրեթէ ամէն նիւթ որ նուիրական կիրառութեան կը ծառայէ՝ լոկ օրհնութեամբ կամ օծմամբ կը յատկացուի: Չզգեստներու տարբերութիւն մըն ալ կը դրուի վարդապետական կամ եպիսկոպոսական կամ պատրիարքական անուններով, որ ոչ թէ ձեւի տարբերութիւն ունին, այլ առաւել կամ նուազ թանկագին ըլլալէն, եւ թանկագինները շատ դործածելի չըլլալէն:

աւելի հանդիսաւոր օրերուն կը վերապահուին :
Ձգեստներու գոյնը կանոն չունի մեր մէջ, ինչպէս ու-
նին լատինացիք, տօներուն համապատասխան գոյներ
սրոշած ըլլալով, հետեւաբար նոյն գոյներ տարբեր
տօներուն եւ տարբեր գոյներ նոյն տօներուն կը գոր-
ծածուին անխտիր : Միայն ճաշակի խնդիր է՝ երբեմն
գոյները տօնին յարմարցնել, եթէ եկեղեցին ունի նոյն
գոյներով սպասներ : Ընդհանրացած է Աւագ Եջ. ճեր-
մակներով կատարել, որ առաւել քան տօնին բնու-
թեան, հին սովորութեան հետ կապ ունի անշուշտ, ին-
չու որ հին պատմութեանց յիշատակութեանց մէջ,
քանի որ հանդիսական տօնախմբութեանց նկարագրու-
թեան կը հանդիպի, միշտ եկեղեցւոյ պաշտօնեայք
սպիտակագգեստ կը ներկայացուին : Սեւաթոյր զղեստ-
ներ ննջեցելոց համար գործածելն ալ հին սովորութիւն
է, մանաւանդ որ ճերմակն աւելի մեռելոց հետ կապ
ունի իբր նշան պատանքի : Աւագ Ուր. երեկոյին տօնա-
ցոյցն ալ կը հրահանգէ խաչը պատել «սպիտակ դաւ-
տառակաւ ի խորհուրդ պատանացն Քրիստոսի» :

Մինչեւ ցարդ բացատրած զգեստնիս եկեղեցական
արարողութեանց յատուկ ծիսական հագնելիքներ են,
իսկ զգեստ անունին ներքեւ կը մտնեն նաեւ եկեղեցա-
կաններու հագնելիքը պատարագէն ու հանդէսներէն
դուրս : Այդ զգեստներն են վերարկուն, փիլոնն ու վե-
ղարը, ընդհանրապէս սեւաթոյր ու ասուէ, որ կը գոր-
ծածուին եկեղեցւոյ մէջ հասարակ ժամերգութեան ա-
տեն, իսկ վերարկուն ու վեղարը նաեւ եկեղեցիէ
դուրս, ինչպէս իրենց տեղերը պիտի բացատրուին :

ԹԱԳ. — Անունը կը գործածուի իբր համանշանակ
եպիսկոպոսական խոյրին որ երկճղի ու սրածայր ըլ-
լալուն՝ ռամկական բառով չաթալթագ կը կոչուի :
Մենք կը նախադասենք խոյր անունին ներքեւ խօսիլ,

սրովհետեւ բուն թագի հետ բնաւ նմանութիւն չունի :
Թագին նմանութիւնը կը տեսնուի ընդհակառակը քա-
հանայական սաղաւարտին վրայ, որուն ստորոտը
պսակածեւ զարդ մը ունի եւ բոլորն ի միասին միջնա-
պարեան թագերու նմանութիւնը կը կրեն :

ԹԱԳՆ ԽԱԶԻ .— Կը կոչուի խաչի մը վերին թեւը,
եւ այդ անունով կը բացատրուի խաչի օժման արարո-
ղութեան մէջ : Թերեւս այդ անունն առաւ հինաւուրց
սովորութենէ մը որուն համաձայն խաչերուն զադաթը
թաղածեւ զարդ մը կը դրուէր :

ԹԱԹ .— Բախելու դործիք մը՝ որ կը գործածուի
երդեհոնէն, զանգակէն ու ծնծղայէն ձայն հանելու
համար : Զանգակներուն մէջէն կախուած կտորը բուն
լեզուակ կը կոչուի, իսկ թաթը ձեռքի վրայ գործա-
ծուելիք եւ գարնելու յարմար՝ քիչ ու շատ մուրճի
նման գործիք մըն է :

ԹԱՂՈՒՄ .— Նոր ժամանակներու մէջ, եւ այն ալ
թէ ոչ բացառաբար, գոնէ գլխաւորաբար մայրաքա-
ղաքիս եկեղեցիներու յատուկ կերտուած մը, յոյներու
հետեւողութեամբ կազմուած ու գործածուած : Թա-
ղում ըստածը իբր թէ Քրիստոսի դազաղը կամ գերեզ-
մանը պիտի նշանակէ : Փայտէ, մեծադիր ու զարդա-
բուն շէնք մը, մէջի կողմը դատարկ, դուրսի կողմէն
սիւներով ու դմբէթներով յօրինուած, որուն վրայ աշ-
տանակներ՝ կանթեղներ ու ծաղկամաններ կը զետե-
ղուին եւ մոմերով, ճրագներով աւելի փառաւոր կը
վարդարուին : Թաղումի փայտակերտներուն երբեմն
երուսաղէմի Ս. Յարութիւնի կամ Ս. Յակոբի եւ եր-
բեմն ալ Ս. Էջմիածնի տաճարին նմանութիւնը կը
տրուի : Թաղման փայտակերտներուն ամենէն պղտիկը
մետրաչափ մեծ ու մետրաչափ բարձր կ'ըլլայ : Մեր

Մայր-Եկեղեցւոյն մէջ 25 մետր տարածութեամբ ու 6 մետր բարձրութեամբ ասազին թաղում մը կայ, չափաւոր տաճարի չափ բան մը: Թաղումն Աւագ Ռւրբաթ երեկոյին բեմին մէջտեղը կը զետեղուի ամէն զարդերով պճնուած, եւ «Պարդեւատու» շարականը երգելով՝ թափօրի կը հանեն Եկեղեցւոյն շուրջը: Կիսազգեստ քահանաներ կամ շապկազգեստ բարեպաշտներ ձողաբարձ կը տանին զայն ուսերնուն վրայ, իսկ երբ ծանր ըլլայ, շապկազգեստ բռնակիրները կը վերցնեն, քահանաներ ու պաշտօնեաներ կ'ընկերանան: Յետոյ կը բերեն եւ նորէն բեմին մէջտեղը կը դնեն եւ կը թողուն մինչեւ Աւագ Շարաթ երեկոյ: Ասկէ ետքը կա'մ բեմին մէկ անկիւնը եւ կամ մատուռներէն մէկին մէջ կը թողուն քառասուն օր: Թաղումին մէջ կը զետեղուի խաչ մը սպիտակ դաստառակով պատատած եւ Աւետարան մը նոյնպէս: Ժողովուրդը տարօրինակ ջերմեռանդ յարում ունի թաղումին, թափօրին ատեն թաղումին ներքեւէն անցնելու բարեպաշտութիւնը կամ անոր մէջ դրուած ծաղիկներէն ու դալարներէն կտոր մը ստանալու խանդը՝ ասազին եռուզեռի պատճառ կ'ըլլայ, մնացեալ ատեններ թաղումին խաչն ու Աւետարանը համբուրելու դիմումը շարունակ է: Որչափ եւ բարեպաշտութիւնը ոչ ազգայնութեան կրնայ վերագրուիլ ու ոչ ծիսականութեան, սակայն այդ մասին հնար չէ շղիտել որ թաղումի փայտակերտը նորամուտ է մայրաքաղաքիս մէջ, եւ մայրաքաղաքիս Եկեղեցականներէն Կ. Պոլսոյ վիճակներուն դանազան կողմերը տարածուած, այլ որ դեռ չէ մտած էջմիածնի ու Կիլիկիոյ վիճակներուն մէջ: Իսկ մտած տեղերուն մէջ դտած ընդունելութիւնը պէտք է մեկնենք Քրիստոսի Ս. Գերեզմանին նկատմամբ եղած բուն ջերմեռանդութեամբ, որուն իբր նմանութիւն համարուած է թաղում կոչուած փայտակերտը:

ԹԱՇԿԻՆԱԿ.— Այդ անունը ընդհանուր կերպով համանշանակ է դաստառակ, բռնիչ, շուշիայ անուններուն, բայց յատկապէս դործածուած է պատարադիատեն ժամարարին ձախ քովէն կախուած ձեռք սրբելու զենջակին կամ անձեռոցին: Հնազոյն խորհրդատետրներուն մէջ Թաշկինակի յիշատակութիւն չկայ, ինչպէս եւ կիրառութիւնը չկար, զի հայ հռոմէականները զայն չունին տակաւին իբր զգետաւորութեան մաս, այլ կոնքի ու փարչի հետ ի միասին կը ներկայացուի ձեռքը լուարու եւ լուարէն ետքը սրբելու համար: Հարկաւ զայն միշտ մօտն ունենալու եւ նոյնիսկ յընթացս պատարադի յօգուտ դործածելու զիւրութիւնը թելադրեց ձեռաց սրբիչը ձախ կողմէն գօտիէն կախուած պահել, որուն զգետաւորութեան աղօթք մըն ալ յարմարցուած է յետին ժամանակներու մէջ, ուրարին աղօթքէն փոխ առնելով եւ «ղախրտ»ը «ղձեռս»ի փոխելով:

ԹԵԻ.— Այս անունը կը տրուի եկեղեցիներու երկու կողմերուն, երբ եկեղեցին երկու կարգ սիւներով երեքի բաժնուած է, եւ աջ ու ձախ կողմը գտնուած մասերը եկեղեցւոյ թեւերը կը կոչուին: Թէեւ անունը կը տրուի ոեւէ խաչի երկու մասերուն որ կեդրոնէն կամ խաչի ակնէն հորիզոնապէս մէկ ու միւս կողմերը կ'երկննան: Երբեմն ալ նոյնիսկ չորս մասերը չորս թեւ կը նկատուին. ասկէ եւ խաչին կը տրուի քառաթեւ անունը:

ԹԻԿՆՈՅ.— Նոր անուն, ինչպէս եւ նորահնար զգետ, հայ ծէսին մէջ զպիրներու շապիկին վերի մասը աւելի հարուստ եւ յաճախ ասեղնագործեալ ուսանոցներ ունի, որ կը ծածկէ ուսերն ու թիկունքին վերի մասը եւ կուրծքին վրայէն կ'իջնէ մինչեւ գօտին: Այդ

է աւանդական ձեւը: Վերջին ժամանակներու մէջ դիւ-
րադոյն տեոնուեցաւ ուսանողները շապիկէն դատել, եւ
միանգամայն ուսանողին ձեւը փոխել, եւ կուրծքէն ի-
ջածը համառօտելով՝ ուսերուն եւ թիկունքին մասերը
հաւասարեցնել, եւ կիսաբոլոր ուսանող մը կազմել լա-
տին ուխտաւորներուն սովորական եղող թիկնոցին
նման, որուն անունն ալ առաւ: Այդ կերպով շապիկ-
ներու ձեւը փոխելու առաջին փորձը կ'ըսուի թէ
1832-ին հայ հռոմէականներուն նոր հիմնուած Ս.
Փրկիչ եկեղեցւոյն համար պատրաստուած շապիկնե-
րուն վրայ եղաւ, ուսանողներն աւելի խնամով պահե-
լու եւ շապիկները դիւրաւ գործածելու եւ մաքրելու
համար: Ամէն առիթի մէջ նորաձեւութիւնը շուտով
տարածուեցաւ: Հայ հռոմէական եկեղեցիներու մէջ
հաստատուն կերպով դարայ շապիկները զատուած
թիկնոցներ ունին, բայց մեր մէջ ալ դրեթէ մայրաքա-
ղաքիս ամէն եկեղեցիներ նորահնար թիկնոցով շա-
պիկներ ունին, որ թէեւ ծիսական պահանջ չեն հա-
մարուիր, բայց կիրառութեան ու պահպանութեան
համար աւելի դիւրին նկատուած են: Միջանման ձեւ
մը ընտրուած է քանի մը եկեղեցիներու մէջ, որ ու-
սանողները շապիկէն զատուելով մէկտեղ, ուսանողին
աւանդական ձեւը պահած են, որով թէ՛ ծէսը պահուած
է եւ թէ՛ դիւրութիւնն ընդունուած: Եէնի Գափուի եկե-
ղեցին կայ զոյգ մը շապիկ որուն թիկնոցը լայն ու քա-
ռանկիւնի ձեւով առջեւէն կ'իջնէ որ բոլորովին նորա-
հնար եւ ծէսի հակառակ բաներ են:

ԺԱՄ. — Ժամանակի չափ մը, այսինքն օրուան 24
ժամերէն մէկը: Եկեղեցական աղօթքներն ալ այդ ժա-
մերու վրայ կարգաւորուած ըլլալէն կոչուեցաւ ժա-
մերգութիւն, եւ գործադրութիւնն ալ աւելի համառօտ
կերպով ըսուեցաւ «ժամ երգել» եւ «ժամ ընել»: Այս

բացատրութենէն՝ «ժամ ընելու երթալ» բացատրութեան անցումը դիւրին էր, որ կրճատելով եղաւ «ժամ երթալ» եւ «ժամ» կոչուեցաւ տեղը ուր ժամերգութիւն կը կատարուէր, եւ վերջապէս «ժամ» բառը սկսաւ պարզապէս «եկեղեցի» ալ նշանակել: Այդ նիւթական իմաստով կը գործածենք սովորաբար մեր առօրեայ խօսակցութեան մէջ: Եկեղեցւոյն վրայ խօսուած ըլլալով՝ այլեւս նոր ըսելիք չի մնար այստեղ:

ԺԱՄԱԳԻՐՔ. — Գիրք մը որ կը պարունակէ ժամերգութեանց կարգաւորութիւնները, ի բաց առեալ պատշաճի շարականներն ու ընթերցուածները. որով կը պարունակէ մաղթանքները, քարոզները, աղօթքները, փոխերն ու երգերը: Ժամերգութեան կազմութեան վրայ պիտի չխօսինք հարկաւ: Ժամագիրքերն երկու տեսակ են, մէկը Ձեռաց Ժամագիրք՝ փոքր ութածալ եւ լոկ ժամագիրքը պարունակող ըստ յիշեալ բացատրութեան, միւսը Ատենի Ժամագիրք՝ մեծագիրք, մեծ քառածալ, որուն սկիզբը կայ ամբողջ Սաղմոսը եւ վերջը Տօնացոյցը եւ մէջտեղը բուն Ժամագիրքը: Ատենի Ժամագիրքը բեմին մէջտեղը կը դրուի փոքր դրակալի վրայ, եւ անոր վրայէն կը կարդան՝ ըստ հանան աղօթքները, սարկաւազը քարոզները եւ պսիւրները փոխերը. իսկ Ձեռաց Ժամագիրքը բոլոր պաշտօնեաներու ձեռք կրնայ դտնուիլ դասուն մէջ. դասունը դրակալին վրայ ալ անհրաժեշտաբար Շարականէն դատ Ժամագիրք մըն ալ պիտի դտնուի Ատենի կամ Ձեռաց, անոր վրայէն երգերը, կանոնադրուիներն ու արեւելիները կարդալու համար:

ԺԱՄԱՀԱՐ. — Ընդհանուր անունն է, որուն ներքեւ կ'իմացուին ամէն ժամ հրաւիրելու համար զարնուած գործիքները, որ են զլխաւորապէս «զանգակ» ու «կոչնակ», եւ որոնց վրայ խօսուած է:

ԺԱՄԱՆՈՑ .— Բաժակամանին տրուած անուան է՝
կատարելապէս համանշանակ եւ նոր բացատրութեան
չի կարօտիր :

ԺԱՄԱՏՈՒՆ .— Այս անունը կրկին իմաստով կը
գործածուի . մէկն իբրեւ դաւիթ եկեղեցւոյ , ուր սլարդ
ժամերդութիւն կատարելու սովորութիւն կայ . եւ ըստ
այսմ ժամատուն կ'իմացուի ժամերդութիւն կատարե-
լու տեղ : Բայց աւելի սովորաբար կ'իմացուին այն
չէնքերը որ եկեղեցւոյ բակին մէջ կը դտնուին , եւ ուր
քարոզիչներն ու քահանաները եւ ուրիշ սլաշտօնեաներ
իրենց սենեակներն ունին , ուր է եւս եկեղեցականնե-
րու կամ թաղականներու խորհրդարանը : Այդ առմամբ
կ'իմացուին ժամուն տուները , այսինքն այն բնակու-
թիւնները որ եկեղեցւոյ յարակից են :

ԻԻՂ .— Եկեղեցւոյ մէջ իւղ անունին տակ կ'իմա-
ցուի գլխաւորաբար խորհրդական ու ծիսական կիրա-
ւութեանց համար սլատրաստուած ու օրհնուած իւղը :
Այս իւղերուն գլխաւորը "րբալոյս" միւռոնն է որուն
վրայ սլտի խօսինք : Մեր եկեղեցւոյն մէջ միւռոնը
ո՛չ միայն գլխաւորը այլ եւ միակն է , որովհետեւ ա-
մէն դէպքերու եւ օծումներու համար միեւնոյն միւ-
ռոնին իւղը կը գործածենք : Ուրիշ եկեղեցիներու մէջ
գործածուած ու մեր գիրքերուն մէջ ալ երբեմն յի-
շուած երկու իւղեր ալ կան . իւղ երախայից որ կը
գործածուի երախաներն օծելու մկրտութենէ առաջ , եւ
իւղ հիւանդաց՝ ծանր հիւանդները օծելու համար գոր-
ծածուած՝ որ հռոմէականներու մէջ իբր վերջին օծման
խորհուրդ ընդունուած է : Մեր մէջ կայ եւս իւղ
ոտնլուայի՝ որ է սլարդ կարաղ , որով ոտնլուան կա-
տարողը լուացեալներուն աջ ոտքերուն վրայ խաչաձեւ
նշան մը կ'ընէ լուալէն ետքը : Իսկ իբր կիրատութիւն

պէտք է յիշել ձէթը որ կանթեղներու մէջ վառելու կը
վործածուի, հարկաւ ո՛չ շատ ընտիրը. իսկ հիմա
սկսան քարիւղ ալ վործածել կանթեղներու մէջ, նկա-
տելով որ ընտիրն ու լաւ զտուածն ըլլայ:

ԼԱՆՁԱԽԱՁ.— Կուրծքէն կախուելու խաչ մը իբր
չքանչան կամ պատուոյ նշան շնորհուած եկեղեցական-
ներու: Երկու տեսակ լանջախաչ կայ, մէկը քահանա-
յական եւ միւսը վարդապետական: Քահանայականը
պարզ ոսկեղօծ արծաթէ խաչ մըն է իբր 10 հարիւրա-
մետր երկար, քիչ մը զարդարուն, որ ոսկեղօծ շղթա-
յով մը վիզէն կախուած կուրծքին վրայ կը կրուի ամէն
ղգեստներուն վրայէն: Վարդապետականն ալ նոյնչափ
կամ քիչ մը աւելի մեծ խաչ մըն է, որուն մէջ խաչելու-
թեան նկարէն պատկեր մը կայ, շուրջանակի սուտ ա-
կերով զարդարուած, վրայի կողմը թագ մը ռուսաց
կայսերական թաղին ձեւով եւ ներքեւէն պզտիկ զարդ
մը կախուած: Այդ պատճառաւ ականակուռ ալ կը
կոչուի վարդապետական խաչը, որ շատ ցանցաւ կեր-
պով արժանաւորապէս քահանայից ալ կը տրուի: Լան-
ջախաչն անծանօթ էր մեր եկեղեցոյ յիշատակու-
թեանց մէջ եւ մեր մէջ մուտ գտաւ միայն ռուսաց հե-
տեւողութեամբ, եւ վերջին դարուն սկիզբները միայն
կիրաւուրէն մտաւ: Լանջախաչը կը շնորհուի ուղ-
ղակի Ամենայն Հայոց Հայրապետէն, բայց տարադէպ
չէ անոնց կարծիքը՝ որ մասնաւոր կաթողիկոսներուն
եւ պատրիարքներուն ալ լայնջախաչ շնորհելու յար-
սարութիւնը կամ իրաւունքը կը ճանչնայ: Լատինաց
մէջ լանջախաչը եպիսկոպոսական նշան է, եւ զոր կը
կրեն նաեւ հայ հռոմէականներու եպիսկոպոսները,
բայց ոչ երբեք վարդապետները: Հինէն մնացած երկու
լանջախաչերու օրինակներ կան, մին Մայր Եկեղեցոյ
մէջ պատրիարքներուն համար, միւսն Արմաշու մէջ

վանահայրերու համար, որ առ առաւելն երկու դարէ
աւելի հին չեն, եւ կրնայ մտածուիլ թէ օտարներու
նմանողութեամբ շինուած են: Լանջախաչը կը դործա-
ծուի ամէն հանդիսաւոր եւ պաշտօնական պարագանե-
րու մէջ թէ՛ եկեղեցիներու մէջ եւ թէ՛ եկեղեցիէ դուրս:

ԼԱՊՏԵՐ. — Ապակի փեղկերով շրջապատուած ու
փակուած պահարան մը կամ տուփ մը, որուն մէջ մոմ
կը վառուի եւ քալած ատեն չմարելու ապահովութիւնը
կ'ունենայ: Լապտերները ձողերու վրայ բարձրացած՝
թափօրներու առջեւէն կը տարուին եւ ճամբան չմարե-
լու օգտին հետ՝ տեսքոտ զարդի մը առաւելութիւնը
կ'ունենան: Լապտերներու կիրառութիւնը մեր եկեղե-
ցիներու մէջ տարածուած չէ, թէեւ տօնացոյցը տեղ-
տեղ լապտերն ալ կը յիշէ թափօրներու միւս զարդե-
րուն հետ: Յոյնք ու լատինք սովորաբար կը դործածեն
լապտերները կերօններու փոխարէն, իսկ հայ հոռ-
մէականները մեզի պէս չեն դործածեր:

ԼԵԶՈՒԱԿ. — Չանգակին մէջէն կախուած կտորը,
որ շարժուելով զանգակին կողերը կը ծեծէ ներսի կող-
մէն ու ձայն կը հանէ, ինչպէս լեզուն բերնին մէջ: Սո-
վորաբար ամբողջ զանգակը կը շարժուի ու լեզուակն
ալ հետը, բայց մեծ զանգակներու լեզուակը միայն կը
շարժեն:

ԼՈՒԱՅՈՒՄ. — Բուն բառին իմաստը լուացուելու
դործողութիւնն է, բայց սովորութեան մէջ լուա-
ցուելու դործիքն ալ կը դործածեն, եւ լուացում կը
կոչեն կոնքն ու փարչը մէկտեղ առնուած: Սրբուելու
անձեռոցն ալ լուացումի մաս կը կազմէ ըստ կարգին,
բայց այժմ մեր ժամարարները, ինչ աստիճանէ ալ
ըլլան, սրբուելու անձեռոցը կամ դենջակը կամ թաչ-

կինակը ձախ կողմերնին դօտիէն կախ կը կրեն, ինչ-
պէս ըսինք. ուստի միայն լուսացողին քով չգտնուած
ատեն կոնքին ու փարչին հետ ղենջակն ալ պիտի ներ-
կայացուի :

ԿՈՒՍԱՄՈՒՏ .— Նոյնանշան պատուհան բառին
հետ, եւ այնտեղ պիտի խօսինք : Հին ձեւով տուներու
մէջ շուրջանակի պատերը ամբողջ էին, միայն երդի-
քէն բաց ծակ մը կը թողուէր որ լոյս մտնէ եւ այս էր
յատուկ անունով լուսամուտը : Եկեղեցիներու մէջ, ա-
րեւելեան կողմէն, խորանին վրայ յատուկ մէկ փոք-
րիկ պատուհան մը կը գտնուի, քառակուսի կամ բու-
լորչի կամ եռանկիւն ձեւով, ուրկէ առաջին անգամ կը
մտնէ արեւելքէն ծաղող արեւուն ճառագայթը . եւ այդ
արեւելեան պատուհանը յատուկ անունով լուսամուտ
կը կոչուի եկեղեցւոյ մէջ :

ԽԱՉ .— Ծանօթ գործիք մահապարտութեան հին
ատեն, իսկ Քրիստոսի խաչելութենէն ետքը՝ քրիստոն-
եաներու համար նշանակ իրենց հաւատքին ու առար-
կայ իրենց բարեպաշտական զգացումներուն, եւ այդ
պատճառաւ եկեղեցական սպասներու ամենէն դերա-
պանցն ու ամենէն գործածուածը : Խաչն իր սկզբնական
ձեւին մէջ երկու տարբեր փայտ էր, մէկը աւելի երկար
քան միւսը, որ ուղիղ անկիւններով իրարու կը միա-
ցուէին, ներքեւի մասը աւելի երկար թողլով, որով-
հետեւ երբ մահապարտը վրան տարածուէր, իրանն ու
սրունքները այդ ներքեւի մասին կը պատասխանէին,
բազուկները կողմնակի թեւերուն, իսկ գլուխը՝ վերի
մասին : Ուրիշ կերպ-կերպ ձեւերով խաչեր ալ կը ըլ-
նուէին, կամ պզտիկ փայտը միւսին գլուխը հաստատե-
լով, ինչպէս յաճախ աւագակներու խաչերը կը գծա-
դրեն, կամ երկու փայտեր իրարու շեշտակի միացնե-

լով, ինչպէս Ս. Անդրէասի խաչը ըստ աւանդութեան, կամ թէ պզտիկ փայտը մեծին վարի կողմը դնելով եւ մահապարտը գլխովայր տարածելով, ինչպէս Ս. Պետրոսի խաչը կը նկարագրուի: Բայց մենք երբ խաչ կ'ըսենք, առաջին անգամ նկարագրուած Քրիստոսի խաչին ձեւը կ'իմանանք: Ասով հանդերձ ամէն եկեղեցիներ իրենց համար աւանդական ու սովորական ձեւեր պահեցին, եւ ասկէ ծագում առած են Յունական խաչ, Լատինական խաչ անունները: Յունական խաչին չորս թեւերը հաւասար են, իսկ ներքեւի թեւը կամ բունը միւսներուն երկուքին չափ երկար է: Իսկ Հայկական խաչը չորս թեւերը հաւասար ունենալէն դատ, թեւերուն կազմած չորս անկիւններէն ճառագայթներ ունի՝ որ չորս թեւերուն մէջտեղերը կը դրուին, խաչին թեւերուն մէջ ճառագայթներով խաչ մը կազմելով, ու ամէնքը մէկտեղ սեռակի մը շուրջը սփռուող անույ ճառագայթներուն նմանութիւնը բերելով: Այդ իմաստով կը մեկնենք մենք սեռակնաձեւ անունը որ կը տրուի շարականին մէջ վարագայ Ս. Խաչին՝ անոր ճառագայթարձակ լուսաւորութիւնը բացատրելու. «Ընդ յայտնել Սրբոյ Խաչին՝ սեռակնաձեւ քառաթեւին, որ զաշխարհս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք»: Եւ ըստ այսմ սեռակնաձեւ բառը Հայ Եկեղեցւոյ ընդունած խաչին պաշտօնական անունը կ'ըլլայ: Խաչին ձեւին նկատմամբ գլխաւոր խնդիր մըն ալ վրան խաչեալ Քրիստոսի պատկերը գտնուիլն է: Երբ պարզապէս խաչ կ'ըսենք, լոկ քառաթեւը կ'իմանանք առանց Քրիստոսի պատկերին: Արարողութեան մէջ աւելի դործածուած խաչը՝ եկեղեցւոյ պաշտօնեաներուն ձեռքը բռնած խաչն է, որուն վրայ Քրիստոսի պատկերը պիտի չգտնուի, բայց սեղաններուն վրայ յատկապէս դրուած ու պատարագի մատուցման համար էսկան սեպուած խաչերը՝ սովորաբար Քրիստոսի պատ-

կերտին են, բայց շենք կրնար պնդել թէ այսպէս է մեր
եկեղեցւոյն ծիսական կանոնը: Յաշերը սովորաբար
կիրառութեան մէջ արծաթէ են կամ պղնձէ, եւ այս ա-
նոնց տկունութիւնն ապահովելու համար, որովհետեւ
ըստ ծիսական օրինաց ամէն խաչ որ եկեղեցւոյ պաշ-
տամանց մէջ պիտի դործածուի եւ պիտի յարգուի,
պիտի օրհնուի եւ հինգ տեղէն պիտի օծուի, այսինքն
կեղրանն ու չորս թեւերը, կամ ուրիշ անուններով
Ակնը, Թագը, Բունը, Աջ թեւը եւ Ձախ թեւը: Փայտէ
խաչեր կիրառութեան մէջ չեն ընդունուիր սովորա-
բար, եւ օծուելու յարմար չեն սեպուիր, թէեւ կտաւի
վրայ ալ նկարուած պատկերները օծելէն ետքը փայտէ
չինուած խաչերը օծելը դժուարութեան տեղի պէտք չէ
տայ: Յաչի տեսակներուն ու կիրառութեան կերպերուն
վրայ խօսելով, նախ եւ առաջ պէտք է յիշել Չեռաց
խաչը, որ պիտի ըլլայ սեռականաձեւ քառաթեւ, որուն
ներքեւը բուն մը եւս աւելցած է, որպէս զի հոն տեղէն
բունուի միշտ բռնիչով մը: Լատինական խաչի ձեւով եւ
վրան Քրիստոսի պատկերով պղտիկ խաչեր իբր ձեռաց
խաչ դործածել՝ հայ հռոմէականներուն մէջ սկսաւ, եւ
նուիրատուներու կամ շինողներու անմտադրութեամբ
մեր եկեղեցիներու մէջ ալ մտաւ տեղ-տեղ: Սեղանի
խաչը մեծկակ քառաթեւ մըն է որ սեղանին մէջտեղը
բարձրկէկ պիտի դրուի: Թէեւ միշտ Հայ Եկեղեցւոյ
սեպհական ձեւով պէտք էր ըլլար, սակայն շատ աւելի
ընդհանրացած է լատինական խաչի ձեւով ու Քրիստո-
սի պատկերով խաչեր դործածել: Բագմոցի խաչ կը
կոչուին զանազան մեծութեամբ խաչեր որ հանդիսաւոր
օրերը, քանի հատ ալ ըլլայ, իբր զարդ կը դրուին սե-
ղանին վրայ: Իբր շքանշան կուրծքի վրայ կախուելու
խաւը բացատրեցինք «Լանջախաչ» անունին ներքեւ:
Թափօրներու առջեւէն տարուելիք խաչը պիտի բացա-
տրենք յաջվառ անունին ներքեւ: Իսկ խաչը՝ ոչ իբր

յատուկ առարկայ մը, այլ ուրիշ առարկաներու վրայ դրուած նուիրական նշան՝ կը գտնենք ամէն տեղ, եւ խաչով պէտք է նուիրագործուին եկեղեցւոյ ամէն սպասներն ու զգեստները: Խաչի նշանը կը կանգնուի զմբէթի կամ կաթողիկէի զլուխը, դանգաղատան դապաթը, եկեղեցւոյ ճակատը, եկեղեցւոյ մէջ տասնչորս սիւներուն, եւ ուրիշ ըստ Մաշտոցի օծուելիք տեղերը՝ մէյ-մէկ քարէ խաչ կը դրուի եւ անոր վրայ կ'ըլլայ օծումը: Զգեստներուն վրայ ալ միշտ խաչի նշաններ պիտի ըլլան, պարզ շապիկները երեք տեղերէն, ուսանոցին թիկունքը եւ կուրծքին երկու կողմերը, ու դոնէ միայն թիկունքը, սարկաւազին ուրարը հինգ՝ դոնէ երեք տեղէն. մէյ-մէկ խաչ ալ բազպաններու վրայ, եմիփորոնին վրայ երեք կամ հինգ տեղ. փորուրարին կուրծքը, շուրջառին ետեւը, սաղաւարտին ու խոյրին դապաթը:

ԽԱԶԱԿԵՄ. — Թափօրներու առջեւէն տարուող նշան մը, որուն վրայ մանր խաչ մը կայ եւ ներքեւը պատկերազարդ կամ ասեղնագործեալ դարդ մը կախուած է: Այդ խաչալէմներէն զոյգ մը կամ քանի մը զոյգ կը տարուին թափօրներու մէջ, երբ բարձրաստիճան եկեղեցական մը տօնախմբութեան օր մը հանդիսադիր կ'ըլլայ:

ԽԱԶԱՓԱՅՏ. — Քրիստոսի վրան խաչուած բուն խաչին փայտէն մանր կտոր մը կամ փշուր մը, որ յատուկ գարդարուն ու ճաճանչաւոր անօթի մէջ զետեղուած է, եւ ներքեւէն բռնուելու յարմար կոթ ալ ունի, որ սեղաններու վրայ կը դրուի ի յարդութիւն հաւատացելոց, եւ որով որոշեալ օրեր կամ բարեպաշտներու ուղած ատեն խաչահանգիստ կամ խաչալուայ կը կատարուի, եւ օրհնուած ջուր կը պատրաստուի ի

բժշկութիւնն հիւանդաց կամ յօրհնութիւն տանց եւ շինութեանց կամ ի յաջողութիւն ձեռնարկութեանց : Մայրաքաղաքիս պրեթէ ամէն եկեղեցիներ եւ գաւառներու մէջ գլխաւոր եկեղեցիներ ունին իրենց խաչափայտը : Նաեւ Յոյն եւ Լատին եկեղեցիներ կը պահեն խաչափայտի կտորներ եւ մեծ պատուով կը յարգեն , թէեւ անոնց մէջ օրհնուած ջուր պատրաստելու համար խաչափայտի ընկղմում տեղի չունի :

ԽԱԶԲԱԿ .— Եկեղեցիներուն մէջ գտնուած բակը յայտնի է եւ բացատրուած . բակը եկեղեցւոյ չորս կողմերն ալ կը տարածուի : Այդ բակին այն մասը որ եկեղեցւոյ ետեւը՝ տաճարին արեւելեան կողմը կը գրտնուի՝ կը կոչուի խաչքակ : Ասոնք ընդհանրապէս տեղւոյն առաջնորդներու եւ բարձրաստիճան եկեղեցականներու եւ պատուաւոր անձերու գերեզմանի տեղ եղած են :

ԽԱԶԿԱԿ .— Սեղաններու վրայ մեծկակ խաչ մը գտնուելուն ծիսական պահանջքը յիշեցինք . արդ այդ խաչը բարձրկէկ ու պատուոյ դիրքի մէջ գետեղելու համար պատշաճ պատրաստութիւն մը պէտք էր , եւ այս եղաւ խաչկալի ծաղումը՝ խաչը կեցնելու տեղ : Այժմ խաչկալները մեծցան ու աճեցան պատշաճ կերպով : Բազմոցը որուն վրայ աշտանակներու սպասներ պիտի դրուին՝ խաչկալին խառնուեցաւ , սեղանին պատկերին գետեղումն ալ սեղանին վրայ բերուեցաւ եւ խաչկալը պատկերակալ եղաւ . միայն թէ պատկերը շատ աւելի նշանաւոր եւ շատ աւելի ընդարձակ ձեւ ու կարգ սրահանջեց , եւ խաչկալները սեղաններուն գըլխաւոր ու նշանաւոր դարձն եղան : Եւ որովհետեւ որոշեալ կանոն մը չկար , ամէն մարդ իր ճաշակին ու կարողութեան շարի առատացաւ եւ շատ շքեղ ու հարուստ խաչկալներ սկսան երեւան դալ : Այժմ խաչկալ

րսելով՝ կ'իմանանք սեղանին ճակատը բարձրացող
 փայտակերտը՝ որուն ներքեւի մասը բազմոցի աստի-
 ճաններն են, մէջտեղը խաչին տեղը եւ վրան պատկե-
 րին շրջանակը, գեղեցիկ ճակատ մըն ալ աւելի վերը :
 Այսպէս են այսօր մայրաքաղաքիս ու անոր վիճակնե-
 րուն եկեղեցիներն ընդհանրապէս : Խաչկալներուն հնա-
 գոյն ձեւը տարբեր է : Սեղանին առջեւին ուղղութեամբ
 երկու կողմերը մէյ-մէկ դուռներ կան որ կը բացուին
 ու կը դոցուին, եւ դրան վրայ Ս. Թադէոս ու Ս. Բար-
 թոլղիմէոս Առաջին Լուսաւորիչներ, կամ Ս. Պօղոս ու
 Ս. Պետրոս առաքեալներ, կամ ուրիշ երկու յարմար
 պատկերներ դժուած են, իսկ ներքին կողմէն սեղանին
 ետեւը եղող մասը շատ չի բարձրանար եւ երկու կող-
 մերէն ալ դոցուած ամփոփ տեղ մը կը կազմէ : Պէտք է
 ճանչնալ թէ այդ ձեւը որ հնագոյն եկեղեցիներու մէջ
 կը գտնուի, եւ արեւելեան վիճակներու մէջ ընդհան-
 րացած է, հարկաւ աւելի ծիսական է . սակայն մեր մէջ
 ընդունուած ձեւն ալ շատ աւելի փառաւոր կը կազմէ
 սեղաններուն տեսքը : Յետին տարիներու մէջ ուրիշ նոր
 ձեւ մըն ալ մուտ գտաւ խաչկալներու վրայ, որ սեղա-
 նին չորս անկիւնները դրուած սիւներու վրայ կը
 բարձրանան, եւ վերի կողմը կաթողիկէ պարէթներով
 կը վերջանան վերիվերոյ Մայր Տաճարին արտաքին
 ձեւին նմանողութեամբ : Արդարեւ խորհրդաւոր է սոյն
 ձեւը, սակայն հնաւանդ ըլլալու պարագան չի ճշմար-
 տուիր :

ԽԱԶՎԱՌ. — Մեծ խաչ մըն է ձողի վրայ բարձրա-
 ցած, որ թափօրներու գլուխը կը տարուի երկու կող-
 մերը երկու կերօններով : Այդ խաչերը արծաթ կամ
 մետաղէ ալ կ'ըլլան, բայց շատ անգամ փայտէ՝ դիւ-
 րակիր ըլլալու համար : Խաչվառ կը տանին նաեւ ննջեց-
 եալներու յուղարկաւորութեան առջեւէն, եկեղեցւոյ

մէջ պատարապի խնկարկութեան ու թափօրի առջեւէն , եւ շատ տեղեր խաչվառ կը հանեն նաեւ անդաստաններուն : Խաչվառը մէկ հարտ է , եւ ամենէն առաջ կ'երթայ , միւս խաչալէմները զարդեր են , եւ բազմաթիւ կրնան ըլլալ թափօրներու մէջ :

ԽԱԶԲԱՐ .— Կը կոչուին կանդուն գերեզմանաքարերը որոնց մէջտեղը աւելի կամ նուազ զարդարուն խաչ մը քանդակուած է : Խաչքարերը կ'օծուին ալ երբեմն , եւ օծման նշանակ խաչին կեդրոնը երկաթ բեւեռ մը կը հաստատուի : Խաչքարերը շատ աւելի եկեղեցիներու եւ վանքերու շուրջը դռնուող պատուոյ գերեզմաններուն վրայ կը դրուին , քան թէ ուրիշ գերեզմանոցներու մէջ : Խաչքարերը կրնան ալ դրուիլ եկեղեցւոյ որմին վրայ ներսը կամ դուրսը , եւ կամ ուրիշ նշանաւոր տեղ մը՝ ոչ իբրեւ գերեզմանաքար , այլ իբր պարզ յիշատակարան տրուած մէկ նուէրի կամ ընծայուած մէկ երախտիքի :

ԽՆԿԱՄԱՆ .— Մէջը խունկ լեցնելու արծաթ աման՝ ձեռքի վրայ կրուելու համար , երբեմն կափարիչ ունի եւ երբեմն ոչ : Խունկը արարողութեանց ատեն այդ ամանին մէջ կը պահուի , եւ երբ խունկ դնելու համար սարկաւազը հանդիսադիրին կամ ժամօրհնողին կը ներկայանայ , խնկամանն ալ բուրվառին հետ ի մխասին կը կարկառէ , որուն մէջ մանր դդալ մըն ալ պիտի ըլլայ , որով խունկը խնկամանէն բուրվառին մէջ կը դրուի օրհնութեամբ :

ԽՆԿԱՆՈՅ .— Խնկամանէն կը տարբերի , որովհետեւ խնկամանին մէջ խունկը կը մնայ պարզասպէս , իսկ խնկանոցին մէջ կրակ կը դրուի եւ խունկ կը վառուի : Խնկանոցը վերիվերոյ բուրվառին բուն կտորն

է կրակարանով ու պատուանդանով, բայց շղթաներ
չունի եւ չի շարժուիր, այլ ոեւէ տեղ մը կը դրուի
խունկ բուրելու, մէկ խօսքով խնկանոցը չշարժուող
բուրվառ մըն է :

ԽՈՅՐ .— Աւելի ճիշդ կոչումն է եպիսկոպոսական
կոչուած թագին : Արդէն գաւազանի վրայ խօսած ա-
տեննիս առիթ ունեցանք յիշեցնել թէ յառաջագոյն ե-
պիսկոպոսները յունականին նման բոլորչի խոյր ու-
նէին, որ է մեր քահանաներու այժմ գործածած սա-
ղաւարտը, եւ թէ 1184-ին Հռոմի պապերէն նուիրուած
հայրապետական զգեստին կիրառութեամբ՝ լատին ե-
պիսկոպոսական խոյրը մեր մէջ ալ ընդունուեցաւ : Այս
խոյրը երկու տափարակ երեսներէ կը բաղկանայ որ
սրածայր կը վերջանան, եւ իրարու միացած ըլլալով՝
բերանը դիտուն վրայ կլորած ատեն վերի կողմէն կը
բացուին ու երկճղի խոյր մը կը կազմեն, ծայրերը
մէյ-մէկ փոքրիկ խաչերով : Զարդարուն նկարներ ըստ
հաճոյս, բայց միշտ ըստ կարելւոյն հարուստ : Լատին-
նաց մէջ ալ բուն խոյրը այնպէս բարձր չէր յառաջ,
ինչպէս է այսօր, այլ այժմեանին կիսով չափ ցած :
Այժմ վերիվերոյ կէս մետր բարձրութիւն ունի : Խոյրը
յատուկ է եպիսկոպոսներուն, այլ հրամանաւ ու թոյլ-
տուութեամբ կը գործածեն եւս ծայրագոյն վարդա-
պետներ, երբ թեմակալ առաջնորդ են, բայց միայն
իրենց վիճակին մէջ : Խոյրին մասն է արտախուրակը,
որուն վրայ առանձին խօսեցանք իր կարգին :

ԽՈՐԱՆ .— Բառին ճիշդ առմամբ կը նշանակէ
վրան, որ է սենեակի նմանութիւն՝ շարժական ու լա-
թեղէն նիւթէ շինուած : Այժմ խորան ըսելով՝ ստէպ
դայն սեղանի հետ կը շփոթենք, եւ սեղանին խորան
կ'ըսենք, մինչ սեղանը խորան չէ, այլ խորանին մէջն

է : Սորանը բեմին ետեւի մասն է , որ կամարով վրայէն
զոցուած վրանաձեւ տեղ մը կը կազմէ : Սորանը պար-
փակուած է չորս սիւներու մէջտեղ որ չորս աւետա-
րանիչներու անունին նուիրուած են : Սորանը , ինչպէս
ըսինք , ոչ ամբողջ , այլ կէս վրանի պէս կը ներկա-
յանայ , առջեւէն բոլորովին բաց ըլլալով . վերի կողմէն
քառորդ գունդի նման կամարով մը գոցուած , շուր-
ջանակի ալ կիսաբոլոր՝ որուն մէջտեղը կանգնուած է
սեղանը , եւ անոր ետեւը կը բարձրանայ խաչկալը , իսկ
սեղանին ու խաչկալին ետեւէն ազատ անցք մը կայ՝
ուր տեղէն կը կատարուին վերաբերումն ու խնկարկու-
թիւնները , եւ սեղանին սպասաւորութեան պէտք եղած
երթեւեկները : Կողմնակի պատերուն վրայ բացուած են
խորհրդանոցի խորշերը , աջ կողմինը պատարագին եւ
նուէրներու եւ Ս . Հաղորդութեան յատկացեալ , եւ ճա-
խակողմեանն ալ՝ միւռոնի եւ ուրիշ սրբութեանց պահ-
պանութեան : Սորանին մէջէն սովորաբար մէյ-մէկ
գուռ կը դրուին երկու կողման աւանդատուներուն՝ որ
մեծապէս կը դիւրացնէ սեղանին սպասաւորութիւնն ու
լուսարարին աշխատանքը , շարունակ բեմին առջեւէն
չերթեւեկելու համար :

ԽՈՐՀՐԴԱՆՈՑ .— Սորանին մէջը կողմնակի երկու
սրմերուն վրայ մէյ-մէկ խորշեր կը շինուին ուր պա-
տարագի խորհրդոյն նուէրները կը դետեղուին : Ժա-
մարարը «Ի յարկի սրբութեան» ըսելէն ու վարագոյրը
փակուելէն ետքը պիտի երթայ աջակողմեան խորհր-
դանոցը , նշխարն ու գինին պիտի դնէ մաղզմային ու
րաժակին մէջ , եւ պիտի ծածկէ սկիհն ու պիտի խնկար-
կէ , եւ հոն պիտի թողու մինչեւ որ վերաբերման ատեն
սարկաւաղի ձեռքով հանդիսապէս սեղան բերուի : Ժա-
մարարին խորհրդանոց երթալուն պարագան մեր կող-
մերը գրեթէ խափանուած է , թէեւ կը պահուի արե-

ևեղեան վիճակներուն մէջ : Այլ սկիհը կը բերեն սեղանին վրայ եւ այստեղ ժամարարը կը կատարէ արարողութիւնը եւ յետոյ սարկաւազը սկիհը նուէրներով կը զետեղէ խորհրդանոցին մէջ : Երբեմն եւ մանաւանդ հանդիսաւոր օրեր սկիհը փոխանակ խորհրդանոցի խորշին մէջ դնելու, կը զետեղեն աջակողմեան փոքր սեղանին վրայ : Գուցէ ժամանակաւ այն տեղերն էին խորհրդանոցները եւ հետզհետէ փոքր սեղանի փոխուեցան : Երբոր աւանդատուներու մէջ կամ եկեղեցւոյ ուրիշ մէկ կողմը փոքրիկ օժեալ կամ պարզապէս ձեւացեալ սեղաններ կան, եւ նոյն սեղաններուն օրը կը հանդիպի, այս սեղանները իբր խորհրդանոց կը գործածուին : Խորհրդանոցներուն առջեւը կամ քովը երկու մոմեղէն վառել, երբ նուէրները դրուած են, պատշաճ է ըստ ամենայնի : Խորհրդանոցներ յատուկ փոքրիկ վարագոյններ պիտի ունենան, որ փակուած պիտի մնան վայելչութեան համար, եւ միայն նուէրները դրուած ատեն բաց կը պահուին :

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ . — Պատարագի Ս . Խորհուրդին ատեն քահանային ի ձայն կամ ի թիւ կարդալու աւօթքներուն զիրքն է, որ փոքրիկ դրակալով սեղանին ձախ եղջիւրին վրայ կը դրուի, երեսը դէպի ժամարարը՝ կարդալու դիւրութեան համար : Նոյն նպատակաւ խորհրդատետրերը միշտ խոշորդիր կ'ըլլան : «Պատարագամատոյց» ալ կը կոչուի այս զիրքը :

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ . — Ժողովի սենեակ իմաստով կը գործածուի եւ պարզապէս կը ցուցնէ Թաղ . Խորհրդոյ յատուկ սենեակը : Երբեմն քահանաներու յատկացեալ սենեակն ալ խորհրդարան կը կոչուի : Կրնայ ըլլալ որ եկեղեցւոյ բակին մէջ ուրիշ ժողովներու ալ յատկացեալ սենեակներ գտնուին՝ որ նոյն անունը կը կրեն ,

և. շխիթութեան առիթ չտալու համար՝ իւրաքանչիւր սենեակի մէջ հաւաքուող ժողովի անուներ կ'աւելցուի խորհրդարան կոչման հետ :

ԽՈՒՆԿ.— Եկեղեցւոյ մէջ խունկ ծխել ամենէն հին սովորութիւն է, եւ զանազան նպատակներու կը ծառայէ : Ծխելու սովորական եղանակը բուրվառն է, եւ ծխելու յատուկ պաշտօնեան սարկաւազն է : Խընկանոցով ալ խունկ կը ծխուի, բայց սովորական արարողութեան մէջ քիչ անգամ, աւելի սեղանի կամ աւաղանի օժման կամ Մեծ Պահքի օրերը կը դործածուի խնկանոցը : Գործածուած խունկը սովորաբար հոտաւէտ ծառերու խէժն է, եւ մտադրութիւն պիտի ընծայուի որ մաքուր ու ընտիր ըլլայ, բացառաբար եւ իբր առաւելութիւն կը դործածուին ընտրելաւոյն ու անոյշ խունկ կոչուած նիւթեր, ինչպէս հալուէ, մուշկ եւլն . : Խունկը դործածուելէն առաջ օրհնութեան աղօթք ունի Մաշտոցին մէջ : Խնկարկութիւնը զանազան նպատակներ ունի՝ ըսինք, որովհետեւ հաւասարապէս կը խընկարկուին պատարագն ու սեղանը, անձերն ու եկեղեցին, մեծն ու պղտիկը, զի ինչպէս սարկաւաղը ի պատիւ կը խնկարկէ եպիսկոպոսը, նոյնպէս եպիսկոպոսն ալ հանդիտապէս կը խնկարկէ ժողովուրդէն իւրաքանչիւրը : Տարադէպ չէ խորհիլ որ խնկարկութիւնը իր մէջ կենցաղական նպատակ ալ ունի, ժողովուրդին համախումբ հաւաքումէն յառաջ եկած օդին ապականութիւնը մաքրել անուշահոտ բուրմամբ, զոր նոր բառով հականեխել կրնանք ըսել : Բայց խունկին հոտն ալ կրնայ ծանրաբեռնել օդը, եւ ա'ն ալ հաճոյական ու օգտակար չըլլալուն՝ խունկ դնելու չափաւորութիւնը պէտք չէ զանց ընել :

ԾԱԾԿՈՅ.— Ընդհանրապէս որեւէ կտաւ, կերպաս ու իր որ առարկայ մը աչքէ կը պահէ՝ անոր կ'ըսուի

«Ծածկոց», բայց եկեղեցւոյ մէջ այդ բառը իբր յատուկ անուն տրուած է պատարագի ատեն սկիհին ու մաղղմային վրայ փոռած ընտիր դաստառակին : Ծածկոցները սպասներու աւելի ծանրագին ու աւելի արուեստակերտ մասը կը կազմեն, եւ սովորաբար մետաքսի վրայ ոսկեթել ասեղնազործութեամբ պատրաստուած են : Կշիռքով ալ շատ թեթեւ չեն, որովհետեւ կրկնակ են եւ երբեմն մէջը ամուր կտաւ ալ կ'ունենան : Ծածկոցը այդ միակ նպատակէն դուրս ուրիշ բանի գործածել ներելի չէ, պահպանութիւնն ալ վստահութեամբ պիտի ըլլայ, մանաւանդ մեր եկեղեցւոյն : մէջ, որովհետեւ մենք սրբագործեալ նշխարին վրայ, առանց ուրիշ կափարիչ դնելու՝ ինչպէս լատինք ու հայ հռոմէականք, կամ խաչ-երկաթ ձեւով արծաթեայ ցանց մը դնելու՝ ինչպէս ուրիշ ծէսեր, անմիջապէս ծածկոց կը դնենք, եւ սրբագործեալ նշխարին հետ անմիջապէս շփման մէջ կը պահենք : Ծածկոց բառը երբեմն կը գործածենք նաեւ սեղանին վէմը ծածկող կտաւը իմացնելու, սակայն ճիշդ անունը չէ, այլ բառը իր ընդհանուր իմաստովն առնուած :

ԾԱՂԻԿ. — Բնութենէն արտադրուած ամենէն վտարթ ու ամենէն հաճելի բերքերուն թէ ո՛չ գլխաւորը, գոնէ գլխաւորներէն մէկը ծաղիկն է, հակառակ իր փափուկ ու վաղանցիկ վիճակին, նշանակ ուրախութեան, պատուոյ ու սիրոյ, եւ գլխաւոր զարդ ամէն նուիրական հանդիսութեանց : Այս տեսութեամբ ոչինչ կ'արգիլէ որ ծաղիկը եկեղեցւոյ մէջ ալ ընդունուի իբր զարդ ու իբր տօնական նշանակ : Ընդհանուր սովորութեամբ ալ ծաղիկներ ընդունուած են սեղանին վրայ եւ մանաւանդ ինչ-ինչ տօներուն ալ իբր խորհրդանշան նկատուած են. անհատական բարեպաշտութիւնն ալ քաղցր գոհունակութեամբ մը՝ եկեղեցւոյ խունկին ու

մոմին հետ ծաղիկներ ալ նուէր բերել սորված է : Այս է ընկալեալ սովորութիւնը : Բայց թէ հնաւանդ սովորութեամբ ալ ծաղիկներ ընդունուած էին իբր սեղանի դարդ , վերջնական ու որոշակի պատասխանել չենք կրնար : Երբեք ծիսական գիրքերու մէջ ծաղիկներ յիշուած չըլլալը՝ ոմանց համար ժխտական փաստ է , մինչ ուրիշներուն համար՝ ստորասական պատասխան կը նկատուի անյիշատակ ժամանակէ եւ հնաւանդ սովորութենէ ծաղիկներու կիրառութիւնն եկեղեցւոյ մէջ ընդունուած ըլլալը : Մենք ալ պիտի չկարենանք ծաղիկներն եկեղեցիէն բացարձակապէս արտաքսել , բայց սա՛ երկու պայմաններն ալ անհրաժեշտ կը նկատենք : Նախ՝ սեղանը ծաղիկներով չխճողել ու անոնց քանակը չչափադանցել , եւ երկրորդ՝ ի սպառ զգուշանալ սուտ եւ արհեստական ծաղիկներէ , որչափ եւ քաջարուեստ ըլլան , որոնց վրայ բնութիւնը չի խօսիր ու կեղծիքը կը տիրէ : Ստորջ է որ ծաղիկներու նմանողութեամբ զարդեր ասեղնազործեալ կամ ոստայնանկեալ կը տեսնուին ամէն եկեղեցական սպասներու վրայ , բայց սարդ զարդակերպ դժագրութիւններ՝ շատ տարբեր են իրականը փոխանակելու համար կազմուած կեղծիքներէն :

ԾԱՂԿԱՄԱՆ. — Երբեմն մետաղեայ , բայց սովորաբար յախճապակեայ կամ ապակեայ ամաններ՝ որոնց մէջ ծաղիկներ կը զետեղուին , մէջը ջուր ալ լեցնելով , որպէս զի ծաղիկները չթառամին ու չթորչումին : Ծաղկամանները յարակից են ծաղիկի կիրառութեան , եւ այս մասին ուրիշ ըսելիք չի մնար :

ԾՆԾՂԱԿ. — Փոքր պղնձէ գործիք , կիսաադունդ վանդակի ձեւով եւ վրայի կողմէն բռնելու կոթով մը , որ պղնձէ թաթով դուրսի կողմէն կը բախուի եւ ճայ-

ները ճշդելու եւ կանոնաւորելու կը ծառայէ : Ռամ-
կօրէն գիլ անունով ճանչցուած է , եւ մեր եկեղեցիներ-
ուն մէջ տարածուած կիրառութիւն ունի :

ԾՆԾՂԱՅ . — Պղնձէ ճայնական գործիք , տափակ
ու կլոր իբր 40 հարիւրամետր տրամագծով , մէջտեղը
զողաւորուած , որուն ետեւէն կաշիէ օղակով կը
բռնուի , եւ երկու ծնծղայ երկու ձեռքով իրարու բա-
խելով սաստիկ ու դղրդացնող ճայն մը կը հանէ , որ ի-
րաւամբ գրոց մէջ «ղօղանջել» կոչուած է : Ծնծղաներն
ի հնուց անտի ծանօթ են , նոյնիսկ արտաքին նուա-
գախումբերու մէջ ալ ընդունուած են : Ծնծղաներուն
բոլոր առաւելութիւնը պղնձին այնպիսի խառնուրդ
տալու մէջ է որ սպասուած ճայնը տայ : Այս արուես-
տը զաղտնիք մը մնացած է Սամաթիացի Ջիլճեան
զերդաստանին մէջ , որ այդ արուեստէն առած է իր
աղլանունը : Նաեւ եւրոպական երկիրներ իրենց պէտք
եղած ծնծղաներ անոնցմէ կը դնեն ու կը ստանան :
Ծնծղայի կիրառութիւնն ընդհանուր է մեր եկեղեցւոյ
մէջ , ոչ թէ լոկ իբր երգեցողութեան ու ճայնի կանո-
նաւորութեան նպաստող գործիք մը , այլ եւ իբր ցըն-
ծութեան նշանակ , ուստի լուր օրեր ծնծղայ չի լսուիր ,
եւ տօնախմբութեան մէջ կը հնչեն , եւ այնչափ աւելի ,
որչափ տօնախմբութիւնը մեծ է : Բայց ինչպէս ըսինք ,
դղրդացնող ղօղանջիւն մը ունին ծնծղաները , եւ պէտք
է խնամքով ու ճարտարութեամբ հնչեցնել աւելի ա-
խորժելի ընելու համար :

ԿԱԹՈՂԻԿԷ . — Յունական բառին թարգմանական
իմաստով կը նշանակէ ընդհանրական , եւ նմանու-
թեամբ սկսաւ նշանակել եւս մեծ ու դլխաւոր , եւ
մայր եկեղեցիները կոչուեցան կաթողիկէ , եւ յատուկ
կերպով այդ անունը տրուեցաւ էջմիածնի Մայր Տա-

ձարին : Մայր եկեղեցիներուն դմբէթ ունենալէն , գըմբէթն ալ կաթողիկէ սկսաւ կոչուիլ , եւ յատկապէս հայ ճարտարապետութեան սեպհական դմբէթը՝ որ ցցուած ու վեղարանման ձեւ ունի : Այժմ ստէպ այդ իմաստով կը դործածենք կաթողիկէ անունը , եւ երբ դանդակատուներ ալ նոյն ձեւով կը վերջանան , անոնք ալ սոյն անունով կը բացատրուին : Վիճակաւորներուն եւ մանաւանդ անոնցմէ բարձրաստիճաններուն աթոռներուն վրայ դանդուած գմբէթաձեւ հովանին ալ՝ նոյնպէս կաթողիկէ կոչուեցաւ , եւ սովոր ենք կաթողիկէով եկեղեցի կամ կաթողիկէով աթոռ անուանել այն եկեղեցին ու աթոռը՝ որ սրածայր գմբէթ ունին վրանին :

ԿԱՄԱՐ .— Կորացեալ ձեւով բան մը : Շէնքերուն վրայի կողմերը՝ երբ դողացեալ բոլորակի ձեւով կը վերջանան՝ կը կոչուին կամար , որ կրնայ որմի մը լայնութեամբ միայն ըլլալ , եւ կամ երկար սրահի վրայ ըլլալ : Եկեղեցիները ընդհանրապէս քարուկիր ըլլալով՝ սպահովութեան համար առաստաղները կամարաձեւ կը շինուին , բայց աւելի դործածական ոճով սիւնէ սիւն տարածուող մասն ալ կը կոչուի կամար : Կամարները առաստաղներու վրայ , դուռներու վրայ , խորանին բերանը , եւ ուրիշ ամէն կողմեր միշտ հաստատութիւն կու տան շէնքին : Կամար անունով կ'իմանանք եւս գօտին , ու քահանայական զգեստին մաս կաղմող գօտին ալ կրնայ կամար կոչուիլ , ինչպէս զգեստաւորութեան աղօթքին մէջ ալ կ'ըսուի . «Շուրջ տետեպէ կամար հաւատոյ» եւլն . :

ԿԱՆԹԵՂ .— Լծորդ է թրքերէն գանտիլ ու լատիներէն գանտէլա բառերուն , որ հին ճայնաչրջութեամբ պէտք է գրուին կանդիլ ու կանդելա : Երկուքն ալ լոյս տուող ճրագի իմաստ ունին , միայն թէ թրքերէնի մէջ

իւղով կամ ձէթով ճրագն է, իսկ լատիներէնին մէջ մոմով ճրագը: Մեր մէջ ալ կանթեղ բառը յատուկ է յախճապակեայ կամ ապակեայ, կամ պնձեայ ամաններուն՝ որոնց մէջ ձէթով կամ քարիւղով ճրագ մը կը վառուի: Կանթեղները կը կախուին սեղաններուն կամ պատկերներու առջեւ ի պատիւ, եւ կը կախուին նաեւ եկեղեցւոյ մէջ լոյս տալու եւ հանդէս կազմելու համար: Կանթեղներու ձեւը բազմազան ու թիւն անորոշ է, եւ եկեղեցւոյ մեծութենէն ու հարստութենէն կախում ունի:

ԿԵՆԱՅ ՓԱՅՏ .— Այդ պատուոյ անունով կը կոչուի ստէպ խաչափայտը, այսինքն Քրիստոսի խաչելութեան դորժածուած բուն խաչը. բայց ոչ թէ ամբողջ, այլ փոքր փշուր մը որ փառաւոր ճաճանչի մէջ կը պահուի եկեղեցիներու մէջ, եւ հաւատացեալներու բարեպաշտութեան առարկայ է ամէն տեղ:

ԿԵՐՈՆ .— Խեծ մոմեղէն, լծորդ խտալերէն չերոնի = cerone բառին: Սովորաբար այսպէս կը կոչուին աւետարան կարդալու կամ հանդէսներու ատեն դպիր տղոց բռնած մոմերը: Այժմ կերոնները փայտէ կը շինուին նմանութեամբ, եւ միայն վրան կտոր մոմ կամ ոլղտիկ մոմ դնելով կը դորժածեն: Ոչ միայն խնայողական է, այլ եւ մոմեղէններուն ծռելուն եւ կաթելուն անպատեհութեանց դարման է:

ԿԻՍԱԶԳԵՍ .— Բառ մը որ քահանայական զգեստին կէսը կը ցուցնէ, այսինքն շապիկ, բաղպան, փորուրար ու դօտի, առանց շուրջատի ու վակասի, իսկ սաղաւարտը երբեմն կը դրուի եւ երբեմն ոչ: Կիսազգեստ կը հալնին բարձրաստիճան ժամարարներու ընթերակաց սպասաւորող սարկաւաղները, կամ լաւ եւս

սարկաւապութիւն ընող վարդապետներն ու պատուա-
ւոր քահանաները. եւ այս կը նկատուի իբր պատիւ ա-
նոր՝ որ կը սպասաւորէ եւ անոր՝ որուն կը սպասաւոր-
ուի: Հին աւանդութեանց մէջ կիսազգեստի յիշատա-
կութիւն չկայ, եւ նորամուտ ձեւ մը կը նկատուի ի-
րաւամբ: Շատ հին դարուց մէջ քահանայք ալ զգես-
տաւորեալ կը սպասաւորէին պատարագին, բայց ոչ
կիսազգեստ կերպարանքով, այլ ամբողջ զգեստաւոր-
եալ: Կիսազգեստը շատ անգամ տղեղ կերպարանք մը
ունի, տղեղ ձերմակ շապիկով, իրարու անյարմար
բազպանով եւ ուրարով, չուանը ետեւէն երեւցող դօ-
տիով. ուստի երբ ուզուի նոր ձեւին կիրառութիւնը
պահել, գոնէ յատկապէս վայելուչ շապիկով եւ իրա-
րու յարմար մասերով զգեստ սրատրաստել եւ փորու-
րարն ալ ուսանոցով շինել: Կիսազգեստները կը դոր-
ծածուին յատուկ կերպով քահանայաթաղի ու Աւայ-
Ռւրբաթի թաղման թափօրներուն. իրաւ ալ դագաղա-
բարձ քահանաներուն վայելուչ չ'երեւիր շուրջառով
սպասաւորել:

ԿՈԶԱԿ.— Ճարտարապետական առմամբ կամար-
ներուն մէջտեղը դրուած փակման եւ ամրութեան մասն
է: Եկեղեցիներու մէջ, խորանին մեծ կամարին մէջ-
տեղը, կողակին վրայ խաչ մըն ալ կը փորագրուի եւ
կ'օծուի:

ԿՈՆԻ.— Լուացման համար գործածուած աման
որ լուացուողին ձեռքին ներքեւ կը բռնուի, որպէս զի
փարջէն թափուած ջուրն ընդունի: Կոնքը պատարագի
տրարողութեան մէջ կը գործածուի, եւ ընդունուած
սովորութեան համեմատ մետաղէ պիտի ըլլայ, արծա-
թէ կամ պղնձէ կամ արույրէ, եւ ոչ յախճապակիէ կամ
կաւէ:

ԿՈՆՔԵՆՌ. — Լծորդ յունական կոնիֆիո կամ ենֆի-
յիռն անուանին: Եպիսկոպոսական զգեստի մաս ուրիշ
եկեղեցիներու մէջ, իսկ մեր մէջ կաթողիկոսներու
յատուկ, եւ բացառիկ արտօնութեամբ երբեմն պատ-
րիարքներու ալ շնորհուած: Հայ հռոմէականներու
մէջ կոնքեռը սովորական դարձած է ամէն եպիսկոպոս-
ներու: Կոնքեռը քառակուսի զարդ մըն է ասեղնաւոր-
ծուած կամ ընտիր կերպասէ շինուած, որ երեք ան-
կիւններէն փոքրիկ ծոպեր ունի, եւ չորրորդ անկիւնէն
երիզով կը կախուի գօտիէն՝ հայրապետին ձախ կողմէն,
եւ ձախ ազդրին վրայ: Սովորաբար հովուական մա-
խաղի նմանութիւն կը կարծուի, հովուական դաւա-
պանին հետ, եկեղեցական հովուութիւն նշանակող:
Բայց ուրիշներ կը կարծեն թէ նոյն կողմը անձեռոց =
թաշկինակ կրելէն առաջ եկած է, իբր թէ բարձրաս-
տիճան եկեղեցականք իրենց թաշկինակը զարդարուն
պահարանի մը մէջ դնել ուզած ըլլան:

ԿՈԶՆԱԿ. — Ժամահար գործիքներու տեսակ մը,
եւ կամ լաւ եւս զանգակներու նախնական ձեւը: Կոչ-
նակը կ'ըլլայ փայտէ կամ երկաթէ: Փայտէ տախտակ
մը կամ երկաթէ ձող մը կամ ուղիղ կամ կիսաշրջա-
նակ, երկու կողմէն կը կախուի եւ երկու նոյն նիւթէ
թաթերով կը բախուի ձայն հանելու համար: Կախուած
երկաթը կամ փայտը մերձաւորաբար մետրի մը եր-
կայնութիւնը կ'ունենայ եւ ամուր ու ձայնական պէտք
է որ ըլլայ: Կոչնակը սովորաբար եկեղեցւոյ վրան է,
չուրջը բաց տեղ մը կը կախուի, որպէս զի ձայնը տա-
րածուի: Փոքր կոչնակներ ալ կան, զորս ժամկոչներ
ձեռքի վրայ բախելով՝ փողոցները կը շրջին եւ ժողո-
վուրդին կը ծանուցանեն ժամերգութեան սկզբնաւո-
րութիւնը եւ եկեղեցի դալու կ'ազդարարեն:

ԿՏԱԻ. — Նիւթին անունն է. շատ սպասներ եկեղեցւոյ մէջ կտաւէ են: Մետաքսը աւելի յարգի կը նկատուի, բայց ոչ այնչափ ասուին, որ կենդանին մերկացնելով կը հայթայթուի. իսկ մուշտակը եկեղեցական կիրառութիւն չ'ընդունիր, եւ մինչեւ իսկ ժամարարին մուշտակով սեղան ելլել կ'արգելուի, զի մուշտակը մեռելոտին քերթելով կը պատրաստուի: Կտաւ բառը իբր սպասի անուն կը դործածուի այն կտորներուն վրայ որ յատուկ անուն մը չունին, եւ կտաւ կը կոչուի մասնաւորապէս սեղանին վէմին վրայ անմիջապէս դրուած կտորը, որ ըստ Մաշտոցի անթափ, այսինքն շուսացուած պիտի ըլլայ:

ՀԱԼՈՒԷ. — Խունկերու կարգին կը դործածուի իբր աւելի անոյշ բուրոզ, որ խէժ չէ սովորական խունկերու պէս, այլ անուշահոտ փայտ մը:

ՀԱՆՍԻԵՐՁ. — Նոյնանչանակ զգեստ բառին հետ, որեւէ հազնելի բան մը նշանակող: Եթէ տարբերութիւն մը դնել ուզուի երկու բառերուն մէջ, հնար է նկատի առնել հանդերձ բառին իբր նախադրութիւն «մէկտեղ» ցուցնող իմաստը, եւ հետեւցնել թէ հանդերձն է զգեստներուն ամբողջութիւնը, կամ թէ հանդերձ է ներքին զգեստի վրայէն հազուած կտորը: Ծիտարաններուն մէջ հանդերձ կը կոչուի երբեմն դպիրներու շապիկը, եւ երբեմն ալ ուրիշ եկեղեցիներու դործածած եւ դադմատական կոչուած սարկաւազներու յատուկ զգեստը, որ մեր ձեռնադրութեան Մաշտոցին մէջ թարգմանուած է հանդերձ հոլանի սարկաւազի, թէեւ մենք սարկաւազներու համար դպրաց շապիկէն տարբեր զգեստ մը չունինք:

ՀԻՄՆ. — Այս անունը բացատրութեան պէտք չունի, եւ թէ յիշեցինք այստեղ, նպատակնիս է միայն

Լսել թէ եկեղեցւոյ հիմերն իսկ յատուկ օրհնութիւն եւ
 յատուկ նուիրագործութիւն ունին, ինչպէս Մաշտոցէն
 յայտնի է: Եկեղեցւոյ հիմերն օրհնութեամբ օծուելէն
 եւ օրհնութեամբ փորուելէն ետք, անոնց մէջ 16 օծեալ
 քարեր կը դրուին յանուն 12 առաքելոց եւ 4 աւետա-
 րանչաց, բայց երկու աւետարանիչք միանգամայն ա-
 ռաքեալ ըլլալով՝ 16 թիւը կը լրանայ 13-րդ առաքեալ
 Պօղոսով եւ 14-րդ առաքեալ կոչուած Լուսաւորիչով:
 Այդ 16 անուններուն կարգն ալ, դիրքն ալ ճշդուած են:
 16 սիւներէն 4-ը եկեղեցւոյ 4 անկիւններն են, եւ այդ
 անկիւնի քարերուն մէջտեղերը, եկեղեցւոյ երկայնքին
 3 ու լայնքին 2 եւս կը զետեղեն եւ 2-ին ալ առաջակողմ-
 ման անկիւնները: Իսկ իւրաքանչիւր անունի դիրքերն
 ալ հետեւեալներն են. 4 աւետարանիչներ խորանին 4
 անկիւնները կը դրուին, երկուքը ետեւի, այսինքն ա-
 րեւելեան պատին մէջը՝ Յովհաննէս հիւսիսային կողմը
 եւ Մատթէոս հարաւակողմը, եւ երկուքն ալ խորանին
 բերանը, Ղուկաս հիւսիսակողմը եւ Մարկոս հարա-
 ւակողմը: Հիւսիսային պատին ներքեւ կը դրուին Պետ-
 րոս արեւելեան անկիւնը, Անդրէաս, Փիլիպպոս մէջ-
 տեղը, Լուսաւորիչ ու Բարթոլոմէոս արեւմտեան ան-
 կիւնը: Իսկ հարաւային պատին ներքեւ կը դրուին Պօ-
 ղոս արեւելեան անկիւնը, Յակոբոս Չեբեթեայ, Թով-
 մաս մէջտեղը, Յակոբ Ալփեան ու Թադէոս արեւմտեան
 անկիւնը: Իսկ արեւմտեան պատին ներքեւ, աւաղ դրան
 երկու կողմերը Սիմոն հիւսիսակողմը եւ Մատաթիա
 հարաւակողմը: Քարերուն օծման ու զետեղման արա-
 րողութիւնն ընդարձակ բացատրուած է Մաշտոցին
 մէջ:

ՀՈՂԱԹԱՓ. — Հին ձեւով կօշիկ մը, որ ոտքը հո-
 ղէն կը պահպանէ, բայց զարչապարէն վեր չ'ելլեր,
 միայն մատներուն վրայէն կտորով մը՝ ոտքին հետ

միացեալ կը պահէ զայն, եւ քաշելու ատեն ի միասին կը փոխադրուի: Հողաթափները սովորաբար կաշիէ են հասարակ կիրառութեան համար, բայց աստիճանաւորներ թաւիչէ ալ կը գործածեն, եւ ժամարարի պէտքի հետ ասեղնագործեալներ ալ կը գործածուին: Ժամարարի հողաթափներուն մէջի կողմը սովորութիւն է իժի ու քարքի կերպարանքներ ասեղնագործել՝ ի խորհուրդ սաղմոսի խօսքերուն. «Ի վերայ իժից եւ քարքից դնասցես դու» (Սաղ. 2. 13): Հողաթափներուն թէեւ ոչ էական, բայց ընդհանրացած սովորութիւն է ներբանները հաստ շինել եւ մէջը ծառի կեղեկամ կաշի լեցնել, հարկաւ եկեղեցւոյ գետնին խոնաւութենէն ջլնասուելու համար: Եկեղեցւոյ մէջ հողաթափ գործածելու կանոնը որ տակաւին բոլորովին խափանուած չէ, երկու տեսակէտէ կրնայ առնուիլ, մէկը ձեւի պարզութեան ու միւսը մաքրութեան պայման: Իբր ձեւի պարզութիւն անհրաժեշտ է ժամարարին համար սեղանին առջեւ, զի պատարագին մէջ հողաթափներն ալ պիտի հանէ եւ ուրիշ ձեւով կօշիկ չի յարմարիր, եւ դարձեալ հողաթափն ալ դարդամաս մը եղած է ուրիշ զգեստներու հետ: Նոյն պայմանները կը ճշմարտուին նաեւ վերաբերում ընող սարկաւազին ու կիսազգեստ առնող պաշտօնեաներուն համար: Մնացեալ պարապաներու մէջ կօշիկի ձեւը ծիսական պահանջ մը չ'երեւիր: Կը մնայ մաքրութեան պայմանը: Երբ ամէն ոք փողոցները կօշիկ մը միայն ունէր, որով ամէն աղտեղութեանց վրայ կրնար կոխել, վայել չէր անով եկեղեցւոյ մէջը մտնել, որուն յատուկը տախտակով կամ խոփրով, կապերտով կամ պորդով ծածկուած կ'ըլլար: Բայց քանի որ եկեղեցւոյ մէջ ցեխոտ օտքերով մտնել դիտողութեան իսկ չ'առնուիր, եւ միւս կողմէն ալ կրկին կօշիկներու սովորութիւնն ընդհանրացած է, եկեղեցւոյ դասն ալ՝ բեմն ալ աղտեղի օտքեր

բարձրացած չեն ըլլար, եթէ նախապէս կրկնակօշիկները հանուին: Միւս կողմէ հողաթափի կիրառութիւնն ալ իր նշանակութիւնը կը կորսնցնէ, երբ կը տեսնուի որ հողաթափ հազնողներն ալ անով մինչեւ արտաքին բա- կը եւ մինչեւ փողոցը կ'երթան, եւ մինչեւ իսկ աւելի աղտեղի տեղեր ալ կը մտնեն:

ՁԱԽԱԿՈՂՄ. — Եկեղեցւոյ ձախ կողմը մտնողէն չի նայուիր, այլ խորանէն, զայն իբր անձ նկատելով, եւ հետեւաբար եկեղեցւոյ հարաւակողմը հաստատա- պէս եկեղեցւոյ ձախակողմն է:

ՁԱՅՆԱԳՐԵԱԿ ԳԻՐՔԵՐ. — Շարականն ու ժամա- դիրքին երգերը հայկական կոչուած ձայնանիշերով ձայնագրեալ՝ հրատարակուած են Մայր Աթոռոյ տպարանէն հանգուցեալ Գէորգ Գ. կաթողիկոսի ժա- մանակ: Ասոնք այն կողմերը եկեղեցւոյ սովորական կիրառութեան մէջ ալ մտած են, եւ դասին մէջ գրա- կալներու վրայ դործածական եղած են: Մեր կող- մերը անոնցմէ հազիւ թէ քանի մը օրինակներ կան, եւ ոչ իսկ ամէն դպրաց դասերը իրենց ուսումնարաննե- րուն մէջ ունին, եւ ոչ ալ մեզի յատուկ ձայնագրեալ հրատարակութիւններ եղած են, հակառակ անհրաժեշտ պէտքին եւ հակառակ ցուցուած ջանքերուն:

ՁԱՅՆՔԱՂ ՇԱՐԱԿԱՆ. — Գիշերային ժամերգու- թեան մէջ երգուած օրհնութեան շարականները Մով- սէս Գ. Տաթեւացի կաթողիկոսին օրէն սկսան կամա-ւորապէս տասն պատկերով երգուիլ, որ հետզհետէ սո- վորական դարձաւ եւ ընդհանրացաւ, եւ այս երգեցո-ւթեան դիւրութեան համար քաղուածովը մէկտեղ շարականներ հրատարակուեցան՝ Չայնֆաղ անունով: Այսօր ասոնք են որ ամէն եկեղեցւոյ մէջ կը դործա- ծուին:

ՁԻԹԵՆԻ. — Ծառկազարդի առտու ժամերգու-
թեան ատեն բոլոր պաշտօնեաներու եւ ժողովրդեան
ձիթենի ծառի փոքրիկ ոստեր կը բաշխուին, որ տօնին
ստի՛ւ կը բերուին ամէն տարի: Ձիթենի չեղած տեղը
ուռենիի ճիւղեր կը գործածուին:

ՂԵՆՋԱԿ. — Հասարակ խօսակցութեան մէջ ղեն-
ջակ բառը կ'առնուի իբր անձեռոյ եւ իբր դաստառակ,
բայց եկեղեցւոյ մէջ յատուկ կերպով կը գործածուի
այն սփածանելիին համար, զոր մէջքէն կ'անցընէ Ա-
ւագ Եջ. օր Ոտնալուային հանդիսադիրը: Աւետարանն
ալ Քրիստոսի վրայ խօսելով կը գրէ. «Առեալ ղենջակ
մի սփածաւ» (Յովհ. ԺԳ. 4):

ՃԱԿԱՏ ՊԱՏԿԵՐԻ. — Երբ որ տէրունի կամ սրբոյ
պատկեր մը կ'օծուի ու կ'օրհնուի, Մաշտոցը կը հրա-
մայէ նախապէս օծել պատկերացեալ անձին ճակատը
նկարին վրայ: Այդ տեղն է որ կը կոչուի քակատ պատ-
կերի:

ՃԱՃԱՆՁ. — Սեղանի զարդերն են յատկապէս
պատրաստուած, մէջտեղը բոլորակ կամ ձուածեւ
պատկեր մը մետաղեայ քանդակով, ու շուրջանակի
ճառագայթածեւ սփռեալ զարդեր, եւ ներքեւէն կոթ
մը ու պատուանդան մը՝ տեղ մը դրուելու համար:
Ընդհանրապէս արծաթեայ կ'ըլլան ճաճանչները ճեր-
մակ կամ ոսկեղօծ, փոքր կամ մեծ կամ աւելի մեծ, եւ
ոսկերչական արուեստի ընտիր գործուածքներ, բայց
ճաշակով ու կազմուածով տարբեր: Մէջտեղի պատ-
կերները տէրունի են, քիչ անգամ սրբոյ վարքերէն
առնուած, եւ երբեմն ալ մէջտեղը ապակիով փակուած
դատարկ միջոց մը կը թողու սրբոյ մասունքներ ղե-
տեղելու: Հանդիսական առիթներուն սեղանի բազմոց-

ներուն նշանաւորագոյն զարդը կը կազմեն տեսակ-տեսակ ճաճանչներ :

ՃԱՇՈՑ .— Այսինքն է ճաշու ընթերցուածոց դիրք , յորում կը պարունակուին ո՛չ միայն ճաշու , այսինքն պատարագի դիրքերն ու առաքելական ընթերցուածքները տօնացոյցի կարգով քաղուած , այլ եւ ժամերգութեան մէջ կարդացուելիք ընթերցուածքներ ու մեծ աղօթքներ , եւս եւ թէ՛ պատարագի եւ թէ՛ ժամերգութեան մէջ կարդացուելու աւետարաններ : Հաստ թղթով , խոշոր դիրով , մեծ դիրքով հրատարակուած են միշտ ճաշոցները , անոր համար ճաշոցները հաստափոր դիրքերու կամ իրերու իբր օրինակ կը յիշուին միշտ : Իոչոր պարունակութիւնները կը կարդացուին՝ հատորը աւետարանի դրակալին վրայ դնելով , միայն պատարագի աւետարանները ճաշոցէն չեն կարդացուիր , այլ ճաշու աւետարանէն :

ՃԱՐՊ .— Կենդանիներու մարմինէն հանուած իւր-յոտ կտորներ , որ հալելէ ու դտուելէ ետք կը թափուին ու մոմ կ'ըլլան : Եկեղեցական իրերու վրայ խօսած ատեննիս , ճարպին ուրիշ կերպ կ'իրառութիւնը չունինք : Բայց ճարպի մոմերը արգիլեալ էին եկեղեցւոյ մէջ , զի մեռելոտիէ կը հանուէին , եւ իրենց բնութեամբ ու տեսակով աղտեղի էին : Տաթեւացին ալ կը յիշէ այդ արդեւքը եւ կ'ըսէ թէ անարիւն պատարագի համար անարիւն , այսինքն մեղուէ դոյացած մոմը պէտք է դործածել : Մոմագործութեան արհեստին յառաջանալովը՝ կէտի կիթէն (սբարմաչէդ = spermaceti) մոմեր սկսան շինուիլ , եւ իբր ոչ ճարպ ընդունելի եղան . սակայն կիտամոմերուն նմանութիւնը սկսաւ ճարպի զտուածէն ալ շինուիլ , եւ նմանութենէ իրականին տեղ անցնելով , մեղրամոմի տեղ կիտամոմ , ու կիտամոմի տեղ ճար-

պամոմ սկսաւ դործածուիլ, եւ տակաւ սովորութիւնն ընդհանրացաւ, եւ այժմ մեր մէջ տիրող ալ դարձաւ, այնպէս որ այլեւս սեղաններուն վրայ մեղրամոմ չի տեսնուիր: Էջմիածնի կողմերը մեղրամոմի սովորութիւնը կը պահուի, լաւ պատրաստուած մեղրամոմ գտնուելուն համար. իսկ մեր կողմերը մեղրամոմեր ալ մեծ համեմատութեամբ ճարպի խառնուրդ են, եւ հալելու եւ ծռելու անտեղութիւնն ունին: Ճարպի նոր պատրաստութիւնը իր սպիտակութեամբ, մաքրութեամբ ու պնդութեամբ իր ծագման անտեղութիւնները մոռցնել կու տայ, եւ աւելի դիւրին կիրառութիւն ունի: Մենք պիտի չթելադրենք այս նոր մոմերը հալածել եկեղեցիէ, մանաւանդ ջահերու եւ զարդարանքներու համար աւելի յարմար ըլլալը կը ճանչնանք, լայց ի յարգանս հին կանոնին՝ պիտի հրաւիրենք եկեղեցւոյ պաշտօնեաները, թաղականները, եկեղեցականներն ու լուսարարները որ պատարագի ատեն գոնէ 4 կամ 2 մեղրամոմ անխափան վառեն սեղանին վրայ:

ՄԱՂՁՄԱՅ. — Տափակ պնակ որ սկիհին կամ բաժակին ընկերն է եւ անոր վրայ կը դրուի, բաժակին բերնին չափ մասը աւելի խորացած, որպէս զի բաժակին վրայէն չսահի: Մաղզման կը ծառայէ նուիրական նշխարը վրան դնելու, թէ՛ նուիրագործութենէ յառաջ եւ թէ ետքը: Մաղզման ալ անհրաժեշտարար արծաթ պիտի ըլլայ, ներսի կողմէն ոսկեղօծեալ: Մեծութիւնը սկիհին համեմատութեամբ է, միջին մասը անոր բերնին չափ եւ շուրջանակի մասը համեմատաբար 3 կամ 4 կամ 5 հարիւրամետրի չափ դուրս ելած: Մեր եկեղեցւոյ մաղզմաները պէտք է մէջտեղն աւելի խորունկ ըլլան, որպէս զի սրբագործութենէն ետք, սկիհի ծածկոցը վրան դրուած ատեն, անմիջապէս սրբագործեալ մարմնոյն հետ չչփուի:

ՄԱՇՏՈՑ . — Խորհուրդներու կատարման եւ նմա-
նօրինակ գործողութեանց համար սահմանուած ծիսա-
կան կարգերն ու աղօթքները պարունակող գիրքը, որ
կրնայ կոչուիլ եւ Ծիսարան, թէեւ մեր մէջ այդ անու-
նը գործածական չէ : Մաշտոց անունը հասարակ բառ
չէ, այլ յատուկ անունէ առնուած : Ռմանք զայն կը
լծորդեն Ս . Մեսրոպ Մաշտոցի անունին հետ, իսկ ու-
րիշներ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի անունին
հետ՝ որ վախճանած է 899-ին, իսկ Ս . Մեսրոպ 440-ին :
Այս երկու վարկածներէն հաւանականագոյնը կը կար-
ծուի Մաշտոց կաթողիկոսի անունին վերագրուածը,
որովհետեւ ծիսական կարգադրութիւններ Ս . Սահակ
հայրապետին՝ քան Ս . Մեսրոպ վարդապետին ձեռքով
եղած են : Մաշտոց գիրքը երեք տեսակի կը բաժնուի
սովորաբար : Առաջինը Հասարակ կամ Փոքր Մաշտոցը՝
որ կը պարունակէ քահանային կատարելու խորհուրդ-
ներն ու արարողութիւնները — Մկրտութիւն, Դրոշմ,
Մեռելաթաղ ու սովորական օրհնութիւններ : Երկրոր-
դը Մայր Մաշտոց՝ որ կը պարունակէ եպիսկոպոսին
կատարելու արարողութիւնները — Ձեռնադրութիւն,
Գաւազանի տուչութիւն, Եկեղեցւոյ օծում, Քահանա-
յաթաղ եւ մեծ օրհնութիւններ : Երրորդ՝ Հայր Մաշ-
տոցը, որ կը պարունակէ կաթողիկոսութեան պատկա-
նող արարողութիւններ — եպիսկոպոսի ձեռնադրու-
թիւն, Միւռոնօրհնէք, կաթողիկոսական օծում ու մե-
ծամեծ օրհնութիւններ : Փոքր Մաշտոցը քանիցս տպա-
գրուած է եւ սովորաբար կը գտնուի, իսկ Մայր Մաշ-
տոցը մէկ անգամ տպագրուած 1807-ին, եւ դարէ մը ի
վեր նորէն տպագրուած չէ, եւ հազուագիւտ դարձած
է : Միայն ձեռնադրութիւնները առանձին տպագրուե-
ցան էջմիածին ու քահանայաթաղը Երուսաղէմ, բայց
ասոնք ալ հրապարակի վրայ չեն գտնուիր : Իսկ Հայր
Մաշտոցի մասերը էջմիածին տպագրուեցան շատ սահ-

մանափակ թուով եւ կը պահուին Մայր Տաճարի դան-
ձարանին մէջ :

ՄԱՍ .— Պատարագի խորհուրդին նշխար պատ-
րաստուած ատեն, սովորութիւն էր զայն առատու-
թեամբ պատրաստել, որպէս զի անոնց մէջէն հատ մը
սրբագործութեան համար ընտրուելէ ու անով արժա-
նաւորները հաղորդուելէ ետք, մնացեալն ալ անար-
ժաններու՝ այսինքն չհաղորդուողներու բաժնուի իբր
բարեպաշտական մասնակցութիւն Ս. Խորհրդոյն : Այս
է մաս ըստուածը : Այժմ աւելի թուով պատրաստուած
նշխարներէն զատ, դիւրագոյն պատրաստութեամբ,
առանց տխրի նուրբ նշխարներ կը պատրաստուին, եւ
կտոր-կտոր կամ մաս-մաս բաժնելով՝ ժողովուրդին կը
բաշխուին, եւ այս նուրբ ու անտխր նշխարները բուն
նշխարներէն զանագանուելու համար մաս կը կոչուին :

ՄԱՍՆԱՏՈՒՓ .— Փոքրիկ արծաթէ տուփ, որուն
մէջ սրբագործեալ նշխարի մասնիկներ կը պահուին եւ
պատարագէ դուրս հաղորդուողներուն կը տրուին ե-
կեղեցւոյ մէջ. եւ եկեղեցիէն դուրս քահանաներու
ձեռքով կը տարուին հիւանդներու եւ տունէն ելլելու
արդելք ունեցողներուն : Այստեղ լոկ մասնատուփի
վրայ կը խօսինք իբր եկեղեցական սպաս մը, եւ չենք
մտնել սրբութեան պահուելուն, տարուելուն ու դրուե-
լուն մասին խօսիլ : Մասնատուփերը պատշաճ է որ
մաղճմաներու պէս արծաթէ ու ներսէն ոսկեղօծուած
ըլլան, եւ որչափ հնար է, աշխատելու է տարբեր նիւ-
թէ ու տարբեր կերպով եղած մասնատուփերուն ըն-
դարձակագոյններն ու երբեմն փոքրիկ սկիհի ձեւով
պատուանդանով շինուածներ ալ կը գտնուին եկեղե-
ցիներու մէջ՝ առատութեամբ պահելու համար Սրբու-
թիւնը, բազմամարդ թաղերու մէջ եւ մեծ տաղաւար-

ներու օրերը : Սրբութիւնը փայտէ ամաններու մէջ
սփռելու սովորութիւնը՝ լաւ դամբեցնելու կը ծառայէ
եւ օգտակար է , բայց ամէն մանրակրկիտ զգուշաւորու-
թիւն ձեռքէ թողլու չէ :

ՄԱՍՈՒՆՔ .— Սուրբ անձանց ոսկորներէն եւ սուրբ
անձանց պատկանող իրերէն պզտիկ մասեր եւ փշուրի
չափ կտորներ՝ մասունք են սուրբ իրաց , եւ մասունք
կ'ըսուին , բայց ասոնք եկեղեցական սպասուց կարգը
չեն : Այստեղ նոյն անունին տակ կ'իմանանք այդ մա-
սունքները պարունակող տուփերը : Հին ատեն սովո-
րութիւն չկար շարժական տուփերու մէջ զետեղել մա-
սունքները , այլ նոյնիսկ փոքրիկ ոսկորի մասեր տեղա-
փոխուած ատեն դերեզմաններ ու դերեզմանաքարեր
կը պատրաստուէին եւ ոսկորներու մասունքներ անոնց
ներքեւ կը դրուէին , եւ այս է պատճառը որ միեւնոյն
սուրբի , օրինակ Ս . Կարապետի , բազմաթիւ դերեզ-
մաններ կը տեսնուին զանազան տեղեր : Երբ մասնա-
տուփեր սկսան գործածուիլ , նախնական ձեւը եղաւ
մարմնոյն մէկ մասին նմանութիւն շինել . ինչպէս
գլուխը , աջը , ոտքը , եւ անոնց մէջ փոքրիկ մասունք
մը զետեղելով՝ ամբողջին անունը տալ , այսինչ սուր-
բին աջը , այսինչ սուրբին գլուխը , եւ միեւնոյն սուր-
բի բազմաթիւ աջեր ու գլուխներ ունենալ , որ երբեք
ամբողջ նոյն անդամին ոսկորները չեն պարունակեր ,
այլ միայն անկէ փոքրիկ մաս մը եւ մինչեւ իսկ փշուր
մը : Աւելի ետքէն սկսան ճաճանչի ձեւով մասունքներ ,
եւ վերջապէս կախելու կամ քովը պահելու համար
մանր տուփեր ալ գործածական եղան , լատիններու
հետեւողութեամբ : Նոյն հետեւողութեան արդիւնք է
նոյն տուփին կամ ճաճանչին մէջ զանազան սուրբերու
մասունքներ , մինչեւ իսկ բազմաթիւ մասունքներ զե-
տեղել , որ շատ յանձնարարելի սովորութիւն չէ , մա-

հաւանդ խաչափայտի մասունքի հետ սրբոց մասունք-
ներ ալ դետեղել բնաւ քաջալերուելու չէ :

ՄԱՏԱՆԻ . — Օղակ մը որուն վրայ ազուցուած է
աղնիւ քար մը կամ գոհար մը , եւ շինուած է ոսկեր-
չական արհեստով ու ճաշակով : Աշխարհականներուն
ու կնիկներուն մատանի դործածելը պարզապէս կամքի
ու ծախքի խնդիր է , իսկ եկեղեցականներու համար
աստիճանի ու պատուոյ նշանակութիւն ունի : Մեր մէջ
այժմ մատանի դործածելու արտօնութիւնը կը վայելեն
միայն եպիսկոպոսները , ա'ն ալ աջ ճկոյթ մատին
վրայ , իսկ կաթողիկոսներ աջ մատնեմատին , որ է
ճկոյթին քովինը : Իսկ դործածուած մատանիները կը
հան ըլլալ ոսկեօղակ , աղնիւ քար , նաեւ ադամանդնե-
րով դարդարուած : Վարդապետներ մեր մէջ չունին
մատանի կրելու արտօնութիւն , թէեւ հայ հռոմէա-
կաններու ծայրագոյն վարդապետներն այդ առաւելու-
թիւնը կը վայելեն : Լատինաց մէջ ամէն աստուածա-
բանութեան վարդապետութեան դպրոցական աստիճան
ունեցողներուն կը տրուի մատանուոյ արտօնութիւն ,
բայց իրօք եպիսկոպոսներ միայն կը դործածեն զայն
լանջախաչին հետ : Իսկ յունաց մէջ բնաւ իսկ մատան-
ուոյ սովորութիւն չկայ :

ՄԱՏՈՒՌ . — Անուան ծաւումը յունական մարդի-
բիւն բառէն կու գայ որ է մարտիրոսանոց կամ վկա-
յարան , այսինքն մարտիրոսներու գերեզմաններուն
վրայ շինուած փոքր եկեղեցիներ , իսկ այժմ կ'իմա-
ցուին պարզապէս փոքր եկեղեցիներ : Սակայն ճիշդ
առմամբ եկեղեցւոյն մեծութիւնը կամ փոքրութիւնը
չէ որ անունի տարբերութիւն կու տայ , այլ իսկապէս
հիմնարկութեան բնութիւնը : Այն տաճարը որուն հի-
մերը օրհնուած ու օծեալ քարերով նուիրագործուած

են՝ եկեղեցի է, իսկ անոնք որ հիմերն օրհնուած եւ
օծուած չեն, այլ ուրիշ շէնքէ վերածուած են, եւ առ-
ժամապէս իբր եկեղեցի կը դործածուին, մատուռ կը
կոչուին: Մատուռ կը կոչուին նաեւ օծեալ եկեղեցիներու
պահարաններ կամ յատուկ մասեր որ հիմերէն օծ-
եալ չեն, այլ յետոյ անոնց մէջը՝ օծեալ սեղաններ
դրուած են, թէեւ անշարժ ու հաստատուն ըլլան:

ՄԱՐՄՆԱԿԱԿ. — Սկիհին տակը պատարագի ատեն
յատկապէս դրուած մաքուր կտաւը կամ զարդարուն
փոքրիկ դաստառակը: Աւելին մանրամասն խօսեցանք
Գորփուրայ անունին ներքեւ:

ՄԱՔՐԻՉ. — Ճերմակ ու մաքուր կտաւէ փոքրիկ
կտոր՝ որով պատարագիչը ճաշակելէն ետք կը սրբէ
բաժակին ներքին կողմը: Մաքրիչը յատուկ տուփի մէջ
կը պահեն, ու ատեն մը շարունակաբար կը դործածեն:
Լաւապոյն է մաքրիչը մանր կտորներէ շինել, եւ իւրա-
քանչիւր պատարագին դատ-զատ դործածել ու գործա-
ծուածն այրել:

ՄԵՂՐԱՄՈՄ. — Մեղրի մոմէն շինուած մոմ, որ
միայն ընդունուած է եկեղեցական կանոններով սեղա-
նին վրայ վառուելու եւ եկեղեցւոյ մէջ դործածուելու:
Բնական մեղրամոմը գորշ գոյն ունի, բայց արհեստով
պայն կը ճերմկցնեն, եւ ամէն չափէ ու տեսակէ մոմեր
կը թափեն: Մեղրամոմի արհեստն աւելի զարդացեալ
ըլլալով էջմիածնի կողմերը, այն կողմի եկեղեցիները
բացառաբար մեղրամոմ կը գործածեն եկեղեցւոյ մէջ,
մինչ մեր կողմերը նուազած կամ ճիշդ եւս դադրած է
մեղրամոմի կիրառութիւնը սեղանի վրայ, եւ միայն
ուխտի ու բարեպաշտութեան համար, կամ սրաշտոն-
եաներու ձեռքը վառած մոմերը մեղրամոմ են: Արդէն
այս մասին դրեցինք շարայ բառին ներքեւ:

ՄԻԻՌՈՆ.— Սրբազան ու սրբալոյս նիւթ մը, որ
յատուկ օրհնութեամբ կը պատրաստուի կաթողիկոսի
ձեռքով, եւ բոլոր Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ վիճակ-
ներուն կը բաշխուի: Միւռոնի գլխաւոր նիւթն է ձէթ,
որուն կը խառնուի չափաւոր քանակութեամբ բալա-
սան, եւ դարձեալ քառասուն տեսակ հոտաւէտ խուն-
կերու, փայտերու եւ բոյրերու խառնուրդով նիւթը:
Միւռոնը եկեղեցւոյ սպասներուն կարգը չի կրնար
դրուիլ, ուստի աւելի չենք երկարեր:

ՄԻԻՌՈՆԱՄԱՆ.— Միւռոնը պահելու համար ա-
մաններ՝ որ տարբեր տեսակներ ու տարբեր կիրառու-
թիւն ունին: Նախ միւռոնը կը դրուի մեծ մետաղեայ
սափորներու մէջ, մեծ քանակութեամբ զրկուելու եւ
պահուելու համար: Առաջնորդարաններէն իրենց թե-
մերը բաշխուելու համար չափաւոր ամաններու կը վե-
րածուին, որ ընդհանրապէս հաստ ապակեայ շիշեր են:
Հանդիսաւոր արարողութեան ատեն դործածուելու հա-
մար Աղաւնի կոչուած աղաւնաձեւ ամաններու մէջ կը
բերուին՝ որոնց վրայ խօսած ենք: Աղաւնիէն միւռոնը
միւռոնաթափ ընելով՝ պզտիկ սկիւհի կամ մասնատու-
լի ձեւով մանր ամաններու մէջ կը դրուի, որոնց բե-
րանը բայ է սովորաբար: Վերջապէս կափարիչով փոք-
րիկ ամաններ ալ կան, որոնց մէջ քիչ մը միւռոն բամ-
բակի վրայ թափուելով՝ կը պահուի, եւ կը ծառայէ
քահանաներու առձեռն կիրառութեան եկեղեցւոյ մէջ
կամ դուրսը:

ՄԿՐՏԱՐԱՆ.— Այսպէս կը կոչուի աջակողմեան
պահարանը, որովհետեւ անոր մէջ կը դրուուի աւազա-
նը, հիւսիսային որմին առջեւ հաստատուն կերպով
կանդնուած: Աւազանն ալ Մկրտարան կը կոչեն, բայց
ձգարանութիւն չէ:

ՄՇՏԱՎԱՌ .— Աւագ սեղանին առջեւ կախուած կանթեղը դիշեր-ցերեկ վառուած կը պահուի, որպէս զի եկեղեցին մթութեան մէջ չմնայ, եւ որպէս զի սեղանին ու պահուած սրբութեան պատիւ ըլլայ: Այս կանթեղն է Մշտավառ ըսուածը:

ՄՈՄ .— Ճրագի նիւթ՝ որ հալելէն ետքը երկար ձեւով ու մէջը պատրոյգով կը թափուի, եւ աշտանակներու վրայ կանգուն դրուելով՝ կը վառուի: Մամը բուն մեղրի բջիջները կազմող նիւթն է, եւ անկէ պատրաստուած ճրագներն են բուն մոմեղէնը, բայց յետոյ ուրիշ նիւթերէ ալ շինուեցան, եւ դժխաւորապէս ճարպէ, դոր արհեստը այժմ կատարելապէս դատուած ու գեղեցիկ կերպարանքի վերածուած վիճակի մէջ դրաւ: Ճարպէ մոմին ու մեղրամոմին վրայ խօսեցանք, կիրտամոմն ալ այդ առթիւ յիշեցինք:

ՄՈՄԱԿԱԼ .— Կը կոչուին այն երկու բարձր աշտանակները՝ սր դրակալին երկու կողմերը կը դրուին եւ մոմակալ տղոց տեղը կը բռնեն, երբ տղաք չեն դանուիր: Յիշած ենք արդէն աշտանակի վրայ խօսած ատեննիս:

ՅԱՅՍՄԱԻՈՒՐԻՔ .— Մեծահատոր գիրք մը՝ որ կը պարունակէ սրբոց վկայաբանութիւններն ու վարքերը: Ասոնք կը կարդացուին երեկոյեան ժամերգութեան սկսելէն առաջ: Ամէն օրուան ընթերցումը կը սկսի «Յայոմ աւուր յիշատակ է» եւ այդ սկզբնաւորութենէն ծագում առաւ գիրքին անունը, սակայն Յասմաւուրքին կարգը սրբոց մահուան թուականներուն վրայ շարուած է, ինչ կարգով որ կը տօնեն Յոյն ու Լատին Եկեղեցիներ, այսինքն արեգակնային ամսաթիւերուն կարգաւ: Իսկ մեր մէջ տօները եօթնեկական ու շարժական կար-

դարձրութիւն ունենալուն՝ Յայսմաւուրքին Յայսմ ա-
ւուրք օրուան տօնին չի պատասխաներ :

ՆԱՐՕՏ .— Պսակի ատեն փեսին ու հարսին գլուխը
կապուած երկզածեւ զարդը ի նշան պսակի . այժմ պար-
զապէս կարմիր ու ճերմակ մանածով շինուած բարակ
առասանի ձեւով բան մըն է կապուածը, զոր իւրաքան-
չիւր քահանայ պատրաստ ունի իր մօտը :

ՆԱՓՈՐՏ .— Համանշանակ «չուրջառ» անունին եւ
անխտիր դործածուած իրարու տեղ : Եկեղեցական
զգեստէն դուրս ալ՝ մէջը փաթթուելու ընդարձակ հա-
դուստի անունն է :

ՆԿԱՏ .— Փայտի կտոր մը բռնուելու յարմար՝ ո-
րուն ծայրը սանտրածեւ երկաթ թելեր շարուած են,
որով նշխարները ետեւի կողմէն կը ծակծկեն, որպէս զի
դիւրաւ եփուի :

ՆԿԱՐ .— Փայտի կամ կտաւի, եւս եւ մետաղի
կամ թուղթի վրայ ներկով գծուած պատկեր : Սովո-
րարար նկար բառը կը գործածենք երբ որ պատկերը
բարեպաշտական առարկայ չէ, այլ պարզապէս եկե-
ղեցւոյ պատերու եւ դանազան սպասներու վրայ զարդի
համար գործածուած է : Այդ նկարները հարկաւ սուրբ
անձնաւորութեանց նմանութիւնն ըլլալու պէտք չու-
նին, այլ կրնան կենդանիներու եւ բոյսերու նմանու-
թիւններ ալ ըլլալ, կամ թէ լոկ ուղիղ կամ կոր գիծե-
րու բաղադրութեամբ շինուած ձեւեր : «Նկարէն» կը
կոչուի բան մը կամ եկեղեցի մը՝ երբ պարզապէս
դոյնզդոյն գծադրութիւններով զարդարուած է :

ՆՇԱՆ .— Անուսա եկեղեցւոյ մէջ խաչ անունին
հետ համանշանակ կը գործածուի, եւ նշան կը նշանա-

կէ Ս. Խաչ : Այս Ս. Նշան անուանը աւելի յատուկ կերպով դործածուած է Վարադայ Ս. Խաչին համար , որուն շարականն ալ «Նշանաւ ամենայաղթ» բառերով կը սկսի : Նշան կը կոչուի նաեւ այն առարկան որ խօսեցեալին կամ հարսնցուին կը տրուի՝ իբր նշանակ խոստման ու միաւորութեան : Հարսանեկան նշանը եկեղեցական արարողութեամբ կ'օրհնուի եւ տուչութիւնը եկեղեցական կանոններու ներքեւ կ'իյնայ : Նշանը կրնայ ըլլալ ոեւէ կանացի արժէքաւոր զարդ մը՝ օղ կամ ապարանջան , քայռ կամ մանեակ , նաեւ ոսկի կամ արծաթ դրամ , բայց նախադասելի է զարդարուն շինուած խաչեր դործածել , ինչպէս Պատրիարքարանի ալ սովորութիւնն է :

ՆՇԽԱՐ . — Ս. Հաղորդութեան հացի տեսակին համար պատրաստուած նիւթը : Մաքուր ալիւրէ , անխմոր շաղուած , տափակ ու կլոր բաղարջ մը , մէկ երեսը խաչի պատկեր տպուած , եւ միւս երեսը նկատով ծակծկուած , եւ երկաթ թիթեղի վրայ եփուած , առանց այրելու եւ առանց տապկելու : Նշխարին մեծութիւնը սովորաբար 6—10 հարիւրամետր տրամագծով կ'ըլլայ եւ 2—3 հարիւրամետր թանձրութեամբ : Աւելի մեծ նշխարներ ալ համեմատական թանձրութեամբ կը շինուին տաղաւար օրեր , եւ ուխտաւորութեանց առթիւ հաղորդուողներու բաղմութեան բաւեցնելու համար : Պատարադի նշխարը նոյն առտու պատրաստուած պիտի ըլլայ ըստ առաքելական կանոնաց : Ժողովրդեան իբր մաս բաժնուելիք նշխարներ տարբեր տիպեր կ'ունենան եւ առաջուրնէ պատրաստուած կրնան ըլլալ :

ՆՈՒԱՓԱՐԱՆ . — Կը կոչուի որեւէ երաժշտական դործիք , ըլլա՛յ լարերով , ըլլայ փչելով ձայն հանող : Նուագարանները յատուկ եկեղեցւոյ պատկանեալ իրե-

զէն շըլտարով տեսակներու տարբերութիւնը եւ նկարա-
 գրութիւնը տարու չենք հարկադրուիր : Այլ թէ եկե-
 ղեցւոյ մէջ նուագարանները կրնան դործածական իրե-
 զէն ըլլալ, տարբեր սովորութիւններ եւ տարբեր կար-
 ծիքներ յայտնուած են : Լատին եկեղեցիներ մեծ երգե-
 հոն ունին : Ժամանակ-ժամանակ եկեղեցւոյ մէջ
 սրինգներ ալ դործածուած են . այժմ ալ դործածա-
 կան եղող երգեհոնը, ծնծղան, ծնծղակը, քշոցը եւ
 բուրվառի բոժոժներն իսկ նուագարան նկատուելով՝
 ըսող կայ թէ ուրեմն ուրիշ նուագարաններ ալ կրնան
 դործածուիլ : Մինչ սովորութիւնն այդ մասին բոլորո-
 վին հեռացնել թելադրել կ'երեւայ : Առանց ուզելու
 խնդրին մէջ մտնել, կ'ըսենք թէ նուագարանները՝
 պարզապէս իրենց ձայները հանելու պայմանով չեն
 կրնար եկեղեցւոյ մէջ դործածուիլ : Աստուծոյ համար
 երգեր պէտք է օրհնութիւն եւ փառաբանութիւն ըլլան,
 որ դադարաւոր ու զգացում կ'ենթադրէ, զոր չեն կրնար
 ունենալ անշունչ գործիքներ : Նուագարանները զգու-
 շաւոր չափով եւ հնաւանդ սովորութեան ընդունած
 կերպով կրնան եկեղեցւոյ մէջ դործածուիլ՝ երգեցո-
 վութիւնները կանոնաւորելու եւ զօրացնելու համար :

ՆՍՏԱՐԱՆ. — Պէտք չէ նոյնանշանակ կարծել ա-
 թոռի, որովհետեւ նստարանը պարզապէս նստելու
 տեղն է, իսկ աթոռը իշխանաւորին պաշտօնապէս նըս-
 տելու տեղը : Նստարանին կարգին պէտք չէ առնել գե-
 տինը դրուող բարձերը (միևտէր), որոնց վրայ խօսած
 ենք, այլ ոտքով դետնէ բարձր եւ թիկունք ունեցող եւ
 փոքր ի շատէ արհեստական դործուածք մը եղող,
 սրունքներն առջեւէն վար կախուելու ձեւով նստելու
 յարմար, եւ քանի մը՝ եւ մինչեւ իսկ 8—10 հոգիներ
 առնելու բաւակոն երկար բաղմակաւորներ : Հին աստեւ
 նստարաններ անծանօթ էին մեր եկեղեցիներու մէջ .

մայրաքաղաքիս եկեղեցիներն առաջինն եղան զայն ընդունելու վերջին 25—30 տարիներու միջոցին, եւ հետըհետէ ընդհանրացաւ, դաւառներու քաղաքներէն ոմանք ալ նմանեցան, բայց անկէ աւելի ոչ: Նստարանը երկար ոտքի վրայ կենալու անհնարութեան դէմ միջոց մըն է, եւ այժմեան զգեստներով գետինը նստելու դժուարութեան դէմ դարման է: Եկեղեցւոյ մէջ որեւէ կերպով նստիլը ընդունուած ըլլալուն՝ նստարաններուն տեսակները միայն ժամանակին կենցաղական պահանջքը կը մնան: Այդ պատճառաբանութեամբ ահա նստարանը ընդունելութիւն գտաւ եւ տարածուեցաւ: Միայն դասէն ներս եւ եկեղեցականներու եւ դպիրներու համար նստարան ընդունուած չէ, բայց չենք գիտեր թէ ինչո՞ւ. որովհետեւ թէ՛ ի պատիւ եւ թէ՛ ի դիւրութիւն՝ միշտ եկեղեցական պաշտօնեաները նախադասուելու իրաւունք պիտի ունենան հասարակ ժողովուրդին վրայ եկեղեցւոյ մէջ:

ՇԱՊԻԿ.— Այսպէս կը կոչուի մարդուն իրանը ծածկող եւ ամենէն ներքին հագուստը. եկեղեցւոյ մէջ ալ շապիկը՝ թէեւ ուրիշ սովորական զգեստներու վրայէն, բայց եկեղեցական զգեստներու ամենէն ներքինն է: Հագնողին հասակով, ուսէն մինչեւ դարչապարը հասնող եւ վիզէն վար շիտակ ինկող ու մարմինը ամէն կողմէ ծածկող հագուստ է: Շապիկն այժմ առջեւէն միացած է, միայն կուրծքին վրայէն բացուած ճեղք ունի, անկէ վուխը անցընելու համար: Հաւանական է ըսել թէ առաջ շապիկը վերէն վար բացուած էր եւ երկու կողմերը վրայ վրայի բերուելով՝ կը դոցուէին: Այս տեսութիւնը կրնայ արդարանալ, դիտելով թէ տակաւին Արեւելքի մէջ գործածական է պարսիկ շապիկի ձեւը, եւ թէ այսպէս է հին քանդակներու վրայ տեսնուող Ասորեստանեայց ու Պարսից հագուստներուն

ձեւը : Առ այդ կը նստաստէ դիտել որ քահանայական
 զգեստաւորութեան ատեն՝ զլուիը սաղաւարտ դնելը
 շապիկ հագնելէն առաջ է, որ չի կրնար արդարանալ,
 ըստ եթէ շապիկը վերէն վար բաց ենթադրելով : Եկե-
 ղեցական շապիկին էական մասն է ուսանոցը որուն
 վրայ սլիտի խօսինք, եւ մասամբ ալ թիկնոցի վրայ
 խօսած ատեննիս զրեցինք : Շապիկին նիւթը ընդհան-
 րապէս ճերմակ կտաւ կամ սպիտակ բեհեղ էր, եւ տա-
 կաւին շատ տեղ՝ շատ անդամ այսպէս է, սակայն հե-
 տըղհատէ ասուէ ու մետաքսէ, թաւիչէ եւ ուրիշ ընտիր
 կերպասէ սկսան շինուիլ, ամէն տեսակ դոյնելով :
 Շապիկը թէեւ զպիրներու յատուկ զգեստ է, բայց ա-
 մէն աստիճաններու մէջ ալ կը մնայ : Սարկաւազի շա-
 պիկն ալ միեւնոյն ըլլալը ակներեւ է : Նոյնիսկ քահա-
 նայի ու եպիսկոպոսի եւ հայրապետի հագած շապիկը
 առաջին զպրութեան շապիկն է, թէեւ այժմ տարբեր
 նիւթէ եւ առանց ուսանոցի շինուած ըլլան : Նիւթը
 տարբերութիւն չի բերեր, իսկ ուսանոցին ալ դանցա-
 սութիւնը հարկաւ շուրջառի ներքեւ չերեւալուն՝ սո-
 վորութեամբ դանց եղած է :

ՇԱՐԱԿԱՆ. — Շարերու = երգերու հաւաքածոյ
 գիրք, որ եթէ ոչ բառական ստուգութեամբ,
 ըստ իրօք ու արդեամբ է շար ականց պատուականաց :
 Տէրունի տօներու, սրբոց յիշատակներու եւ սլահոց օ-
 բերու ըստ պատշաճի եկեղեցւոյ մէջ կարդացուելիք
 երգերն ալ շարական կը կոչուին, հետեւապէս թէ՛
 գիրքը եւ թէ՛ պարունակութիւնը նոյն անունը կը կրեն :
 Աւելի ճշդութեամբ խօսելու համար, ոչ ամէն երգեր
 շարական անունը կը կրեն, որովհետեւ տարբեր տե-
 սակներու տարբեր անուններ կը տրուին, եւ բուն շա-
 րական են անոնք որ փոխերու հետ կ'երգուին : Մենք
 մտադիր ըլլալով իրեղէններով զբաղիլ, գիրքերուն կը

դառնանք : Շարականներէն սովորականները ձեռաց շարական ըսուածներն են, փոքրադիր հատորներ՝ որոնց մէջ դրուած են գործածական եղող պատշաճի շարականները : Քաղուածը եկեղեցւոյ մէջ սովորական դառնալէն ետք, կազմուեցան Չայնֆաղ շարականներ՝ որոնց վրայ խօսեցանք : Վերջին տարիներս էջմիածնի մէջ հրատարակուեցան Չայնագրեալ շարականներ, որոնք մեր մէջ դեռ սովորական կիրառութիւն չունին :

ՇԻՇ. — Որեւէ ապակիէ աման, նեղ բերանով ու ընդարձակագոյն պարունակութեամբ : Շիշ անունը կը տրուի երբեմն պարզապէս բաժակամանին կամ ժամանոցին, երբեմն ալ միւռոնամանին, բայց յատուկ անուն չէ որեւէ մէկ սպասի մը :

ՇՈՒՇՓԱՅ. — Մաքուր կտաւի կտոր՝ որ սկիհին ներքեւ կը դրուի կամ սկիհը մաքրելու կը ծառայէ, որով կը նոյնանայ մարմնակալի ու մաքրիչի հետ : Բայց կը գործածուի եւս դաստառակ բառին իմաստով, երբեմն ալ սփռոցի իմաստով. հետեւաբար կրնանք ըսել թէ ընդհանուր իմաստ ունի շուշփան՝ սեղանի վրայ գործածուած ամէն կտաւները իմացնելու :

ՇՈՒՐՋԱՌ. — Քահանայական աստիճանին գլխաւոր զգեստը, որ եւ իր ընդարձակութեամբ ամենէն երեւցածն է : Կիսաբոլորակ ձեւ ունի որ ուղիղ գծի կողմէն եւ մէջտեղէն ուսին վրայ կը ձգուի, եւ երկուքի բաժնուելով՝ մասերը կու գան առջեւի կողմէն իրարու կը մօտենան ու կը գոցուին, իսկ բոլորակ կողմը ոտքին շուրջը կը պատէ : Ճարմանդ մը միայն շուրջառը հաղնողին կուրծքին վրայէն կը պնդէ եւ կը բռնէ : Յունական շուրջառը առջեւէն ալ միացած է, եւ մէջտեղի ծակ տեղէն գլխուն վրայէն կ'անցնի, եւ երբ հաղնողը ձեռքերը կ'ուղէ դուրս հանել, պէտք է շուրջառը թեւին

վրայ ժողովել: Լատինաց մեծ շուրջառը, որ անգլերեն
 ling, Փրանսերէն pluvial անունը կը կրէ, մերինին
 նման առջեւէն բաց է, իսկ պատարագի համար գոր-
 ծածուած մանր շուրջառը՝ Փրանսերէն chasuble, երկու
 կողմերէն բացուած եւ հասակէն ծունկին վրայէն
 երկնյած է: Շուրջառներուն ամէն ձեւերը հին իշխա-
 նական պատուոյ զգեստէ մը ծագած կը կարծուին, ո-
 րուն մերձաւորագոյն ձեւն է յունաց շուրջառը: Մեր
 շուրջառին դասնալով՝ երկայնութիւնը կախում ունի
 հազնոդին հասակէն, ուստի քիչ ու շատ տարբերու-
 թեամբ կը շինուին: Նիւթն ընդհանրապէս ընտիր ու
 հարուստ է, հարկաւ ժողովուրդին ու նուիրողին կա-
 րողութեան համեմատ: Շատ ընտիր շուրջառներ կը
 դանուին հնդիկ արծաթաթել դիպակէ, կամ համակ
 ծանր ասեղնագործեալ, որ զգեստաւորուողին աստի-
 ճանին համեմատ կը գործածուին: Մեր ծէսը գոյնի
 կանոն չունի. հետեւաբար ամէն գոյնէ ու ճաշակէ կը
 շինուին: Շուրջառներուն ետեւները տեսնելու չափ
 խաչ մը պիտի դանուի որ այժմ շատ շուրջառներու
 վրայ վանց եղած է. աս եթէ ժամերգութեան ատեն
 գործածուած շուրջառներու համար ներելի համարուի,
 սակայն պէտք չէ ներուի պատարագի գործածուած
 ժամարարի շուրջառին համար: Դպրի շապիկներուն
 կամ սարկաւազի ուրարներուն խաչի պակասութենէն
 շատ աւելի դիտողութեան առարկայ պէտք է ըլլայ
 շուրջառի խաչին պակասութիւնը: Ժամարարի շուր-
 ջառներուն մէկ յատկութիւնն ալ այն է, որ նոյն նիւ-
 թէն բազպան եւ փորուրար ալ ունենան, նիւթին յար-
 մար, եւ իրարու զոյգ վակաս ու սաղաւարտ, իսկ ե-
 պիսկոպոսական զգեստները նոյնպէս վակաս, խոյր ու
 կամիփորոն:

ՈՒՍԱՆՈՑ .— Շապիկին վերի ու դարդարուն մասն
 է, որ թիկունքին վերեւը եւ ուսերը ծածկելէն ետք

դէպի առաջ կ'իջնէ եւ կուրծքը կը ծածկէ մինչեւ մէջքը : Ուսանողները հաստատուն կերպով կարուած են շապիկին վրայ եւ ի միասին մէկ կտոր ու մէկ գլեհատ կը կազմեն . ուսանողները միշտ աւելի զարդարուն են քան շապիկը : Ետեւի կողմէն ուսանողին մէջքը կամ ուսանողին ծայրը թիկնամէջքին վրայ խաչ մը պիտի ըլլայ , երկու խաչեր ալ կուրծքին երկու կողմերը , եւ եթէ վերջինները զանց ըլլան , առաջինը զանց ընելու չէ : Երբեմն խաչի տեղ Գառն Աստուծոյ մը կամ ուրիշ տէրունական կամ խորհրդաւոր նշանակ մը կը դրուի կամ կը գործուի , որ ճաշակով ու զգուշաւորութեամբ եղած ատեն մերժելի պէտք չէ համարուի : Ուսանողները երբեմն ձոյլ արծաթ զարդերով ալ ծածկուած կ'ըլլան , որ աւելի խնայողական է եւ շապիկին եւ ուսանողին կերպասը փոխուելով՝ նորէն կը գործածուի : Ուսանողները շապիկէն զատելով՝ առանձին քիկնոցի պէս գործածելու սովորութեան վրայ այդ բառին ներքեւ խօսեցանք :

ՈՒՐԱՐ . — Ուսէն կամ ուսերէն վար ձգուելի , երկար ձեւով հաղուստի մաս մը : Ուրար անունը հայ արմատէ ծագում չցուցնելուն՝ օտար բառ լինելը կ'երեւայ եւ կը համեմատի լատ . օրարիում եւ յունարէն օրարիոն բառերու , որ լատին ստուգարանութեամբ զգեստին բերանը կամ եզերքը կը ցուցնէ : Բառին խնդիրը թողլով՝ իրին դանք : Ուրարներ երկու տեսակ են . սարկաւազի ու քահանայի : Սարկաւազի ուրարը նեղ ու երկար է . երկու մարդահասակ երկայն , հազիւ 10—12 հարիւրորդամետր լայն . կը դրուի ձախ ուսին վրայ , ետեւէն եւ առջեւէն հաւասար չափով ի կախ թողլով : Այդ է բուն ծիսական կիրառութեան ձեւը : Ուրարը որեւէ նիւթէ կրնայ ըլլալ եւ սովորաբար երեք խաչ պիտի ունենայ . մէկը մէջտեղը ուսին վրայ , եւ միւս երկուքը ետեւէն ու առջեւէն մէջքին վրայ : Ուրարի ձեւին ու

կիրառութեան մէջ ինչ-ինչ փոփոխումներ մուծուեցան : Առաջինն է ձախ ուսին վրայ դնելէն ետքը ծայրերը դէպի աջ տանիլ եւ մէջքին վրայ իրարու միացնել՝ շեղակի անցընելով կուրծքէն ու թիկունքէն . ու այդ ձեւը աւելի հայ հռոմէականներու մէջ կը տեսնուի : Երկրորդն է ուրարը երեք մարդահասակի չափ երկարել, եւ մէկ ծայրը ձախ ուսին վրայ ետեւէն կախուելէն ետքը, կուրծքէն անցընել աջ անութին ներքեւէն, թիկունքէն վեր բերել եւ դարձեալ ձախ ուսէն եւ առջեւէն կախել : Այդ ձեւը քիչ մը աւելի զարդ կ'աւելցնէ, եւ ուրարը աւելի հաստատուն բռնելու կը ծառայէ : Այդ ձեւը բաւական տարածուած ու ընդունուած է մանաւանդ մեր կողմերը : Երկար ուրարները երեքի տեղ հինգ խաչ ունին : Ուրիշ ձեւ մըն ալ է ուրարը մէջքէն անցընել ու ետեւէն երկու ուսերուն բարձրացնելով առջեւը դարձնել՝ խոտորնակի դարձնելով կուրծքին վրայէն՝ եւ ծայրերը մէջքէն պատած մասին մէջ խոթել : Այդ ձեւը յունական նմանողութիւն է, որ քիչ անպամ կը տեսնուի եւ քաջալերուելու չէ : Քահանայական ուրարը իր ծաղումը կ'առնէ սարկաւազի ուրարէն, զի ինչպէս ձեռնադրութեան ատեն ալ կը ճշդուի, քահանայական ուրարը կը կազմուի ձախ ուսէն կախուած ուրարը երկու ուսերուն վրայ դարձնելով եւ երկու ծայրերն ալ առջեւէն կախելով : Լատինը պահած է միեւնոյն ուրարը, բայց երկու մասերը շեղակի կուրծքին վրայէն անցընելով եւ պօտիով պնդելով : Յոյնը թէեւ երկու կողմերը մէկ կտորի վրայ միացուցած է, բայց երիզներով ու քովէ քով խաչերով երկու մասերէ կազմուած կը ցուցնէ : Իսկ մերը ամբողջ մէկ բան դարձած է, մարդահասակ, երկար ու սարկաւազի ուրարին կրկինին չափ լայն, բայց միակտուր ու վերէն վար երեք տեղ մէյ-մէկ խաչերով : Գլուխը երկու եղջիւր ունի որ վիզին ետեւէն իրարու կը կա-

պուլին : Սակայն կան եւս քահանայական ուրարներ ուրոնց դլուխը միակտուր է, եւ ճեղքով մը դլուխին վրայէն կ'անցնի : Հայ հռոմէականք այդ ձեւը ընդունած են, որ աւելի կը շօշափէ՝ «Զդեցո՛, Տէր, պարանոցի իմոյ» զգեստաւորութեան աղօթքին հոգին, եւ Աւետարանին լուծին օրինակը եւ ուրարին ծաղման մերձաւորութիւնը : Քահանայական ուրարը սովորաբար կը կոչուի փորուրար, որուն ուրիշ ձեւ մըն ալ կայ դործածուած . երբ ուրարն առանց շուրջառի կիսազգեստի մէջ կամ թէ բոլորովին միայնակ կը գործածուի, զոր օրինակ ննջեցեալներուն յուղարկաւորութեան առթիւ, առջեւի կողմը կատարեալ փորուրարն է, դլխէ անցընելու ձեւը առջեւէն ճեղքով է, միայն վրան աւելցած է մաս մը՝ շապիկին ուսանոցին նմանութեամբ, ուսանոց եւ ուրար միացեալ մի ձեւ, որով իբր թէ շապիկին վրայէն առնուած ուրարի նմանութիւնը պիտի տայ : Այդ ձեւը վայելուչ է ու յարմար եւ խորհրդաւոր, միայն թէ չենք կրնար ըսել թէ հին ալ է, զի հիներուն մէջ յիշատակութեան չենք հանդիպիր :

ՊԱՀԱՐԱՆ. — Աւանդատուներուն տրուած ուրիշ անուն մը, աւանդները պահելու տեղ, թէ՛ աւանդէն եւ թէ պահարանէն կ'առնեն իրենց անունը : Պահարան կը կոչուին նաեւ այն դաղտնի պահպանութեան տեղերը, զորս Քանձարան անունին ներքեւ բացատրեցինք արդէն :

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՅ. — Պատարագի աղօթքները պարունակող գիրքն է, զոր քահանան կը գործածէ պատարագ մատուցանելու ատեն, որ եւ կարհրդատետր կը կոչուի, եւ այդ անունով բացատրուած է :

ՊԱՏԿԵՐ. — Տէրունական տնօրինութիւններ կամ սուրբ անձնաւորութիւններ ներկայացնող նկարներ

կամ դժադրութիւններ՝ փայտի կամ կտաւի վրայ
դժուած, բոլորովին տարբեր արձաններէ՝ որ շօշափելի
ձեւերով ու չափերով առնասպատկեր կը ներկայացնեն.
տարբեր եւս քանդակներէ որ աւելի կամ նուազ ցցուած
են հարթ երեսին վրայէն, մինչ պատկերը գրութեան
պէս է, եւ միայն ստուերագրութեան զօրութեամբ կեր-
պարանքի ու ձեւի նմանութիւն կը զգենու: Մեր եկեղե-
ցին որ արձանին համար բոլորովին աններող է, որ
քանդակին համար ալ բաւական զգուշաւոր է, պատ-
կերին համար ներող է, բայց ան ալ ո՛չ առանց չա-
փաւորութեան ու զգուշաւորութեան: Պատկերներուն
մէջէն ալ անոնք որ միայն ի դարդ են, նկար անունի
ներքեւ բացատրեցինք, այստեղ կը մնան բարեպաշ-
տութեան առարկայ եղող պատկերներ, որոնց առջեւ
հաւատացեալք իրենց ջերմեռանդութիւնը կը կատարեն
խնկով ու մոմով, աղօթքով ու պաղատանքով. եւ որ
մեր եկեղեցւոյ ծէսով պէտք է օրհնուած ու օծուած
ըլլան, առանց որոյ եկեղեցւոյ մէջ իբր բարեպաշտու-
թեան առարկայ չեն ընդունուիր: Իսկ եկեղեցիէ դուրս
ընաւ իսկ կիրառութեան մէջ չեն գտնուիր, այսինքն
պատկերներու մասին մեր եկեղեցին ուրիշ եկեղեցիներ-
ու վրայ շատ խիստ է. բայց մեր նպատակէն դուրս է
վարդապետական խնդիրներու մտնել: Մեր եկեղեցւոյ
մէջ գործածական եղող պատկերները հետեւեալներն
են: Նախ եւ առաջ Աւագ Սեղանին պատկերը, խաչկա-
լին մէջտեղ դետեղուած, Աստուածածնի պատկեր՝ Յի-
սուս Մանուկը գիրկը: Մեր եկեղեցւոյ ճաշակով պէտք
է որ ըլլայ Ս. Աստուածածինը լուրջ դէմքով ու գլխա-
գիրով ծածկուած, Յիսուս Մանուկը հագուած ու շի-
տակ կեցած, եւ Աստուածածնի աջ բազուկին կամ աջ
ծունկին վրայ նստած, մինչ լատին ճաշակի յատուկ
են գեղանի դէմքով ու գեղուհիի ոճով հագուած Աս-
տուածածիններ, Յիսուս Մանուկը կիսամերկ կամ

մերկ, ու Աստուածածնի ձախ բաղկին կամ ձախ ծունկին վրայ, երբեմն ալ գգուանաց ձեւի ներքեւ պառկած կամ ստնդիեցութեան դիրքի մէջ: Աստուածածնին ու Յիսուսէն զատ նոյն պատկերին մէջ եկեղեցւոյ անուանին սուրբն ալ մէկտեղ նկարել իբր յիշատակ՝ խոտելի չէ: Մեծ տօներու առթիւ աւազ սեղանին պատկերը փոխել՝ Աւետման, Ծննդեան, Մկրտութեան, Ընթրեաց, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման, Հոգեդալստեան, Երրորդութեան, Վերափոխման պատկերներ դնել, թէեւ նորամուտ սովորութիւն, բայց մերժելի չէ, միայն թէ տէրունի պատկերներէն անդին չանցնուի այս մասին: Սեղանի պատկերէն ետքը կու գան երկոտասան Առաքելոց 12 պատկերներ խորանին ներքին պատին վրայ շարուած շուրջանակի: Ամենէն հին ձեւով սեղանի պատկերն ալ խորանին փրկչական պատկերն ըլլալով՝ որմին վրայ կը դրուէր կամ կը դժուէր եւ Առաքելոց պատկերներ դայն կը պատէին, իսկ խաչկալը ցած պատուանդան մըն էր խաչին, լոկ խաչկալ եւ ոչ պատկերակալ, ինչպէս դարձած է այժմ: Երկու պատկեր ալ աւազ սեղանի կողմնակի սեղաններուն կամ պահարաններուն եւ կամ մատուռներուն մէջ կը դրուին՝ իբր փոքր սեղանի պատկեր, եւ որ յաճախ Ս. Յովհաննու Կարապետի եւ Ս. Ստեփանոս Նախափրայի պատկերներն են: Մէկէ աւելի սեղան ունենալ եկեղեցւոյ մէջ հնաւանդ չէ, բայց բաւական դարերէ ի վեր հինցած է, եւ Մշոյ Ս. Կարապետի վանքին տաճարը հնութեան փաստ մըն է. նմանապէս եկեղեցւոյ մաղթանքներուն մէջ Ս. Աստուածածնի, Ս. Կարապետի ու Ս. Ստեփանոսի ամենօրեայ յիշատակութիւնն անոր կ'ակնարկէ: Այդ կողմնակի սեղաններու պատկերները շատ անգամ տարբեր սուրբերու կամ տնօրինական խորհուրդներու ալ նուիրուած են:

Եկեղեցւոյ մը յարակից պահարաններ կամ մա-

տուռներ՝ միշտ փոքրիկ սեղան մը եւ անոր վրայ ալ տնօրինական կամ սուրբի պատկեր մը ունին, որեւէ խորհրդով կամ յիշատակով որոշուած ու դրուած, առանց ընդհանուր կանոնի կամ ընդհանրացած սովորութեան մը հետեւելու: Միայն աջակողմեան պահարանին՝ այսինքն Մկրտարանին մէջ Քրիստոսի մկրտութեան պատկեր մը ունենալ՝ դրեթէ ծիսական պահանջք դարձած է:

Եկեղեցւոյ դաւթին մէջն ալ, որ ի հնումն որմափակ դատուած էր եկեղեցիէն, յատուկ պատկեր մը ունենալ ի յարգանս եւ ի պաշտօն ծիսական պահանջքի պէս էր, քանի որ այն տեղ սրաչտամունք կը կատարուէին: Տաճարի դուռը մէջտեղէն ըլլալուն՝ պատկերներն ալ երկու եզան երկու կողմը դրուելու: Այժմ որ դաւթիները վանդակասպատով դատուած են, պատկերներուն սովորութիւնը չխափանուելով՝ երկու պատկերներ դաւթին դրան երկու կողմերը կը զետեղուին անոցքին վրայ, եւ ժողովրդական բարեպաշտութիւնէն առաւելագոյն յարգանք կը վայելեն: Միայն յիշուած պատկերները աւելի կամ նուազ ծիսական պահանջքի մը կը պատասխանեն: Այս կարգին մէջ ի դէպ է յիշել Մեծ Պահքի օրերը փակեալ վարագոյրին վրայէն կախուած խաչելութեան պատկերը, որ իբր ծիսական պահանջք կը նկատուի, բայց իրօք ներհակն է: Վարագոյրը կը դոցուի եւ սեղանին պատկերը կը փակուի, ապա շխարութեան դադարիարը դարգացնելու եւ աստուածային տեսութեան զրկման ազդեցութիւնը ներգործելու համար. փակեալ վարագոյրին վրայ նորէն պատկեր դնել՝ այդ հիմնական դիտումը կը տկարացնէ, որչափ եւ ցաւագին ու սրտայոյզ ըլլայ խաչելութեան պատկեր մը: Նոր սովորութիւնը յառաջ եկած կ'երևայ վարագոյրը պատկերաւորդ նկարելու սրհետէն, որուն հնագոյն օրինակները կը դանուին

Էջմիածնի մէջ Հնդկաստանէն եկած, եւ յետոյ Կ. Պոլսոյ մէջ ալ շինուած են, եւ Մեծ Պահոց համար Խաչելութեան ու Չարչարանաց պատկերներով զարդարուած վարագոյրներ սլատրաստուած են. որոնք որ այդպիսի վարագոյր չեն ունեցեր, պատկերով մը զայն փոխանակել սկսեր՝ եւ այսպէս այլեւս տարածուած սովորութեան մը առիթը ընծայած են:

Բայց եկեղեցւոյ մէջ պատկերներ մեր յիշատակութենէն շատ աւելի են. պատերուն վրայ, կամարներու վերեւ պատկերներ կը կախուին առատութեամբ, երբեմն կարգաւ կամ խորհրդով, ինչպէս չորս Աւետարանիչներ, 12 Առաքեալներ, 12 Մարդարէներ, 4 մեծ վկաներ (Սարգիս, Գէորգ, Թէոդորոս, Մերկերիոս) մեր եկեղեցւոյ հայրապետներ ու վարդապետներ եւ այլն, իսկ երբեմն ալ խառն ի խուռն, ինչպէս որ ձեռք ինկեր են, բարեպաշտներ նուիրեր ու յիշատակ դրեր են յատուկ մակագրութիւններով: Ասոնք մեծաւ մասամբ իբր որմանկար ու զարդապատկեր կը նկատուին, նայնիսկ սլատին վրայ նկարուածներ ալ կը դտնուին որոնք բոլորովին մերժելի չեն. բայց վայելչութիւնն ու չափաւորութիւնը եւ պատկերներու ճաշակին խրտութիւնը շատ ու շատ յանձնարարելի են:

Կան եւս յատուկ բարեպաշտութեան առարկայ դարձած եւ հրաշագործ անունով սլատուուած պատկերներ որոնք պահարաններու, գաւիթներու եւ վերնատուններու մէջ կը զետեղուին, եւ մոմերով ու խուռնկերով կը յարգուին: Դժուար է թէ եւ ժողովրդական բարեպաշտութիւնն ու բերմունքները զսպել, եւ ընկալեալ սովորութիւնը խախտել, սակայն եկեղեցւոյ առաջնորդներ ու պաշտօնեաներ պէտք է այս մասին կարեւոր զգուշութիւն ընեն: Ամէն առթի մէջ քրիստոնեայ ժողովուրդին հաւատքը, որչափ եւ ուամիկ ոճով մարմնացած, ոչ երբեք կը շփոթէ պատկերը պատ-

կերեալին հետ, եւ լաւ դիտէ թէ իր պաշտօնը ոչ թէ
պատկերին այլ պատկերեալին է :

ՊԱՏՄՈՒՃԱՆ.— Սովորաբար կը դործածուի իբր
համանշանակ շապիկի, զգեստ մը որ մարմինը կը պա-
տէ, թէեւ ընդհանուր առմամբ որեւէ զգեստի կամ
հանդերձի նշանակութեամբ ալ դործածուած է :

ՊԱՏՈՒԱՆԴԱՆ.— Ոտքին ներքեւ դրուելու համար
գետնէն բարձրացած մաս մը, սովորաբար փայտա-
կերտ, եւ շատ քիչ անգամ քարակերտ : Պատուանդանի
նախնական ու ընդհանրացած կիրառութիւնը աթոռ-
ներուն ներքեւ է, որպէս զի թէ՛ տեսանելի ըլլայ եւ
թէ բարձրութեամբ պատուոյ նշանակութիւն ստանայ :
Պատուանդաններուն տարածութիւնը պիտի ըլլայ այն-
չափ որ կարենայ վրան զետեղուիլ աթոռը եւ աթո-
ռակալն ալ առջեւը կանգնիլ, եւ երկրաբազելու չափ
տարածութիւն գտնել : Երբ պատուանդանները աւելի
բարձր են, առջեւի կողմէն սանդղակ եւ մէկ կամ եր-
կու աստիճան կ'ունենայ, որպէս զի բարձրանալու
դիւրութիւն ըլլայ : Տգեղ է բարձր պատուանդան շինել
եւ միակտուր թողուլ, վրան բարձրանալու համար
տոբեղ քայլափոխի առիթ տալով : Պատուանդաններ կը
դրուին եւս եպիսկոպոսներու եւ դասագլուխներու, երբ
աթոռի կիրառութիւն տեղի չունենար, իբր լոկ պատիւ
մը : Պատուանդանի տեղ ընդհանրապէս լոկ բարձ մը
կը դրուի սեղանին առջեւ ժամարարին ոտքին ներքեւ :
Վերջապէս պատուանդան անունով կ'իմացուին եւս
յանազան եկեղեցական զարդերու — խաչերու, ճա-
ճանչներու — ներքեւ եղած մասեր կամ յարմար-
ցուած կտորներ, որպէս զի կարենան կանգուն դե-
տեղուիլ բազմոցին վրայ :

ՊԱՏՈՒՀԱՆ. — Եկեղեցւոյ որմերուն վրայ թողուած բացեր, որոնցմէ լոյս կ'անցնի եւ տաճարը կը լուսաւորուի: Արարողութիւնը յատուկ պայմաններ չունի եկեղեցւոյ պատուհաններուն համար, միայն թէ հին եկեղեցիներ այժմեանին պէս բազմաթիւ ու ընդարձակ պատուհաններ չունէին, այլ նուազ թուով ու նուազ ընդարձակութեամբ լոյս մտնելու բացեր, որոնց ճիշդ անունն ալ լուսամուտ էր: Լուսամուտներ քանի մը հաստ կողմնակի հարաւային ու հիւսիսային որմերուն վրայ կ'ըլլան, բայց միշտ մէյ-մէկ լուսամուտ ալ կը գտնուի կամ պիտի գտնուի արեւելեան կողմը խորանին վերեւը, եւ արեւմտեան կողմը աւազ դրան վրայ բարձրէն:

ՊԱՐԵԳՕՏ. — Կրօնաւորի զգեստ, բոլոր մարմինը ծածկող ու պատող, զոր կապայ ալ կը կոչենք, սեւ ասուիէ սովորաբար: Հնագոյն ձեւը, առջեւէն եւ վերէն վար բաց էր, եւ քղանցքները վրայէ վրայ բերելով՝ դասիով կը պնդուէր: Իսկ նորագոյն ձեւը մէջքէն վար միայած է, եւ կուրծքին բաց մասէն ու գլուխէն անցընելով՝ կը հաղնուի: Պարեգօտը քիչ շատ մարմնոյ ձեւին յարմարցուած է անութիւններէն ու մէջքէն զարնուած ըլլալով:

ՊՆԱԿ. — Այդ անունը կը տրուի այն պզտիկ ու մէկ ձեռքով բռնուելու յարմար ափսէներուն, զոր ժողովուրդին նուէրները հաւաքելու համար կը շրջապայեն քահանաներն ու թաղականները: Այդ պնակներէն կան եւ յատուկ շինուածներ՝ որոնց մէջտեղը բարձրացած մոմ դնելու տեղ մը կը գտնուի, եւ մութ ստեններ վառած մոմեղէն մը կը դնեն թէ՛ դացած տեղերնին տեսնելու եւ թէ՛ պնակին մէջ դրուածը իմանալու:

ՊՆԱԿԷ. — Բնաւ պնակ բառին հետ յարաբերութիւն չունի, յունարէն Բանայիս = Աստուածածին անունը ուսերէն բանակիա հնչուած, եւ արեւելեան տարաշրջութեամբ պանակիա գրուած, սղելով եղած է պնակէ: Լանջախաչի նման պատուանշան մըն է, ընդհանրապէս ձուածեւ եւ մէջը Աստուածածնի պատկերով, վրան թագ մը եւ ի ներքոյ կախուած զարդ մը, բոլորը ականակուռ զարդարուած (սովորաբար սուտ ակերով) եւ շղթայով մը վիզէն կախուելով՝ կուրծքը զարդարող, որ կաթողիկոսին կողմէ կը շնորհուի միայն եպիսկոպոսներուն, եւ սովորութեամբ ամէն եպիսկոպոսներու: Պնակէներէն կը գտնուին նաեւ բուրակի ձեւով եւ ցանցառակի ուրիշ նման ձեւով շինուածներ:

ՋԱՀ. — Շատ ճիւղերով աշտանակներ կը կոչուին ջահ, նաեւ երբ տեղ մը դրուելու ձեւով ու պատուանդանով են: Բայց այժմ այդ անունը կը տրուի եկեղեցիներու մէջ առաստաղէն կամ կամարներու երկաթներէն կախուած աշտանակներու, որ կը զարդարեն տաճարին ներսի կողմը եւ որոնց մէջ 3-էն մինչեւ 100-է աւելի մոմ ունեցողներ կան: Ասոնց հնագոյն ու ընդհանրացած տեսակն է ապակիի կտորներն իրարու կցելով շինուածները: Քիչ չեն նաեւ պղնձէ, կամ ապակիէ ու պղնձէ խառն շինուած ջահեր, եւս եւ նոր ճաշակով ու արհեստով շինուած ջահեր երբեմն եկեղեցիներու մէջ կը տեսնուին ու դիտողութեան տեղի չեն տար:

ՋԲՐՈՒՆ. — Գլխու գդակ մը աշխարհական անձերու յատուկ: Այդ անունը կը գործածուի Չեռնադրութեան Մաշտոցին մէջ Աբեղայի օրհնութեան կարգին, երբ վեղարը տալէն առաջ ընծայելոյն աշխարհական գդակը կը վերցուի: Որոշ ձեւ մը չենք գիտեր այդ գդակին նկատմամբ:

ԶՈՒՐ .— Կը գործածուի եկեղեցւոյ մէջ թէ՛ լուացման եւ թէ բարեպաշտութեան համար : Արարողական կիրառութիւնը կ'ըլլայ պատարագի սկիզբը ու մէջը՝ ժամարարին ձեռքին լուացման համար : Խորհրդական կիրառութիւնը կ'ըլլայ Մկրտութեան համար : Բարեպաշտական կիրառութիւն մըն ալ կայ խաչահանգստի առթիւ, տեառնագրելով եւ խաչափայտի ու մասունքներու ճաճանչները կամ սրբոց աջեր մէջը խոթելով՝ որով օրհնեալ ջուր կը պատրաստուի, զոր բարեպաշտները կը խմեն կամ որով ցաւած կողմերնին կը սրբեն : Այդ ջուրը կը պահուի ալ եւ բարեպաշտներու կը բաշխուի : Օրհնեալ ջուրի դիտաւորն է Ծննդեան աւուր Զրօրհնէքի ջուրը, որ տեառնագրութեամբ ու միւռոնաթափով կը նուիրագործուի : Զրօրհնէքը եկեղեցւոյ մէջ եւ մասնաւոր ամանի մէջ կը կատարուի : Իսկ ուր դեռի կամ աւազանի վրայ կը կատարուի Զրօրհնէքը, պահցու օրհնեալ ջուր ունենալու համար, դեռէն կամ աւազանէն նոյն ժամուն առնուած մաս մը ջուրը՝ նոյն բարեպաշտական դիտաւորութեան կը ծառայէ :

ԶՐԱՄԱՆ .— Մետաղեայ կամ յախճապակեայ աման մը, բերանը լայն, մէջքը գոգաւոր, որուն մէջ ջուր կը լեցուի եւ խաչահանգստի ու Զրօրհնէքի կը գործածուի :

ՌԵՀԱՆ .— Ծանօթ բոյս մը անուշահոտ տերեւներով, տեսակ մը փոքր ու տեսակ մը մեծկակ տերեւներով (տաճկ. ֆեսլիէն), որ յատկապէս կը գործածուի Խաչվերացի երեկոյին խաչափայտը դարդարելու :

ՍԱՂԱԻԱՐՏ .— Եկեղեցական խոյր՝ սեպհական քահանայից ու վարդապետաց : Կ'երեւայ որ երբեմն եպիսկոպոսներու յատուկ էր, ինչպէս է ցայժմ յու-

նայ մէջ, բայց լատին եպիսկոպոսական խոյրին ըն-
 դունելութենէն ետքը անոնցմէ ստորին եղողներուն ան-
 ցաւ: Այժմեան սաղաւարտը ի վերուստ գնդաձեւ է վե-
 րիվերոյ, ներքեւի կողմէն դլուխը դրուելու յարմար
 ընդարձակ բացուածքով, որուն շուրջը պսակ մը բու-
 յորուած է, եւ գաղաթը գնդաձեւ պատուանդանի վրայ
 փոքրիկ խաչ մը կայ, որուն կողմնակի թեւերը չորս
 են, ամէն կողմէ խաչաձեւ երեւալու համար: Վրան
 միշտ զարդարուն է՝ ծանր ասեղնագործութեամբ, ու
 մարդարիտով ու պատուական ակերով զարդարուած-
 ներ ալ կը տեսնուին: Լուր օրերու համար եւ աղքատիկ
 տեղերու մէջ շատ պարզեր կը գործածուին: Սաղաւար-
 տին հին ձեւը ճիշդ այդ չէ: Շատ հին օրինակներ՝ որ
 դեռ աստ անդ կը տեսնուին՝ ձոյլ արծաթ են, գլանա-
 ձեւ ուղղաբերձ, որուն շուրջ 12 Առաքեալներ քան-
 դակուած են, վրայի եզերքը եւ գաղաթը ցած դմբէթի
 ձեւ ունի, վրան խաչով: Ժամանակ մը աւելի մեծու-
 թեամբ գունտեր ալ գործածուեր են, որոնք այժմ աւելի
 կոկիկ եւ աւելի ճաշակաւոր ձեւի վերածուած են: Սա-
 ղաւարտը կը գործածեն պատարազի ատեն ամէն քա-
 հանաներն ու վարդապետները: Քահանաներ կը գոր-
 ծածեն եւս մեծահանդէս ատեններու առթիւ, եւ տեղ-
 տեղ նաեւ Իւղաբերից Աւետարան կարդալու ատեն:
 Սաղաւարտը յատուկ քահանայական զարդ է եւ օրհ-
 նութեամբ կը տրուի: Սարկաւագներուն երբեմն սա-
 ղաւարտ դնելն աստիճանով քահանաներուն սարկաւա-
 դի զդեատով սպասաւորելէն ծաւում առած է, եւ ա-
 նոնց նմանելով քահանայութիւն չունեցող ձեռնադրեալ
 սարկաւագներն ալ երբեմն, զոր օրինակ Ստեփանոսի
 տօնին ինչ-ինչ մեծահանդէս առիթներուն սաղաւարտ
 դնել սկսած են եւ սովորութեան ալ անցած է:

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ կամ ՍԱՂՄՈՍ ԳԻՐՔ.— Եկեղեցւոյ
 մէջ գործածուած գիրքերուն կարգն է Սաղմոսը, այ-

սինքն Դաւթի 150 սաղմոսները՝ մարգարէական օրհնութիւններով ու կանոնի քարոզներով ու աղօթքներով, առանձին տպուած: Ատենի ժամագիրքին առաջին մասը միշտ Սաղմոսարան է:

ՍԱՐԿԱԻԱԳԱՏՈՒՆ.— Այսպէս կը կոչուի ձախակողմեան աւանդատունը կամ պահարանը, իբր զի եկեղեցական սպասաւորութեան տեղն է, եւ սպասաւորութեան պետն ալ սարկաւազն է:

ՍԵՂԱՆ.— Քրիստոս սեղանին վրայ եղած ատեն հաստատեց Հաղորդութեան խորհուրդը. սեղանի վրայ կը կատարուի պատարագի խորհուրդն ալ: Սեղանը տափարակ մարմարեայ քարէ շինուած է, խորանին մէջտեղ կանգնուած քարէ սիւնի մը վրայ, եւ օծուած է ամէն կողմերէն տասներկու տեղերէն, եւ գլխաւոր օծում մըն ալ մէջտեղը որ կը կոչուի դադաթ սեղանոյ, եւ եօթը աստիճաններով օրհնուած է հանդիսաւոր եւ երկար արարողութեամբ: Սեղանը չորս կողմէն բաց պիտի ըլլայ, ամենահին ժամանակ անոր շուրջը կը բոլորուէին պաշտօնեայք. այժմ բազմոցներ բարձրացած են եւ խաչկալ մըն ալ շինուած է ետեւի կողմէն, հետեւաբար առջեւը եւ երկու կողմերը միայն բաց կը մնան, եւ լաւ չէ երկու կողմերն ալ գոցել բազմոցի աստիճաններով կամ խաչկալի ոտքերով: Սեղանի մեծութիւնը խորանին ընդարձակութեան համեմատ է, եւ շատ փոքր սեղաններ ալ կը գտնուին: Իսկ ձեւը միշտ քառանկիւն մըն է եւ համեմատական չափերով: Ինչպէս խորան բառին ներքեւ ըսինք, հասարակ խօսակցութեան մէջ շատ անգամ սեղանը խորան կը կոչուի, որ ճիշդ չէ: Սեղանը մէկ պիտի ըլլայ իւրաքանչիւր եկեղեցւոյ մէջ, սակայն սովորութիւն եղաւ Աւագ Սեղանին երկու կողմերը փոքր սեղաններ կանգնել, նոյնպէս իւրաքանչիւր

պահարանի եւ մատուռի մէջ ալ մէյ-մէկ օծեալ սե-
ղաններ ունենալ, եւ տարին մէկ անգամ անոնց վրայ
ալ պատարագ մատուցանել՝ իր տօնին կամ յատուկ մէկ
օրին :

ՍԵՄ .— Որ է սեամբ, դրան մը ստորին կողմը
դրուած քարը, որուն վրայ կոխուելով՝ եկեղեցի կը
մտցուի, եւ սեմն ամբողջին տեղ կը գործածուի փոխա-
բերաբար : Այդ սեմը չ'օծուիր, այլ կ'օծուին դրան եր-
կու կողմերը սիւնաձեւ քարերը որոնց վրայ կը հանգչի
դրան վրայի բարաւորը : Այդ կողմնակի սեմերուն օ-
ծուած տեղերը մէյ-մէկ խաչ ալ կը փորագրուի, եւ
ժողովուրդը եկեղեցին մտած ելած ատեն, այդ խաչերը
կը համբուրեն, եւ այս է եկեղեցւոյ սեմը կամ շեմը
համբուրելու բացատրութիւնը :

ՍԵՆԵԱԿ ՔԱՀԱՆԱՅԻՑ .— Եկեղեցիներու յատուկ
ժամատան մէջ երկու սենեակներ պէտք է գտնուին քա-
հանայից յատկացեալ, մէկը ուր կարենան միասին հա-
մախմբուիլ եւ ուր կարենան նստիլ եւ զբաղիլ եւ միւսը՝
ուր կարենայ ննջել ժամարարը :

ՍԻԻՆ .— Եկեղեցւոյ մէջ տանիքը վեր բռնող սիւ-
ներ երբեմն կը տեսնուին եւ երբեմն ոչ : Երեւցող են
մէջտեղը կանգնած սիւներ, որոնք կամ չորս հատ են
մէջտեղ կանգնած եւ զմբէթին կամ կաթողիկէին ոտ-
քերը կը կազմեն, եւ կամ երկու շարքի վրայ, եւ եր-
բեմն չորս շարքի վրայ եկեղեցւոյ լայնութեան կամար-
ները կը վերցնեն : Կողմնակի որմերը թէեւ միացած շի-
նուած եւ սիւնաձեւ հետքեր ալ չունենան, տակաւին
սիւներու վրայ հաստատուած կը նկատուին, այսինքն
16 օծեալ քարերու համեմատութեամբ որ հիմերու մէջ
կը դրուին եւ սիւն անունը կը կրեն : Սիւն անունը կը

տրուի եւս սեղանին ներքեւ դրուած ոտքին որ միա-
կտուր քար մըն է, խորանին յատակին վրայ ամուր
հաստատուած է, որուն վրայ կը դրուի եւ կը միացուի
սեղանին քարը: Որեւէ սիւնի ճարտարապետական կաղ-
մութեան վերաբերեալ տեղեկութիւնները՝ խոյակը,
խարիսխը եւլն. ծանօթ կէտեր են, եւ պէտք չենք զգար
անոնց բացատրութեան մտնել:

ՍԿԻՀ. — Ընդհանուր անունն է բաժակի, եւ յատ-
կապէս ոտքով կամ պատուանդանով բաժակի, եւ այժմ
ընդհանուր կիրառութեան մէջ խափանուած է ի սպառ
եւ կը գործածուի յատկապէս պատարազի բաժակին:
Արծաթեայ պիտի ըլլայ սկիհը, եթէ ոչ պատուանդա-
նը, դոնէ բուն բաժակը, եւ մէջի կողմէն ոսկեգօծուած,
եւ ձեւն ու զարդերը ըստ պիտոյից եւ ըստ կարողու-
թեան կը տարբերին: Շատ ընդարձակ սկիհներ կան հին
վանքերու մէջ, որուն մէջ կրնայ թաթխուիլ հազարա-
ւոր ուխտաւորներու հաղորդութեան բաւելու չափ մեծ
նշխար մը:

ՍԿՈՒՏԵՂ. — Մետաղեայ ափսէ, որ պահարաննե-
րու մէջ պէտք է գտնուի որեւէ պէտքի գործածուելու
համար արարողութեանց միջոցին: Սկուտեղներու կար-
գին պէտք է յիշուին նաեւ փոքրիկ պնակներ շուշփայով
ծածկուած, որոնց վրայ կը դրուին ձեռաց խաչեր
հանդիսադրին մատուցուելու համար: Սկուտեղները
սուրբ սպասներու կարգէն չեն, այլ լոկ հասարակ պէտ-
քի ծառայող անօթներ:

ՍՊԱՍ. — Որեւէ անօթ եւ զարդ՝ որ արարողական
ծառայութեան մը կը գործածուի՝ կը կոչուի սպաս,
ըստ այսմ ոչ միայն սկիհ, ժամանոց, միւռոնաման,
մասնատուփ, այլ եւ խաչ, աւետարան եւլն. սպասնե-

րու կարգը կը համարուին : Ընդարձակ առամբ զգեստներ ու շուրջառներ ալ սպասներու կարգը կ'առնուին : Սպաս կը կոչուի եւս յատկապէս պատարագի խորհուրդին համար պատրաստուած նշխարը :

ՍՐԲԱՏՈՒՆ.— Տեղի ուր սրբութիւնք կը պահուին : Առանց որոշ ու յատուկ անուն մը ըլլալու կը գործածուի ընդհանրապէս աւանդատուներուն համար, եւ երբեմն խորհրդանոցին համար : Ծիսարաններուն մէջ աւելի յաճախ սարկաւազատան կը տրուի սոյն անունը :

ՍՐԲԱՏՈՒՓ.— Հաղորդութիւնը պահելու անօթարծաթեայ, որ մասնատուի ալ կը կոչուի եւ այդ անունին ներքեւ խօսուեցաւ : Աւելի որոշակի սրբատուփը եկեղեցւոյ մէջ հաղորդութիւնը պարունակող անօթն է, իսկ մասնատուփը քահանայից իրենց հետ ունեցած հաղորդութեան փոքր անօթը :

ՍՐԲԻԶ.— Մաքուր կտակի կտոր, որ կը գործածուի պատարագի տեսն ճաշակելէ ետքը սկիհին ներքին կողմը սրբելու : Թէեւ կտոր մը կտաւ յատուկ տուփով պահուած՝ միջոց մը կը գործածուի, բայց աւելի յարմար կը նկատուի մանր կտորներ գործածել, եւ իւրաքանչիւր պատարագէ ետքը այրել :

ՍՐԲՈՒԹԻՒՆՔ.— Առ հասարակ սուրբ իրեր ու սուրբ անօթներ այս անունին ներքեւ կը հասկցուին : Հին տօնացոյցներ կը դրեն. «Դնին սրբութիւնք ի վերայ բազմոցի յատեան», որ է ըսել եկեղեցւոյն ունեցած սուրբ անօթները ու սպասները — սկիհ, խաչ, աւետարան, ճաճանչ, մասունք եւլն. դուրս կը բերուին եւ սեղանին բազմոցին վրայ կը շարուին ի տես : Այսպէս կը մեկնէ Տաթեւացին նախատօնակի հարցման

մէջ. «Վասն որոյ զսրբութիւնսն, զխաչն եւ զաւետա-
րանս դուրս բերեմք, զի պատմող եւ կատարումն են
տնօրինութեանց Քրիստոսի...: Աւ ապա ի գիշերին
դնին սրբութիւնք ի վերայ բազմոցին մինչեւ յառա-
ւօտն անշարժապէս, որպէս ասացաք»: Սրբոց նախա-
տօնակին վրայ առանձին խօսած ատենն ալ կը կրկնէ.
«Վասն որոյ յերեկոյն նոյնպէս զսրբութիւնսն արտաքս
բերեմք, որոց ցանկացան եւ ելին յաշխարհէս»: Տօնա-
ցոյցին այդ կարգադրութիւնը վերջին տպագրութեանց
մէջ Ք գիրը կորսնցնելով՝ եղած է «դնեն զսրբութիւնն
ի վերայ բազմոցի յատեան», եւ միայն սկիհ մը մէջը
սրբատուփով եւ վրան ծածկոցով սեղանին մէջտեղ կը
դրուի, որ հնաւանդ արարողութենէն բոլորովին տար-
բեր սովորութիւն մըն է:

ՍՓՌՅՅ. — Սեղանին վրայ տարածուած ճերմակ ու
մաքուր կտաւ մը, սեղանին ամբողջութիւնը ծածկող ու
քովերէն ալ վար կախուող, որուն եզերքները ժանեակ-
ներով ու նմանօրինակ հիւսկէն զարդերով կը վերջա-
նան:

ՍՔԵՄ. — Կրօնաւորի զգեստ՝ հասարակ կենաց մէջ
դործածելի, եւ ծիսակատարութեանց յատուկ եկեղե-
ցական զգեստներէն տարբեր: Սքեմին մասերն են պա-
րեզօտ, վերարկու, վեղար, փակեղ ու փիլոն: Գոյնին
կողմէ կուսակրօններու եւ վանականներու համար կա-
նոնական է սեւը, եւ նիւթին կողմէն ասուին: Ամուս-
նացեալներու՝ իբր աշխարհիկ անձանց՝ ներելի է ուրիշ
գոյներ ալ դործածել, պատշաճից ու վայելչութեան
պատկառ կալով միշտ:

ՎԱԿԱՍ. — Եկեղեցական կամ քահանայական զգես-
տի մաս մը, որ իբր շուրջառի օճիք ուսերուն վրայ կը

կանուխի, եւ ներսէն հաստ կաշիով կամ խաւաքարտով
 ուղիղ կը մնայ: Բայց վակասը ոչ թէ շուրջառին՝ այլ
 սաղաւարտին մասն է, որուն ետեւէն մաս մը կ'իջնէր
 գէպի վիզը ծոծրակին վրայ եւ որուն վերջաւորը աւելի
 վարդարուն էր: Ետեւի մասը սաղաւարտէն բաժնուե-
 լով եւ վերջաւորը առանձին առնուելով, եւ փոխանակ
 տարածուած ըլլալու, կանգուն ձեւ մը առնելով՝ վա-
 կասին ծնունդ տուած է: Հին պատարագամատոյցներ
 վակասի աղօթք չունին, որովհետեւ վակասը սաղա-
 ւարտէն տարբեր զգեստ մը չէր: Վակասները երբեմն
 ձոյլ արծաթ ալ եղած են սաղաւարտներու նման եւ ա-
 ոաքեալներու պատկերներով. ասեղնադործեալ պատ-
 կերներով ալ շինուած են երբեմն՝ որ այժմ ալ չեն
 տեսնուիր: Վակասը սաղաւարտին հետ զոյգ զարդերով
 ու նիւթով շինելու հաստատուն սովորութիւնը կը պա-
 հուի, եւ երկուքին կանուխէն միացեալ ըլլալը կը հաս-
 տատէ, որ եթէ շուրջառին օձիքը ըլլար, անոր հետ
 զոյգ պիտի ըլլար:

ՎԱՐԱԳՈՅՐ . — Հայ եկեղեցիներու յատուկ է վա-
 րագոյրը կտաւէ կամ կերպասէ շինել, որ կը ծածկէ
 խորանին բերանը կողմէ կողմ եւ վերէն վար ամբողջ
 միակտուր: Վերի կողմէն դիմացէ դիմաց հաստա-
 տուած երկաթեայ ձողի մը վրայ օղակներով անցուած
 է, եւ ծայրերը կապուած չուաններով՝ առաջ եւ ետ
 քշուելով կը փակուի եւ կը բացուի: Վարագոյրը կեր-
 պով մը շարժականի փոխած է յոյն ծէսին մէջ խորանը
 փակող պատկերազարդ որմափակը: Վարագոյրը կը
 փակուի պատարագին մէջ գլխաւորապէս ընծայման ու
 ճաշակման ատեն, կամ թէ վերաբերումէ առաջ զգեստ
 փոխելու, ճրագալոյցներու եւ Աւագ Հինգշաբթիի պա-
 տարագի ատեն: Արարողութենէ դուրս վարագոյրը
 փակ պահելի նշան յարգանաց՝ շատ եկեղեցիներու

մէջ սովորութիւն է : Հայ հռոմէականք երկու մասէ
կազմուած , եւ կէս առ կէս երկու կողմէն բացուող վա-
րագոյր գործածել սովորութիւն ըրած են , բայց այս
կերպ վերուստ ի վար պատառեալ վարագոյրներ մեր
մէջ մուտ գտած չեն : Երկրորդ ու փոքր վարագոյր մըն
ալ ունին այժմ մեր եկեղեցիներու աւագ սեղանները :
Ասոնք սեղանին առաջը ծածկող եւ երկու մետրի չափ
բարձր են ու մեծ վարագոյրին տեղ կը փակուին ճա-
շակման ատեն . բայց այս փոքր վարագոյրը հին արա-
րողութեան մէջ չկայ , արեւելեան վիճակներու մէջ ալ
ընդունուած չէ : Կողմնակի փոքր սեղաններն ու պա-
հարաններու սեղաններն ալ իրենց յատուկ վարագոյ-
րը պիտի ունենան , եւ արարողութեան պահանջից հա-
մաձայն պիտի գործածուին , եթէ արարողութիւն կա-
տարուի : Վերջապէս խորհրդանոցներն ալ իրենց չա-
փով փոքրիկ վարագոյր կ'ունենան որ միշտ փակ կը
պահուին , եւ պատարագի մէջ միայն նուէրները
դրուած միջոցին կը բացուին : Վարագոյրներու կեր-
պասներն ու զարդերը ամէն կերպ կրնան ըլլալ : Պատ-
կերադարդ ու նկարէն վարագոյրներ ալ կը շինուին
խորհրդաւոր յիշատակներով :

ՎԱՐԻ ԴԱՍ . — Անունը կը տրուի երբեմն եկեղեց-
ւոյ ձախ կողմի դասին :

ՎԱՐՇԱՄԱԿ . — Մեր եկեղեցւոյ մէջ շատ գործա-
ծական անուն չէ , եւ երբ գործածուի , թաշկինակի կամ
դասատուակի իմաստով կ'առնուի : Լատինք յատուկ
կտաւ մը ունին զոր ժամարարը չափիկը չհագած՝ ու-
սերուն ու վիզերուն կը փաթթէ եւ կը կապէ : Հայ հռո-
մէականք ալ այդ կտաւը աւելցուցած էին ու վարշա-
մակ կը կոչէին , բայց այժմ անոնք ալ սկսած են զանց
ընել :

ՎԵՂԱՐ .— Կուսակրօն կրօնաւորներու յատուկ
 պլիսադիր իբր քօղ գլխոյ : Լծորդ է լատիներէն վեղում
 բառին , որ կը նշանակէ քօղ եւ նմանապէս վերաբիում
 բառին , թէեւ այս աւելի քան գլխու քօղ , տեղ մը քօ-
 ղարկող ծածկոյթ կը նշանակէ : Վեղարը սրածայր է ,
 ներսէն այդ ձեւով գլխանոց մը ունի որեւէ նիւթէ շի-
 նուած , եւ վրան ծածկոյթ մը՝ որ առջեւէն կ'իջնէ մին-
 չեւ աչուրները եւ ետեւէն մէջքէն վար : Կոյնը միշտ
 սեւ , նիւթը ասուրի , կուսակրօնին աշխարհային մեռե-
 լութեան նշանակ : Վեղարը անմեկին պիտի ըլլայ կրօ-
 նաւորին գլխէն , եւ յատուկ է ոչ թէ լոկ կուսակրօն
 քահանաներուն , այլ առհասարակ ամէն արեղանե-
 րուն , այսինքն կուսակրօնութեան նուիրեալներուն , ե-
 կեղեցական ինչ աստիճան ալ ունենան , եւս եւ իթէ աս-
 տիճան ալ չունենան : Վերջին դարերուն մէջ ալ վեղա-
 րակիր սարկաւազներ ու դպիրներ կը յիշուին , այլ
 այժմ բացառաբար կուսակրօն քահանաներէն կը սկսի
 կիրառութիւնը եւ կը պահուի բարձրագոյն աստիճան-
 ներու մէջ ալ : Վեղարն աղօթքով կը տրուի արեղայա-
 կան օրհնութեան պահուն : Նոր սովորութեամբ մե-
 տաքսէ վեղարի ծածկոյթներ ընդհանրացան ամէն աս-
 տիճանի համար , սեւ գոյնին պահպանութիւնը հաս-
 տատուն կը մնայ տակաւին , նոյնիսկ կաթողիկոսնե-
 րուն համար : Ամենայն Հայոց Հայրապետին վեղարին
 վրայ կայ խաչի մը յաւելումը , որ իբր պատուոյ նշան
 կը շնորհուի Ռուսաց Կայսրէն ամէն նորընտիր կաթո-
 ղիկոսի :

ՎԵՐԱՐԿՈՒ .— Կրօնաւորի սքեմին ամենէն վերի
 մասը եւ ամենէն յայտնի ու նշանակութիւն ունեցողը :
 Վերէն վար լայն պատմուճան մը , առջեւը բաց , թեւե-
 րը լայն , քղանցքները ընդարձակ : Հնագոյն ձեւը ամե-
 նեւին մէջքէն զարնուածք չունէր , եւ կուրծքերը երկու

կողմէն հաւասարապէս դիմացէ դիմաց կու գային : Այժմեանը մէջքէն քիչ մը դարնուած է, եւ կուրծքերը վրայէ վրայ անցնելով օձիքէն կը կոճկուին : Այդ ձեւը միայն վերջին կէս դարուն մէջ մտաւ՝ Կովկասի կողմերէն գալով : Վերարկուն ալ կուսակրօններուն համար սեւ պիտի ըլլայ եւ ասուի, նոյնպէս քահանայից համար ալ՝ իբր կրօնաւորութեան սքեմը յատկանշող մասը : Զանազան մոյզ գոյներով կերպասներ կամ ծաղկեայ մետաքսներ եւ ներսի կողմէն բաց գոյնով եղերքներ ժամանակ մը աւելի ընդհանրացան, բայց վերջին ժամանակներ կրօնաւորական պարզութիւնը նորէն իր տեղը սկսած է գտնել : Վերարկուն հասարակ է ամէն եկեղեցականի, դպրութեան ամենէն յետին աստիճանէն մինչեւ կաթողիկոսը : Այն օրերը որ եկեղեցւոյ մէջ զգեստաւորութիւն չկայ, դպիրները շապիկի տեղ վերարկու կը գործածեն, ինչպէս կը տեսնուի վանքերու եւ դպրանոցներու մէջ, եւ սարկաւազներն ալ վերարկուին վրայէն կը ձգեն ուրարը : Ի դէպ էր այդ սովորութիւնը մայրաքաղաքիս եկեղեցիներու մէջ ալ գործածել, եւ գոնէ դպրաց դասու անդամները կրնային վերարկու գործածել, սակայն մինչեւ հիմա սովորութիւն չէ եղեր, եւ ասկէ ետքին համար ալ նոր ծախքն է խաւիանարար պատճառը :

ՎԵՐԻ ԴԱՍ .— Կը կոչուի եկեղեցւոյ աջակողմեան դասը, միշտ նախադաս լինելուն ու սուաջնորդական աթոռն ալ այս կողմը գտնուելուն համար :

ՎԵՐՆԱՏՈՒՆ .— Եկեղեցւոյ մէջ, գաւիթին վրայ եւ քիչ մըն ալ առաջօք՝ գետնէն բարձր յարկ մը, առջեւի կողմէն վանդակով զատուած եւ կանանց յատուկ տեղ : Ժամանակ մը կիները բնաւ եկեղեցւոյ տաճարին մէջ տեղ չունէին, եւ ամէնքն ալ վերնատունը պէտք էր

կենային . վերնատունն ալ խիտ ու բարձր վանդակներ
ունէր , այնպէս որ դուրսէն ներսը եղողներ չէին ճանչ-
ցուեր : Վերնատունները հետզհետէ այդ խստութիւնը
կորուսին մայրաքաղաքի եւ գլխաւոր քաղաքներու
մէջ , քանի որ տուներու մէջ եւ փողոցները հին կնո-
ջական ձեւերը անհետացան , եւ երոպական համարձակ
դղեստներու կենցաղը տարածուեցաւ : Այժմ մայրա-
քաղաքիս շատ եկեղեցիներու մէջ տաճարը կէս առ կէս
այրերու եւ կիներու յատկացուած է , մկրտարանի ա-
ւանդատունն ալ , մինչեւ իսկ աւանդատան դրան առ-
ջեւի դասուն մասն ալ կիներէն պրաւուած է : Բայց
վերնատունը իր նշանակութիւնը կը պահէ , ուր կեն-
ցաղն ու զղեստը երոպականացած չեն . դաւատներու
մէջ հին խստութեամբ մնացած տեղեր ալ կան :

ՎԷՄ .— Սեղանի փոքր քարեր , յատկապէս սլատ-
րաստուած եւ օծուած մատուռներուն մէջ դրուելիք
շարժական ու առժամեայ սեղաններուն համար : Այժմ
այդ վէմերը դործածական են միայն այն դաղթակա-
նութեանց մէջ , որ դեռ եկեղեցի չունին եւ առժամեայ
մատուռի մէջ պարտաւորուած են հոգեւորական պաշ-
տամունք կատարել : Այդ շարժական վէմը կը դործա-
ծեն Երուսաղէմի միաբանք , երբոր զանազան սրբա-
վայրերու մէջ կը պատարապեն , ուր հաստատուն սե-
ղան չկայ եւ կամ սեփական Հայոց յատուկ սեղան
չկայ :

ՏԱՂԱՐԱՆ .— Եկեղեցական գիրքերէն մէկը , որ կը
պարունակէ տաղեր , երգեր , մեղեդիներ , ստեղիներ ,
գանձեր եւ ընդհանրապէս ծանր կարդացուելիք կտոր-
ներ :

ՏԱՃԱՐ .— Եկեղեցւոյ այն մասը որ պաւիթէն ներս
է , եւ կը պարունակէ խորանը , բեմը , դասը եւ ժողո-

վուրդին տեղը : Եկեղեցւոյ վրայ ընդհանրապէս եւ զանազան մասերուն վրայ խօսած ատեննիս , ուրիշ մանրամասնութիւնք տրուեցան , եւ այստեղ յատկապէս տրուելիք տեղեկութիւններ չմնացին : Տաճար բառը առհասարակ եկեղեցի ու ժամ անուններուն հետ իբր համանշանակ կը գործածուի :

ՏԱՊԱՆԱԿ.— Բառին իմաստը կը նշանակէ փոքրիկ արկղ : Եկեղեցւոյ մէջ այդ անունը կը տրուի զանազան առարկաներու : 1. Սարկաւազներու գործածած խնկամանը որ երբեմն կը շինուի վրայէն դոց ձեւով ու ճաշակաւոր յօրինուածով եւ վրան ալ մոմ դնելու տեղ կ'ունենայ , զոր միասին կը կրեն ձախ ձեռքով , երբ աջ ձեռքն ունին ու կը շարժեն բուրվառը : Այդ մոմակալ խնկամանները կը կոչուին տապանակ : 2. Այդ անունը կը տրուի նաեւ քահանայից ժամուցական նուէր հաւաքելու համար եկեղեցւոյ մէջ շրջագայած դանձանակին : 3. Լատինք եւ անոնց հետեւողութեամբ հայ հռոմէականք Ս . Հաղորդութիւնը կը դնեն պատարագի սեղանի մը վրայ , բազմոցին մէջտեղը յատուկ ու հաստատուն պահարան մը շինելով , որուն դուռն ալ բանալիով կը փակուի ու կը բացուի : Հայ հռոմէականք անոր անունը դրած են տապանակ : Մեր եկեղեցին այդ սովորութիւնը չունի , բայց քանի մը եկեղեցիներ՝ հարկաւ հռոմէականաց հետեւողութեամբ՝ նմանօրինակ զարդ մը ունին , զոր Աւագ Սեղանին վրայ կը դնեն , առանց զայն յատկապէս Ս . Հաղորդութիւն դնելու պահարան նկատելու : Այդ զարդերուն ալ միեւնոյն անունը տալ հարկ կ'ըլլայ :

ՏԻՊ.— Պատարագի համար պատրաստուած նշխարը , ինչպէս նաեւ բարեպաշտից բաշխուելու համար պատրաստուած նշխարը , վրանին խաչելութեան կամ

ուրիշ տնօրինական խորհրդոյ մը պատկերը կը կրեն , որ փորագրեալ տօսախէ կաղապարով անոնց վրայ կը կոխուի : Այդ փորագրեալ կաղապարը կը կոչուի տխպ :

ՏՈՒՓ .— Որեւէ աման մը , բերանը խուփով դուրսած , որուն մէջ բան մը կը դրուի եւ կը պահուի : Այդ տեսակ ամաններէն յիշեցինք միւռտնամանը , մասնատուփը , սրբատուփը եւլն . : Եկեղեցւոյ սպասներէն իւրաքանչիւրն ալ իրենց յատուկ տուփերը կ'ունենան , ինչպէս սկիհը , խաչը , ճաճանչը , աւետարանը , սաղաւարտը , խոյրը եւլն . , բայց այս տուփերը սպասներուն կարգէն չեն համարուիր : Յատուկ տուփ մըն ալ սրբիչին տուփն է , զոր յիշեցինք այդ բառին ներքեւ :

ՏՕՆԱՑՈՅՑ .— Եկեղեցւոյ մէջ դործածուած գիրքերէն մէկը , որ կը պարունակէ տարւոյն մէջ եկեղեցւոյ կատարած տօներուն կարգը : Ի սկզբան իրօք լոկ տօները կը ցուցնեն եղեր , բայց հետզհետէ տօներուն պատշաճներն ալ աւելցեր ու ճոխացեր են , եւ տօնացոյցներ եղեր են միանգամայն աւետարանացոյց , ընթերցուածացոյց , շարականացոյց , եւ առհասարակ իւրաքանչիւր օրուան համար կատարեալ պատշաճացոյց մը : Հուսկ յետոյ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը 1774-ին տօնացոյցին մէջ եւ տօներու կարգին մէջ ինչ-ինչ փոփոխութիւններ մտցնելէ դատ , տօնացոյցին Բ . հատորն ալ աւելցուց , եւ իւրաքանչիւր տարեգիրին համեմատ բոլոր փոփոխութիւններն ամփոփեց , եւ տօնացոյցը իսկապէս մշտնջենաւոր տօնացոյցի փոխեց : Այդ փոփոխութեանց համեմատ սկսած են իւրաքանչիւր տարի օրացոյցներ հրատարակել Էջմիածին , Կ . Պոլիս ու Երուսաղէմ , որ իւրաքանչիւր օրուան պատշաճներն ալ կը ցուցնեն ու առձեռն տօնացոյց մը դարձած են :

ՓԱԿԵՂ.— Հին ատեն եկեղեցականք իրենց յատուկ
դժխարկ մը չունէին, վանականներ միշտ վեղարով կը
պտըտէին, իսկ քահանայք տեղւոյն սովորական դժխա-
նոցը կը գործածէին: Փափաքելով որ հայ եկեղեցա-
կանք ալ իրենց յատուկ դժխանոց մը ունենան, Կ. Պոլ-
սոյ Պատրիարքարանը 1845-ին հաստատեց փակեղը, ու-
րուն գաղափարն առնուած է վեղարին ներքին մասը
կազմող սրածայր դժխանոցին վրայի ծածկոյթ ասուին
վերցնելով եւ մէջինը ձեւի բերելով, վրան ասուիով
կամ թաւիչով պատելով ու դադաթն ալ կոճակի պէս
վերջաւորութիւն մը աւելցնելով: Աւելի դարդ տալու
համար սրածայր մասին վրայ դրուած կերպասը փո-
խանակ հարթ ու շիտակ ընելու, ծալքեր տալով աւելի
վայելուչ դիրք մը տրուած է: Այս դժխանոցը մայրա-
քաղաքէն սկսեալ՝ այժմ ամէն կողմ տարածուած է:
Քահանայից համար որոշուեր է սեւ չուխա, վարդա-
պետաց սեւ թաւիչ, եպիսկոպոսաց մանուշակագոյն թա-
ւիչ, իսկ պատրիարքին գորշ կարմրագոյն թաւիչ, բե-
րանը ոսկի երիզով: Պատրիարքի համար որոշուածը ոչ
ուք կը յիշէ որ գործածուած ըլլայ, վարդապետներն
սկսեր են սրածայր մասը մանուշակագոյնի փոխել, ե-
պիսկոպոսները ամբողջ մանուշակագոյնները զանց ըրեր
են, քահանայից մէջէն պատուաւորներ եւ ուղողներ
հետզհետէ թաւիչ գործածել սկսեր են: Ասոր վրայ կ-
պիսկոպոսներէն ու վարդապետներէն ալ ոչ սակաւք սեւ
թաւիչ գործածելու սովորութիւնը ընդունած են: Այժմ
չստ ճիշդ գծուած կանոն մը չկայ: Գործը աւելի մո-
տէն նկատելով՝ դժխանոցին դոյնէն ու նիւթէն աստի-
ճան որոշելը կրնայ իբր աւելորդ պայման մը համա-
րուիլ: Իսկ մանուշակագոյնը եպիսկոպոսներու յատ-
կացնելը պարզապէս հռոմէականաց հետեւողութիւն է,
մինչ արեւելեան վանականութիւնը սեւէն դատ ուրիշ
ամէն դոյն բացարձակապէս չ'ընդունիր: Հետեւապէս

1845-ի կանոնն ընդունելով հանդերձ, դոյնի ու նիւթի տարբերութիւնը կրնայ փոփոխութեան ենթարկուիլ, եւ արդէն սովորութիւնն ալ բաւական ժամանակէ ի վեր այդ փոփոխութիւնն ըրած է: Փակեղը սովորաբար թուրքիոյ վիճակներու մէջ տարածուած է. իսկ Կովկասի մէջ դեռ վանականք վեղարով են եւ քահանայք տեղական զլխարկով: Իսկ փակեղը ուղտական ձեւով ու ուղտական անունով կամելաւկա կոչուած իբր առանձնաշնորհեալ պարգեւ կը տրուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով:

ՓԱՐՁ. — Ձեռք լուալու համար ջուր մատուցուելու աման, որ կոնքին ընկերն է, եւ նոյն նիւթէ եւ նոյն ճաշակով շինուած կ'ըլլայ: Եկեղեցոյ մէջ միշտ մետաղեայ է:

ՓԻԼՈՆ. — Ծուրջառի ձեւով զգեստ մը, մարմինը պատու ու ճարմանդով մը կուրծքին վրայէն բռնուած: Փիլոնը կը գործածուի ժամերգութեանց ատեն դասուն մէջ: Սովորաբար սեւ է եւ ասուի: Մետաքսէ ու ծաղկեայ կերպասէ փիլոնը կը շնորհուի իբր պատուոյ նշան քահանայից ու արեղայից: Վարդապետաց սեւ ծաղկեան սովորական է, եւ իբր պատուոյ նշան կը շնորհուի գունաւոր ծաղկեան, որ ընդհանրապէս մանուշակագոյն է, բայց ուրիշ յարմար դոյներ ալ անխտիր կը գործածուին: Ծայրագոյն վարդապետներու եւ եպիսկոպոսներու սովորական է գունաւոր ծաղկեան, իւրաքանչիւրին զիրքին ու կարողութեան համեմատ ընտրելագոյն մետաքսէ: Ընդհանրապէս ծաղկեաները միագոյն են կամ թէ նոյն գոյնէն բացով ու մութով խառն: Երկու գոյնով մետաքսներ ալ կը գործածուին երբեմն, բայց ոչ անկէ աւելի, զի այն ատեն փիլոնը կատարելապէս շուրջառի կը փոխուի:

ՓՈՐՈՒՐԱՐ .— Ուրարի վրայ խօսած ատեննիս զանազան տեսակներ յառաջ բերինք, եւ փորուրարն ալ լրացատրեցինք :

ՔԱՆԴԱԿ .— Այս անունը կը տրուի այն պատկերներուն՝ մետաղէ կամ փայտէ, որ ոչ նկարի պէս հարթ են եւ ոչ արձանի պէս ամէն կողմէ շօշափելի ձեւեր ունին, այլ հարթ մակերեսի վրայէն դուրս ցցուած, ըլլա՛ն դրիչով փորագրուած, ըլլան կաղապարով ձուլուած : Պատկերներուն աւելի կամ նուազ ցցուած լինելուն համեմատ կը կոչուին հարթափանդակ ու բարձրափանդակ (*bas-relief* եւ *haut relief*): Քանդակները կը տեսնուին աւետարաններու կողքերուն, ճաճանչներու մէջ, սկիհներուն պատուանդանին, խաչերուն վրայ, նաեւ պատերու եւ սեղաններու վրայ : Քանդակները պատկերներու հետ նկատուած են, եւ արձաններու պէս արգելքի ներքեւ չեն : Երբոր պաշտամանց գործածուած առարկաներու վրայ են՝ օժմամբ կը նուիրագործուին, իսկ եթէ լոկ ի դարդ են, համարձակ կը գործածուին : Արձան, պատկեր, աւետարան, խաչ անուններուն ներքեւ բաւական տեղեկութիւններ կը պատնուին քանդակներու մասին :

ՔԱՐ .— Այդ անունը կը պահենք միայն եկեղեցիներու հիմերուն մէջ դրուող 16 օժեալ քարերը յիշեցնելու համար, որոնց վրայ խօսեցանք հիմ բառին ներքեւ :

ՔՇՈՑ .— Բառին բուն իմաստով եւ գործածական բուն նպատակով՝ ճանճ քշելու համար սերովբէից ձեւով հողմահար մը, որով սարկաւազներ ժամարարին մօտ կենալով՝ սրբազործեալ տեսակներու վրայէն կը քշէին ճանճերը, եւ իբր թէ Սերովբէներ սրբութիւնը կը պահպանէին : Այն ատեն սրբազործեալ տեսակները

նուիրադործութենէ ետք ալ չէին ծածկուեր : Սակայն
այդ սկզբնական կիրառութիւնն ու նշանակութիւնը կո-
րած է ի սպառ : Քչոցները եղած են մետաղեայ ու մանր
սերովբէներ , շուրջանակի յաւելուածական մասերով ու
բոժոժներով մեծցած ու զարդարուած , եւ փայտէ եր-
կար կոթերու վրայ ամրացած : Շարժած ատեննին ա-
ւելի նուազարանի քան թէ քչոցի ծառայութիւն կ'ընեն ,
եւ իրօք ալ նշանաւոր ու խորհրդաւոր պահերուն քչոց-
ները կը շարժուին ու բոժոժները կը հնչեն : Իսկ սրբա-
դործեալ տեսակները մեր մէջ «Ս.ուէք կերէք»էն ետքն
ալ կը ծածկուին , եւ «Ի սուրբ ի սուրբ»էն ետքը ժա-
մարարը ձեռուրները բաժակին վրայ կը բռնէ եւ այն-
պէս ճանճերէ կը պահպանէ : Քչոցներուն ուրախու-
թեան նուազարան դարձած ըլլալը՝ Մեծ Պահքին մէջ
չդործածուելովն ալ կը հաստատուի :